Խ. Ս. Հ. Մ. Հ. Ս. Խ. Հ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԻՐ ԲԱՑԱՏՐԱԳՐՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿ. ՀԱՅԿ. ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ
1926

Գրաւեպլիտ 556 բ. Տիրաժ 500. Պատվեր № 5475.
Տպագրական Տրեստի 2-րդ տպարան

ԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՅԵՐԿԱՄՅԱ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Կարմիր բանակայինների քաղպարապմունքների յերկամյա ընդհանուր ծրագիրը կազմելիս՝ ի նկատի յե առնվել ամբողջ ՍԽՀՄ։

Քաղպարապմունքների ծրագրում հաշվի չեն առնված առանձին ազգ. հանրապետությունների բոլոր առանձնահատկությունները և բնորոշ մոմենտները։ Այդ պատճառով Կովկասյան Կարմրադրոշ Բանակի զորամասերի համար կազմված քաղպարապմունքների յերկամյա ծրագրի մեջ մտցված են լրացուցիչ թեմաներ, վորոնք լուսաբանում են Անդրկովկասյան Հանրապետությունների կյանքի ամենակարևոր կողմերը։

Բացի լրացուցիչ թեմաներից, անհրաժեշտ է ծրագրի մի քանի հատվածների թեմաներից մի քանիսը մշակելիս—յելնել տեղական իրականության կոնկրետ պայմաններից։

Այսպես օրինակ, յերկրորդ հատվածում «Բանվորների և գյուղացիների միությունը—խորհրդային իշխանության հիմքն է» թեմայում բերել կոնկրետ տվյալներ կալվածատերերից գյուղացիների ձեռքն անցած հողի քանակի, ցույց տալ, թե ինչ ձեռնարկություններ են գտնվում պետության ձեռքին և վորո՞նք են՝ տրված կապալով։ Թվական տվյալները պետք է վերցրվեն տվյալ հանրապետության վիճակագրական տվյալներից։

VI-րդ հատվածում «Յերկրային զորամասեր» և «Նախզինակոչյան պատրաստություն» թեմաներում ավելի մանրամասն մշակել տեղական յերկրային զորամասերի և նախազինակոչյան պատրաստության հարցերը։ Ծանոթացնել սովորողներին քարտեզի վրա յերկրային զորամասերի ցանցի հետ և նախակոչիկների թվական տվյալների հետ։

VIII-րդ հատվածում «Հեղափոխական շարժման և գյուղացիական ապստամբությունների մասին» թեմայի ընդհանուր զրույցի ժամանակ բերել վորպես օրինակներ համանման դեպքեր, վորոնք տեղի յեն ունեցել տվյալ հանրապետության մեջ։

«Լենինը վորպես Ռ.Կ.Կ. (բ) ստեղծող» թեման անցնելիս՝ ծանոթացնել Հայաստանի Կոմկուսի տեղական կազմակերպության հետ։ «Բոլշևիկները և ժամանակավոր կառավարությունը», «Բանվորա-գյուղացիական միության Հոկտեմբերյան Հաղթանակը» թեմաներն անցնելիս անհրաժեշտ է ցույց տալ այդ շրջանի բոլշևիկյան կազմակերպության պայքարը հակահեղափոխական կուսակցությունների հետ։

IX-րդ և XI-րդ հատվածներում յուրաքանչյուր թեման անցնելիս

պետք է հաշվի առնել տեղական առանձնահատկությունները։ Այսպես օրինակ, «Գյուղական տնտեսություն» և «Արդյունաբերության դրությունը» թեմաները մշակելիս՝ ամենալուրջ ուշադրությունը դարձնել գյուղատնտեսության և արդյունաբերության այն ճյուղերի վրա, որոնք տվյալ հանրապետության մեջ ամենահիմնականն են։

XIV և XVI «Կոոպերացիայի մասին», «Պետական առևտրի մասին», «Խորհրդային իշխանության հարկային քաղաքականություն» թեմաները անցնելիս բերել թվական տվյալներ, որոնք ցույց կ'տան տվյալ հանրապետության կոոպերացիայի, պետառի, տուրքերի զարգացման պատկերը (պետք է օգտվել վերջին վիճակագրական տեղեկություններից)։

XI-րդ հատվածում «Խորհրդային սարքի ապարատը» թեման անցնելիս՝ ծանոթացնել սովորողներին տեղական սարքին կազմակերպությունների կառուցվածքի և աշխատանքի հետ։ Այդ հատվածի 6-րդ և 8-րդ թեմաները «Ինչպես բարձրացնել բերրիությունը» անցնելիս՝ սովորողներին ծանոթացնել այն զանազան նոր միջոցների հետ, որոնք նպաստում են տվյալ պետության համար մեծ տնտեսական նշանակություն ունեցող գյուղատնտեսական կուլտուրաների բերրիությունը բարձրացնելուն։

Բացի վերոհիշյալ օրենքներից նշված թեմաների ավելի մանրամասն մշակման համար, օգտվել վերջին թվական տվյալներից, որոնք ցույց են տալիս յերկրի աճումը և զարգացումը ընդհանրապես։

Հ Ր Ա Մ Ա Ն

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 142
29-ին Հուլիսի 1925 թ.
Մոսկվա

Սրան կից հայտարարվում է ի ղեկավարություն և 1925-26 ուսումնական տարվանից ի գործածություն՝

1. Կարմիր բանակայինների քաղպարապմունքների յերկամյա ծրագիրը։

2. Կարմիր բանակայինների քաղպարապմունքների յերկամյա ծրագրի բացատրագիրը։

3. Կարմիր բանակայինների քաղպարապմունքների յերկամյա ծրագրի գրականության ցուցակը։

4. Կարմիր բանակայինների սանիտարական պարապմունքների յերկամյա ծրագիրը։

ԲԳԿԲ Քաղվարչության պետի
օգնական՝ ՍԼԱՎԻՆ

Ագիտպրոպբաժնի պետի
տեղակալ՝ ԶՈՐԻՆ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարմիր բանակայինների հետ քաղպարապմունքները յերկամյա ծրագրով տանելու անհրաժեշտությունը և կարիքությունը բղխում է Կարմիր բանակի նորմալ համալրման անցնելուց, հերթական հասակների զինակոչի խիստ պարբերականությունից և ծառայության հաստատուն ժամկետներ սահմանելուց։ Այս է պատճառը, վոր անհրաժեշտ է դառնում ունենալ մի նորմալ ծրագիր, վորը ցույց տար զինվորականների ռազմաքաղաքական պատրաստության հիմնական ուղղությունը, նպատակները, հաջորդականությունն ու հրատապությունը, Կարմիր բանակում ծառայելու ամբողջ ժամանակամիջոցի համար։ Այդ նորմալ ծրագրի հիմնական մասերից մեկն է հանդիսանում քաղպարապմունքների յերկամյա ծրագիրը։

Քաղվարչությունների (Пуокр) *պետերի վերջին խորհրդակցությունը, հավանություն տալով կարմիր-բանակայինների ուսուցման յերկամյա ծրագրի կառուցման սկզբունքներին և այդ ծրագիրը* 1925-26 *ուսումնական տարվանից գործադրելուն, ընդգծում է, վոր «կարմիր բանակայինների հետ յերկամյա ծրագրին անցնելու և ամբողջ քաղլուսավորական աշխատանքի ժամանակ ուսուցման յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար անհրաժեշտ է հաշվի առնել.—ա) միջազգային կացությունը, բ) ՍԽՀՄ-ի ներքին կացությունը, գ) բանակի սոցիալական և ազգային կազմը և դ) ռազմական պատրաստության խնդիրները» և միաժամանակ «քաղաքական ուսուցման և դաստիարակության հիմնական նպատակը մնում է նույնը, այսինքն խորհրդային իշխանության գիտակից մարտունակ պաշտպաններ պատրաստելը, վորոնք պետք է պատկերացնեն, վոր խորհրդային իշխանության ամրացումը հնարավոր է միայն բանվոր դասակարգի և գյուղացիության սերտ միության հիման վրա կոմմունիստական կուսակցության ղեկավարության տակ»։*

Կոնկրետ նյութի վրա հիմնված այս վերջին աստիճանի պատասխանատու խնդիրների զուգորդությունը կազմում է յերկամյա ծրագրի հիմնական արժեքը։

2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Յերկամյա ծրագիրը իր մեջ տրված նյութի բնավորության համաձայն կառուցված է «յերեք կետի» վրա՝ **ռազմականացում, խորհրդայնացում յեվ միջազգայնացում**։

Թե այս հիմնական ստորաբաժանումների մեջ և թե առանձին հատվածներն (ընդամենը 11 հատված) անցնելու համար տրված ժամանակի տեսակետից յերկամյա ծրագրի ամբողջ ընթացքում ավել կամ պակաս չափով պահված է հետևյալ սկզբունքը՝ համաձայնեցնել քաղուսուցումը ա) ռազմական ուսուցման հիմնական ժամանակաշրջանների խնդիրներին, բ) կարմիր բանակայինների կուլտուրական և քաղաքական մակարդակի աճման և գ) մինչև ծառայության վերջը մնացած ժամկետին։

Սակայն պետք է հիշել, որ կարմիր բանակայինի ռազմականացումը չի կարելի բոլորովին զատել նրա խորհրդայնացումից կամ միջազգայնացումից։ Այս մոմենտները անխուսափելիորեն հյուսվում են իրար, ուստի և յերկամյա ծրագրի միևնույն հատվածում հաճախ կարելի յե գտնել զանազան բնույթի նյութեր։

Ռազմականացում։ *Այս ժամանակաշրջանը բռնում է ձմեռը և ուսուցման առաջին տարվա ամառվա մի մասը և համապատասխանում է ռազմական ուսուցման առաջին ժամանակաշրջանին, նորեկ կարմիր-բանակայինի ուսուցման ժամանակին, որը պետք է տա տեխնիքապես լրիվին պատրաստված անհատ-մարտիկ։ Այս միջոցի քաղաքական և ուսուցման նպատակն է Կարմիր բանակ կոչված գյուղացուն վերածելով՝ դարձնել* **զինվոր։** *Այս նպատակը հետապնդում ենք կարմիր-բանակայինի ծառայության ամբողջ ժամանակամիջոցում, բայց ձմեռվա առաջին շրջանում այդ նպատակը հիմնական է և վճռական։ Նորեկ կարմիր-բանակայինը պիտի իմանա, թե ինչ է Կարմիր բանակը, նրա նպատակները, խնդիրները, կառուցվածքը և պատմությունը. նա պիտի զգա իրեն ռազմիկ, խորհրդային իշխանության զինված պաշտպան, այստեղից բղխող խոշոր իրավունքներով և պարտականություններով։ Այս ժամանակաշրջանում է նաև, որ վերջ է տրվում կարմիր բանակայինների տեխնիքական անգրագիտությանը, առանց որի խոսք չի կարող լինել ժամանակակից բանակի մարտիկ և խորհրդային իշխանության գիտակից պաշտպան պատրաստելու մասին։*

Խորհրդայնացում.—*Այս ժամանակամիջոցը թե իր անց կենալու ժամանակի տեսակետից և թե ըստ իր նշանակության յերկու մասի յե բաժանվում՝ ա) Նորեկ կարմիր բանակայինին ծանոթացնել այն յերկրի հասարակական-քաղաքական կարգերին, որ նա կոչված է պաշտպանելու— այս մոմենտը անմիջապես կապ ունի ռազմականացման ժամանակաշրջանի հետ թե ըստ իր եյության և թե՝ ըստ անցկենալու ժամանակի, բ) պատրաստել քաղաքացի, ծանոթացնելով նրան յերկրի տնտեսական դրության, նրա հարստությունների և հնարավորությունների, կառավարող կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականության հիմունքներին և խորհրդային ու հասարակական ստորին գործնական աշխատանքին գյուղում և քաղաքում։ Այս մոմենտները վերաբերում են ուսուցման յեր-*

կռվող տարվան, վորը մարտական պատրաստության գծով հանդիսանում է մարտիկի կատարելագործման ժամանակաշրջան փոխադարձ փոխանակման սկզբունքի հիման վրա և կրտսեր հրամանատարի գործնական դպրոց։

Կարմիր բանակի պայմաններում, վորի 90%-ը գյուղացիներ են, խորհրդայնացման հիմնական խնդիր է հանդիսանում բանվորա-գյուղացիական միությունը բանվոր դասակարգի ղեկավարության տակ և սրա հետ կապված կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությունը գյուղում։ Այս ժամանակաշրջանի նպատակն է կարմիր բանակայինի գիտակցության մեջ արմատացնել բանվորների և գյուղացիների միության անհրաժեշտությունը բանվոր դասակարգի և նրա կուսակցության ղեկավարության ներքո, ապացուցել նրան այդ միության ձեռնտվությունը գյուղացիության համար և կուսակցության ու իշխանության հիմնական գծի ուղիղ լինելը գյուղում։ Կուսակցության «յերեսները դեպի գյուղ» լոզունգը մեր բանակային իրականության մեջ նշանակում է դարձնել մեր ամբողջ քաղլուսաշխատանքի «յերեսը դեպի կարմիր-բանակային գյուղացին», վոր այս կամ այն կերպ արտացոլում է արդի գյուղի տրամադրությունը նրա գների խնդրում և հողաշինարարության մեջ, կուլակության աճման և կոոպերացիայի կենսունակության մեջ։ Խորհրդայնացման յերկամյա ծրագրի նյութը պետք է դառնա Կարմիր բանակի քաղաշխատանքի յերեսը դեպի այդ կողմ, դարձնելու առանցքը։ Ինքն ըստինքյան հասկանալի յե, վոր ծրագիրն անցնելու ընթացքում միշտ պարզ հայտնաբերել և ընդգծել պրոլետարիատի դերը իբրև բանվորա-գյուղացիական բլոկի հեգեմոն։

Միջազգայնացում.—Այս տերմինը գործածելիս պետք է հասկանալ քաղաքացի-ռազմիկի դաստիարակության այնպիսի ուղղություն տալը, վոր նրա **տեսածիրը** լայնանա և նա ծանոթանա միջազգային քաղաքականության խնդիրներին և Յեվրոպայի ու Ամերիկայի բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության, ինչպես և արևելքի ճնշված ժողովուրդների կապիտալի դեմ մղած պայքարին։ Իբրև հետևանք քաղուսուցման և դաստիարակության այսպիսի ուղղության, յուրաքանչյուր կարմիր-բանակային պիտի կարողանա հասկանալ իր և ամբողջ յերկրի տնտեսության վիճակի կապը միջազգային բանվորական շարժման վիճակի հետ, պիտի կարողանա ջոկել թե ով է մեր սահմաններից դուրս Ս. Խ. Հ. Մ-ի բարեկամն ու թշնամին։ Այս գաղափարների արմատացումը պահանջում է վորոշ նախապատրաստական աշխատանք ռազմիկի և քաղաքացու պատրաստության համար, ուստի և միջազգայնացման ժամանակաշրջանը, հիմնականում ըստ ժամանակի զուգադիպում է առաջին ձմերային ուսուցման ժամանակաշրջանի վերջավորության հետ, յերբ անց են կենում «ՍԽՀՄ-ը կապիտալիստական շրջափակման մեջ» և շարունակվում է առաջին տարվա ամբողջ ամառվա ընթացքում, յերբ մարտիկը վերջնականապես կազմակերպվում է։ (Ամառն առհասարակ տարվա ամենավտանգավոր ժամանակն է, յերբ հնարավոր են զինված ընդհարումներ կապիտալիստական թշնամիների հետ)։

Յերկամյա ծրագիրը չի կարող կանխատեսել միջազգային հարաբերություններին շարունակ փոփոխվող փոխհարաբերությունները և նա չի յել աշխատում այդ անել. այդ կողմից միջազգայնացման ժամանակաշրջանը ավելի քան մյուս ժամանակաշրջանները կապված է թարմ լրագրական

և այլ նյութերի հետ։ Բայց մի բան միայն այժմ արդեն հաստատ կարելի յե մատնանշել՝ միջազգային քաղաքականության կենտրոնը Արևմուտքից դեպի Արևելք տեղափոխվելը, մի բան, վոր իր հանճարեղությամբ նախատեսել եր ընկ. Լենինը։

Այս ժամենայը համապատասխան հատվածներն անցնելիս պետք ե ընդգծվի առանձնապես մեկ կետը։ Ազգային—հեղափոխական զարգացման խնդիրները Արևելյան յերկրներում, գյուղացիների և կիսանկախ յերկրների փոխ-հարաբերությունը իմպերիալիստական գիշատիչների հետ և մեր շահերի նույնությունը ամբողջ աշխարհի ճնշվածների հետ պետք ե առաջ քաշել։

Յերկամյա ծրագիրն իր նպատակին չեր հասնի, յեթե կարմիր բանակայինին չտար հիմնական տեղեկություններ կոմունիստական կուսակցության և ընկ. Լենինի դերի մասին հեղափոխության և Կարմիր բանակի ու Խորհրդային պետության շինարարության մեջ։ Բացի յերկու հատուկ հատվածներից, այն ե՝ «ՌԿԿ (բ) և Կարմիր Բանակը» ուսուցման 1-ին տարում և «ՌԿԿ (բ) և Լենինը հեղափոխության մեջ» ուսուցման 2-րդ տարում, ուր հավաքված են նյութեր Լենինի մասին՝ իբրև կուսակցության կազմակերպչի և առաջնորդի, ինչպես և տեղեկություններ ՌԿԿ(բ)-ի պատմությունից, մի կուսակցություն, վորը անցած ե բանվորա-գյուղացիական միության գլուխ և կատարում ե Լենինի ավանդները, յերկամյա ծրագրի բազմազան նյութը պարզում ե ՌԿԿ (բ) գործնական մասնակցությունը տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում մասնավորապես և մանավանդ բանվորների և գյուղացիների միության ամրապնդման մեջ։

Յերկամյա ծրագիրը կառուցված ե կոմպլեքսային սիստեմով, վորն իրեն արդարացրել ե Կարմիր բանակի գործնական աշխատանքում։ Մենք պետք ե ձգտենք բարձրացնելու կարմիր բանակայինի զարգացման թե կուլտուրական և թե քաղաքական մակարդակը, վորովհետև սխալ կը լիներ կարծել, թե՝ կարելի յե բարձրացնել քաղաքական գիտակցությունը առանց բարձրացող կուլտուրական մակարդակի։ Քաղվարչությունների պետերի խորհրդակցության արած իր զեկուցման մեջ 1924 թվի նոյեմբերին ընկ. Բուբնովը հարցն այսպես ե դնում.

«Մենք պետք ե այդ աշխատանքն այնպես տանենք, վորպեսզի կուլտուրական մակարդակի բարձրացումը չանցնի քաղաքական գիտակցության սահման չափից։ Սրանում ե մեր այժմյան քաղլուսաշխատանքի ամենասուր խնդիրներից մեկը։

Մենք պետք ե ընդարձակվող կուլտուրական մակարդակի հիման վրա աշխատենք, վոր կարմիր բանակայինը ավելի ևս արագ տեմպով բարձրացնե իր քաղաքական գիտակցությունը, վորպեսզի կարողանանք վերածել նրանից իսկական կարմիր ռազմիկ և աշխարհի առաջին խորհրդային պետության քաղաքացի։

Մեր ծրագիրը կառուցելիս՝ մենք վոչ մի կերպ չենք կարող ծրագրի հանրակրթական մասը պոկել քաղժամից։ Յեթե մենք այստեղ չձգտենք հասնել քաղժամի այս տարրերի ամենասերտ և ամենախիստ կոմպլեքսացիային, իրական կյանքում, հետևանքը կը ստացվի վոչ այն, ինչ վոր մենք ուզում ենք ստանալ իբրև արդյունք մեր քաղլուսաշխատանքի բանակում։

Մենք պիտի խստորեն հետևենք, որպեսզի մեր կոմպլեքսների մեջ առանցքային թեմաներ դառնան անպայման հասարակական-քաղաքական թեմաները։ Եթե մենք ներկայումս գնում ենք անգրագիտության լիկվիդացիայի խնդիրը ընդառաջ գնալով կարմիր-բանակայինի կուլտուրական մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությանը, և ծրագրի մեջ մտցնում ենք, օրինակ, տնտեսական աշխարհագրություն, ապա մենք պետք է այժմ մի շարք շրջաբերականների և մշտական դիտողությունների միջոցով ձըգտենք, որ այս ամբողջ ծրագրում և մանավանդ ծրագիրն անց կացնելիս ամենից ավելի լուրջ կերպով, մեկին և սուր դրվի նրա հասարակական-քաղաքական մասը։ Այստեղ է ծանրության կենտրոնը։ Ես կասեմ այսպես, որ յեթե գործնականում ծագի կոնֆլիկտ ժամանակի, ուժերի և միջոցների տեսակետից դաստիարակության քաղաքական կողմի գործնական կիրառման և ընդհանուր կուլտուրական կողմի միջև, ապա միշտ պետք է մի փոքր յետ մղել կուլտուրականը և ավելի ընդարձակ տեղ տալ քաղաքական կողմին։ Սրանք, ընկերներ, այն հիմնական պահանջներն են, առանց որի կարմիր-բանակայինների քաղլուսավորության գործը մենք չենք կարող ուղիղ գծով տանել։

Սրանով մենք կը մտցնենք մի շարք ուղղումներ մեր աշխատանքի հիմնական գծի մեջ, որը հաճախ շեղվել է դեպի կուլտուր կրթական կողմը։ Խնդիրն այն է, որ գործնականում այնպես կարողանանք համաձայնեցնել մեր ծրագրի հանրակրթական և քաղաքական մասը, որպեսզի առաջինը գերակշռի յերկրորդին. մի վայրկյան իսկ չի կարելի իրարից բաժանել քաղաշխատանքի միասնական ծրագրի այս յերկու մասերը»։

3. ԻՆՉՊԵՍ ԱՆՑՆԵԼ ԾՐԱԳԻՐԸ

Ժամերի բաշխումը. — *1924/25 թվականի ձմեռային շրջանի փորձը ցույց տվեց, որ «Նորմալ ծրագրով» (ԲԳԿԲ տեսչի 145015 շրջաբերական) առաջին ձմեռային շրջանի մի քանի ամիսներում քաղպարապմունքներին հատկացրած 3 ժամը չեն կարողանում օգտագործել։ Այս պատճառով յերկամյա ծրագրի բոլոր զրույցները տևում են յերկու ժամ։ Անցյալի հետ համեմատած զգալի չափով թեթևացրած է ուսուցման ձմեռային շրջանների ծանրաբեռնվածությունը և ավելի շատ ժամեր են տրված տեղական բնույթ կրող թեմաների շուրջը տարվող զրույցներին։ Առաջին ձմեռային շրջանի ծրագիրը յենթադրում է շաբաթական 5 յերկժամյա զրույց, որից իբրև կանոն 3-ը պիտի լինի նոր ծրագրային զրույց և մի շաբաթ հետո սանժամ, կրկնողական զրույց, զրույց ընթացիկ մոմենտի շուրջը և տեղական թեմայի վերաբերյալ։ 2-րդ ձմեռային շրջանի ծրագիրը յենթադրում է շաբաթական 3 յերկժամյա զրույց, որից իբրև կանոն յերկու նոր ծրագրային զրույց (ի թիվս որի որացուցային կամպանիայի վերաբերյալ զրույցներ) և մի շաբաթ անց սանժամ է զրույց ընթացիկ մոմենտի շուրջը։ Որացուցային կամպանիաների վերաբերյալ զրույցները մտցվում են քաղպարապմունքների ծրագրի մեջ ուսուցման յերկրորդ տարին, յերբ համապատասխան խնդիրների լուսաբանությունը զորամասի միտինգների և ժողովների ժամանակ պետք է համարել վոչ բավարար։*

Ամեն մի տարվա վերջում հարկավոր է առանձնապես անցնել մի թեմա (կրկնողական ժամերի թվից) խորհրդային շինարարության ընդհանուր նպատակների և համաշխարհային հեղափոխության հեռանկարների մասին։

Ինչպես անցնել ծրագիրը.— *Այս տարի, և առավել ևս ապագայում, յերկամյա ծրագիրը պիտի անցկացվի առանձին ամեն մի զորակոչային կոնտինգենտի հետ։ Նորեկ կարմիր բանակայիններն անց են կենում ուսուցման առաջին տարվա ծրագիրը, հները- յերկրորդ տարվա ծրագիրը (անգրագետների հետ առաջին ձմեռային շրջանում քաղպարապմունքները անց են կացվում յերկամյա ծրագրի հատուկ վարիանտով)։ Այս մոմենտները պետք է հաշվի առնեն և համաձայնեցվեն հրամանատարության հետ դասակները նորեկ կարմիր բանակայիններով լրացնելիս, վորպեսզի քաղպարապմունքները անցկացնելիս պահվի կազմակերպչորեն, ամենից ընդունելի սկզբունքը, այն է՝ խումբ-դասակները, յեթե հնարավոր է իր դասակապետ-ղեկավարի հետ միասին։ Այս տարի Սիբիրի ռազմական շրջանում Թուրքեստանի ֆրոնտում ժամանակավորապես պահված 1924 թվի գարնան զորակոչի կարմիր-բանակայինները անց են կենում ուսուցման 2-րդ տարվա ծրագիրը 1924 թվի աշնան զորակոչի հին կարմիր-բանակայինների հետ միասին։*

Ժամերի ճիշտ բաշխումը, 2-ամյա ծրագրի ժամանակին հրատարակվելը և տեղերում ստացվելը պիտի ապահովեն ամեն մի ժամանակաշրջանի (ձմեռային և ամառային) սկիզբը, անց կենալը և վերջը նորմալ ծրագրով նախատեսված հաստատուն ժամկետներին։ Այսպես կոչված «պոչեր» թողնելը անթույլատրելի յե։

4. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1924/25 թվականի ձմեռային շրջանում կարմիր բանակայինների քաղպարապմունքների կազմակերպման և մեթոդիկայի հիմնական թերությունները վերլուծվել են Պուռ-ի սույն թվի հուլիսի 11-ի № 37326 շրջաբերականում և պիտի լիովին հաշվի առնվեն 2 ամյա ծրագիրն անցնելիս։ Իսկ այստեղ հարկավոր է կանգ առնել գլխավորապես յերկու մոմենտի վրա։

1) Ծրագրի հատվածների յուրացումը

Կարմիր բանակայինների քաղգիտելիքների ստուգումը պարզեց, վոր «Կարմիր բանակ և կարմիր-բանակային» և «Կարմիր բանակի ու քաղաքացիական պատերազմի պատմություն» հատվածները ավելի լավ են յուրացված քան մյուս հատվածները, մանավորապես ավելի՝ քան **«կապիտալիստական յերկրների» հատվածը յեվ «խորհրդային շինարարության խնդիրները»**: *Դա բացատրվում է նրանով, վոր Կարմիր-բանակի և կարմիր-բանակայինների իրավունքներին ու պարտականություններին վերաբերյալ խնդիրները և այլն անց են կացվում կոնկրետ, հրատապ նյութերի վրա և գործնականապես կապված եյին կարմիր բանակայինների կենցաղի և զորանոցային ամբողջ կյանքի և կենցաղի հետ։*

Չափազանց ծանր, բայց և կատարելապես անհրաժեշտ է նույնպիսի կոնկրետ նյութի վրա անցնել նաև ծրագրի մյուս խնդիրները: Ծրագրի ծանրության կենտրոնը կազմում է տվյալ հատվածի բնույթը ղեկավարի կողմից պարզելը, ունկնդիրների առանձնահատկություններին ծանոթանալը և դրա հետ միասին զրույցի հիմնական միտքը լուսաբանող համապատասխան նյութերի ընտրությունը: Խորհրդային շինարարության խնդիրներում այդ պետք է լինի անպայման տեղական մատերյալ, որը զորանոցների համալրման ներկա սիստեմի ժամանակ այնքան էլ դժվար չէ ստանալ: Կապիտալիստական շրջափակման ուսումնասիրության խնդիրներում այդ պետք է լինի ամենից առաջ որևէ հրատապ լրագրային նյութ, որը նկարագրում է մեր փոխհարաբերությունները տվյալ յերկրի հետ և նրա հնարավոր ձգտումները՝ խանգարելու մեր խաղաղ աշխատանքը և այդպիսով նրանց ամբողջ մեր պետությանը և առանձին գյուղացիական տնտեսություններին վնաս պատճառելը: Ընդհանուր առմամբ նյութերի ընտրությունը զրույցների համար յուրաքանչյուր հատվածի համեմատ պետք է դառնա քաղորդանների և ղեկավարների հրահանգչական խորհրդակցության հիմնական խնդիրներից մեկը, որպեսզի ապահոված լինի յերկամյա ծրագրի բավարար յուրացումը, ըստ որի առաջին հերթին պետք է ապահովվի ծրագրային զրույցների կապակցությունը ներկա մոմենտի հետ:

2) Ծրագրի հանրակրթական մաս

Առաջին տարին մայրենի լեզվից պահանջվում է գլխավորապես զարգացնել գրելու և կարդալու ունակությունը: Ծրագրի բոլոր հատվածներում վարժությունների բնույթը քիչ թե շատ չափով միևնույնն է: Պետք է ընտրել ընթերցանության համապատասխան նյութեր կարմիր բանակայինի քրեստոմատիայից և ուրիշ աղբյուրներից հետզհետե բարդացնելով այն:

Կարմիր բանակայինների գրելու ունակությունը զարգացնելու ասպարեզում պետք է նույն աստիճանականությունը պահպանել: Առաջին տարում կարմիր-բանակայինին պետք է բացատրվեն ուղղագրության տարրական կանոնները, և հետզհետե պետք է վերացվեն գրության սխալ ձևերը՝ նրանց առաջն առնելով: Նախապես պետք է գործածվեն առավելապես կոլեկտիվ գրության ձևեր:

Առաջին «Կարմիր բանակ և կարմիր-բանակայինը» հատվածում անցկացվում այսպես կոչված մաթեմատիկական այբուբենը, այսինքն կարմիր բանակայինին ծանոթություն է տրվում ամբողջ թվերը, տասնորդական կոտորակները, տոկոսները, դիագրամները, գծանկարներ և այլն գրելու և կարդալու մասին:

Միաժամանակ առաջին հատվածում տրվում են փոքրիկ տեղեկություններ աշխարհագրությունից, գլխավորապես քարտեզի մասին:

Այսպիսով առաջին հատվածում հանրակրթական առարկաների ծանրության կենտրոնը կազմում է գրել, կարդալը և մասամբ էլ մաթեմատիկական այբուբենի ելեմենտները:

Յերկրորդ հատվածից սկսած առանց թուլացնելու ուշադրությունը դեպի մայրենի լեզուն առանձնապես մեծ տեղ է բռնում աշխարհագրությունը: Այս հատվածի ընթացքում պահանջվում է յուրացնել ՍՍՀՄ աշ-

խարհագրությունը։ Այստեղ քաղաքական բովանդակությունը յուրացնելու դժվարությունը և աշխարհագրության նոր մեծ քանակությունը պատճառ է հանդիսանում, որ մաթեմատիկայից տրվի միայն մինիմումը։ Համարյա ամբողջ հատվածի ընթացքում կատարվում է միայն գումարման գործողության հետ ծանոթանալը և վարժվելը։ Եվ միայն վերջում Բելոռուսիայի Սոց. Խորհ. Հանր. թեմայից հանման մասին ծանոթություն է տրվում։

Երրորդ և չորրորդ հատվածներում (Կարմիր Բանակի պատմությունը, ՌԿԿ(Բ) և Կարմիր բանակ) աշխարհագրությունը այլևս ծանրության կենտրոն լինելուց դադարում է։ Այստեղ արդեն տեղի չի ունենում կրկնողություն այն ամենի, որ աշխարհագրությունից անցել են նախորդ հատվածում։ Մաթեմատիկայից այս հատվածների ընթացքում հիմնովին անցվում և յուրացվում են գումարման և հանման գործողությունները։ Այստեղ հարկավոր է աշխատել, որ այդ գործողությունները անպայման յուրացվեն։

Հետևյալ 5-րդ հատվածում «ՍԽՀՄ-ը կապիտալիստական շրջափակման մեջ» աշխարհագրությունը նորից մեծ տեղ է գրավում։ Միաժամանակ այստեղ մենք մեր առաջ խնդիր ենք դնում ծանոթացնել կարմիր-բանակայիններին միանիշ թվերի վրա բազմապատկելու և բաժանելու հետ, իսկ հատվածի վերջում բազմանիշ թվերի վրա բազմապատկելու և բաժանելու հետ։

Ուսուցման ամառային շրջանում ծրագրի հանրակրթական մասի նկատմամբ մեզ նպատակ ենք դնում արդեն առաջ տրված գիտելիքների ամրապնդումը։

Այսպիսով առաջին տարվա ընթացքում ծրագիրը տալիս է մշտական և անընդհատ զարգացում կարդալ-գրելու ունակությունների, ծանոթացնում և ամրապնդում է ՍԽՀՄ-ի և ամբողջ աշխարհի քարտեզի իմացությունը, անցնում է ընթերցանության, ամբողջ թվերի, տասնորդական և սովորական կոտորակների, դիագրամների, գծանկարների գրությունը և թվաբանական 4 գործողությունները։

Երկրորդ տարվա ուսուցման անցնելիս պետք է այստեղ մատնանշենք, որ դեռ բավականաչափ փորձ չունենք։ Երկրորդ տարվա հանրակրթական մասը բարդանում է գլխավորապես մայրենի լեզվից և մաթեմատիկայից։ Այսպես՝ մայրենի լեզվից բացի խնդիրներից և գրել-կարդալու ունակությունը զարգացնելուց, տրվում է Կարմիր բանակայիններին ինքնուրույն աշխատելու համար անհրաժեշտ ունակություններ։ VIII հատվածի վերջից մինչև XI-ը կարմիր բանակայինները ծանոթություն են ձեռք բերում, թե ինչպես պետք է հարկավոր քաղվածքներ անել, փոքրիկ հոդվածի կամ զեկույցի պլանն են կազմում, գրում են կոնսպեկտներ, զեկուցումներ, գաղափար են կազմում թեզիսների մասին և կազմում են թեզիսներ։

XI-րդ հատվածում, որը կարմիր բանակայիններին նախապատրաստում է գյուղում աշխատելու համար, մայրենի լեզվից գլխավորապես անց է կացվում պաշտոնական թղթեր գրելու և լրագրերի համար թղթակցություններ կազմելու ձևերը։

Մայրենի լեզվի ծրագրին իրեն ամբողջությամբ անդրադառնալով,

պետք է ասել, վոր յեթե ծրագիրն անցնելիս յերևա, վոր նրա մի մասը լավ չի յուրացված դրա համար հատկացված ժամանակամիջոցում, այն ժամանակ վարժությունների քանակը պետք է ավելացնել հետագա վարժությունների հաշվին։

Մաթեմատիկական այբուբենից 2-րդ տարվա ծրագրված տեղեկություններ են հաղորդվում հասարակ կոտորակների մասին։ VIII-րդ հատվածում անց է կացվում հասարակ կոտորակների գումարումը և հանումը, 9-րդ հատվածի ամբողջի և կոտորակի վրա բազմապատկելը, XI-րդ հատվածում կոտորակը կոտորակի վրա բազմապատկելը և բաժանելը։ Անհրաժեշտ է հիշել, վոր յերկամյա ծրագրի այս մասը վորոշ դժվարություններ ունի. նայած թե ինչպես է յուրացվում, կարելի յե ավելացնել նաև վարժությունների քանակը։

Աշխարհագրությունից յերկրորդ տարին վոչ մի նոր բան չի տրվում։

Նոր բան է բնագիտությունից «Ինչպես պետք է բարձրացնել բերքը» կոմպլեքսի մեջ տրված նյութը։ Այս նյութին ըստ կարելվույն պետք է մեծ ուշադրություն դարձնել։

5. ԱԶԳԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՅԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ներկա յերկամյա ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագիր և մշակված ու հարմարեցված է Կարմիր բանակի հետևակ զորամասերի աշխատանքի պայմաններին, կազմին և գրագիտության աստիճանին։ Հեծյալ, հրետանային, ճարտարագիտական, սակրավոր, յերկաթուղային, կապի, ռազմաոդային և պահակային զորամասերի համար այս ծրագիրը տըրվում է անհրաժեշտ լրացումներով և փոփոխություններով, վորոնք բղխում են հիշյալ ամեն մի մասնագիտության աշխատանքի պայմաններից, կարմիր բանակայինների սոցիալական կազմից և նրանց գրագիտության աստիճանից։ Այս ծրագիրը հիմնական է նաև ազգային զորամասերի համար։ Ծրագիրը ազգային զորամասերի աշխատանքի պայմաններին հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխումները և լրացումները, ուղարկված են շրջաններին 1925 թ. հուլիսին։

Քաղվարչության Ագիտպրոպբաժնի պետի տեղակալ ԶՈՐԻՆ

Դպրոցական-ծրագրային մասի պետի ժամանակավոր պաշտոնակատար ՇՈՒԲԻՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — *280 ժամ*

1. ՁՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆ — *220 ժամ 110 զրույց*

ՀԱՏՎԱԾ I

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ

(16 զրույց)

ԻՆՉՈ՞Ւ ՅԵՍ ԿԱՆՉՎԱԾ ԴՈՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Քաղգրագիտություն.—*Կարմիր բանակը Ս. Խ. Հ. Միության զինված ուժն է, վորը պաշտպանում է աշխատավորների շահերը շահագործողների հարձակումներից և բռնությունից։ Խորհրդային իշխանությանը օտար են ուրիշ ժողովուրդների նվաճելու և ստրկացնելու ձգտումները։ Նա մինչև վերջին հնարավորությունը ձգտում է պահպանել խաղաղությունը։ Միայն Կարմիր Բանակի հերոսական պայքարը խանգարեց համաշխարհային բուրժուազիային խեղդել աշխատավորների հանրապետությունը։ Բայց բուրժուազիան սպասում է միայն հարմար ժամանակի՝ մեր թուլությանը, վոր նորից հարձակվի մեզ վրա։ Այդ պատճառով մենք պետք է պատրաստ լինենք պաշտպանելու խորհրդային իշխանությունը և բանվորների ու գյուղացիների խաղաղ աշխատանքը։ Խորհրդային Միության պաշտպանության գործը հանձնված է բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակին։ Բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը կանչվում է Կարմիր Բանակ սովորելու ռազմական գործը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության անկախությունը, ազատությունը ապահովելու ու բանվորների և գյուղացիների սոցիալիստական շինարարությունն ու խաղաղ աշխատանքային կյանքը պաշտպանելու համար։*

Յուրաքանչյուր կարմիր բանակայինի պարտականությունն է, վորքան կարելի յե լավ ուսումնասիրել ռազմական գործը։ Աշխատավորների թշնամիները բազմաթիվ են, հարուստ ու լավ զինված։ Դիմադրել կարելի յե նրանց, քիչ զոհեր տալով, միայն այն դեպքում, յեթե յուրաքանչյուր կարմիր-բանակային յեռանդով, բարեխիղճ, առանց կանգ առնելու՝ ուսումնասիրի ռազմական գործը, վոչ թե յերկյուղից դրդված, այլ գիտակցելով իրեն հանձնված պաշտպանության լրջությունը։

Մայրենի լեզու.—Զինակոչի նյութին նվիրված պատմվածքի կամ ոտանավորի բարձր ընթերցանություն: Զրույց կարդացածի շուրջը: Կարմիր բանակայինները պատմում են, թե ինչպես ե իրենց ծննդավայրում անցկացել զինակոչը: Սովորողները իրենց տետրակներում և գրատախտակի վրա գրում են այն վայրերի անունները, վորտեղից յեկել են, զորամասի անունը, տան և զորամասի հասցեն: Հատուկ անունները մեծատառերով գրելու բացատրությունը:

Աշխարհագրություն.—Քարտեզը, վորպես մեծ վայրի հատակագիծ: Քաղաքների և յերկաթուղագծի նշանակումը քարտեզի վրա: Փնտրել կարմիր բանակայինների յեկած վայրերը քարտեզի վրա: Ցույց տալ քարտեզի վրա Ս. Խ. Հ. Միության տարածությունը, վոր պաշտպանում ե Կարմիր կանակը:

Մաթեմատիկա. Թվեր գրելու վարժություններ: Ս. Խ. Հ. Միության բռնած տարածության, ազգաբնակչության, Կարմիր բանակի և այլ թվերի գրանցումը:

2. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ-ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԲԱՆԱԿՆ Ե

Քաղգրագիտություն. Կարմիր բանակը բաղկացած ե բանվորներից և աշխատավոր գյուղացիներից, վորոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը: Բուրժուաները, նեպմանները, առևտրականները, դատի տակ գտնվողները կամ դատարանով դատապարտվածները տեղ չունեն Կարմիր բանակում: Վորպեսզի Կարմիր բանակը բոլոր պարագաներում կարողանա պաշտպանել բանվոր դասակարգի և գյուղացության գործը անսասան հավատարմությամբ, նա պետք ե կազմված լինի միայն աշխատավորներից: Խորհրդային Հանրապետության մեջ զենքի գործածության իրավունքը վերապահված ե միայն աշխատավորներին: Շահագործողների ձեռքը զենք չի տրվում, վորպեսզի չկարողանան ոտարերկրյա շահագործողների ոգնությամբ բանվորներին և գյուղացիներին դարձյալ յենթարկել իրենց, ուսումնասիրելով ռազմական գործը. Նրանք զինվորական պարտականությունները տանում են առանձին կարգով:

Մայրենի լեզու.—Կարմիր բանակում զինվորական ծառայություն տանելու կարգի մասին՝ Խորհրդային իշխանության դեկրետների և վորոշումների համապատասխան կետերի ընթերցում: Կարդացված վորոշումների արտագրելը գրքից կամ գրատախտակից: Վերջակետի նշանակությունը կարդալու և գրելու ժամանակ:

3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՏԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Քաղգրագիտություն.— 16-ից մինչև 40 տարեկան աշխատավորները տանում են զինվորական պարտականություն: Այս ժամանակը բաժանվում ե՝ ա) նախնական պատրաստություն, բ) մինչև զինակոչային պատրաստություն գ) իսկական ծառայություն և դ) պահեստում գտնվելը: Իսկական ծառայությունը տանում են մշտակազմային և յերկրային զորամասերում՝ ցա-

մաքային և ծովային ու օդային կարմիր նավատորմիղներում։ Բնակազմային մասերում՝ հետևակում, հեծելազորում, հրետանում և տեխնիկական մասերում, ծառայությունը յերկու տարի յե, օդային նավատորմիղի մասնագետներինը՝ 3 տարի, ծովային նավատորմիղինը՝ 4 տարի։ Իսկական ծառայությունը վերջացնելուց հետո կարմիր բանակայինները մինչև 40 տարեկան հասակը հաշվում են պահեստում։

Ազգաբնակչության ռազմական ծախքերը թեթևացնելու և բանվորներին ու գյուղացիներին մի քանի տարով իրենց աշխատանքներից չզրկելու համար մտցրված է յերկրային զորամասերի սիստեմը, ուր ծառայությունը տարվում է տարեկան կարճատև հավաքույթների միջոցով (5 տարվա ընթացքում—ընդամենը 8 ամիս)։ Մեր արդյունաբերության և տրանսպորտի լավացման և գյուղացիական մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման հետ միասին կմեծանա նաև յերկրային զորամասերի թիվը։ Նախազորակոչյան պարապմունքները և յերկրային զորամասերում զինվորական ծառայությունը տարվում են բանվորների և գյուղացիների բնակավայրերի մոտ։ Մշտական Կարմիր Բանակը անհրաժեշտ է, վորպես կադր պատերազմի ժամանակ բանակն ընդարձակելու և թշնամիների հնարավոր հարձակումները կասեցնելու համար՝ մինչև տերիտորյալ զորամասերի ռազմաճակատ հասնելը։

Մայրենի լեզու. Յերկրային հավաքույթները և մինչզինակոչային պարապմունքները նկարագրող պատմվածքների ու փաստաթղթերի ընթերցումն, ինչպես նաև այն հատվածների, վորոնք պարզաբանում են ու լուսաբանում զրույցի բովանդակությունը։ Զրույց կարդացածի շուրջը։ Գրելու զուգընթաց տալ բարդ խոսքերի բացատրությունը։

Մաթեմատիկա—Գրել բազմանիշ թվեր, վորոնք ցույց կտան, թե ինչքան է ծախսվում բնակազմային Կարմիր բանակում գտնվող կարմիր բանակայինի վրա (2 տարվա ընթացքում) և ինչքան՝ յերկրային զորամասի կարմիր բանակայինի վրա (8 ամսվա ընթացքում)։

4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Կարմիր բանակը ուժեղ է վոչ միայն իր ունեցած ռազմական գիտությամբ և տեխնիկայով, այլ և իր գիտակցությամբ։ Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է իմանա՝ ում շահն է նա պաշտպանում, ով է նրա բարեկամը և ով՝ թշնամին։ Կարմիր բանակայինը պետք է քաղաքականապես գրագետ լինի։ Բացի այդ ռազմական տեխնիկայի զարգացման հետ միասին մեծանում են և ժամանակակից բանակի զինվորին առաջադրած պահանջները, վորոնք անհնար է կատարել առանց ընդհանուր գրագիտության՝ գրելու, կարդալու և հաշվելու տեխնիկային տիրապետելու։

Անգրագետը դժվար է սովորում։ Գրագիտությունը քաղաքական կյանքին գիտակից մասնակցելու առաջին պայմանն է։ Պարտադիր քաղպարապմունքները Կարմիր բանակում իրենց առաջ խնդիր են դրել անընդհատ բարձրացնել կարմիր բանակայինի ընդհանուր և քաղաքական գրագիտությունը, զարգացնել ու ամրացնել նրա հեղափոխական գի-

տակցությունն ու զոդումը։ Քաղպարապմունքները անց են կացվում հրամանատարական և քաղաքական կազմի միջոցով։ Ուսումը անքակտելիորեն կապված է դաստիարակության հետ։ Ակումբը, Լենինյան անկյունը և նրանց կից կազմած կազմակերպությունները՝ կարմիր բանակայինների քաղաքական դաստիարակության կենտրոններն են։ Այստեղ է, որ հայտնաբերվում է կարմիր բանակայինների ինքնագործունեությունը և հարստանում՝ նրանց հասարակական փորձությունը, գիտությունը, նրան հետաքրքրող գիտելիքների ասպարեզում։ Կարմիր բանակը սերտորեն կապված է բանվորական ձեռնարկությունների և հիմնարկությունների հետ։ Ամբողջ քաղաքական աշխատանքը Կարմիր բանակում տարվում է կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ։

Մայրենի լեզու.—Ընթերցումն այն հոդվածների ու կտորների, որտեղ խոսվում է Կ. բանակայինի գրագիտության և քաղաքական դաստիարակության նշանակության և Կարմիր բանակի քաղաշխատանքների մասին։ Գրագիտության նշանակությունը նվիրված լոզունգների կազմելն ու գրելը գրատախտակի վրա և տետրերում։ Ակումբի աշխատանքների ցուցակագրությունը (խմբակների, զրույցների, դասախոսությունների, ներկայացումների և այլն)։ Բառերը վանկերի բաժանելը և տողադարձի կանոնը։

Մաթեմատիկա.—Գրել բազմանիշ թվեր, օգտվելով տվյալ զորամասի, Կարմիր բանակի անգրագետների, Կարմիր բանակի ակումբների, տվյալ զորամասի ակումբի հաճախողների թվական ճիշտ տվյալների հիման վրա. կազմել ուղղանկյուն դիագրամմա.

5. ԱՌԱՆՑ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ՉԿԱ ԲԱՆԱԿ

Քաղգրագիտություն.—Առանց դիսցիպլինայի չկա ոչ կազմակերպություն, ոչ տնտեսություն, ոչ պետություն, ոչ համաձայնեցրած գործողություն և ոչ էլ հաղթանակ։ Ռազմական գործում դիսցիպլինան ավելի ևս կարևոր է քան մի որևէ այլ տեղ։ Կարմիր բանակի դիսցիպլինան նշանակում է յենթարկվել բանվորա-գյուղացիական իշխանության հրատարակած օրենքներին, հետևել զինվորական ծառայության կանոններին, անշեղ կատարել զինվորական պարտականությունները ու բանվորա-գյուղացիական պետության կողմից դրված կոմիսարների և հրամանատարների հրամանները։ Կարմիր բանակի դիսցիպլինան հենվում է ոչ թե դասակարգային յենթարկման վրա, ինչպես կապիտալիստական յերկրներում (զինվորները՝ գյուղացիներից և բանվորներից, իսկ սպաները կալվածատերերից ու բուրժուաներից), այլ աշխատանքի ուղիղ բաժանման և ուղիղ ղեկավարման անհրաժեշտության վրա։

Մայրենի լեզու.—Ընթերցումն Բ. Գ. Կ. Բ. կարգապահության կանոնագրքի համապատասխան կետերի և լրագրական հոդվածների, ուր շոշափվում են կարմիր բանակայինների կարգապահության հարցերը։ Դիսցիպլինան Կ. բանակում թեմայի շուրջը կոլեկտիվ լոզունգների կազմումը։ Նաբեկ կարմիր բանակայինների կարգապահության մասին լրագրական թղթակցություններ կազմելը։ Հաջող թղթակցության ընթերցումը և ընտրությունը պատի թերթի համար։

Տետրակներում և գրատախտակի վրա գրել Կարմիր բանակի կարգապահությունը վերաբերող լոզունգներ։ Բացատրել բառերը վանկերի բաժանելը կարդալու և գրելու ժամանակ և տողադարձի կանոնը։

6. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՔԱՋՈՒԹՅՈՒՆ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Քաղգրագիտություն.—Կարմիր բանակում պետք է զարգացած լինի ընկերականությունը, վորը ամենից առաջ մարտիկներից պահանջում է փոխադարձ համակրանք։ Խաղաղ ժամանակ ու գլխավորապես կռվի մեջ մարտիկները օգնում են իրար։ Բոլորը՝ մեկի և մեկը՝ բոլորի համար։ Բոլոր տեսակի զորքերի փոխադարձ գործակցությունն է ապահովում լիակատար հաջողություն։ Տարբեր տեսակի զորքերի, ինչպես մի ձեռքի զանազան մատների մեջ, չի կարող վոչ թշնամություն, վոչ ատելություն և վոչ էլ տարաձայնություն լինել։ Ռազմական գործը և վտանգը անբաժան են իրարից. վտանգին կարելի յե հակադրել միայն քաջությունը, վորը նշանակում է միշտ պատրաստ լինել դիմավորելու ամեն տեսակ վտանգի։ Կարմիր բանակը պիտի դաստիարակե աշխատավորության գործի քաջ պաշտպաններ։ Յուրաքանչյուր զորամաս պետք է խրախուսե յերիտասարդ, դեռ չկազմակերպված մարտիկին, դաստիարակե, կոփե-կոփե, օգնե դժվար րոպեյին, բայց միաժամանակ և արհամարհանքով պատժե ակնհայտ վախկոտին և մորթեպաշտին։

Ճշմարտությունը անբաժան է քաջությունից և նրա հետ միասին կազմում է գիտակից մարտիկի առավելությունը։ Թշնամուն կարելի յե և պետք է խաբել, բայց նա, ով խաբում է յուրայիններին, նա օգնում է թշնամուն։

Մայրենի լեզու.—Կարմիր բանակում ընկերության, քաջության և ճշմարտության նշանակությունը ընդգծող հատվածների, լրագրական հոդվածների ընթերցանություն։ Համապատասխան լոզունգների կազմելը և գրելը գրատախտակի վրա և տետրակներում։ Նախկին պարապմունքներին թույլ յուրացրած կանոնների բացատրությունը կարդալու և գրելու ընթացքում։

7. ՊԱՀՊԱՆԻՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ

Կարմիր բանակայինը գալով զորամաս, ստանում է հրացան, հագուստեղեն, կոշիկներ, իսկ հեծելազորում, հրետանում և տնտեսական մասերում նրան հանձնվում է նաև ձի, լծասարք, սայլ (повозка) և այլն։

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է ուշադրությամբ հսկի և խնամի իր զենքը, զգեստը, ձին, զորամասի ունեցվածքը և այն շենքը, վորտեղ նա ապրում է։ Կարմիր բանակայինը ցուցահանդեսներ, թանգարաններ, հասարակական այգիներ և ընթերցարաններ հաճախելիս պետք է որինակ ծառայի ուրիշներին իր զգույշ վերաբերմունքով դեպի գրքերը, լրագրները, նկարները, բույսերն ու կենդանիները։ Ամեն մի դեպքում նա պետք է լավ հիշի, վոր դա վոչ թե ցարական կամ բուրժուական ունեց-

վածք է, այլ համաժողովրդական գույք է։ Անուշադիր, անբարեխիղճ վերաբերմունք ունեցվածքի և զենքի հետ նշանակում է ավելորդ ծախսերի տակ ձգել բանվորներին ու գյուղացիներին։

Յուրաքանչյուր գործի և առավել ևս զինվորական գործի հաջողության անհրաժեշտ պայմանը ճշտապահությունն է։ Ամեն ինչ պետք է անել յուր ժամանակին, արագ և շուտ։ Դուրս ես գալիս պարապմունքի, մարզում ես հրացանդ, փաթաթում ես փաթաթաններդ, գրագիտություն ես սովորում, թե լվացվում ես — այդ միևնույն է, ամեն աշխատանք պիտի կատարել ուշադրությամբ, բարեխղճորեն և մինչև վերջ։

Յուրաքանչյուր խոշոր գործ կազմվում է փոքրիկ գործողություններից։ Պատերազմի վախճանը կախված է առանձին կռիվների վախճանից։ Կռվի վախճանը կախված է յուրաքանչյուր կարմիր բանակայինի վարքից։ Յուրաքանչյուր կարմիր բանակայինի վարքը կախված է նրա պատրաստությունից, ունակությունից, ռազմագետի կանոնավորությունից և շատ նման բաներից։ Բանակում չկան այնպիսի «չնչին բաներ», վորոնց կարելի յե աչքաթող անել։ Դաստիարակելով, յուրաքանչյուրը իրեն պատերազմի համար, պետք է խաղաղ ժամանակ ևս նախատեսնի ու ուշադիր կերպով կատարի յուրանքանչյուր փոքր բան։

Մայրենի լեզու.— Ընթերցումն դասագրքերից կամ ամսագրերից, ուր ընդգծված են, թե ինչպիսի վնաս է հասցրվում Կարմիր բանակին ժողովրդական գույքի անխնամ վերաբերվելիս, անճշտության և այլ դեպքերում։ Տվյալ թեմայի լոզունգների կոլլեկտիվ կազմումը։ Լոզունգները պետք է լինեն սեղմ, վորոշ և պարզ։ Այս պայմանները բացատրվում են սովորողներին կազմելու ընթացքում։ Կետադրության կանոնը կարդալու և գրելու ժամանակ։

Մաթեմատիկա.— Կարմիր բանակայինի հագուստեղենի, զենքերի արժեքների թվական տվյալների հիման վրա գրել բազմանիշ թվեր։ Ծանոթություն հասարակ կոտորակների գրելու և կարդալու հետ (օրինակ $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$, $^3/_4$ և այլն)։ Վերոհիշյալ թվական տվյալներից օգտվելով, կատարել գումարման և հանման բանավոր վարժություններ։

8. ՊԱՀՊԱՆԻՐ ՔՈ ՅԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Քաղգրագիտություն.— Բանակի ռազմունակությունը կախված է վոչ միայն նրա տեխնիկայից, այլև նրա մարտիկների ֆիզիքական առողջությունից։ «Հետևակի ուժը — նրա վոտքերում է». առողջ բանակը — հաղթության գրավականն է։ Կարմիր բանակում կարմիր բանակայինները իրենք պետք է մասնակցեն առողջության պահպանմանը։ Ճշտությունը և մաքրությունը առողջության պահպանման գլխավոր պայմաններն են։ Ցարական Ռուսաստանը պահում էր աշխատավորությանը կեղտի և տգիտության մեջ։ Աշխատանքի և աշխատավորների կենցաղի առողջացումը հանդիսանում է Խորհրդային Միության առաջնակարգ խնդիրներից մեկը։ Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է գիտենա և կատարի առողջության պահպանման հիմնական կանոնները։ Այդ կանոնները նախատեսված են կանոնագրքով (Ներքին ծառայության ժամ. կանոնագիրք, հրատարակություն 1925 թ. IX գլուխ, յերես 159, 162, 165-188)։

Մայրենի լեզու.— Կարդալ կանոնագրքից համապատասխան կետեր և նրանցից էականները գրել տետրակների մեջ։

Մաթեմատիկա. Տիֆով, խոլերայով և այլ հիվանդությամբ հիվանդացողների թվական տվյալների հիման վրա, գրել բազմանիշ թվեր։

9. ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Քաղաքագիտություն. Զինվորական գործում շատ բան հիմնված է գաղտնիքի վրա. Թշնամիներից գաղտնի յեն պահվում զինվորների թիվը, նրանց դասավորումը, սպառազինումը ոչ միայն պատերազմի՝ այլ և խաղաղ ժամանակ։ Պետք է միշտ հիշել, որ մեր թշնամիները հարուստ են և հզոր՝ նրանք չեն խնայի միջոցներ վարձու լրտեսների միջոցով իմանալու համար այն բոլորը, որ արվում է Խորհրդային Միության մեջ յերկրի պաշտպանության համար, որպեսզի հետագայում հարմար րոպեյին մեր թուլությունը և թերությունները օգտագործեն։ Զինվորական տեղեկությունները կողմնակի մարդկանց հաղորդելը և ընդհանրապես շատախոսությունը զինվորական գործի ասպարեզում կարող է Կարմիր բանակին և Խորհրդային իշխանությանը ծանր հարվածներ հասցնել։ Շատախոս չլինել քաղաքականապես գիտակից և կոփված կարմիր բանակայինի անհրաժեշտ հատկանիշն է։

Մայրենի լեզու.—Զինվորական գաղտնիքի նշանակությունը և ոտարերկրյա լրտեսների աշխատանքը նկարագրող գեղարվեստական կտորների, պատմվածքների և ոտանավորների ընթերցանություն։ Ի՞նչ նշանակություն ունի զինվորական գաղտնիքը հարցի պատասխանների կոլեկտիվ ձևակերպումը և գրելը։ Հարցական նշանի բացատրությունը գրելու և կարդալու ժամանակ։

10. ՊԱՏԻԺՆԵՐ ՅԵՎ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐ

Դիսցիպլինար կարգով պատժվում են նրանք, ովքեր չեն կատարել հրամանները, խախտել են իրենց պարտականությունները, ոտնահարել են զինվորական պարտականություններն ու ընկերական համերաշխությունը անբարեխիղճ են վերաբերվել ժողովրդական ունեցվածքի հետ և այլ. քայլերի ու հանցանքների համար, անկախ նրա պաշտոնից, իսկ ավելի լուրջ դեպքերում այդպիսիների գործը հանձնվում է դատարանին։ Աշխատավորների գործին դավաճանելը, շահագործողների կողմն անցնելը պատժվում է մահապատժով։

Պատիժները գործադրվում են Կարմիր բանակի և ամբողջ պետության շահերը առանձին զինվորական ծառայողների վտանգավոր գործողություններից պաշտպանելու համար։ Որքան կը բարձրանա աշխատավորների ընդհանուր մակարդակը, այնքան քիչ կը լինեն բանակում տգետներ և հետամնացներ, այնքան գիտակցական կը դառնա կարգապահությունը և այնքան քիչ կը լինեն նրա խախտողները ու հետևապես պատիժները։

Բանվորա-գյուղացիական իշխանությունը հանձնում է հրամանատար-

ներին կոմիսարներին և ընդհանրապես պետերին ոչ միայն պատժիչ ներգործության միջոցների կիրառումը, այլ և խրախուսանքի միջոցներինը՝ բարեխիղճ, աշխատասեր, ու աչքի ընկնող զինվորական ծառայողների համար, անկախ նրանց տարած պաշտոնից։

Ռազմական ծառայությունների համար աչքի ընկնող ռազմիկները Բանվորա-գյուղացիական պետության կողմից պարգևատրվում են պատվանշանով՝ կրծքին կրելու համար Կարմիր Դրոշի շքանշանով։ Դա միակ զինվորական շքանշանն է, միակերպ բոլորի համար, սկսած՝ շարքային կարմիր բանակայինից և վերջացրած՝ ընդհանուր հրամանատարով։ Այդ շքանշանը չի տալիս ոչ մի արտոնություն և իրավունք, բացի այն իրավունքից, որ պետք է քաղաքացիները հարգանքով վերաբերվեն դեպի այն մարդու մատուցած քաջությունները և ծառայությունները, ով արժանի յե շքանշանի։

Մայրենի լեզու. — Դիսցիպլինար կանոնագրքի համապատասխան կետերի ընթերցումը։ Օգտվել նաև լրագրում զետեղված Ռազմահեղափոխական դատարանին վերաբերող փոքրիկ հոդվածներից։ Դիսցիպլինար կանոնագրքի առանձին կետերի արտագրումը թերթերի մեջ։ Օրինակելի դատավճռի կազմումը։

11. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻ

Քաղգրագիտություն. — Կարմիր բանակայինը օգտվում է Խորհրդային պետության քաղաքացու բոլոր իրավունքներից։ Կարմիր բանակայինը մնացած աշխատավորներին հավասար կարող է ընտրել և ընտրվել Խորհուրդներում։ Կարմիր բանակայինը իր զորամասի ընդհանուր ժողովներում քննում է ինչպես յուր զորամասին և ամբողջ Կարմիր բանակին, այնպես և ամբողջ Խորհրդային Միությանը վերաբերող կարևոր հարցերը։ Ազնիվ, գիտակից, և քաղաքականապես գրագետ կարմիր բանակայինը կարող է մտնել աշխատավորների քաղաքական կազմակերպությունները՝ Ռ.Կ.Կ. (Բ) և Ռ.Լ.Կ.Յե.Մ. մեջ։ Կարմիր բանակայինը ոչ միայն չի կտրված մնացած ազգաբնակությունից, ինչպես կտրված էր հին բանակի զինվորը, այլ ընդհակառակը ամուր կապված է աշխատավորների հետ Խորհուրդների շեֆության, մամուլի և փոխադարձ այցելությունների միջոցով։

Մայրենի լեզու. — Ընթերցումն համապատասխան կտորների և հոդվածների սահմանադրությունից և դասագրքերից։ Կազմել վաշտի ընդհանուր ժողովի արձանագրություն։ Կազմել զորամասի պատգամավորներին ուղղված օրինակելի հրահանգ։ Գրելուց առաջ դժվար բառերի քերականական վերլուծություն։

Մաթեմատիկա. — Հաշվել ընտրվելիք պատգամավորների թիվը խորհրդի մեջ, ելնելով ընտրողների թվից (գյուղում, քաղաքում, ավյալ զորամասում)։ Շրջանաձև դիագրամայի կազմումն և ծանոթություն տոկոսների մասին, օգտվել տեղական խորհրդի. համամիութենական խորհուրդի Համագումարի սոցիալական կազմի թվական ավյալներից գրելու վարժություններ, տոկոսները վերածելու պարզ կոտորակների. (50 %-1/2, 25%-1/4 և այլն)։

12 ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ՔԱՂԱՇԽԱՏԱԿԻՑ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ

Քաղգրագիտություն. *Հրամատարը, քաղաքական աշխատակիցը, իրենց առաջ խնդիր ունեն՝ կարմիր բանակայինների ռազմական և քաղաքական ուսուցումը, դաստիարակությունը և համախմբումը* (сплоченые) *ռազմական զորամասի մեջ։*

Հրամանատարը և քաղաշխատակիցը գործում են ձեռք-ձեռքի տված՝ փոխադարձաբար լրացնելով մեկը մյուսին։ Պարապմունքների ժամանակ, զորանոցում, շարքի մեջ, կռվում, զորաշարժի ժամանակ, ինչպես նաև ծառայությունից դուրս՝ հրամանատարը (զինկոմը) կարմիր բանակայինների և բոլոր կրտսեր հրամանատարների ու քաղաշխատակիցների պետն է (Ներքին ծառայության ժամ. կանոնագիրք հրատ. 1925 թ. գլուխ I)։ Բայց Կարմիր բանակի մեջ ներքին վոչ մի միջնապատ չկա։

Ցարական կառավարությունը հրամանատարական կազմը ստեղծում էր «բարձր» խավից՝ ազնվականներից, կալվածատերերից և կապիտալիստներից. բանվորներին և գյուղացիներին զինվորական դպրոցները չէին ընդունում։

Խորհրդային իշխանությունը ստեղծում է Բանվորա-գյուղացիական հրամանատարական կազմ։ Ռազմական դպրոցները բաց են բոլոր աշխատավորների, բարեխիղճ և գիտակից յերիտասարդների առաջ։ Յուրաքանչյուր կարմիր բանակային կարող է դառնալ հրամանատար և ստանձնել ամենապատասխանատու պաշտոնները։ Այդպիսի որինակներ Կարմիր բանակում հազվագյուտ չեն։ Փոխադարձ ընկերական հարգանք տածելով հրամանատարները, քաղաշխատակիցները և շարքային մարտիկները խոսում են իրար հետ «դուք»-ով։ Հայհոյանքը անարգանքը, ծաղրը, առավել յեվս ծեծը, վոր գոյություն ուներ ցարական բանակում, կարմիր բանակում անհանդուրժելի յեն և նրանց գործադրողները խիստ պատժվում են։ Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է իմանա, վոր հանրապետության որենքները, դատարանները կանգնած են նրա իրավունքների, անձնավորության և արժանապատվության պաշտպանության համար։

Մայրենի լեզու. *Կարմիր բանակայիններից դուրս յեկած հրամանատարների կենսագրության ընթերցումը։ Ծանոթացում դպրոցները ընդունվելու կարգի ու կանոնների հետ։ Ընթերցումը կանոնագրքի այն կետերին, վորտեղ խոսվում է հրամքաղկազմի և կարմիր բանակայինների փոխհարաբերության մասին։ Զրույցի հիմնական միտքը, այն է՝ կարմիր բանակի հրամքաղկազմի և կարմիր բանակայինների փոխհարաբերությունը, գրի առնել։*

Մաթեմատիկա. *Կարմիր բանակի հրամանատարների, զինկոմների և քաղաշխատակիցների սոցիալական կազմի շրջանաձև դիագրամայի կազմումը։ Տարրական կոտորակների գրելու վարժություններ* (50%-1/2 25-1/4 *և այլն*

13. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Քաղգրագիտություն. *Խորհրդային պետությունը բանվորներին և գյուղացիներին կանչելով Կարմիր բանակ և կտրելով նրանց մի քանի տարով*

իրենց տնտեսությունից, հոգս ե տանում կանչվածների ընտանիքներին։ Պետությունը կարմիր բանակայինների ընտանիքներին մատուցում ե նյութական օգնություն և տալիս ե նրանց մի շարք արտոնություններ։ Հիմնական արտոնությունները տրվում են միասնական գյուղատնտեսական տուրքը հավաքելու ժամանակ։ Գյուղում փոխադարձ օգնության կոմիտեները առաջին հերթին օգնում են կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին։ Զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին վերապահված առավելությունները և արտոնությունները մեկնաբանված են «Որենքների գրքում», որ հաստատված ե Ս.Խ.Հ.Մ. Կենտգործկոմի կողմից 1924 թ. հոկտեմբերի 29-ին։

Մայրենի լեզու. Ընթերցումը «Ինչ արտոնություններ և առավելություններ ե տալիս ծառայությունը Կարմիր բանակում» գրքից։

Կարմիր բանակայինների ընտանիքներին վերապահված արտոնություններին վերաբերող և ծննդավայր ուղղված նամակի կազմումը։ Հատուկ անունները մեծատառով գրելու կանոնի կրկնություն։

Մաթեմատիկա. Ծանոթություն հարկային աղյուսակի հետ և ըստ օրենքի վերապահված արտոնությունները պարզել բանավոր կերպով։

15. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակի ուսուցման, դաստիարակման և ռազմական գործողությունների կանոնավոր ղեկավարությունը պահանջում ե կանոնավոր կազմակերպություն ու նրա առանձին մասերի միացում։ Յուր զորամասի կազմակերպությունը (վաշտ, մարտկոց, եսկադրոն, գունդ,)։ Դիվիզիայի կազմակերպությունը (բրիգադաներ)։

Շտաբները ղեկավարում են համապատասխան զորամասերի ռազմական գործողությունները և ուսուցման գործը։ Քաղ-բաժինները ղեկավարում են կուսակցական և քաղ-լուսաշխատանքը. շրջանի (округ) Ռազմա—Հեղափոխական Խորհուրդը (բանակի և ճակատի)։ Շրջանի շտաբը (բանակի և ճակատի)։ Շրջանի քաղվարչությունը, (բանակի քաղվարչություն, ռազմաճակատի քաղվարչություն)։

Հանրապետության Քաղվարչությունը, Բ. Գ. Կ. Բ. Շտաբը, ՍԽՀՄ Ռ. Հ. Խ. ընդգրկում, միացնում են Հանրապետության, ցամաքային, ծովային և օդային զինված ուժերի ղեկավարությունը՝ նրանց պատրաստությունը, ուսուցումը, դաստիարակումը, մատակարարումը և համալրումը (комплектование)։ Ընկ. Ֆրունզեյի մահից հետո ՍԽՀՄ Ռազմածովային ժողկոմ և ՌՀԽ նախագահ ե նշանակված Կլիմենտի Յեֆիմովիչ Վորոշիլովը։

Զինվորական հանցանքներ քննելու համար գոյություն ունեն զինվորական տրիբունալներ։ Դատախազական մարմինները հետևում են համապատասխան բանակային հիմնարկների գործողությունների կանոնավորությանը։ Հատուկ բաժինները հետևում են, որ Կարմիր բանակի շարքերը լրտեսներ, դավաճաններ և աշխատավորության այլ թշնամիներ չմտնեն։

Ընկ. ընկ. Վորոշիլովի, Լաշևիչի, Ունշլիխտի, Բուբնովի, Կամենևի, Բուդյոննու, Տուխաչևսկու և այլոց կենսագրությունները։

Մայրենի լեզու.—ՍԽՀՄ-ի ՌՀԽ-ի անդամների կենսագրությունների

ընթերցումը և հիմնական մոմենտների գրելը։ Կարմիր բանակի վարչական սխեմայի կազմումը կամ ծանոթացումը։

16. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՊԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Քաղգրագիտություն.—*Կարմիր բանակի ռազմունակության հիմնական գրավականն է կազմում նրա սերտ, անքակտելի կապը ամբողջ աշխարհի ու Միության աշխատավորության մասսաների հետ։ Բուրժուական բանակներում թագավորում է արհամարհանքի վոգին դեպի քաղաքացիականը* (штатский). *Կարմիր բանակում, ընդհակառակը յուրաքանչյուր մարտիկ չի մոռանում, վոր ինքը միայն զինված բանվոր է կամ գյուղացի։ Յուրաքանչյուր մարտիկ քաղաքացիական ազգաբնակչության միջավայրում պետք է լինի քաղաքականապես գիտակից, օրինակելի, ճշտապահ, մաքրասեր, և յերկրի պաշտպանության գործում Խորհրդային իշխանության ձեռք առած միջոցների ակտիվ և անխոնջ մեկնաբանողը։*

Մի կարմիր բանակայինի վարքով, ազգաբնակությունը դատում է ամբողջ զորամասի, հետևապես և ամբողջ Կարմիր բանակի մասին։ Այդ պատճառով յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է իրեն պահի կարմիր ռազմիկ քաղաքացու արժանապատվությամբ։ Բանվորական և գյուղացիական կազմակերպությունները ընդունում են Կարմիր բանակի զորամասերի շեֆությունը։ Կարմիր բանակի զորամասերը ընդունում են գյուղերի, մանկատների և այլ շեֆությունները։ Մի խոսքով Կարմիր բանակը և աշխատավոր ազգաբնակությունը կազմում են կուռ միացյալ ընտանիք.

Մայրենի լեզու.—*Շեֆության նվիրված լրագրական հոդվածների ընթերցումը։ Զորամասի բանվորական, խորհրդային շեֆ կազմակերպությունների անվանացուցակի կազմումը։*

Մաթեմատիկա. *Զորամասին հասցրած շեֆական օգնության թվերի հիման վրա կատարել բազմանիշ թվեր գրելու վարժությունները։*

ՀԱՏՎԱԾ II

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՎՈՐՊԵՍ ՍՍՀՄ-Ի ՊԱՇՏՊԱՆ
(19 ԶՐՈՒՅՑ)

17 ԻՆՉՊԵՍ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ԳՐԱՎԵՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղգրագիտություն. — *1917 թվի փետրվարին բանվորներն ու գյուղացիները ապստամբելով, գահընկեց արին Նիկոլայ II-ի արյունոտ միապետությունը։ Աշխատավորների անբավարար կազմակերպվածության հետևանքով, իշխանությունը՝ մենշևիկների և էսէռների աջակցությամբ, անցավ բուրժուազիայի ձեռքը։ Կազմված բուրժուական «ժամանակավոր կառավարությունը» շարունակեց նախկին ցարական քաղաքականությունը։ Բանակը նորից շպրտվեց կռվի դաշտ հանուն ռուս և օտար կապիտալիստների շահերի։ Բանվորական հեղափոխական-կազմակերպությունները հալածվում էին։ Հողը մնում էր կալվածատերերի ձեռքին։ 1917 թ. հոկտեմբերի 25-ին Լենինգրադի ապստամբ բանվորները, նավաստիներն ու զինվորները տապալեցին Կերենսկու բուրժուական կառավարությունը և հայտարարեցին Խորհրդային իշխանություն։ Այդ ապստամբությանը միացան ամբողջ Ռուսաստանի բանվորները և գյուղացիները։ Ապստամբությունը ղեկավարում էր Ռ.Կ.Կ. (բ) ընկեր Լենինի գլխավորությամբ։*

Մայրենի լեզու. — *Ընթերցում գեղարվեստական կտորների և հիշողությունների միապետության տապալման և հոկտեմբերյան հեղափոխության մասին։ Զրույցի հիմնական միտքը գրի առնել։ Ընթերցանության ժամանակ բազմակետի, իսկ գրավորի ժամանակ հարցականի բացատրությունը։*

Մաթեմատիկա. — *Գյուղատնտեսության և արդյունաբերության դրության թվական տվյալների հիման վրա կազմել ուղղանկյուն դիագրամմա, գրել բազմանիշ թվեր և գաղափար տալ տասնորդական կոտորակների մասին։*

Աշխարհագրություն. — *Քարտեզի վրա գտնել հոկտեմբերյան օրերի ռազմական կենտրոնները։*

18. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Քաղգրագիտություն.—*Կենտրոնական Ռուսաստանում Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո, Անդրկովկասի հակահեղափոխականները, մենշևիկները, դաշնակցականները և մուսավատականները բաժանվեցին հեղափոխական Ռուսաստանից և 1918 թվականին Անդրկովկասը հայտարարեցին անկախ բուրժուական հանրապետություն, որը կառավարվում էր սեյմով: Բայց վրացական, հայկական և թյուրք հակահեղափոխականները՝ կնյազները, բեկերը, մաուզերիստները չկարողացան իրար հետ հաշտ ապրել: Նույն 1918 թվին Անդրկովկասը բաժանվեց 3 բուրժուական հանրապետությունների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի: Այդ շրջանում Անդրկովկասի աշխատավորությունը մեծ զրկանքներ կրեց: Փաստորեն Անդրկովկասի տերը օտարերկրյա բուրժուազիան էր, որը անում էր այնպես, ինչպես ինքն էր ցանկանում:*

Թուրքական խաները, բեկերը, մուսավատականները վռնդեցին Ադրբեջանի հայերին, իսկ հայ դաշնակցական-մաուզերիստները ավերեցին ու թալանի մատնեցին Հայաստանում գտնված թյուրք գյուղերը: Վրաց մենշևիկները հալածում էին Վրաստանում գտնված ազգային փոքրամասնությունները և գրգռում աշխատավորներին իրար դեմ: Այդ ժամանակ բոլշևիկների ընդհատակյա յեռանդուն աշխատանքի շնորհիվ հետզհետե կազմակերպում են բանվորական մասսաները, որոնք հասկանում են վրաց մենշևիկների, դաշնակցականների և մուսավատականների դավաճան քաղաքականությունը և անցնում են բոլշևիկների կողմը: Կազմակերպված բանվորական մասսաները կոմկուսակցության ղեկավարությամբ ձեռք են առնում կտրուկ միջոցներ բուրժուական կառավարությունները տապալելու համար: Նրանց այդ փորձերը մի քանի անգամ ճնշվեց, բայց վերջի-վերջո հաղթանակը աշխատավորներին մնաց: 1920 թվի ապրիլին Բաքվի բանվորները տապալեցին մուսավաթականներին և հաստատեցին Խորհրդային իշխանություն Ադրբեջանում: 1920 թվի նոյեմբերին՝ Հայաստանում, իսկ 1921 թվի փետրվարին Վրաստանում հաստատվեց Խորհրդային իշխանություն:

Մայրենի լեզու.—*Կարդալ մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների օրոք Անդրկովկասի ժողովրդների ծանր դրությունը նկարագրող հոդվածներ: Կարդալ Զարենցի «Կապկապ թամաշա» պոեմայից համապատասխան կտորներ:*

Մաթեմատիկա.—*Ա.Ս.Խ.Ֆ. Հանրապետության տարածության և ազգաբնակության թվերի հիման վրա կազմել ուղղանկյուն դիագրամմա:*

Աշխարհագրություն.—*Անդրկովկասի աշխարհագրական դիրքը: Տարածությունը, Պարսկաստանի և Տաճկաստանի հետ ունեցած սահմանները: Ազգաբնակության կազմը: Գլխավոր գետերը, լեռները: Նշանավոր քաղաքները: Անդրկովկասի հաղորդակցության ճանապարհները:*

19. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Քաղգրագիտություն.—*Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ 1918 թվին Ադրբեջանի բանվորները և գյուղացիները իշխանությունը իրենց*

ձեռքը վերցրին և կազմեցին խորհրդային կառավարություն։ Ադրբեջանի բանվորները և գյուղացիները ցանկացան միանալ ռուսական բանվորների և գյուղացիների հետ միացյալ պայքարի ու աշխատանքի համար։ Իսկ մենշևիկները, եսերները և Ադրբեջանի բուրժուազիայի կուսակցությունը՝ մուսավաթականները ցանկանում էին միություն ստեղծել ոչ թե ռուս բանվորության ու գյուղացիության հետ այլ՝ օտար բուրժուազիայի։

Մենշևիկները և եսերները դաշն կնքեցին անգլիական բուրժուազիայի հետ, Բաքու հրավիրեցին Պարսկաստանի անգլիական զորքերը, որոնց օգնությամբ տապալեցին Խորհրդային իշխանությունը Ադրբեջանում (1918 թվին)։

Անգլիական բուրժուազիան մենշևիկների ու եսերների հետ հալածում էր Բաքվի բանվորությանը, գլխավորապես բոլշևիկներին։

Անդրկովկասի աշխատավորությունը դեռ յերկար կ'հիշի անգլիական իմպերիալիստների վայրագությունները Բաքվի կոմիսարների նկատմամբ՝ 26 Բաքվի կոմիսարների, նրանց թվում Շահումյանի և Ջափարիձեյի գնդակահարությունը Անդրկասպյան անապատներում Պերեվալ և Ախչա-կույմա կայարանների միջև։

Մուսավաթականները դաշն կնքեցին Տաճկաստանի բուրժուազիայի հետ և նրա ուժերի օգնությամբ 1918 թվի սեպտեմբերին գրավեցին Բաքու քաղաքը, դուրս քշելով մենշևիկների և եսերների կառավարությունը։ Այսպիսով Ադրբեջանում կազմվեց բուրժուական հանրապետություն, որտեղ տերերը Ադրբեջանի կապիտալիստներն էին՝ խաները, բեկերը սկզբում տաճկական, իսկ հետագայում Անտանտայի ուժերի օգնությամբ։ Օտար բուրժուազիան օգնություն էր ցույց տալիս Բաքվի նավթի համար, որը և նա արտահանում էր Ադրբեջանից։

Մուսավաթականները գոյություն ունեցան մինչև 1920 թվի ապրիլի 28-ը։ Դրանք մռայլ օրեր էին Ադրբեջանի համար՝ օտար բուրժուազիան յերկրի տերն ու տնօրենն էր դարձել, բանվորներն ու գյուղացիները հալածվում էին, ճնշվում խաների ու բեկերի կողմից, գյուղը կործանվում էր, գյուղական տնտեսությունը քայքայվում էր։ Բուրժուազիան իր քաղաքականությամբ բորբոքում էր տարբեր ազգությունների աշխատավորության ազգային թշնամությունները։

Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը միացնում էր բանվորներին և հեղափոխական գյուղացիներին, որոնք մուսավաթական կառավարության դեմ մղում էին ընդհատակյա պայքար։ Բաքվի բանվորները կազմակերպում էին գործադուլներ և պատրաստվում էին տապալել կառավարությունը։ Նրանց ջանքերը հաջողությամբ պսակվեցին՝ 1920 թ. ապրիլի 28-ին մուսավաթական կառավարությունը տապալվեց, և կազմվեց Խորհրդային իշխանություն։ Օգնության կանչվեց յեղբայրական XI Կարմիր բանակը, որի աջակցությամբ վերջնականապես յերկիրը ազատվեց խան ու բեկերից։

Մայրենի լեզու.— Կարդալ Բաքվի 1918 թվի դեպքերի նկարագրությունը։ Պատմել Շահումյանի կենսագրությունը և գրել տետրակներում։

Աշխարհագրություն.— ԱՍԽՀ աշխարհագրական դիրքը, տարածությունը, սահմանները, ժողովրդի թիվը, կլիման, ժողովրդի զբաղմունքը։

ԱՍԽՀ, որպես նավթային արդյունաբերության կենտրոն՝ Բաքուն և նրա շրջանները:

Մաթեմատիկա. Ադրբեջանի Հանրապետության տարածության և ազգաբնակության թվական տվյալների հիման վրա գրել բազմանիշ թվեր:

20. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Շատ ծանր էր Հայաստանի աշխատավորների դրությունը դաշնակցական լծի տակ: Անվերջ կռիվներ բոլոր հարևանների հետ: Կտրված արտաքին աշխարհից, քաղցածություն, սով, վարակիչ հիվանդություններ, ահա ինչ էր բաժին ընկել Հայաստանի աշխատավորներին դաշնակների անկախ բուրժուական հանրապետությունից: Զզված այս դրությունից Լենինականի բանվորները, կոմկուսակցության ղեկավարությամբ, 1920 թվի մայիսին ապստամբվեցին դաշնակների դեմ: Այդ ապստամբության միացան Լենինականի, Կարսի, Սարիղամիշի, Ղազախի, Նոր-Բայազետի զինվորներն ու աշխատավոր գյուղացիները: Սակայն ապստամբությունը վատ էր կազմակերպված, Կոմկուսակցությունը դեռ թույլ էր Հայաստանում այդ ժամանակ, դրա համար էլ Հայաստանի բանվորների և գյուղացիների այդ առաջին ապստամբությունը մաուզերիստների ու խմբապետների կողմից ճնշվեց: Մայիսյան ապստամբությունից հետո, Հայաստանի աշխատավորության դրությունը ավելի վատացավ: Դաշնակները կռիվ սկսեցին տաճիկների դեմ: Տաճիկները գրավեցին Հայաստանի շատ յերկրամասեր: Հետևանքը յեղավ նորից քաղց, սով և վարակիչ հիվանդություններ: Բացի այդ դաշնակները սկսեցին անխնա հալածել ապստամբ գյուղացիներին՝ շատերին փախցրին Հայաստանի սահմաններից (Ղազախ), իսկ շատերին բանտարկեցին ու սպանեցին: Հայաստանի բանվորների և գյուղացիների համբերությունը հատավ: Ղազախի շրջանում գյուղացիները նույն թվի նոյեմբերին նորից ապստամբեցին դաշնակցականների դեմ: Նրանց օգնության հասան Բաքվից իրենց այն յեղբայրակիցները, որոնք մայիսին փախել էին դաշնակներից: Նոյեմբերի 29-ին կազմվում է Ղազախում Հայաստանի Հեղափոխական Կոմիտե և Հայաստանը հայտարարվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Մայրենի լեզու.—Կարդալ մայիսյան շարժումները նկարագրող գեղարվեստական կտորներ: Կարմիր բանակայինները իրենք պատմում են Հայաստանի աշխատավորության դրության մասին իրենց հիշողությունները:

Աշխարհագրություն.—Հայաստանի աշխարհագրական դիրքը, տարածությունը, կլիման, գլխավոր քաղաքները, լեռները և գետերը:

Մաթեմատիկա.—Կազմել Հայաստանի բռնած տարածության և ազգաբնակության թվերի հիման վրա ուղղանկյուն դիագրամմա:

21 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանը 1918 թվին Անդրկովկասյան Սեյմի անկումից հետո բաժանվեց և կազմեց առանձին հանրապետություն, որը կառավարում էին

վրաց մենշևիկները։ Բանվորներից և գյուղացիներից վախենալով, վրաց մենշևիկները դիմեցին գերմանական բուրժուազիայի օգնությանը, որի հետևանքով գերմանական զորքերը մտան Վրաստան։ Գերմանացիները պարտվելով Արևելյան ճակատում, Վրաստանում գտնվող զորքերը հետ կանչեցին։ Այդ ժամանակ Վրաստանի մենշևիկները դիմեցին անգլիական բուրժուազիայի օգնությանը։ Անգլիական զորքերը մտան Վրաստան և վարվում էին այնտեղ այնպես, ինչպես իրենք էին ցանկանում։

Արտասահմանյան կապիտալիստները օգտագործում էին մենշևիկյան Վրաստանը բոլշևիկների դեմ պայքար մղելու համար, իսկ ապագայում մտածում էին օգտագործել նրան Արևելքում իրենց գիշատիչ շատ մտադրություններին հասնելու համար։

Բայց, չնայած օտարերկրյա զորքերի ներկայությանը Վրաստանում, մենշևիկյան քաղաքականության դեմ այստեղ-այնտեղ բռնկվում էին գյուղացիական ապստամբություններ՝ Մինգրելիայում, Դուշեթի նահանգում, Հարավ-Օսեթիայում և այլ վայրերում։ Այդ ապստամբությունները դաժանաբար ճնշվում էին մենշևիկյան գվարդիայի կողմից օտար զորքերի օգնությամբ։ Բայց չնայած ներքին, խիստ ռեժիմին, բոլշևիկյան շարժումը ավելի ուժեղանում էր։

Հայաստանում և Ադրբեջանում Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո անգլիական բուրժուազիան վախենալով, որ հեղափոխությունը կարող է ազդել նաև իր զորքերի վրա, հանեց նրանց Վրաստանից։ Վրաց մենշևիկները մնալով մենակ՝ առանց օտար կապիտալիստների օգնության, ուժեղացրին կոմունիստների հալածանքը, որոնք հազարներով տառապում էին բանտերում։ Մասսաների զայրույթը քանի գնում՝ աճում էր։ 1921 թվի սկզբներին ապստամբեցին Բորչալուի գավառի և Սանահնի չեզոք գոտու գյուղացիները, որոնք միացան կամավորական ջոկատների հետ։ Ապստամբներին միացան Վրաստանի այլ շրջաններում ապստամբված բանվորները և գյուղացիները, որոնք XI բանակի օգնությամբ 1921 թվի փետրվարին գրավեցին Թիֆլիզը և հայտարարեցին Վրաստանում Խորհրդային իշխանություն։

Մայրենի լեզու. — Կարդալ Զարենցի «Կապկազ Թամաշա» պոյեմայից համապատասխան կտորներ և գրել։

Աշխարհագրություն. — Վրաստանի աշխարհագրական դիրքը, տարածությունը, ազգաբնակությունը և բնական հարստությունները։

22. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ — ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

(Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները)

Քաղաքագիտություն. — Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և խորհրդային իշխանության հաստատվելու հիմնական պայմանն էր բանվոր դասակարգի միությունը աշխատավոր գյուղացիության հետ։ Միայն այդ միության շնորհիվ հաջողվեց դուրս քշել կալվածատերերին, ու կապիտալիստներին, վերցնել հողերը, գործարանները, յերկա-

Թաղային ճանապարհների մասնավոր սեփականությունը, դարձնելով այդ բոլորը ամբողջ աշխատավորական պետության ունեցվածք։ Գյուղացիությունը ազատվեց կալվածատիրական ճորտատիրությունից և ամբողջ հողի օգտագործությունը հանձնվեց նրանց։ Բանվորները ազատվեցին կապիտալիստների անգութ շահագործումից։ Բանվորա-գյուղացիական միությունը անհրաժեշտ է անընդհատ ամրացնել, քանի վոր նա յե — Խորհրդային իշխանության հիմքը։ Յեվ նրա պահպանման դեպքում միայն, մենք կարող ենք ապագայում ևս հաջողությամբ դիմադրել թշնամիների գրոհներն ու ազատ պահել մեր խաղաղ աշխատանքը։ Գյուղացիական տնտեսությունը կախված է նրանից, թե ինչպես կաշխատեն գործարանները ու ֆաբրիկաները։ Պետական արդյունաբերության լիակատար զարգացումը կտա գյուղացիությանը աժան գործվածքներ, կոշիկներ, արհեստական պարարտացում, կառ-կարասի, գյուղատնտեսական մեքենաներ և այլն։ Մեքենաները կը թեթևացնեն գյուղացիական ծանր աշխատանքը, կը չորացնեն ճահիճները, կը լավացնեն կյանքը։ Բանվոր դասակարգը վոչ պակաս շահագրգռված է գյուղատնտեսության զարգացմամբ։ Յեթե գյուղատնտեսությունը զարգանում է, արդյունաբերությունը մեծ շուկա յե ունենում իր ապրանքները սպառելու, պակասում է գործազրկությունը, և բանվորների դրությունը լավանում է։ Ահա թե ինչու բոլշևիկները՝ ընկ. Լենինի կուսակցությունը, տասնյակ տարիների ընթացքում կռվել է Բանվորա-գյուղացիական միության համար, ստեղծել է նրան ու ամրացրել։ Խորհրդային իշխանությունը Բանվորա-Գյուղացիական իշխանությունն է։

Մայրենի լեզու.— *Բանվորների ու գյուղացիների դրությունը անցյալում նկարագրող և նրանց ներկա նվաճումները արտացոլող հատվածների ընթերցում։ Զրույցի հիմնական մտքերի գրի առնում։ Գրելու ժամանակ հաճախ հանդիպող սխալների բացատրություն։*

Մաթեմատիկա.— *Հոկտեմբերից առաջ և հետո գյուղացիների ձեռքում գտնված հողի թվական տվյալների հիման վրա կազմել և նկարել շրջանաձև դիագրամմա։ Ազգայնացրած գործարանների արժեքի հիման վրա գրել բազմանիշ թվեր։*

23. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

Քաղաքագիտություն.— *Բանվորների և գյուղացիների միության մեջ ղեկավարող դերը մնում է բանվոր դասակարգին, վորը իրականացնում է իր դիկտատուրան։ Պրոլետարիատի դիկտատուրան բանվոր դասակարգի և գյուղացիության միության, այնպիսի ձև է, վորի ժամանակ Միության ղեկավարող դերը պատկանում է քաղաքի արդյունաբերական պրոլետարիատին։ Պրոլետարիատը ղեկավարել է գյուղացիությանը Հոկտեմբերյան և կալվածատերերի ու գեներալների դեմ մղվող քաղաքացիական կռիվների ժամանակ, ղեկավարում է և այժմ՝ գյուղացիության և ամբողջ յերկրի տնտեսության վերականգնման գործում։*

Առանց պրոլետարիատի ղեկավարության գյուղացիությունը ինքնուրույն կերպով վոչ կարող եր թագավորին գահընկեց անել, վոչ կալվածատերերից հողը խլել և վոչ էլ հաղթահարել քաղցն ու քայքայումը, քանի

վոր գյուղացիությունը ջլատված ե, ցրիվ յեկած, չունի այնպիսի հեղափոխական ուսմունք, վորպիսին ունի բանվոր դասակարգը:

Բանվոր դասակարգին ե պատկանում հեգեմոնի (այսինքն ղեկավարի) դերը բանվորա-գյուղացիական միության մեջ այն պատճառով, վոր «միայն պրոլետարիատի խոշոր տնտեսության մեջ ունեցած իր տնտեսական դերի ուժով ընդունակ ե լինելու բոլոր աշխատավոր և շահագործվող մասսաների առաջնորդ, վորոնց բուրժուազիան շահագործում ե. ճնշում և սեղմում թերևս ավելի ուժեղ քան պրոլետարիատին, բայց վորոնք անընդունակ են ինքնուրույն պայքար մղելու իրենց ազատության համար»: (Լենին): Բանվոր դասակարգը հավաքված ե քաղաքներում՝ տասնյակ և հարյուր հազարներով մի տեղում, նա ավելի յե միացված, և գրեթե ամբողջովին կազմակերպված: Քաղաքային պրոլետարիատը ավելի կրթված ե և կոփված պայքարում:

«Սակայն, գյուղի տնտեսական զարգացման, հասարակական կազմակերպությունների ամրացման, (կոոպերացիայի բոլոր տեսակները, գյուղացիական Փոխադարձ Օգնության կոմիտեները, Հող-Անտառ միությունը) և քաղաքական զարգացման հետ միասին կաճի և կամրանա ջլատված գյուղական պրոլետար, կիսապրոլետար մասսաների և նմանապես միջակ գյուղացիության կապը քաղաքի բանվորների հետ, կջնջվի քաղաքային արդյունաբերական պրոլետարիատի ղեկավարող դերի այն տարբերությունը, վորը աճել ե հեղափոխության ընթացքում»*):

Իշխանության գլուխ կանգնած բանվոր դասակարգը տանում ե այնպիսի քաղաքականություն, վորը գյուղացիների մեծամասնության համար ընդունելի յե և ցանկալի:

Մայրենի լեզու. — Հեղափոխության ժամանակ պրոլետարիատի դերը և պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը լուսաբանող նյութերի ընթերցումը: «Ինչու յե Միության մեջ ղեկավարող դերը պատկանում պրոլետարիատին» — հարցի պատասխանների գրելը:

Մաթեմատիկա յեվ աշխարհագրություն. — Արդյունաբերական խոշոր կ'ենտրոնների (Լենինգրադ, Մոսկվա, Իվանովո-Վոզնեսենսկ, Դոնբաս, Ուրալ և այլն) բանվորների թվերի հիման վրա բացատրել գումարման գործողության կանոնը: Գտնել այդ կենտրոնները քարտեզի վրա:

24. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ — ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Ե. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քաղաքագիտություն. — Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո իշխանության օրգանները դարձան բանվորների, գյուղացիների, (կոզակների) և կարմիր բանակայինների պատգամավորների Խորհուրդները, վորոնք կառավարում են մեր յերկիրը: Խորհուրդները ընտրվում են միայն աշխատավորների կողմից: Կուլակները, նեպմաններն ու նրանց նմանները չեն

*) Յարոսլավսկի. — «Քաղաքագիտության ձեռնարկ գյուղի համար» յերես, 11.

օգտվում Խորհուրդների մեջ ընտրելու և ընտրվելու իրավունքից։ Խորհըրդային իշխանության մեջ աշխատավոր կանայք, բանվորուհիները և գեղջկուհիներն օգտվում են բանվորներին և գյուղացիներին հավասար իրավունքներով։ Խորհրդային իշխանության մեջ պատասխանատու պաշտոններում են առաջավոր բանվորները, գյուղացիները և նրանց լավ ներկայացուցիչները՝ շահագործողների դեմ մղած յերկարամյա պայքարում փորձված կոմունիստները (բոլշևիկները)։ Խորհրդային իշխանությունը ընտրվել է ներքևից վերև և դրանով բոլորին մոտեցնում է պետության վարչությանը (Գործկոմների և Խորհուրդների սոցիալական կազմը)։

Բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորական Խորհուրդները (գյուղական, քաղաքային) ընտրվում են տարին մի անգամ և ներկայանում են տվյալ քաղաքի կամ գյուղի բարձրագույն իշխանությունը։

Ամեն տարի հրավիրվում են շրջանային, գավառային, նահանգային, առանձին հանրապետությունների և շրջանների (область) Խորհուրդների համագումարներ, վորոնք ներկայանում են տվյալ տերիտորիայի բարձրագույն իշխանությունը։ Նրանք իրենց միջից ընտրում են գործադիր կոմիտեներ (շրջանային, գավառային, նահանգային, Հանրապետական-կենտրոնական), վորոնք տանում են աշխատանքը և ներկայացնում են տվյալ վայրի բարձրագույն իշխանությունը մինչև Խորհուրդների հետևյալ համագումարը։ Տարին մի անգամ հրավիրվում է Միության բոլոր հանրապետությունների Խորհուրդների համագումար։ Նա, ներկայնում է Միության բարձրագույն իշխանությունը. ընտրվում է ՍԽՀՄ Կենտգործկոմ. Կենտգործկոմը ընտրում է Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։

Մայրենի լեզու.— Թեմային վերաբերող կտորների և նույն իսկ հատվածների ընթերցումը սահմանադրությունից։ Զրույցի հիմնական կետերի գրի առնումը կամ սահմանադրության համապատասխան կտորների արտագրումը։ Մինչև գրատախտակի և տետրերի մեջ գրելը բառերի վանկերի վերլուծելը։ Կրճատած բառերի բացատրությունը. ինչպես՝ գործկոմ ՀԿԳԿ և այլն։ Բոլոր խոսքերի բացատրությունը։

Մաթեմատիկա.— Համամիութենական համագումարներին մասնակցած պատգամավորների սոցիալական կազմի թվերի հիման վրա կատարել ամբողջ թվերով գումարման վարժություններ։ Շրջանաձև դիագրամմայի կազմումը։ Ծանոթություն ՍԽՀՄ Խորհրդային իշխանության կառուցման սխեմայի հետ։

25. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հասարակագիտություն.— Խորհրդային իշխանությունը հիմնված է մեր յերկրում բնակվող բոլոր ժողովուրդների գյուղացիների և բանվորների միության վրա։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի տերրիտորիայի վրա առաջացան առանձին Խորհրդային հանրապետություններ։ Քաղաքացիական կռիվների տարիներին այդ հանրապետությունները միասին կռվում եյին ընդհանուր թշնամի՝ ռուս և օտար կապիտալիստների դեմ։

1922 թվին, Խորհուրդների X-րդ համագումարում առանձին խորհըրդային հանրապետությունները միացան և կազմեցին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը։ Միությունը ստեղծված է առանձին հանրապետությունների փոխադարձ տնտեսական և կուլտուրական օգնության և կապիտալիստական աշխարհին միասնական Խորհըրդային ճակատ հակադրելու համար։ Կարմիր Բանակը, արտաքին քաղաքականությունը, արտաքին առևտուրը, յերկաթուղային ճանապարհները և ֆինանսները միացված են ամբողջ Միության մասշտաբով։

Ներկայումս Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ են մտնում, վորպես հավասար անդամներ ՌՍՖԽՀ, ՈւՍԽՀ, ԲՍԽՀ, ԱՍՖԽՀ, Ուզբեկստանի ՍԽՀ և Թուրքմենստանի ՍԽՀ։

Մայրենի լեզու.— *Ընթերցումն այն պայմանների, ուր նկարագրված է ցարական և Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը։ Կ. բանակայինների պատմվածքներ այս կամ այն Խ. հանրապետության մեջ լինելու մասին։ Գրի առնել տարբեր ազգությունների կենցաղային առանձնահատկությունները։ Կազմել ՍԽՀՄ մեջ բնակվող ազգությունների ցուցակը։ Կոլլեկտիվ ուղղումներ վոճի տեսակետից։ Ավելորդ բառերի դուրս ձգելը և նախադասության ճիշտ կառուցումը։*

Մաթեմատիկա.— *ՍԽՀՄ ազգային կազմի թվական տվյալների հիման վրա կատարել գումարման վարժություններ։ Ծանոթություն մետրական յերկարության չափերի հետ։ Գաղափար մակերևույթների* (площадь) *մասին, ռուսական և մետրական քառակուսի չափեր (քառակուսի վերստ, քառ. կիլոմետր, դեսյատին-հեկտար, վերստ-կիլոմետր, մետր-սաժեն և այլն)։*

26. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Քաղաքագիտություն.— *1922 թվին Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը կազմեցին ԱՍՖԽՀ։*

Անդրկովկասյան Ֆեդերացիան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորությունը միացրեց և կազմեց մի սերտ ընտանիք, վոչընչացրեց ազգային թշնամությունը, և նրա հետևանք կռիվները, վորոնք գոյություն ունեյին Անդրկովկասում մինչև Խորհրդային իշխանության հաստատվելը։ Ներկայումս Անդրկովկասի աշխատավորությունը մասնակցություն ունի Անդրկովկասյան Ֆեդերացիայի Վարչության գործում տալով յուր ներկայացուցիչները Անդրկովկասի Խորհուրդների Համագումարին և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին։ Բանվորա-Գյուղացիական կառավարությունը հաշվի յե առնում Անդրկովկասի ամբողջ աշխատավորության շահերը, վարում է տնտեսության այն ճյուղերը, վորոնք համանդրկովկասյան նշանակություն ունեն, կատարելագործում է և զարգացնում Անդրկովկասի տնտեսության զանազան ճյուղերը։ Նյութական օգնություն է ցույց տալիս հանրապետություններին իրենց տնտեսությունը լայնացնելու և ամրացնելու համար։ Բանվորա-գյուղացիական կառավարությունը, ՌԿԿ(Բ) ղեկավարությամբ, պաշտպանում է Անդրկովկասի մեջ ապրող զանազան ազգությունների շահերը։

Անդրկովկասի Սոցիալիստական, Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետությունը մտնում է ՍԽՀՄ կազմի մեջ, վորպես անկախ հանրապետություն։ Ամբողջ Միությունը, շահագրգռված լինելով Միության յուրաքանչյուր Հանրապետության տնտեսական արագ վերածնման մեջ, շատ է ոգնում ցարական կառավարության ժամանակ ճնշված Անդրկովկասյան հանրապետությունների ազգային տնտեսության և կուլտուրայի զարգացմանը։

Միութենական կառավարությունը մեծ գումարներ է բաց թողնում ինչպես համամիութենական, այնպես էլ Անդրկովկասյան կամ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող այս կամ այն հանրապետության մասշտաբով նշանակություն ունեցող արդյունաբերության զարգացման կամ գյուղատնտեսության բարձրացման համար։ Անդրկովկասի յուրաքանչյուր Հանրապետություն՝ զարգացնելով յուր ազգային կուլտուրան, միաժամանակ և տնտեսական ու կուլտուրական ոգնություն է ցույց տալիս մնացած հանրապետությունների աշխատավորությանը։

Մայրենի լեզու.— *Ընթերցում լրագրական այն հոդվածների, ուր շեշտված է Անդրկովկասյան Ֆեդերացիայի նշանակությունը։ Գլխավոր մտքերը ձևակերպել և գրել։*

Աշխարհագրություն.— *Անդրկովկասի բնական հարստությունները՝ նավթ և պղինձ։ Նրանց ահագին նշանակությունը ՍԽՀՄ համար։ Անդրկովկասի հանքային արդյունաբերությունը։ Նավթարդյունաբերություն։ Մշակող արդյունաբերություն։ Գյուղական տնտեսությունը և նրա գլխավոր ճյուղերը՝ բամբակագործություն, գինեգործություն։*

Մաթեմատիկա.— *Կազմել ուղղանկյուն դիագրամմա, վորը ցույց տա Անդրկովկասի արդյունաբերության գյուղատնտեսության զարգացումը Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո։*

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ.

Քաղաքագիտություն.— Խորհրդային իշխանություն հաստատվելուն պես Հայաստանի աշխատավորությունը ազատվեց ազգամիջյան թշնամություններից, հալածանքներից ու անվերջ կռիվներից։ Բանվորագյուղացիական իշխանության ղեկավարությամբ վերաշինվում է ծայր աստիճան քայքայված Հայաստանի տնտեսությունը, զարգանում արդյունաբերությունը՝ Զանգեզուրի և Ալլահվերդու պղնձի հանքերը և գործարանները սկսել են աշխատել։ Սկսել են զարգանալ արդյունաբերության ուրիշ ճյուղեր, ինչպես որինակ կաշվի, ձկան և այլ. զարգանում է նաև գյուղական տնտեսությունը, մեծանում են բամբակի ցանքսերը, զարգանում է գինեգործությունը։

Խորհրդային իշխանությունը ոգնում է գյուղացիներին, նրանց տնտեսությունը բարձրացնելու և կատարելագործելու։ Յերկիրը էլեկտրոֆիկացիայի յե յենթարկվում, անց են կացվում ջրանցքներ անջրդի վայրերը ջրելու համար։

Մայրենի լեզու.— *Կարդալ Հայաստանի շինարարությունը նկարագրող գեղարվեստական կտորները, նրանց հիմնական մտքերը գրի առնել։*

Աշխարհագրություն.— *Հայաստանի արդյունաբերության տեսակները՝ հանքային արդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, գյուղատնտեսություն, բամբակագործություն, գինեգործություն և այլն։*

Մաթեմատիկա.— Կատարել բազմանիշ թվերի գումարման և հանման վարժություններ Հայաստանի աշխարհագրության վիճակագրական նյութի թվական տվյալների հիման վրա։ Կազմել դիագրամաններ, վորոնք ցույց կտան Հայաստանի գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացումը վերջին տարիների ընթացքում։

28. ԱԴՐԲԵՋԱՆԻ Ս. Խ. Հ.

Քաղաքագիտություն.— Խորհրդային իշխանությունը Ադրբեջանում հաստատվելով, վերացան ազգային թշնամությունների հետքերը, և ամբողջ աշխատավորությունը միացավ մի հանրապետության մեջ՝ Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության մեջ, ուր մտնում են Նախիջևանի Ս Խ Հ և Լեռնային Ղարաբաղի-ավտոնոմ շրջանը։ Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը վերացրեց հողի և այլ ունեցվածքի մասնավոր սեփականությունը։ Ամբողջ հողը տվեց գյուղացիներին, իսկ գործարանները, ձեռնարկությունները դարձան աշխատավորների պետության ունեցվածք։ Ադրբեջանի բոլոր ազգության բանվորները և գյուղացիները մասնակցություն ունեն յերկրի վարչության գործում, տալով իրենց ներկայացուցիչները Խորհուրդների Համագումարին և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին. Նրանք բոլորը միասին վերաշինում են յերկրի քանդված տնտեսությունը։ Վերաշինում են արդյունաբերությունը, և 1925 թվին այդ աշխատանքի փայլուն արդյունքները մենք տեսանք. որինակի համար՝ նավթային արդյունաբերությունը հասել է համարյա նախապատերազմյան ժամանակի արդյունաբերությանը։ Բամբակագործությունը ևս արագ զարգանում և արդեն հասնում է նախապատերազմյան ժամանակի 73 տոկոսին։

Մայրենի լեզու.— Կարդալ Ադրբեջանի տնտեսական կյանքի վերելքը նկարագրող հատվածներ։ Գրավոր վարժություններ։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա Նախիջևանի, Ադրբեջանի հանրապետությունները և Լեռնային Ղարաբաղի անկախ շրջանը։ ԱՍԽՀ հանքային արդյունաբերությունը։ Գյուղատնտեսությունը։ ԱՍԽՀ մշակող արդյունաբերությունը։

Մաթեմատիկա.— ԱՍԽՀ տնտեսական վիճակագրական տվյալների հիման վրա կատարել ամբողջ թվերով գումարման և հանման գործողություն։

29. ՎՐԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ.

Վրաստանում ապրող զանազան ազգության պատկանող բանվորներն ու գյուղացիները, վերցնելով իշխանությունը իրենց ձեռքը, խաղաղ աշխատանքի համար միացան՝ վերջ դնելով բոլոր տեսակի ներքին յերկպառակություններին։ Ներկայումս Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության մեջ մտնում են՝ Աջարիստանի, Աբխազիայի Ավտոնոմ Սոցիալիստական Հանրապետությունները և Հարավ-Օսեթիայի ավտոնոմ

րջանը։ Վերոհիշյալ հանրապետությունների և շրջանի բանվորներն ու գյուղացիները մասնակցություն ունեին յերկրի վարչության գործում, տալով իրենց ներկայացուցիչները Համառուսական Խորհուրդների Համագումարին և Վրաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին։ Ավտոնոմ հանրապետությունները և շրջանը ունեին իրենց իշխանության որգանները։

Վրաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելով, ազնվականների և կալվածատերերի բոլոր հողերը տրվեցին գյուղացիներին։ Գործարանները և ֆաբրիկաները, վորոնք առաջ պատկանում եյին կապիտալիստներին, անցան Վրաստանի Բանվորագյուղացիական կառավարության ձեռքը։

Վրաստանի Խորհրդային իշխանությունը պաշտպանում է հանրապետության բոլոր ազգությունների շահերը, լայնացնում է արդյունաբերությունը, ոգնում է գյուղացիներին բարձրացնելու և կատարելագործելու գյուղատնտեսության զանազան ճյուղերը։ ՎՍԽՀ մեջ մտնող հանրապետությունների և շրջանների կուլտուրական զարգացումը բարձրացնելու նպատակով Վրաստանի կառավարությունը ցույց է տալիս նյութական ոգնություն՝ անց է կացնում ջրանցքներ, կառուցում է ելեկտրո-կայաններ։

Մայրենի լեզու. — Լրագրական հոդվածների ընթերցում Վրաստանում կատարվող շինարարական աշխատանքների մասին։

Մաթեմատիկա. — Կատարել հանման վարժություններ, ոգտվելով, լրագրերի և ամսագրերի նոր վիճակագրական տեղեկություններից, վորքան են բարձրացել արդյունաբերության և գյուղատնտեսության զանազան ճյուղերը վերջին տարվա ընթացքում։

Աշխարհագրություն. — Վրաստանի ՍԽՀ կազմի մեջ մտնող ավտոնոմ հանրապետությունների և շրջանի գտնելը քարտեզի վրա։ Գլխավոր քաղաքները։ Վրաստանի բնական հարստությունները։ Հանքային և մշակող արդյունաբերություն։ Վրաստանի գյուղատնտեսությունը՝ գինեգործություն, ծխախոտի մշակույթ, շերամապահություն՝ թեյի տնկարաններ, անասնապահություն, անտառային տնտեսություն։

30-31 Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.

ՌՍԽՖՀ կազմվել է խորհրդային ազգային հանրապետությունների ազատ ֆեդերացիայի հիմունքով այն ժամանակից, յերբ իշխանությունը Ռուսաստանում անցնում է աշխատավորության ձեռքը։ Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը հնարավորություն տվեց շատ հանրապետությունների և շրջանների (область) տեղավորվելու ՌՍԽՖՀ ներսը։ (Հանրապետություններ են՝ Բաշկիրիայի, Թաթարական, Կազակների, (Կիրգիզիայի), Դաղստանի, Մերձվոլգյան, Բուրյատո-Մոնղոլական, Ղրիմի, Յակուտի, Կարելիայի, Չուվաշի. շրջաններն են՝ Վոտյակների, Մարիյեյի, Կալմիկիայի, Զիրյանական, Կարաչաևո—Չերկեսական, Կաբարդինո—Բալկարական, Կարա-Կիրգիզյայի և այլն։

Այս ավտոնոմ հանրապետություններից և շրջաններից յուրաքանչյուրը ունի իր ինքնուրույն ներքին վարչությունը։ ՌՍԽՖՀ մեջ արդյու-

նաբերությունը ավելի յե զարգացած քան Միութենական մյուս հանրապետություններում։ Այստեղ են գտնվում գլխավոր բանվորական կենտրոնները՝ Մոսկվա, Լենինգրադ, Իվանովո-Վոզնեսենսկ, Սորմովո, Ուրալ, վորտեղ առաջացել են ՌԿԿ(Բ)՝ բանվոր դասակարգի կուսակցության ամենահին և խոշոր կազմակերպությունները։ Բնական ե, թե ինչու ՌՍՖՍՀ-ը քաղաքացիական կռիվների տարիներին խորհրդային իշխանության հենակետն եր։

Մայրենի լեզու.— ՌՍՖՍՀ մեջ ապրող ազգությունների կենցաղային հատկությունները նկարագրող հատվածների ընթերցանություն։ Գրի առնել ՌՍՖՍՀ ազգաբնակության զբաղմունքները և բնական պայմանների բնութագիրը ամփոփ կերպով։ ՌՍՖՍՀ կյանքը պատկերացնող լրագրական տեղեկությունների ընթերցումը։ Նախադասությունների կոլլեկտիվ ուղղումը վոճի տեսակետից։

Մաթեմատիկա.— ՌՍՖՍՀ ազգաբնակության և բռնած տարածության թվական տվյալների հիման վրա կազմել ուղղանկյուն դիագրամմա։ Գրել յերկաթուղային ճանապարհների և գետերի համեմատական յերկարությունը ռուսական և մետրական չափերով։ ՌՍՖՍՀ տնտեսական գրությունը բնութագրող թվական տվյալների հիման վրա կատարել գումարման գործողություն։

Տնտեսական աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա ՌՍՖՍՀ մեջ մտնող ավտոնոմ շրջանները և անկախ հանրապետությունները։ Ազգաբնակության քանակը և զբաղմունքը։ Արդյունաբերական և յերկրագործական շրջաններ։ Կլիմայական և բնական պայմանները։ Յերկաթուղային ճանապարհների ցանցը։ Գետերը և լճերը։ Գլխավոր ելեկտրական կայանները և ելեկտրոֆիկացիայի ցանցը։ Գլխավոր քաղաքները և կենտրոնական-արդյունաբերական կետերը։

32. ՈՒԿՐԱՅՆԱՅԻ ՍԽՀ. ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՍԽՀ.

Ցարական Ռուսաստանը մոտ 300 տարի ճնշել ե Ուկրայնային, ձեռք ե առել բոլոր միջոցները նրան «ռուսացնելու»՝ արգելել ե ուկրայնական լեզուն, Ուկրայնական դպրոցը։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ուկրայնան առաջինը ստացավ իր անկախության ճանաչումը (1917 թվի դեկտեմբերի 4-ին)։ Կազմված ուկրայնական խորհրդային իշխանությունը սերտ կապ ե ստեղծում Խորհրդային Ռուսաստանի հետ, բայց նա զորություն ե ունենում վոչ յերկար, տապալվելով գերմանական զորքերի միջոցով։ Ուկրայնայի աշխատավորների պայքարը տարբեր հակահեղափոխական զորքերի դեմ շարունակվել ե մի քանի տարի։ Ուկրայնան իր վրա գրավեց սպիտակ-գվարդիականների և նրանց ոգնող ոտար կապիտալիստների ուշադրությունը յուր հացով, քարածուխով, յերկաթուղով, շաքարով և այլ հարստություններով։ Ուկրայնական կուլակները ոգնում եյին սպիտակ-գվարդիականներին։ Ուկրայնայի աշխատավորությունը միշտ կուռ միություն ե ունեցել ՌՍՖՍՀ հետ։ Այժմ խորհրդային Ուկրայնան մտնում ե ՍԽՀՄ մեջ, վորպես անկախ հանրապետություն։ 1924 թվի հոկտեմբերին ՈւՍԽՀ տերիտորիայի վրա կազմվեց ավտոնոմ Մոլդավայի

ՍԽՀ-ը։ Ուկրաինական ժողովրդի մի մասը գտնվում է պանական Լեհաստանի ճնշման տակ.

Բելոռուսիայի աշխատավորությունը դարեր անընդհատ տքնել է լեհական պանների և ցարական միապետության ճնշումների ներքո։ Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ՌՍՖԽՀ կառավարությունը հանում է փորոշում Բելոռուսիայի Խորհրդային հանրապետության անկախության մասին (1918 թ. փետրվարի 5-ին)։ Քաղաքացիական կռիվների ժամանակ Բելոռուսիայի աշխատավորությունը ստիպված էր տանելու, Բուլակ-Բալախովիչի ու Սավինկովի բանդաների և սպիտակ լեհերի ճնշումներն ու ավերածությունները։ Այժմ էլ Բելոռուսիայի տերիտորիայի և ազգաբնակության մի մասը գտնվում է պանական Լեհաստանի ճնշման տակ։ Խորհրդային Բելոռուսիան մտնում է Միության մեջ անկախ հանրապետության իրավունքներով. այժմ նա ընդլայնվել է ի հաշիվ Բելոռուսական շրջանների, (Վիտեբսկինի, Գոմելսկինի), վորոնք առաջ մտնում եյին ՌՍՖԽՀ մեջ։ Խորհրդային Բելոռուսիան տնտեսապես և կուլտուրապես ամրանում է։

Մայրենի լեզու. — Ուկրաինացիների կենցաղը նկարագրող հոդվածների, պատմվածքների, վոտանավորների ընթերցում։ Լրագրական ընթացիկ դեպքերը լուսաբանող հոդվածների ընթերցում։ Կազմել նախորդ զրույցի Ուկրաինայի տնտեսական դրության ամփոփ գրավոր բնութագիրը, հարցերի ու պատասխանների ձևով՝ 1) ազգաբնակության թվի մասին, 2) ինչով է հարուստ Ուկրաինան, 3) ինչպես է ընթանում տնտեսության բարձրացումը։ Նախադասությունների ուղղումը վոճի կողմից։

Պանական Լեհաստանում և ԲՍԽՀ մեջ ապրող Բելոռուսների դրությունը նկարագրող հատվածների ընթերցումը։ Նույն այդ թեմային վերաբերող լրագրական տեղեկությունների ընթերցում։ Բելոռուսիայի բնական պայմանների ամփոփ նկարագրության կոլեկտիվ կազմումը։ Նկարագրությունը կազմելիս բացատրել նախադասությունները ուղիղ կառուցելու պահանջները՝ կարճություն, ավելորդ բառերով չծանրաբեռնել և այլն։ Մինչ գրելը հղկել յուրաքանչյուր նախադասությունը։

Մաթեմատիկա. — Ուկրաինայի տնտեսական աշխարհագրության թվական տվյալների հիման վրա կատարել ամբողջ թվերով գումարման վարժություններ։ Ռուսական և մետրական յերկարության չափերի տվյալների գրանցումը։ Ծանոթություն մետրական ծանրության չափերի հետ (գրամմ, կիլոգրամմ, տոնն)։ Նույն թվական տվյալներից ոգտվելով բացատրել տասնորդական կոտորակների գումարումը։ ԲՍԽՀ բռնած տարածության և արտադրած արդյունքների թվական տվյալների արտահայտելը ռուսական և մետրական յերկարության և ծանրության չափերով։ Տնտեսական աշխարհագրության թվական տվյալների հիման վրա վճռել գումարման մեկ-յերկու խնդիր։ Արդյունաբերության և գյուղական տնտեսության արտադրած արդյունքների համեմատական հաշվի հիման վրա բացատրել հանման կանոնը։

Տնտեսական աշխարհագրություն. — Ուկրաինայի տարածությունն ու սահմանները քարտեզի վրա։ Ուկրաինան, վորպես հացառատ կենտրոն։ Ժողովրդի քանակը և զբաղմունքը։ Ուկրաինան, վորպես ածխի և ճակնդեղա-շաքարի արդյունաբերության կենտրոն։ Ուկրաինայի կլիմայական

պայմանները։ Յերկաթուղային ճանապարհների ցանցը։ Գետերը և նավահանգիստները։ Ուկրայնայի գլխավոր քաղաքները (Խարկով, Պոլտավա, Կիև, Օդեսսա, Ստալինո, Կրիվոյ Ռոգ և ուրիշ.)։

Աշխարհագրություն.— Բելոռուսիայի տարածությունը և սահմանները։ Ազգաբնակության թիվը և զբաղմունքը։ Բնական և կլիմայական պայմանները։ Յերկաթուղային և ջրային հաղորդակցության ճանապարհները։ Բելոռուսիայի գյուղատնտեսության առանձնահատկությունները։

33. ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՅԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՍԽՀ.

Քաղաքագիտություն.— Այս յերկու ՍԽ հանրապետությունները (Ուզբեկստանի ՍԽՀ մեջ մտնում և ավտոնոմ Տաճիկստանի ՍԽՀ) կազմվել են 1924 թ. հոկտեմբերին նախկին Թուրքեստանի ՍԽՀ և Բուխարայի ժողովրդական հանրապետության տերիտորիայի վրա։ Այս հանրապետությունների կազմակերպումը պետք է նպաստի հարուստ յերկրի և այնտեղ բնակվող ուզբեկների, տաճիկների և այլ ազգությունների զարգացմանը և վերջ տա Թուրքեստանի ազգամիջյան կոտորածներին։ ՍԽՀՄ մեծ օգնություն է ցույց տալիս այս հանրապետությունների յերկրի վոռոգմանն ու ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացման աշխատանքներին։

Մայրենի լեզու.— Թուրքեստանի կլիմայական, բնական և կենցաղային պայմանները նկարագրող հոդվածների ու հատվածների ընթերցումը։ Վերոհիշյալ հանրապետությունների գրությունը պարզող լրագրական տեղեկությունների ընթերցանություն։ Թուրքեստանի բնական և կենցաղային պայմանների գրավոր բնութագրի կազմումը հիմնական հարցերի պատասխանի ձևով (տես 26-րդ գրույց)։ Շարադրության վոճի ուղղման վարժությունների շարունակությունը։

Մաթեմատիկա.— Տնտեսական աշխարհագրության տվյալների գրի առնելը մետրական ծանրության և յերկարության չափերով։ Տնտեսական աշխարհագրության տվյալների հիման վրա կատարել ամբողջ թվերով հանման վարժություններ։ Գումարման գործողության կրկնություն։

Տնտեսական աշխարհագրություն.— Ցույց տալ քարտեզի վրա Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Տաճիկստանի հանրապետությունները։ Սահմանները գտնել, բնական և կլիմայական պայմանների բնութագիրը։ Գետերը և յերկաթուղային ճանապարհները քարտեզի վրա։

Բամբակագործական շրջանները։ Խաղողի մշակույթը։ Տվյալներ հանքային և գործարանային արդյունաբերության մասին։

34. ՍԽՀՄ ՅԵՎ ԱՍԽՖՀ Կ. ԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Քաղաքագիտություն.— Ընկ. ընկ. Կալինինի, Ռիկովի, Խանջյանի, Որախելաշվիլու կենսագրությունները։

Մայրենի լեզու.— Կենսագրությունների ընթերցումը և գրելը։

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Քաղաքագիտություն.— *Ընկ. ընկ. Կարինյանի և Համբարձումյանի կենսագրությունները։*

Մայրենի լեզու.— *Կենսագրությունների ընթերցումը և գրելը։*

ՀԱՏՎԱԾ III

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(II ԶՐՈՒՅՑ)

36. ԻՆՉՈՒ ՍԿՍՎԵՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎԸ

Քաղաքագիտություն.—*Կապիտալիստները, կալվածատերերը և ցարական գեներալները չեյին կարող հաշտվել գոյություն ունեցող բանվորների և գյուղացիների իշխանության հետ, վորը խլել եր նրանց իշխանությունը, հողը և գործարանները։ Հոկտեմբերյան հեղափոխությամբ արտաքսված և յերկրի ծայրամասերը քշված կապիտալիստները, գեներալներն ու կալվածատերերը սկսեցին ռազմական ուժ ստեղծել ցարական սպաներից, կազակներից և կուլակներից խորհրդային իշխանությունը տապալելու ու նախկին կարգերը վերականգնելու համար։ Ռուս սպիտակ գվարդիականներին ոգնում եր համաշխարհային կապիտալը։ Օտար կապիտալիստները ատում են խորհրդային իշխանությանը ցարական պարտքերը չվճարելու և իրենց ձեռնարկություններն ու հողերը խլելու համար. Նրանք վախենում են իրենց յերկրի պրոլետարական հեղափոխություններից։*

Խորհրդային իշխանությունն իր գոյության հենց առաջին որերից ստիպված եր դիմադրելու սպիտակ գվարդիականների զինված գրոհներին, վորոնք առաջ եյին ընթանում դեպի մեր կենսական կենտրոնները, և նըվիրելու իր ամբողջ ուժը ու միջոցները հակահեղափոխության դեմ մղվելիք պայքարին։

Մայրենի լեզու.—*Կարդալ հոդվածներ, վորոնք լուսաբանում են խորհրդային իշխանության դեմ մղած օտար ու ռուս կապիտալիստների և կալվածատերերի պայքարի պատճառները։ Կոլեկտիվ ձևակերպում և զրույցի հիմնական մտքերի գրանցում։*

Մաթեմատիկա.—*Հաշվել ցարական նախապատերազմյան և պատերազմական պարտքերը և յեթե կան տվյալներ՝ կապիտալիստներից և կալվածատերերից բռնագրավված ունեցվածքի արժեքը։ Կատարել հանման գործողություն ամբողջ թվերով և, յեթե ժամանակը ներում ե՝ գումարման գործողություն, ոգտվելով վերոհիշյալ թվական տվյալներից։*

37. ԿԱՐՄԻՐ ԳՎԱՐԴԻԱՆ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խորհրդային իշխանության առաջին զինված ուժը յեղել է Կարմիր Գվարդիան. Բանվորական Կարմիր Գվարդիան սկսել է ստեղծվել փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո, նախ Լենինգրադի և ապա այլ քաղաքների գործարաններում ու ֆաբրիկաներում։ Հոկտեմբերյան հեղաշրջման մոմենտին գոյություն ունեյին Կարմիր Գվարդիայի ջոկատներ, վորոնք կազմված եյին բանվորներից, զինվորներից և կամավոր-նավաստիներից։ Կարմիր Գվարդիան ակտիվ մասնակցություն է ունեցել Հոկտեմբերյան հեղափոխությանը՝ ջարդել է Կերենսկու կողմնակիցների ջոկատը և հաջողությամբ պայքարել է Կալեդինի և Հարավ-Արևելքում Կրասնովի դեմ։ Խորհրդային իշխանության թշնամի ուժերը միացան։ Եռ-երները և մենշևիկները Ուկրայնա կանչեցին Վիլհելմի գերմանական բանակը։ Կարմիր Գվարդիան հաղթում եր յուր անձնազոհությամբ և հեղափոխական մղեցնությամբ (ПОРЫВ), *նա չուներ խիստ զինվորական կազմակերպություն, նրա կարգապահությունը թույլ եր և պետերն եյ ընտրովի։ Թշնամու ուժեղ և քանակով մեծ բանակների հանդեպ պետք եր ուժեղ, թվով մեծ ու կարգապահ Կարմիր Բանակ միասնական հրամանատարությամբ և խիստ կենտրոնացած ղեկավարությամբ։ 1918 թվի փետրվարի 23-ին հրատարակվեց կամավորական Կարմիր բանակի կազմակերպման դեկրետը, բայց բանից դուրս յեկավ, վոր դա եյ քիչ եր։ Ոտարերկրյա կապիտալիստների ղեկավարությամբ եռ-երները բարձրացրին Չեխո-սլովակյան կորպուսի ապստամբությունը Սիբիրում։ Պետք եր հրաժարվել կամավոր բանակից, անցնել պարտադիր զորակոչի։*

Այդ տարում աշխատավորները Կարմիր բանակ կանչվեցին մի քանի անգամ։ Թշնամիների հարվածների տակ սկսեց զարգանալ ու բազմանալ բանվորագյուղացիական Կարմիր բանակը։

Մայրենի լեզու.— *Ընթերցում այն հատվածների և գեղարվեստական յերկերի, վորոնք լուսաբանում են Կարմիր գվարդիայի և Կարմիր Բանակի կազմակերպումը յեվ մղած պայքարները։ Կոլլեկտիվ ձևակերպում։ Գրանցում Կարմիր Գվարդիայի ռազմունակության թուլության պատճառների և զրույցի հիմնական մտքերի։*

Աշխարհագրություն.— *Գտնել քարտեզի վրա Կարմիր Գվարդիայի և սպիտակ գվարդիականների միջև տեղի ունեցած կռիվների վայրերը, վորոնք՝ հիշատակվեցին զրույցի ընթացքում։*

Մաթեմատիկա.— *Գաղափար գրաֆիկների մասին։ Կազմել քաղաքացիական պատերազմի տարիների և խաղաղ ժամանակի Կարմիր բանակի թվական կազմը պատկերացնող գրաֆիկա։ Կատարել համեմատ վարժություններ Կարմիր բանակի քաղաքացիական պատերազմի և խաղաղ ժամանակի թվական տվյալների հիման վրա։*

38. ԿՈԼՉԱԿ ՅԵՎ ԴԵՆԻԿԻՆ

Քաղաքագիտություն.— *Առաջին խոշոր հաղթանակը Կարմիր Բանակը տարավ Չեխո-սլովակյան և սպիտակ գվարդիական միացյալ ուժերի դեմ*

արևելյան ֆրոնտում։ Սպիտակներից խլված էր Կազանը (սեպտեմբերի 11-ին) և մաքրված՝ Ուրալը։ Բայց այդ ժամանակ հանդես չեկավ նոր և ուժեղ թշնամի։ Էս-էռների, մենշևիկների (վորոնց նա հետագայում վռնդեց) օգնությամբ և օտար կապիտալիստների ցուցմունքով ծովակալ Կոլչակը կազմակերպեց Սիբիրում բանակ։

Կոլչակի բանակն էյին հավաքվել սպիտակ սպաները, կազակները, կուլակների տղաները, չեխո-սլովակների մնացորդները և բռնի ուժով զինակոչի յենթարկված գյուղացիները։ Անգլիան և Ֆրանսիան մատակարարում էյին Կոլչակին դրամ և զինամթերք։ 1919 թվի գարնան սկզբներին Կոլչակը մոտենում է Վոլգային, բայց մեծացած և ամրացած Կարմիր Բանակը դիմում է առաջխաղացման և 1919 թվի ընթացքում ջարդում և քայքայում է Կոլչակի Բանակը։ Կոլչակի վոչնչացմանը բավականաչափ նպաստեցին Սիբիրում ապստամբված գյուղացիները։ Ինքը, Կոլչակը 1920 թվի սկզբներին Զինվորական Տրիբունալի դատավճռով գնդակահարվեց Իրկուտսկում։

1919 թիվը՝ Խորհրդային իշխանության ամենածանր և մարտական տարին է։ Կոլչակի դեմ պայքար մղելու անհրաժեշտությունը թուլացրեց մեր ուշադրությունը և ուժերը հարավային ֆրոնտում, ուր հաջողվեց ցարական գեներալ Դենիկինի «կամավորական բանակ»-ին հավաքվել։ Նա ստեղծվեց Կուբանում սպաներից և կուլակ կազակներից։ Լավ զինված Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, դիմեց հառաջխաղացման և կարողացավ գրավել Ուկրայնան։

Գրիգորյևի դավաճանությունը, մախնովշչինան և կուլակների ապստամբությունը հեշտացրին Դենիկինի առաջխաղացումը դեպի Մոսկվա։

Ազգաբնակության բռնի զինակոչի հաշվին մեծացած Դենիկինի բանակը, գրավեց Օրյոլը և մոտենում էր Տուլային։ Յերկրի բոլոր ուժերի խիստ շարժումով, առաջին հերթին Կոմ. կուսակցության և կարմիր հեծելազորի կազմակերպությամբ 1919 թվի վերջին Դենիկինի բանակը կործանվեց։ Նրա մնացորդները բարոն Վրանգելի հրամանատարությամբ պատսպարվեցին Ղրիմում։

Մայրենի լեզու.— Կարդալ այնպիսի հոդվածներ և պատմվածքներ, ուր նկարագրված են ու լուսաբանված՝

ա) Կոլչակի սպիտակ բանակի գործադրած բռնությունները Սիբիրի գյուղացիության նկատմամբ, բ) Կոլչակի դեմ կռվող պարտիզանական ջոկատների գործողությունը, գ) Կ. Բանակի պայքարը Դենիկինի դեմ։

Արտագրումը կամ կազմումն Կարմիր Բանակի և Կոլչակի կռիվների օրացույցի (արձանագրել գլխավոր կռիվների վայրերը և օրը, ցույց տալով ով է առաջխաղացել և ով է նահանջել)։ Գրանցումն Դենիկինի և Կարմիր Բանակի ռազմական գործողությունների օրացույցային թվականների (календарных дат)։

Մաթեմատիկա.— Գրանցումը Սիբիրի ազգաբնակության թվի և բռնած տարածության տվյալների (մետրական չափերով)։ Սիբիրի և ՍԽՀՄ ազգաբնակության և բռնած տարածության համեմատությունը նախօրոք կազմած ուղղանկյուն դիագրամմաների միջոցով։ Կատարումը հանման և գումարման վարժությունների Կարմիր Բանակի, Կոլչակի բանակի թվի, զինավորման և այլ թվական տվյալների հիման վրա։ Գումարման և հան-

ման վարժությունները՝ ինչպես Կարմիր բանակի թվի, այնպես և Դենիկինի բռնած հարավի տնտեսական նշանակության թվական տվյալների հիման վրա։

Աշխարհագրություն.— Ցույց տալ քարտեզի վրա Սիբիրը։ Բնական հարստությունների համառոտ բնութագիրը։ Քարտեզի վրա գտնել այն ճանապարհները, վորոնց միջոցով օտարերկրյա պետությունները Կոլչակին զենքեր էին մատակարարում։ Ցույց տալ քարտեզի վրա Դենիկինի գրաված տերիտորիան։ Այդ տերիտորիայի տնտեսական նշանակության համառոտ բնութագիրը։

39. ՅՈՒԴԵՆԻՉ. ԿՌԻՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Ցարական գեներալ Յուդենիչը հարձակվեց Լենինգրադի վրա այն ժամանակ, յերբ Դենիկինի բանակը առաջխաղացմամբ մոտենում եր Մոսկվային։ Ցարական սպաներից կազմված նրա բանակը զինված ու պարենավորված եր օտար կապիտալիստների կողմից։ Կարմիր բանակում ծառայող ցարական սպաների մի մասի դավաճանությունը, օգնեց Յուդենիչի բանակին, նեղելու Կարմիր բանակի զորամասերին և մոտենալու Լենինգրադին։ Լենինգրադի պրոլետարիատը դուրս յեկավ պաշտպանելու Կարմիր մայրաքաղաքը։

Բանվորների, կարմիր բանակայինների, կուրսանտների հեղափոխական վոգևորությունը ՌԿ կուսակցության ղեկավարությամբ մի քանի օրում ցաք ու ցրիվ տվեց Յուդենիչի բանակը։ Յուդենիչի բանակի աննըշան մնացորդները փախան արտասահման։

1920 թվին քաղաքացիական կռվի կենտրոնը նախ տեղափոխվում է արևմուտք և հետո նորից հարավ։ Կապիտալիստական Անգլիան և Ֆրանսիան մեր դեմ ուղղեցին իրենց սպասավոր՝ պանական Լեհաստանին։ 1920 թվի գարնանը սպիտակ լեհերը անսպասելի հարձակմամբ գրավում են Կիևը։ Կարմիր բանակի ուժերի նոր խմբավորումով և Բուդյոննու հեծելազորի արևմտյան ճակատ տեղափոխելով, սպիտակ լեհերի առաջխաղացումը կանգնեցրվեց։ Կարմիր բանակը դիմում է հարձակման և հասնում է մինչև Վարշավա։ Վախեցած Կարմիր բանակի հաղթանակներից՝ բուրժուազիան շտապ օգնություն ցույց տվեց Լեհաստանին զենքով և հրահանգիչներով։ Լեհական բանակը դիմեց հարձակման, մենք ստիպված յեղանք հետ նահանջել։ Միաժամանակ հարձակման դիմեց հարավային ճակատում Վրանգելը։ Խորհրդային իշխանությունը խաղաղություն կնքեց Լեհաստանի հետ և բոլոր ուժերը շպրտեց Վրանգելի դեմ։

Մայրենի լեզու.— Յուդենիչից Լենինգրադի պաշտպանությունը նկարագրող հատվածների, պատմվածքների և վոտանավորների ընթերցում։ Կազմել և գրել Յուդենիչի հետ ունեցած ռազմական գործողությունների օրացույցը։

Լեհական պաների դեմ մղած Կարմիր բանակի պայքարը նկարագրող հատվածների, վոտանավորների և պատմվածքների ընթերցում։ Կազմել Կարմիր բանակի լեհական ճակատի կռիվների օրացույցը։

Մաթեմատիկա.— Քաղաքացիական կռիվների ժամանակ և ներկայումս Լենինգրադի ազգաբնակության տվյալների գրանցումը։ Լենինգրադի արդյունաբերական նշանակությունը բնութագրող տվյալների գրանցումը ռուսական և մետրական չափերով։ Լենինգրադի ազգաբնակության և արդյունաբերության արտադրության աճման տվյալների հիման վրա կատարել հանման և գումարման վարժություններ։

Լեհաստանի և ՍԽՀՄ ազգաբնակության, տարածության, զորքի քանակության համեմատական թվական տվյալների հիման վրա լուծել մեկ-յերկու խնդիր՝ հանման և գումարման գործողություններով։ Լեհաստանի և ՍԽՀՄ ազգաբնակության թվի, տարածության, բանակի համեմատական ուղղանկյուն դիագրամմայի կազմումը։ Տասնորդական կոտորակների հանման գործողության կանոնի բացատրությունը, օգտվելով հանման և գումարման վարժությունների օրինակներից։

Աշխարհագրություն.— Լենինգրադի նշանակության կարճ բնութագիրը Խորհրդային Միության համար։ Ծանոթություն Լեհաստանի դիրքի հետ քարտեզի վրա։ Փնտրել Լեհաստանի գլխավոր քաղաքները քարտեզի վրա։

40. ՎՐԱՆԳԵԼ. ՈՏԱՐ ԳՐԱՎՄԱՆ ՅԵՎ ՍՊԻՏԱԿ ԳՎԱՐԴԻԱԿԱՆՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ.

Ցարական գեներալ բարոն Վրանգելի բանակը կազմված եր ֆրանսիական փողերով Դենիկինի բանակի մնացորդներից, վորոնք թագնվել եյին Ղրիմում։ Բարոն Վրանգելի բանակը ամրանալով Ղրիմի թերակղզու ուժեղ դիրքերում, սկսեց հարձակումը հարավից այն մոմենտին, յերբ Կարմիր բանակը կռվում եր սպիտակ լեհերի դեմ։ Կարմիր բանակի հերոսական ջանքերով ռուս սպիտակ-գվարդիականների այդ վերջին ծնունդը ջախջախվեց։ Պերեկոպի անառիկ դիրքերը վերցվեցին ընկ. Ֆրունզեյի ղեկավարությամբ։ Կարմիր բանակը ներս խուժեց Ղրիմ, վերցրեց շատ գերիներ և ռազմամթերք ու վերջնականապես Ղրիմը մաքրեց սպիտակ-գվարդիականներից։ Կարմիր բանակի անմահ զորապետ ընկ. Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեյի կենսագրությունը։

Միջազգային կապիտալի հարձակումը խորհրդային իշխանության վրա շարունակվեց Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի, Վրանգելի սպիտակ բանակների ու Լեհաստանի հարձակման կազմակերպությամբ։ Խորհրդային հանրապետությունը կտրված եր ամբողջ աշխարհից, պաշարված լինելով կապիտալիստներից։ Անգլիան, Ֆրանսիան, Յապոնիան և ուրիշներն ափ հանեցին իրենց սեփական զորքերը՝ (դեսանտ) անգլիացիները— Արխանգելսկում և Կովկասում, ֆրանսիացիները և հույները— Օդեսայում և Խերսոնում, յապոնացիները և ամերիկացիները— Հեռավոր Արևելքում։ 1922 թվի վերջերին Կարմիր բանակի հաղթական շարժումը մաքրեց խորհրդային հանրապետության տերիտորիան օտարազգի ռազմական ուժերից (интервенты) և նրանց թևերի տակ ապաստանած սպիտակ-գվարդի-

ականների մնացորդներից։ Երկար ու ամուր էին նստել Հ. Արևելքում, ՍՍՀՄ ամենահեռավոր ծայրամասում, տարբերկրյա հափշտակիչները— յապոնացիները և նրանց կողմից հովանավորված Սեմյոնովը, Կալմիկովը, Դիտերիխսը և ուրիշները։ Բայց 1922 թվին Հեռավոր Արևելքի բանվորների ու գյուղացիների պարտիզանական ջոկատներին և բանակներին օգնության հասավ Կարմիր բանակը։ Հեռավոր Արևելքը մաքրվեց սպիտակգվարդիականներից։ Ռազմական ճակատները վերացան։

Մայրենի լեզու.— *Ընթերցումը այն հատվածների ու պատմվածքների, վորտեղ նկարագրված են Կարմիր բանակի կռիվը Վրանգելի դեմ և նրա ամենահերոսական մոմենտները (Պերեկոպ, Սիվաշ)։ Վրանգելի դեմ մղած պայքարի օրացույցի կազմումը։*

Օտար բանակների և սպիտակ-գվարդիական բանդաների վարքը նկարագրող հատվածների ընթերցումը՝ Հեռավոր Արևելքը նրանց կողմից գրավելու պահուն։

Մաթեմատիկա.— *Վրանգելի գրաված և Խորհուրդների ձեռքին մնացած տերիտորիայի, Վրանգելի և Կարմիր բանակի թվերի զինավորման համեմատության հիման վրա, կատարել գումարման և հանման վարժություններ։*

Աշխարհագրություն.— *Ծանոթություն Ղրիմի քարտեզի հետ։ Գտնել յապոնական զորքերի բռնած գոտիները քարտեզի վրա։ Գտնել Արխանգելսկը և Վլադիվոստոկը։ Համառոտ տեղեկություններ Յապոնիայի մասին։*

41. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հենց որ Խորհրդային հանրապետությունները մաքրվեցին սպիտակգվարդիական բանդաներից և տարբերկրյա զորքերից (интервенты), Կարմիր բանակը սկսեց կրճատվել։ Կարմիր բանակը՝ հետզհետե կրճատվելով, 5.300.000 մարդուց հասցրվեց 562.000։ Երկրի բոլոր ուժերը շպրտվեցին տնտեսական ֆրոնտ, պատերազմի ժամանակ քայքայված տնտեսությունները վերականգնելու համար։ Խորհրդային իշխանությունը բազմիցս անգամ առաջարկել է կապիտալիստական հարևաններին զինաթափվել, աշխատավորության ռազմական հոգսերը թեթևացնելու նպատակով, սակայն այդ առաջարկությունները չեն ընդունվել։

Մենք պետք է միշտ պատրաստ լինենք զինված ընդհարման։ Այդ իսկ պատճառով խորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն է դարձնում Կարմիր բանակի վորակային բարելավման վրա։ (Տնտեսական դրությունը բարելավել, վարժական գործը ճիշտ հիմքերի վրա դնել)։ Դրան զուգընթաց սկիզբ դրվեց յերկրային զորամասերի կազմակերպման, վորոնք յերկար ժամանակ չեն կտրում աշխատավորներին աշխատանքներից և ուժեղացնում են յերկրի ռազմական պաշտպանությունը։

Մայրենի լեզու.— *Ընթերցումը այնպիսի կտորների, ուր ընդգծված են ՍՍՀՄ խաղաղասիրական ձգտումները։ Գրել դրույցի հիմնական մտքերը։*

Մաթեմատիկա.— *Կարմիր բանակի կրճատման, և կադրային ու յերկրային զորամասերի կարմիր բանակայինների ծախքերի հիման վրա (քանի անգամ և ամառ նստում) կատարել գումարման և հանման գործողություններ։*

Աշխարհագրություն.— *Ցույց տալ քարտեզի վրա ՍԽՀՄ ներկա սահմանները։*

42. ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻՂ

Քաղգրագիտություն.— *Խորհրդային Միության ծովային սահմանները յերկու անգամ յերկար են ցամաքայիններից։ Այդ սահմանները, ուժեղ նավատորմիղ ունեցող թշնամիների հարձակումներից պաշտպանելու համար մեզ պետք ե ծովային նավատորմիղ։ Ռուսական նավատորմիղը մեծ դեր ե խաղացել բանվորների և գյուղացիների հեղափոխական պայքարում, (1905 թ., նավատորմիղի մասնակցությունը Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական կռվի ժամանակ)։ Սպիտակ գվարդիականները և օտարների զինված միջամտությունը վոչնչացրին մեր շոգենավերի մի մասը, մի մասն ել տարան իրենց հետ։ Խորհրդային իշխանությունը ձեռնամուխ ե յեղել Կարմիր նավատորմիղի վերականգնմանը և նրա փառավոր հեղափոխական տրադիցիաների ամրացմանը։ Այս նպատակով ՌԼԿՅԵՄ ընդունել ե Նավատորմիղի շեֆությունը։ Հազարավոր լավագույն կոմսոմոլիստներ մտել են Նավատորմիղի շարքերը։*

Մայրենի լեզու.— *ՍԽՀՄ ծովային և գետային պաշտպանությունը նկարագրող կտորների ընթերցումը։ Արտագրել մեր նավատորմիղի պայքարը նկարագրող պատմվածքներ։ Արտագրության ժամանակ դժվար բառերը բացատրել։*

43. ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Քաղգրագիտություն.— *Առանձին հանրապետությունների բանվորների և գյուղացիների հավասարության ու կամավորության սկզբունքներով ստեղծված ՍԽ Հանրապետությունների Միությունն ամրացնելու նպատակով, ՌԿ Կուսակցության 12-րդ Համագումարը վորոշեց, վորպեսզի ուրիշ միջոցների հետ զուգնթացաբար.*

«Միության ժողովրդների յեղբայրության և համերաշխության գաղափարների տարածման միջոցով, ուժեղացվի դաստիարակչական աշխատանքը Կարմիր բանակում, և ձեռք առնվեն գործնական միջոցներ ազգային զորամասեր կազմակերպելու համար, պահպանելով բոլոր այն միջոցները, վոր անհրաժեշտ են Հանրապետության լիակատար պաշտպանությունն ապահովելու համար»։ (12-րդ Համագումարի վորոշումներից)։

ՍԽՀՄ-ի յուրաքանչյուր ազգություն ոգտվում ե հավասար իրավունքներով և պարտավոր ե Միության պաշտպանության համար Կարմիր

բանակի շարքերում տանել համառ պարտականություններ։ Ցարական կառավարությունը ճնշում էր վոչ ռուս ազգություններին, այդ պատճառով էլ վախենում էր ստեղծել ազգային զորամասեր։ Մի քանի ազգություններ բոլորովին զինվորական ծառայության չէին կանչվում, օրինակ թուրքերը, մեծ մասամբ նրա համար, վոր վախենում էին նրանց զենք վստահել։ Բանակի շարքերը կանչվող ազգություններն էլ, օրինակ վրացիները, հայերը և այլն, ուղարկվում էին ծառայության սովորաբար այնպիսի տեղեր, վոր իրենց հայրենիքից շատ հեռու էին գտնվում, օրինակ Սիբիրի հյուսիսային մասերը, վորտեղ նրանք սովոր չլինելով խիստ կլիմային՝ հաճախ վոչնչանում էին։

ՍՍՀՄ-ում այդ պատճառները գոյություն չունեն։ Ազգային զորամասերը ամուր կապ են ստեղծում Կարմիր բանակի և Միության ազգությունների միջև։ Ռազմական տեսակետից ազգային զորամասերը, լավ ճանաչելով տվյալ վայրերը և սովոր լինելով տեղական կլիմայական առանձնահատկություններին՝ շատ արժեքավոր են։ Բացի այդ, ազգային զորամասերը օրինակ կծառայեն Արևելքի ճնշված ազգությունների համար։

Իր ամբողջականությամբ ՍՍՀՄ-ի պաշտպանունակությունը պահանջում է բանակի ընդհանուր ղեկավարության միություն։ Այդ պատճառով ազգային զորամասերը մտնում են միացյալ Կարմիր բանակի մեջ։

44. ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քաղզրագիտություն. — Կովկասյան Կարմրադրոշ Բանակի կազմի մեջ մտան նախկին XI Բանակը և IX Բանակի մասերը։ XI Բանակը օգնություն ցույց տվեց Անդրկովկասի բանվորներին և գյուղացիներին Անդրկովկասի զանազան կուսակցությունների հակահեղափոխական յելույթները ճնշելու գործում։

Բաքվի բանվորների առաջին իսկ կոչին՝ XI Բանակի զորամասերը շարժվեցին դեպի Բաքու, ուր հասան 1920 թվի ապրիլի 27-ին։ Կարմիր բանակի զորամասերի օգնությամբ, Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիներն ազատվեցին մուսավաթական կառավարության լծից։ Ադրբեջանի խաներն ու բեկերը, Ադրբեջանում Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո, շարունակում էին համառորեն դիմադրել և կազմակերպում էին ապստամբություն ապստամբության հետևից։

Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները XI Բանակի զորամասերի օգնությամբ ճնշեցին մուսավաթականների ապստամբությունը։

Մուսավաթական ապստամբությունը վերջնականապես ճնշելուց հետո, Բանակի համար գալիս է խաղաղության ժամանակաշրջան։ Այդ ժամանակ կազմակերպվում է Ադրբեջանի բանվորա-գյուղացիական Բանակը։

Ղարաբաղում և Զանգեզուրում, դաշնակցական բանդաների յելույթները XI Կարմիր Զորաբանակի զորամասերի դեմ, առաջ են բերում դաշնակցական զորամասերի ընդհարում XI Զորաբանակի մասերի հետ։

Դաշնակցական կառավարության հետագա հարձակումներից խուսա-

փելու համար, Խորհրդային կառավարությունը XI Բանակի զորամասերը շարժեց Դիլիջանի ուղղությամբ. այստեղ XI Բանակի զորամասերը միանում են հայկական կամավորական ջոկատներին և շարժվում են դեպի Հայաստանի կենտրոնը։ Դրանից հետո դաշնակցական կառավարությունը փախչում է, և Հայաստանում կազմվում է Խորհրդային իշխանություն։

Վրաստանի մենշևիկ կառավարության բռնի (репресивные) միջոցներն ստիպեցին Վրաստանի ապստամբած բանվորների և գյուղացիների հառաջավոր ջոկատին օգնություն խնդրել XI Կարմիր Զորաբանակից։

Բանակի հրամանատարությունն իսկույն արձագանքեց կոչին և XI Զորաբանակի մասերն անցան Վրաստանի սահմանը։ XI Բանակը Վրաստանի ապստամբ ջոկատների հետ միասին մտնում է Թիֆլիս։ Բանվորներն ու գյուղացիները հայտարարում են Խորհրդային իշխանություն։ Դրանից հետո, XI Բանակը իսկույն վերանվանվում է «Կովկասյան Առանձին Բանակ»։ Նրա կազմի մեջ մտնում են Անդրկովկասի հանրապետությունների ազգային դիվիզիաները։ 1923 թվին Կովկասյան Առանձին Բանակին տրվում է Կարմիր Դրոշակի շքանշան և բանակը վերակոչվում է «Կովկասյան Կարմրադրոշ Բանակ»։ Կովկասյան Կարմրադրոշ Բանակի զորամասերը պահպանում են շատ կարևոր նշանակություն ունեցող ՍԽՀՄ հարավ արևելյան և հարավային սահմանները և ապահովում են Անդրկովկասի բանվորների և գյուղացիների խաղաղ աշխատանքի հնարավորությունը։

Աշխարհագրություն.—Ցույց տալ աշխարհագրական քարտեզի վրա բանակի կենտրոնի և մասերի միջև յեղած հաղորդակցության ճանապարհները։ Կ. Կ. Բանակի զորամասերի կողմից պաշտպանվող սահմանները։

Մաթեմատիկա.— Գծել Կ. Կ. Բանակի ազգայնական կազմը ցույց տվող կլոր դիագրամներ։

Մայրենի լեզու.— Կոլլեկտիվ կերպով կազմել տվյալ զորամասերի համառոտ պատմությունը։

45. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՀԱՅԿ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Քաղաքագիտություն. — Հայկական Կարմիր Բանակի զորամասերն սկսել են կազմվել դեռ Հայաստանում Խորհրդային իշխանություն կազմակերպվելուց առաջ։ Հայաստանի մայիսյան ապստամբությունից հետո, ապստամբ գյուղացիների մեծ մասը փախչում է Խորհրդային Ադրբեջան և նրանցից կազմվում է առաջին Հայկական Կարմիր զորամասը (գունդ)։ Հայաստանի բանվորների և գյուղացիների Նոյեմբերյան ապստամբության ժամանակ, Ադրբեջանում կազմված հայկական զորամասերը, XI Բանակի զորամասերի հետ միասին, օգնության հասան և աջակցեցին Հայաստանի բանվորներին և գյուղացիներին դեն շպրտելու դաշնակցականների կառավարությունը (1920 թվի նոյեմբերի 29-ին)։

Հայաստանում Խորհրդային Իշխանություն հաստատվելուց հետո՝ կազմվում է Կարմիր Բանակ՝ Հայաստանի բանվորներից և գյուղացիներից։ Նախկին դաշնակցական զորամասերը յենթարկվում են վերակազմության (расформировываются)։ Բոլոր հակահեղափոխականները, վորոնք

դաշնակցական զորամասերում բարձր պաշտոններ ունեյին և խմբապետները, արձակվում են պաշտոնից, իսկ այդ զորամասի աշխատավոր տարրերը մնում են Կարմիր բանակում:

Դեռ վերջնականապես չէյին կազմվել Հայկական Կարմիր զորամասերը, երբ հակահեղափոխական սպաները, անգործ մնացած մաուզերիստներն ու խմբապետները, Յերևան քաղաքի չարչիների և վաշխառուների գործոն աջակցությամբ, Խորհրդային իշխանության դեմ ապստամբություն են բարձրացնում: Նոր կազմված Կարմիր բանակը մասնակցում է այդ ապստամբությունը ճնշելու գործողություններին: Ղամարլվի, Ախտայի, Յելենովկայի կռիվներում, և ապա Զանգեզուրի լեռներում, XI Բանակի զորամասերի հետ միասին, Հայկական զորամասերը ցուցաբերում են մեծ հերոսություն: XI Բանակի զորամասերի օգնությամբ այդ ապստամբությունը ճնշվում է և ապստամբության ղեկավարները Հայաստանի սահմաններից վտարվում են:

Ապստամբությունը ճնշվելուց հետո, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ձեռնարկում են խաղաղ աշխատանքի: Հայկական Կարմիր բանակը վերակազմվում է Հայկական Հրացանաձիգ Դիվիզիայի և մտնում է Կ. Կ. Բանակի մեջ:

Մայրենի լեզու.— Կարդալ Նոյեմբերյան ապստամբությունը և Հայաստանի քաղաքացիական կռիվները նկարագրող գեղարվեստական կտորներ: Կարդացածի հիմնական միտքը գրի առնել:

Աշխարհագրություն.— Աշխարհագրական քարտեզի միջոցով ծանոթանալ այն վայրերին, վորտեղ տեղի յեն ունեցել կռիվները: Նրանց աշխարհագրական դրությունը, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

46. ԶՈՐԱՄԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՎԱԾ IV.

Ռ. Կ. Կ. (Բ.) ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

(5 ԶՐՈՒՅՑ)

47. Վ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎ—ԼԵՆԻՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղզրագիտություն.— *Վ. Ի. Լենինի անմահ ծառայությունը կայանում է նրանում, որ նա լինելով կոմկուսակցության ղեկավարը, ղեկավարելով ռուսական բանվոր դասակարգի և գյուղացիության կռիվը շահագործողների դեմ, ոչ միայն յուր ղեկավարությամբ օգնեց հաղթել կապիտալիստներին և կալվածատերերին, այլև սովորեցրեց, թե ինչպես պետք է ամրացնել այդ հաղթությունը և ինչպես պետք է կառուցել պատմության մեջ առաջին պրոլետարական պետությունը—Խորհրդային Իշխանությունը: Դրանով նա ցույց տվեց բոլոր յերկրների աշխատավորներին, թե ինչպես պետք է ձեռք բերել լիակատար ազատություն ամեն տեսակի ճնշումներից: Վ. Ի. Լենինին ծնել է ռուսական բանվորական շարժումը և ռուսական հեղափոխությունը: Խոսել Ռ. Կ. Կուսակցության մասին, նշանակում է խոսել Լենինի մասին:*

Վ. Ի. Լենինը ծնվել է 1870 թ. ապրիլի 23-ին Սիմբիրսկ քաղաքում, այժմյա Ուլյանովսկում, Սիմբիրսկի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ Իլյա Նիկոլաևիչ Ուլյանովի համեստ ընտանիքում: 1887 թվին Վլադիմիր Իլյիչի ավագ յեղբայր Ալեքսանդրը, իբրև հեղափոխական՝ կախաղան է բարձրացվում՝ Ալեքսանդր III ցարի վրա կատարած մահափորձի համար: Գիմնազիան վերջացնելով, Վ. Իլյիչը մտնում է Կազանի համալսարանը, բայց հենց նույն տարին էլ դուրս է արվում հեղափոխական շարժումներին մասնակցելու համար: Այդ ժամանակից սկսած, Լենինն այլևս չի թողնում հեղափոխական աշխատանքը: Նա բանվոր դասակարգի լավագույն ղեկավարներից ստեղծում է Ռուսաստանի Կոմունիստական կուսակցությունը: Թե բանտից, թե աքսորավայրից և թե արտասահմանից Վ. Ի. ղեկավարում է բանվոր դասակարգի կռիվը, մինչև 1917 թվի Հոկտեմբերի լիակատար հաղթանակը: 1917 թվի Հոկտեմբերից հետո, Վ. Ի. Լենինը Ժողկոմխորհի անփոխարինելի Նախագահն է, որը ղեկավարում է Խորհրդային իշխանության շինարարությունը, Կարմիր Բանակի կռիվները և կազմակերպում է Կոմինտերնը: 1918 թվի օգոստոսի 30-ին, եսերուհի Կապլանը վիրավորում է ընկ. Լենինին, բայց նրա վերքը շուտով լավանում է, և նա նորից անցնում է աշխատանքի: 1922 թվին ծանր հիվան-

դությունը ընկ. Լենինին անկողին է գցում. լարված աշխատանքը նրան այրեց։ Ձեռք են առնվում բոլոր միջոցները, վորպեսզի վերադարձնեն ընկ. Լենինի առողջությունը, բայց վոչինչ չի օգնում։ 1924 թվի հունվարի 21-ին ընկ. Լենինը չկար այլևս։

Մայրենի լեզու.— *Վլադիմիր Իլյիչի կենսագրության ընթերցումը։ Գրի առնել Լենինի կյանքից ամենակարևոր մոմենտները, Վլադիմիր Իլյիչի ծննդյան և մահվան տարեթվերը։ Հատուկ անունների մեծատառ գրվելու բացատրությունը։*

Աշխարհագրություն.— *Գտնել քարտեզի վրա Լենինի ծննդավայրը, աքսորավայրերը, արտասահմանյան քաղաքները, վորտեղ ապրել է Լենինը յուր էմիգրանտ ժամանակ։*

48. Ռ. Կ. Կ. ԻԲՐԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Քաղգրագիտություն.— *Խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրերից ստիպված էր դիմադրել ռուս և օտարազգի կապիտալիստների և կալվածատերերի զինված ուժերի գրոհներին։ Մահվան վտանգի առաջ, բանվոր դասակարգն ու գյուղացիությունը համախմբված են ռազմական սերտ միության մեջ՝ հարձակվող թշնամուն զինված դիմադրություն ցույց տալու համար։ Ռ. Կ. Կ.-ն ընկ. Լենինի գլխավորությամբ ղեկավարում էր և ամրացնում այդ անխորտակելի միությունը։ Այդ ժամանակ, հաճախ Ռ. Կ. Կ.-ն յուր անդամների կազմի մինչև կեսը (300.000) պահում էր Կարմիր բանակի շարքերում։ Կոմունիստները, ամենատարբեր պաշտոններում, սկսած շարքային մարտիկից մինչև բարձրագույն հրամանատարությունը՝ օրինակ էյին ծառայում Կարմիր բանակին. Նրանք իրենց արյունով ցողում էյին Կարմիր բանակի շարքերը և տանում նրան դեպի հաղթանակներ։ Նույն այդ ժամանակ կոմունիստների ղեկավարությամբ Խորհրդային իշխանությունը տեղերում ձեռք էր առնում բոլոր միջոցները, վորպեսզի ապահովեցնի Կարմիր բանակին այն ամենով, ինչ անհրաժեշտ է կռվի և հաղթանակի համար։ Այդ պատճառով, բանվորների և Կարմիր բանակի համար, հացը հավաքվում էր գյուղացիներից մասնատրումի (продразверстка) միջոցով։ Բանվորներն ամրացվում էյին ձեռնարկություններին։ Աշխատավարձը վճարվում էր մթերքներով։ Յերկիրը վերածվել էր զինվորական բանակատեղիի, և թշնամիները պարտվեցին։*

Մայրենի լեզու.— *Քաղաքացիական կռիվների տարիներին, Կարմիր բանակում կոմունիստների դերը նկարագրող հատվածների ընթերցումը։ Արտագրել Լենինի այն ցիտատները, վորոնք ընդգծում են Խորհրդային իշխանության պաշտպանության գործի ամբողջ կարևորությունը։*

Մաթեմատիկա.—*Քաղաքացիական պատերազմի ժամանակ Կարմիր բանակում և այլ վայրերում գտնվող կոմունիստների թվերի համեմատությունը։*

49. Ռ. Կ. Կ.-Ի ԲՋԻՋԸ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

Քաղգրագիտություն.— *Կարմիր բանակի և Նավատորմի մեջ Ռ.Կ.Կ-ի նախնական կազմակերպությունը ներկայանում է վաշտային (և նրա հա-*

մատպատասխան) բջիջը, որը կազմակերպվում է, յեթե վաշտերում գտնըվում են Ռ. Կ. Կ-ի առնվազն յերեք անդամ: Զորամասի կոմունիստական բջիջի հիմնական նպատակն է, սերտ կապ հաստատել կուսակցության և կարմիր բանակային մասսայի մեջ, բացատրել անկուսակցական կարմիր բանակայիններին, շահագործողների դեմ աշխատավորության մղած կըռվում կուսակցության դերն ու նշանակությունը, ամրացնել կուսակցության ազդեցությունը, գրավել նոր անդամներ կուսակցության համար և դաստիարակել թեկնածուներին: Կ. Կ. բջիջը զորամասում աջակցում է հրամքաղկազմին կարմիր բանակայիններին դաստիարակելու գործում՝ կազմակերպում է քաղգրագիտական դպրոցներ և, կուսակցական ու մարքսիստական խմբակներ, աշխատում է յուր անդամների քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա: Կ. Կ.-յան բջիջը աշխատանք է տանում նաև Լ. Կ. Յ. Մ.-ի անդամների մեջ: Վաշտային բջիջները միանալով կազմում են գնդի կոլլեկտիվը: Կուսակցության անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ազնիվ, տոկուն, անձնուրացաբար բանվորների և գյուղացիների դատին նվիրված կարմիր բանակային: Ռ. Կ. Կուսակցության մեջ մտնելու կարգը:

Մայրենի լեզու.— Գրել զրույցի հիմնական մտքերը:

Մաթեմատիկա. — Կազմել բջիջի աճման գրաֆիկներ:

50. Լ. Կ. Յ. Մ.

Քաղգրագիտություն.— Հոկտեմբերյան հեղափոխությունը հնարավորություն տվեց, բանվոր և գյուղացի յերիտասարդությանը, մեր յերկրի քաղաքական կյանքում գործոն մասնակցություն ցուցաբերել: 1918 թվին բանվորագյուղացիական յերիտասարդության գիտակից մասը, համախմբվեց Ռուսաստանի Կոմունիստական Յերիտասարդական Միության մեջ: Քաղաքացիական պատերազմի ժամանակ ՌԿՅՄ-ն աշխատում եր ՌԿԿ-ի հետ ձեռք ձեռքի տված:

ՌԿՅՄ-ի բջիջները և միության անդամների թիվն արագությամբ աճում են. (սկզբում ուներ 22.000 անդամ, VI Համագումարին նրանց թիվը հասել եր մինչև 840.000-ի, 1925 թվի կեսերին մոտ $1^1/_2$ միլիոնի): ՌԿՅՄ-ի VI Համագումարը վորոշում է ՌԿՅՄ-ն վերանվանել Ռուսաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միության— ՌԼԿՅՄ: ՌԼԿՅՄ հոգ է տանում լուսավորելու աշխատավոր յերիտասարդությանը: ՌԼԿՅՄ հոգատարությունն ուղղված է ամենից առաջ այն բանին, որ գյուղացիական յերիտասարդությունը գրագիտություն սովորեցնի: ՌԼԿՅ Միության նախաձեռնությամբ գյուղում հետզհետե ստեղծվում են գյուղացիական յերիտասարդական դպրոցներ: ՌԼԿՅՄ-ի նախաձեռնությամբ ստեղծվել են ֆաբզավուչների դպրոցներ. այդ դպրոցներում, 1924 թվի հուլիսի 1-ին, կային 65.000 սովորողներ:
Տարվում է յերիտասարդական քաղդաստիարակչական և պրոպագանդական աշխատանք՝ (կազմակերպվում են ակումբներ, խմբակներ, գյուղատընտեսական գիտելիքների պրոպագանդա, բարձրաձայն ընթերցանու-

թյուններ և այլն)։ ՌԼԿՅՄ տանում է մեծ, հասարակական աշխատանք՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։

ՌԼԿՅՄ Կարմիր Նավատորմի շեֆն է։

ՌԼԿՅՄ բջիջները նոր գյուղի կառուցողներն են։ ՌԼԿՅՄ ձգտում է յուր շարքերի մեջ քաշել գյուղական յերիտասարդության աղքատ, բատրակ և միջակներից լավագույն տարրերին։ ՌԼԿՅՄ վերանվանումը ցույց է տալիս, որ կազմակերպված բանվորագյուղացիական յերիտասարդական միությունը պետք է աշխատի համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինի պատգամներով։

ՌԼԿՅՄ անդամները, Կարմիր բանակում, հանդիսանում են, կուսակցության անկուսակցական կարմիր բանակայինների մասսային կապող օղակները և հիմնական պահեստն ու աղբյուրը կուսակցական կազմակերպության։ Կարմիր բանակում ՌԼԿՅ Միության բջիջներ չեն կազմվում։ ՌԿԿ բջիջներում ստեղծվում են կոմյերիտմիության աջակցող խմբակներ։

Բանվորագյուղացիական յերիտասարդության ՌԼԿՅՄ շարքերը մտնելու կարգը։

Մայրենի լեզու.— *Ընթերցումն Լենինի այն քաղվածքների, վորոնք պարզաբանում են Կոմունիստական Յերիտասարդական Միության անելիքները* (задачи)։ *Յերիտասարդական Միության կանոնադրությունը։ Գրի առնել յերիտասարդությանը տված Լենինի պատգամները։*

Մաթեմատիկա.— *Հաշվել, ինչքան է մեծացել յերիտասարդական Միությունը վերջին տարիներում։*

51. ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՄԵԾ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ՝ ՌԿԿ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

Քաղգրագիտություն.— *Ընկ. Լենինի սկսած գործի շարունակությունը Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության (Բոլշևիկների) խնդիրն է։ Վ. Ի. Լենինի հիմնական պատգամներն են՝*

1. Բանվորների և գյուղացիների միության ամրապնդումը՝ խորհրդային իշխանության հիմունքն է։

2. Ամրացնել զանազան ազգությունների աշխատավորների միությունը։

3. Ամրացնել Կարմիր բանակը և Նավատորմիղը խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար։

4. Միացնել ամբողջ աշխարհի աշխատավորներին կապիտալին հաղթելու համար։

Բանվորները, գյուղացիները, կարմիր բանակայինները պետք է համախմբվեն լենինյան ՌԿԿ շուրջ և օգնեն Լենինի պատգամները իրագործելու մեծ գործին։

Մայրենի լեզու.— *Կարդալ մեր ղեկավարների ճառերից այն կտորները, վորոնք վերաբերում են Լենինի պատգամներին (Ստալինի յերդումը)։ Կոլլեկտիվ կերպով ձևակերպել և գրել վորպես լոզունգ Լենինի գլխավորագույն պատգամները։*

ՀԱՏՎԱԾ V

ՍՍՀՄ-Ը ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

(19 ԺՐՈՒՑՑ)

52. ՍՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

Քաղաքագիտություն.— *ՍՍՀՄ-ը միակ պետությունն է աշխարհում, ուր իշխանությունը բանվորների և գյուղացիների ձեռքն է գտնվում: Բոլոր բուրժուական դասակարգերն ու կառավարությունները թշնամական վերաբերմունք են ցույց տալիս դեպի ՍՍՀՄ-ը: Մեր հեղափոխության առաջին վեց տարին գլխավոր կապիտալիստական պետությունները, չեյին ուզում ճանաչել խորհրդային հանրապետությունը հուսալով, թե կը հաջողվի նրան տապալել: Միայն բանվորագյուղացիական պետության և նրա բանակի ամրությունը և ամրությունը, ինչպես և ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորների օժանդակությունը ստիպեցին մի քանի պետությունների բուրժուազիային մեզ հետ տնտեսական և դիվանագիտական հարաբերություններ սկսել: Բայց շահագործողների թշնամությունը դեպի բանվորա-գյուղացիական պետությունը չըդադարեց և նույն իսկ չթուլացավ, այլ ուրիշ ձև միայն ընդունեց: Ուստի կարմիր-բանակայինը, որ կոչված է պաշտպանելու ՍՍՀՄ-ը պետք է ուսումնասիրի մեզ շրջապատող կապիտալիստական պետությունները. պետք իմանալ բանվոր դասակարգի և նրա կոմունիստական կուսակցությունների դրությունը այդ յերկրներում, վորոնք մեր դաշնակիցներն են կապիտալիստների դեմ մղած պայքարում:*

Մայրենի լեզու.— *Լրագրական տեղեկությունների ընթերցում մեր և կապիտալիստական յերկրների փոխ-հարաբերության մասին և այդ տեղեկություններից ամենակարևորները արտագրելը:*

Մաթեմատիկա.— *Կարմիր բանակի և կապիտալիստական բանակների թվական համեմատությունը: Բացատրել բազմանիշ թիվը միանիշ թվով բազմապատկելու կանոնը, լուծելով, թե ինչի յե հավասար. յերկրագնդի մակերեսը, յեթե ՍՍՀՄ-ը բռնում է յերկրագնդի 1/6 մասը (21 մլ. քառ. կլմ. × 6=) և նման օրինակներով: Բացատրել, թե ինչպես պետք է օգտվել Պյութագորասի աղյուսակով:*

Աշխարհագրություն.— *Քարտեզի վրա գտնել գլխավոր կապիտալիստական յերկրները: Ծանոթանալ, թե ինչ մայր ցամաքի վրա յեն գտնը-*

վում զանազան պետություններ (Յեվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա)։ Ծանոթություն յերկրագնդի (գլոբուս) հետ։

53. ԱՆԳԼԻԱ

Քաղգրագիտություն.— Անգլիան ամենահին կապիտալիստական յերկիրն ե՝ խիստ զարգացած արդյունաբերությամբ և առևտրով, ամենաուժեղ ռազմական և առևտրական նավատորմիղի տեր ե և ունի աշխարհիս բոլոր մասերում ամենահարուստ գաղութները։ Անգլիան (1923 թվին) տիրապետում ե 34 միլիոն քառ. կիլ. տարածություն և 449 միլ. ազգաբնակություն ունեցող մի տերիտորիայի։ Անգլիայի մայր յերկրի ամեն մի բնակչին ընկնում ե գաղութների 10 բնակիչ։

Անգլիայի արդյունաբերությունը (նավաշինություն, մեքենաներ շինելը, թուղթ և պողպատի ձուլում, մանվածագործություն, ածուխ և այլն) ազգաբնակության 44%-ին փող աշխատելու հնարավորություն ե տալիս և մի քանի ճյուղերում աշխարհումս ամենաուժեղն ե հանդիսանում։ Անգլիական արդյունաբերությունը կլանում ե գաղութային հում նյութերի ահագին քանակություն և կարիք ե զգում հսկայական շուկաների պատրաստի ապրանքներ սպառելու համար։ Անգլիայի ազգաբնակության 60%-ը ապրում ե խոշոր քաղաքներում։

Անգլիայում գյուղատնտեսությամբ զբաղվում ե ազգաբնակության 12%-ը։ Անգլիան ամեն տարի ներմուծում ե մոտ 25 միլ. փութ հացահատիկ։

Անգլիական բուրժուազիան թե մայր յերկրում և թե գաղութներում ունեցել ե ճնշման համար զորավոր պետական ապարատ։ Իշխանությունը գտնվում ե խոշոր կապիտալիստների ձեռքին, վորոնք կառավարում են մինիստրներին և կառավարությանը։ Գաղութների հետամնաց ժողովրդներին անխնա կեղեքելով, շահագործելով, անգլիական խորամանկ բուրժուազիան մի փոքր բարելավել ե բանվորների վերին շերտի դրությունը ի հաշիվ իր հսկայական վաստակների։ Անգլիական բուրժուազիան կարողացել ե բանվոր դասակարգի ծոցում ստեղծել բանվորական արիստոկրատիա, վորը ավելի լավ նյութական պայմանների մեջ ե դրված։ Այդ բանվորական արիստոկրատիան, վորը այդպիսով կապված ե բուրժուազիայի հետ, կասեցնում ե լայն մասսաների դասակարգային կռիվը, խաբում ե նրանց և օգնում ե բուրժուազիային իր գաղութներում ավազակային քաղաքականություն վարելու մեջ։ Շնորհիվ բանվորական արիստոկրատիայից յելած առաջնորդների այդ վոճրագործ քաղաքականության՝ Անգլիայի թվապես ուժեղ բանվոր դասակարգը քաղաքականապես չափազանց հետամնաց ե։

Անգլիայի գլխավոր գաղութը — Հնդկաստանը գրավում ե, 1.800.000 քառ. կիլ. տարածություն և ունի 320 միլիոն բնակիչ։ Հնդկաստանի բնակչության 72%-ը գյուղացիներ են, իսկ 20 միլիոնից ավելի բնակչությունն աշխատում ե արդյունաբերության մեջ։ Յերկրագործությունը կատարվում ե հետամնաց միջոցներով։ Հողը համարյա ամեն տեղ պատկանում ե պետությանը, վորը նա տալիս ե գյուղացիներին կապալով։ Հնդիկ

գյուղացին ապրում է խիստ աղքատության մեջ: Նա զբաղվում է բրնձի, բամբակի մշակությամբ և տնկարաններում թեյի ու շաքարի մշակությամբ:

Արդյունաբերությունն աննախընթաց արագությամբ աճեց պատերազմի տարիներում: Արդյունաբերության գլխավոր ճյուղերն են՝ բամբակը, յերկաթը, ջուտը: Ներմուծման $^{2}/_{3}$-ը և արտահանության համարյա կեսը Անգլիայինն է: Անգլիական կապիտալի համարյա նույնքան մասն էլ գտնվում է արդյունաբերական ձեռնարկություններում:

Յերկրի ամբողջ իշխանությունը պատկանում է անգլիական կառավարության կողմից նշանակված գեներալ-նահանգապետներին: Անգլիան Հնդկաստանում պահում է մեծ քանակությամբ զորք: Բնակչության ապստամբությունները ինչպես անցյալում, այնպես էլ վերջին տարիներում անողոք կերպով ճնշման են յենթարկվում: Հնդկաստանի ճնշված աշխատավորները ՍՍՀՄ-ի մեջ տեսնում են իրենց դաշնակցին. ընկեր Լենինի—ՍՍՀՄ-ի ստեղծողի և աշխատավորների առաջնորդի անունը մեծ հռչակ է սեր է վայելում նրանց մեջ: Այս պատճառներն ու ՍՍՀՄ-ի՝ Հնդկաստանին աշխարհագրական տեսակետից մոտիկ գտնվելը, էլ ավելի յեն մեծացնում անգլիական աշխարհակալների ատելությունը դեպի նրանց:

Հնդկաստանում առայժմ սոցիալիստական կուսակցություններ չկան: Այստեղ բնիկ բուրժուազիայի ղեկավարությամբ ուժեղանում է ազգային շարժումը: Հնդկաստանում բնակչության 90%-ից ավելին վոչ գրել գիտե, և վոչ էլ՝ կարդալ (համաձայն 1911 թվի տվյալների):

Մայրենի լեզու.—Հնդիկների ճնշված վիճակը նկարագրող, նույնպես և Հնդկաստանի բնական ու կենցաղային առանձնահատկությունները նկարագրող հատվածների ընթերցում: Հնդկաստանի դրությանը վերաբերող լրագրական տեղեկությունների ընթերցում: Կարևորագույն տեղեկությունների արտագրում տետրակներում: Կարևորագույն տեղեկությունների արձանագրում Հնդկաստանի մասին: Կոլլեկտիվ վերլուծում գրածներից մի քանիսի վոճի տեսակետից:

Մաթեմատիկա.—Շրջանաձև դիագրամմա կազմել Հնդկաստանի մասին՝ ըստ իրենց զբաղմունքի: Բնակչության քանակի և տարածության մասին յեղած տվյալների հիման վրա գրել բազմանիշ թվերը (վերջինները մետրական չափերով): Ծանոթացնել միանիշ թվի վրա բաժանելու հաշվելու միջոցով, թե քանի անգամ է Հնդկաստանի բնակչության թիվն ու գրաված տարածությունը գերազանցում Անգլիայի մայր յերկրին: (320 մ. 40=, հաշվումը կատարել մոտավոր թվերով): Պյութագորասի բազմապատկման աղյուսակը:

Աշխարհագրություն.—Քարտեզում գտնել Հնդկաստանի սահմանները: Հնդկաստանի գլխավոր քաղաքները: Հաղորդակցության ճանապարհները Հնդկաստանի ներսում և ուրիշ յերկրների հետ: Բնական ու կլիմայական պայմանները:

54. ԱՆԳԼԻԱ

(ՎԵՐՋԸ)

Քաղաքագիտություն.—Պատերազմը զգալի փոփոխություն մտցրեց Անգլիայի տնտեսական և քաղաքական կյանքում: Անգլիական գաղութներ-

րը պատերազմի ընթացքում զարգացրին սեփական արդյունաբերությունը։ Հնդկաստանում զարգացավ ազգային շարժումը։ Համաշխարհային տնտեսության համար ի դեմս իմպերիալիստական Ամերիկայի հանդես յեկավ ուժեղ մրցակից։ Արդյունաբերությունը, արտաքին առևտուրը, նավաշինությունը—դեռևս հասած չեն նախապատերազմյան բարձրության։ Ցածրացավ իրական աշխատավարձը, մեծացավ գործազրկությունը։ Բանվորական շարժումը հեղափոխականանում է, ամրանում է Կոմկուսակցությունը։ Անգլիան ունենում է հսկայական ծովային տորմիղ (մինչև 525.000 տոնն ջրատարողություն=114 խոշոր և 277 մանր մարտական միավորներ ըստ 1913 թվի տվյալների), խոշոր ոդային տորմիղ (ըստ 1924 թվի տվյալների 33 ջոկատ. յուրաքանչյուրում 18 սավառնակ, վորոնցից 20 ջոկատ գտնվում են մշտապես գաղութներում) և բավականաչափ ցամաքային բանակ։ Համաշխարհային պատերազմի ժամանակ Անգլիան զենքի տակ ուներ 8 միլիոն մարդուց ավելի։ Անգլիան շարունակում է կառուցել ծովային և ոդային նոր միություններ, նոր ծովային հենարաններ (Սինգապուրը)։

ՍԽՀՄ-ի և Անգլիայի միջև գոյություն ունի 1921 թվից պայմանագիր։ (Մեր փոխհարաբերությունները Անգլիայի հետ ըստ լրագրական վերջին տվյալների)։

Մայրենի լեզու.— (**51 յեվ 53 զրույցների վերաբերյալ**). Անգլիայի բնական պայմանները նկարագրող հատվածների ընթերցում, Անգլիայի գաղութների, ճնշողների և ճնշված ժողովուրդների վիճակը։ Անգլիայի վիճակը լուսաբանող լրագրական հաղորդագրությունների ընթերցում, ազատագրական պայքարի ընթացքը թե մայր յերկրում և թե գաղութներում։ Անգլիայի մասին յեղած կարևորագույն տեղեկությունների արձանագրում։ Հաճախակի կրկնվող սխալի մասին յեղած կանոնի բացատրություն։

Մաթեմատիկա.—Բազմապատկման վարժություն տնտեսական—աշխարհագրական կարգի տվյալների հիման վրա. որինակ՝ հաշվել—ինչի յե հավասար Անգլիայի ամբողջ բնակչությունը, յեթե մայր յերկրի բնակչությունը կազմում է ամբողջ բնակչության $^1/_{10}$-րդ մասը և հավասար է 44 միլիոնի (44×10=440). ոդանավերի թիվը հաշվելը, տես՝ զրույց 53,— 33×10=330. 33×8=264 և գումարել արդյունքները և այլն։ Ուղղագիծ և շրջանաձև դիագրամների գծություն կամ կառուցում բնակչության դասավորության մասին՝ գաղութներում և մայր յերկրում։ Համեմատական թվեր Անգլիայի քաղաքային և գյուղական բնակչության։ Պյութագորասի բազմապատկման աղյուսակը։

Աշխարհագրություն.—Քարտեզում գտնել Մեծ բրիտանիան և նրա կարևոր գաղութները. Քարտեզում գտնել Անգլիայի դեպի գաղութները տանող ծովային ճանապարհները։ Անգլիայի գլխավոր քաղաքներն ու կարևոր արդյունաբերական կենտրոնները։ Կլիմայական և բնական պայմանները։

55—56. ՖՐԱՆՍԻԱ

Քաղաքագիտություն.—Ֆրանսիան բուրժուական հանրապետություն է. Բնիկ ազգաբնակությունը յերկրամասում 39.000.000 է, յերկիրը

550.000 քառ. կիլոմետր է, որը մոտավորապես մեր Արխանգելսկի նահանգին է հավասար: Ֆրանսիան աշխարհի բոլոր մասերում էլ ունի գաղութներ (գաղութների տարածությունը 11.416.448 քառ. կիլոմետր է, բնակչությունը՝ 61.148.000): Ֆրանսիայի կլիմայական և հողային պայմանները գյուղացիության զարգացման համար նպաստավոր են (վարելահողը կազմում է 56%, խաղողի այգիները՝ 3%, մարգագետինները՝ 11%, անտառները՝ 16% և խոպանները՝ 14%): Սննդանյութերի ներմուծումը յերկու անգամ ավելի յե արտածումից:

Պատերազմից առաջ Ֆրանսիայում, որտեղ շատ քիչ սեփական ածուխ կար, առավելապես զարգացած եր ոժանդակ արդյունաբերությունը (մետաքսի, քիմիական, «արդուզարդի»): Պատերազմից հետո Լոթարինգիայի հարստությունների միացմամբ, Ֆրանսիան արտադրում է ծանր արդյունաբերության ապրանքներ: Ֆրանսիայի ֆինանսական վիճակը շատ ծանր է: Պետական պարտքը անսովոր կերպով աճեց (300 միլիարդ ֆրանկից ավելի): Ֆրանկի արժեքն ընկնում է:

Ֆրանսիան մինչև այժմ էլ պահում է 800.000 մարդուց բաղկացած բանակ, ունի ծովային մեծ տորմիղ և օդային հսկայական տորմիղ (ըստ 1924 թ. տվյալների՝ օդային տորմիղի 127 ջոկատ, յուրաքանչյուրում 10 սավառնակ) և շարունակում է ուժեղ կերպով սպառազինվել: Ֆրանսիական բուրժուազիան իր մեծ բանակի վրա հենվելով, ճնշում է իր յերկրի և գաղութների աշխատավորներին:

ՎԵՐՋ

Քաղաքագիտություն.— Ֆրանսիայում հաշվում են 10 միլիոնից ավելի բանվորներ և ծառայողներ: Կա 2 միլիոնից ավելի գյուղական տնտեսություն, որոնցից յուրաքանչյուրը 1 դեսյատինից ավելի հող չի գրավում: Յեվ բանվորական շարժումը, որն ունի ամենահեղափոխական անցյալ, կազմալուծման է յենթարկված բազմաթիվ մանր-բուրժուական խմբերի և դավաճան համաձայնողականների ազդեցությամբ: Միմիայն կոմունիստական կուսակցությունն է (հիմնված 1920 թվին, հաշվվում է մոտավորապես 80.000 մարդ) խիստ կերպով դասակարգային պրոլետարական քաղաքականություն վարում: Աճում են ֆրանսիական կոմյերիտմիության ուժերը: Արհմիություններն իրենց մեջ ունեն 6 միլիոնից ավելի մարդ: Կոմունիստներն աստիճանաբար նվաճում են արհմիություններն ու սոցիալ-դավաճաններին:

Պատերազմից հետո վերականգնվող աշխատանքների հետ միասին վերանում է գործազրկությունը, նույնիսկ տեղի յե ունենում օտարերկրյա բանվորների ներհոսում, բայց իրական աշխատավարձը նախապատերազմյանից՝ շատ ավելի ցած է:

Ֆրանսիան միայն 1924 թ. նոյեմբերին ճանաչեց ՍԽՀՄ, յերբ համոզվեց, որ զինված ուժով խորհրդային իշխանությունը տապալել չի կարող: (Մեր փոխհարաբերությունները Ֆրանսիայի հետ և Ֆրանսիայինը Գերմանիայի հետ ըստ լրագրական վերջին տեղեկությունների):

Մայրենի լեզու.— (54, 55 դրույցի վերաբերյալ): Յերկրի և կլիմա-

յական պայմանները, ինչպես և Ֆրանսիայի աշխատավորների վիճակը նկարագրող հատվածների ընթերցում։ Ֆրանսիայում տեղի ունեցող ժամանակակից անցքերը նկարագրող լրագրական հաղորդագրությունների ընթերցում։ Ֆրանսիայի փոխհարաբերությունը մեզ հետ և այնտեղի դասակարգային պայքարը։ Ֆրանսիայի մասին յեղած կարևոր տեղեկությունների գրանցում։ Ֆրանսիայի մասին յեղած կարևոր հաղորդագրությունները կտրել հանելը և արտագրելը։ Ֆրանսիայի մասին գրադարանում ունեցած գրականության ցուցակը կազմելը։ Հանդիպած սխալների մասին յեղած կանոնների վերլուծություն։

Մաթեմատիկա.— *Միանիշ թվի վրա բաժանելն ու բազմապատկելը, զրոներ ունեցող թվերը միանիշ թվերի վրա բաժանելու կարգը բացատրելը, տնտեսական աշխարհագրության կարգի տվյալների հիման վրա, ինչպես և սպառազինման (սավառնակների) թիվը հաշվելու միջոցով և բանակի թիվը ազգաբնակության թվին համեմատելով, իմանալ թե վորքան ազգաբնակության մի զինվոր և ընկնում։ Այս տվյալների համեմատությունը Կարմիր բանակի մասին յեղած տեղեկությունների հետ (130 միլ. ազգաբնակության դիմաց 560 հազար կարմիր բանակային)։ Նախորոք կազմված ուղղանկյուն դիագրամների քննություն քաղաքային և գյուղական ազգաբնակության բաշխման մասին, ՍԽՀՄ-ի առևտրի աճման մասին և այլն։ Պյութագորասի բազմապատկման աղյուսակից օգտվելը։*

Աշխարհագրություն.— *Գտնել և զննել քարտեզի վրա Ֆրանսիայի սահմանները։ Կլիմայական և բնական պայմանների բնութագիրը։ Գլխավոր քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները։ Գլխավոր գետերը։ Յերկաթուղային ցանցի խտությունը։*

57. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Քաղաքագիտություն.— *Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները խոշորագույն կապիտալիստական յերկիրն և հանդիսանում (տարածությունը 7.839.000 քառ. կլմ., ազգաբնակությունը— 106.000.000, վորի թվում նաև 10,5 միլ. նեգր, գաղութները— 403.600 քառ. կլմ., ազգաբնակության թիվը 14.832.000)։ Յերկրում բազմաթիվ ազգություններ կան, վորը դժվարացնում և բանվոր բնակչության կազմակերպությունը՝ մանավանդ վոր կապիտալիստները հրահրում են այդ ազգամիջյան խարթությունը։*

Հ. Ա. Մ. Ն.-ը արագ կերպով յերկրագործական յերկրից դարձավ արդյունաբերական յերկիր։ Քաղաքային ազգաբնակությունը կազմում և 51,4%։ Յերկրի բնական հարստությունները շատ մեծ են։ Գյուղական տնտեսությունը ահագին քանակությամբ մթերքներ և արտահանում յերկրից (Հ. Ա. Մ. Ն.-ի մասնակցությունը համաշխարհային արտադրության մեջ՝ յեգիպտացորեն— 75%, նավթ— 66%, պղինձ— 50%, յերկաթ 40%, ածուխ— 40%, ցորեն— 25%։ Գյուղական տնտեսության տարեկան պրոդուկցիան և 7 միլիարդ դոլլար, արդյունաբերությունը— 65 միլիարդ)։ Յերկրի հարստությունները միլլիարդերների մի փոքր խմբակի ձեռքումն և. ազգաբնակության 2%-ը տիրում և ազգային հարստության

60%-ին, բնակչության 33%-ը — ազգային հարստության 35%-ին, և 65%-ը, չքավորները, տիրում են հարստությունների 5%-ին: Պատերազմի ընթացքում Ամերիկան անասելի կերպով հարստացավ. ամերիկական բանկերում պահվում է վոսկու համաշխարհային պաշարի կեսից ավելին: Ամերիկան դարձել է համաշխարհային բանկիր:

Չնայած յերկրի հարստությունների անհաման բազմամիլիոն բանվոր դասակարգի դրությունը չի բարելավվել: Յերկրում ավելի քան 2 մլ. գործազուրկ կա: Զանազան խարամանկությունների և կաշառների միջոցով, բանվոր դասակարգի ներսում ավելի լավ ապահովված մասերը առաջ քաշելով, հետամնաց բանվորական մասսաներին պահում են կապիտալի ակընհայտ ծառաներ՝ դավաճան առաջնորդների ազդեցության տակ: Կապիտալիստական ճնշումն Ամերիկայում հասնում է չտեսնված չափերի: Այդ հանգամանքը բանվորներին մղում է դեպի պայքար: Ամերիկայում խոշոր գործադուլները հազվագյուտ բան չեն բայց շատ դաժան կերպով ճնշվում են: Դեռ վերջերս միայն կազմակերպվել է կոմունիստական կուսակցություն, վորը դեռ սակավաթիվ է, սակայն գործունյա կերպով մասնակցում է բանվոր դասակարգի հեղափոխական շարժման կազմակերպության համար:

Հ. Ա. Մ. Ն.-ը ունեն հսկայական ծովային, առևտրական և օդային տորմիղ և ուժեղ կերպով զինվում են: Կանոնավոր բանակը (137.000) և ծածուկ զինված ուժերը հասնում են 2 միլիոնի:

ՍԽՀՄ-ը դեռ չի ճանաչված Ամերիկայի կողմից (մեր փոխ-հարաբերությունները Հ. Ա. Մ. Ն.-ի հետ ըստ լրագրական վերջին տվյալների):

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք նկարագրում են բանվորների դրությունը Ամերիկայում: Ծանոթություն լրագրական այն հաղորդագրություններին, վորոնք լուսաբանում են այնտեղի կարևորագույն դեպքերը և մեր ու Ամերիկայի փոխ-հարաբերությունները: Ամերիկայի մասին յեղած կարևորագույն տեղեկությունների գրանցում:

Մաթեմատիկա.— Բազմապատկում և բաժանում միանիշ և զրոներով թվերի վրա, տնտեսական աշխարհագրության կարգի տվյալների հիման վրա, ինչպես և Միացյալ Նահանգների բանակի վրա արած ծախսերի մասին: Պյութագորասի բազմապատկման աղյուսակից օգտվելը: Գրանցում տնտեսական աշխարհագրության կարգից տվյալների յերկարության և քաշի մետրական չափերով:

Աշխարհագրություն.— Գտնել Ամերիկան քարտեզի վրա: Զննել քարտեզի վրա այն բոլոր ծովերն ու օվկիանոսները, վորոնք վողողում են Ամերիկայի ափերը: Գլխավոր քաղաքները և արդյունաբերական կենտրոնները: Գետերն ու լճերը. կլիմայական պայմանների բնութագիրը, հաղորդակցության ճանապարհների զարգացումը:

58-59 ԳԵՐՄԱՆԻԱ

Քաղաքագիտություն.— Իմպերիալիստական պատերազմից Գերմանիան ջարդված դուրս յեկավ: Համաձայն Վերսալի դաշնագրի (1919 թ. հունիս) Գերմանիան կորցրեց վոչ միայն իր բոլոր գաղութները, այլ և իր յեվրոպական տերիտորիայի մի մասը (Ելզաս-Լոթարինգիա, Պոզնան և այլն),

վորոնք անցան Ֆրանսիային, Բելգիային, Չեխո-Սլովակիային. իր բանակը կրճատեց մինչև 100.000 մարդ և նավատորմը մինչև 15.000, բոլորովին զրկվեց օդային տորմիղից և պարտավորվեց բազմամիլիարդ տուգանք (դրամով և մթերքներով) տալ։ Գերմանիայի նախկին հզորության պատվանդանը, այն է յերկրի բնական հարստությունների շահագործումը և յելքը դեպի ծով, հաղթողների ձեռքին է անցել, վորովհետև նրանք խլել են ածուխի և յերկաթի ռայոնները, Գերմանիայի առևտրական տորմիղը և գաղութները։ Գերմանիան դարձել է իմպերիալիստական գիշատիչների (Ամերիկա, Անգլիա և Ֆրանսիա) կիսագաղութ։

Ներկայումս Գերմանիան միացյալ հանրապետություն է (18 առանձին հանրապետություն) 62 միլ. ազգաբնակությամբ և 470.000 քառ. կիլ. տարածությամբ։ Գերմանիան մեծ մասամբ արդյունաբերական յերկիր է, բայց գյուղատնտեսությունն էլ շատ բարձր է կանգնած։ Արդյունաբերության մեջ (լեռնային, ելեքտրական, մեքենագործական, մանվածային) աշխատում է 12.000.000 բանվոր, գյուղատնտեսության մեջ 6 միլիոն։ Գերմանիայի հասակավոր ազգաբնակության 2/3 (23 միլ.)-ը բանվոր է.

ՎԵՐՋ

Կապիտալի համակենտրոնացումը Գերմանիայում պատերազմի ընթացքում և նրանից հետո հասնում է հսկայական չափերի։ Օրինակ Ստիննեսի տրեստը հսկայական ձեռնարկությունների տեր եր և 600.000 բանվոր ուներ։ Ռազմական պարտության ամբողջ ծանրությունը ընկնում է Գերմանիայի բանվոր դասակարգի վրա, վորի դրությունը չափազանց վատանում է։ Ռեալ աշխատավարձը 2-3 անգամ ցած է նախապատերազմյանից. շատ ռայոններում 1918 թ. հեղափոխության ժամանակ ձեռք բերած 8— ժամյա բանվորական օրը բանվորները նորից կորցնում են։

Բայց բուրժուազիայի ոգնական դավաճան սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը դեռ մեծ է և նրանք կարողանում են կասեցնել և վիժեցնել բանվորական մասսաների հեղափոխական շարժումը։ Կոմունիստական կուսակցությունը (կազմվել է 1918 թվին, ունի ավելի քան 300.000 անդամ) համառ կերպով պայքարում է Գերմանիայի կապիտալիստական կառավարության և սոցիալ-դեմոկրատիայի դեմ։ 1923 թվի հոկտեմբերին բուրժուազիայի տարած հաղթանակից հետո կոմունիստական կուսակցությունը հալածվում է, նրա առաջնորդները բանտարկվում են, բայց և այնպես 1924 թվի ընտրությունների ժամանակ կոմկուսակցությունը ստացավ 45 տեղ ռայխստագում։ Քաղաքական դրությունը Գերմանիայում չափազանց անկայուն է։

ՍԽՀՄ-ի և Գերմանիայի միջև խաղաղության դաշնագիր է կնքված։ (Գերմանիայի դրությունը և մեր փոխ-հարաբերությունները վերջին լրագրական տվյալներով)։

Մայրենի լեզու — Կարդալ Գերմանիայի բանվորության դրությունը նկարագրող հոդվածներ։ Կարդալ լրագրական հոդվածներ դասակարգային կռվի ընթացքի և ուրիշ կարևորագույն դեպքերի առթիվ։ Գրի առնել Գեր-

թանկայի մասին չեղած հիմնական տեղեկությունները։ Ռուսերի վերլուծում նախ քան գրանցումը։

Մաթեմատիկա.— Վարժություն միանիշ թվերի վրա բազմապատկում և բաժանում կատարելու մեջ տնտեսական աշխարհագրության տվյալների հիման վրա։ Գրի առնել տնտեսական աշխարհագրության տվյալները մետրական չափերով։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա Գերմանիան և նրա ժամանակակից սահմանները։ Զննել այն տերիտորիան, վոր Վերսալյի դաշնագրով անցել է Ֆրանսիային և Լեհաստանին։ Կարևորագույն քաղաքները և արդյունաբերական կենտրոնները։ Գերմանիան կազմող հանրապետությունները (Պրուսիա, Բավարիա, Սաքսոնիա և այլն)։ Հեղափոխական պայքարի կենտրոնները (Սաքսոնիա և Թյուրինգիա)։ Գերմանիայի ափերը վողողող ծովը, գետերը, հաղորդակցության ճանապարհների զարգացման աստիճանը, կլիմայական և բնական պայմանները։

60. ՓՈՔՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԽՈՇՈՐ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ

Հասարակագիտություն.— Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը հնարավորություն է տվել նախկին ցարական Ռուսաստանի ծայրամասերում բնակվող ժողովուրդներին ինքնորոշվել և ինքնուրույն պետություններ ստեղծել։ Բայց խոշոր արևմտա-յեվրոպական կապիտալիստական յերկրներին հարկավոր էր «բոլշևիկյան վտանգից» պատսպարվել և միաժամանակ պարտված Գերմանիայի հեղափոխական պրոլետարիատը բաժանել խորհրդային հանրապետության աշխատավորներից։ Ուստի Անգլիան և Ֆրանսիան ծայրամասի հանրապետությունները՝ Ֆինլանդիան, Էստոնիան, Լիտվան, Լեհաստանը, Լատվիան դարձրել են զինված պատվար ՍԽՀՄ-ի և Արևմտյան Յեվրոպայի միջև։ Նույն այս տիպի պետությունների թվին է պատկանում նաև Ռումինիան, վորը հեղափոխության միջոցին խլեց մեզնից Բեսարաբիան։ Ծայրամասի այս խոշոր պետությունները կատարյալ կախման մեջ են խոշոր կապիտալիստական յերկրներից։ Իրենց տերերի ցուցումներով այդ ծայրամասային հանրապետությունները հարձակումներ եյին գործում մեզ վրա և մինչև այժմ էլ իրենց սահմաններում տեղ են տալիս ռուս սպիտակ-գվարդիականներին, իրենց տերիտորիայի վրա կազմած են հրոսախմբեր, վորոնք հարձակումներ են գործում մեր սահմանամերձ գյուղերի վրա։

Բոլոր արևմտյան հարևանների հետ, բացի Ռումինիայից, մենք խաղաղության դաշն ենք կապել։

Մայրենի լեզու.— Կարդալ լրագրական տեղեկություններ, վորոնք նկարագրում են անգլիական, ֆրանսիական և այլ կապիտալիստների ազդեցությունը հիշյալ յերկիրների վրա, դասակարգային պայքարի ընթացքն այնտեղ և նրանց փոխ հարաբերությունը ՍԽՀՄ-ի հետ։ Գրի առնել կարևոր տեղեկությունները։

Մաթեմատիկա.— Վարժություն միանիշ թվերի բազմապատկման և բաժանման մեջ տնտեսական աշխարհագրության տվյալների հիման վրա

և հաշվել բանակի թիվը և հարաբերությունը ազգաբնակության և տերիտորիային։ Գրի առնել տնտեսական աշխարհագրության տվյալները յերկարության և ծանրության մետրական չափերով։

Աշխարհագրություն.— Վերևը թված յերկրները ցույց տալ քարտեզի վրա։ Ցույց տալ գլխավոր քաղաքները։ Նրանց դիրքը և հեռավորությունը ծովից։ Փոխադրության ճանապարհներ նրանց վրայով դեպի ՍԽՀՄ և ուրիշ յերկրներ։

61. ԼԵՀԱՍՏԱՆ

Քաղաքագիտություն.— Այժմյան լեհական պետությունը կազմվել ե 1918 թվի վերջերին նախկին ռուսական Լեհաստանից (Մերձվիսլյան յերկրից), Գալիցիայից, Պոզնանից, և Արևմտյան Պրուսիայից։ Հետագայում Անգլիան և Ֆրանսիան ավելացրին Լեհաստանին նաև Վերին Սիլեզիան։ 1921 թվականի Ռիգայի պայմանագրով, վոր կնքվեց մեր և Լեհաստանի միջև, նրան անցավ նաև Բելոռուսիայի և Վոլինի մի մասը։ (Լեհաստանի ներկայիս տերիտորիան— 360.000 քառ. կիլ. և ազգաբնակության թիվը ե 29 միլիոն, վորից լեհեր—55%, ուկրայնացիք և բելոռուսներ—25%, ռուսիններ—10% և հրեյաներ—10%)։ Այժմյան սահմաններում Լեհաստանն ունի հսկայական փորածու հարստություններ (ածուխ, յերկաթ, նավթ)։ Գյուղատնտեսության մթերքները տեխնիկայի վորոշ բարելավման դեպքում, կարող են նույնիսկ արտահանվել։ Լեհաստանի աշխարհագրական դիրքը Արևելքի և Արևմուտքի միջև նրան մեծ առավելություններ ե տալիս իբրև առևտրական միջնորդի։ Բայց Լեհաստանը ի վնաս իր տնտեսական շահերի իր գոյության առաջի յերկու տարվա ընթացքում անընդհատ պատերազմել ե, ձգտելով ընդարձակել իր սահմանները և վերջնականապես աղքատացավ. Նրա տերերը՝ ֆրանսիացիք և անգլիացիք, վերցրել են լեհական արդյունաբերությունը (նավթ, ածուխ) իրենց ձեռքը։

Պատերազմից հետո յերկրի տնտեսությունը սկսեց առողջանալ, բայց և այնպես ամբողջովին կախված ե արտասահմանյան կապիտալից։ Հողային հարցը մինչև այժմ ել չի լուծված։ 800.000 գյուղացիական տնտեսություն միջին՝ հաշվով ամեն մեկը 3/4 դեսյատին հող ունի, իսկ խոշոր կալվածատերերը (10.000) 6 միլ. դեսյատին հող և 6 միլ. դեսյատին անտառ։ Այս ե պատճառը, վոր գյուղացիության մեջ շարունակ ապստամբություններ են տեղի ունենում, վորոնք կատաղի կերպով ճնշվում են։ Ավելի ես վատթար ե բազմաթիվ ազգային փոքրամասնությունների (բելոռուսներ, ուկրայնացիք, ռուսիններ) դրությունը, վորոնց լեհական պաները կամենում են զոռով լեհացնել և հալածում են նրանց կրոնը, լեզուն, փակում են նրանց ազգային դպրոցները և այլն։ Լեհաստանի բանվոր դասակարգը, վորը մեծ հեղափոխական անցյալ ունի, տերրորի յե յենթարկված բուրժուական հարձակումներով և սոցիալ-դավաճանների պրովոկացիոն գործունեությամբ։ Գործազրկությունը մեծ ե և մշտական, գործադուլները հաճախ են, կոմկուսակցությունը աշխատում ե գաղտնի։ Յերկրում տիրում ե սպիտակ տերրորը, վորը շատ ուժեղ ե մանավանդ արևելյան ծայրամասերում ուկրայնացիների և բելոռուսների միջև։

Լեհաստանը պահում է 300.000-անոց մշտական բանակ։ Ոդային տորմիղը 1924 թ. տվյալների համաձայն բաղկացած է 24 ջոկատից՝ 6-8 սավառնակ ամեն մի ջոկատում։ (Մեր փոխ-հարաբերությունները Լեհաստանի հետ ըստ վերջին տեղեկությունների)։

Մայրենի լեզու.— Կարդալ հոդվածներ, վորոնք նկարագրում են աշխատավորների և մանավանդ ազգային փոքրամասնությունների դրությունը Լեհաստանում։ Կարդալ լրագրական տեղեկություններ դասակարգային պայքարի ընթացքի և դեպքերի մասին Լեհաստանում։ Կարևոր տեղեկությունների գրանցում Լեհաստանի մասին։ Բառերի վերլուծում գրանցումից առաջ։

Մաթեմատիկա.— Վարժություն կոտորակների բազմապատկման և բաժանման մեջ տնտեսական աշխարհագրության տվյալներով և բանակի թիվն ու նրա հարաբերությունը դեպի ազգաբնակությունն ու տերիտորիան վճռելով։ Գրի առնել տնտեսական աշխարհագրության տվյալները մետրական չափերով և գծել ուղղանկյուն դիագրամները։

Աշխարհագրություն.— Քարտեզի վրա գտնել Լեհաստանը և նրա սահմանները։ Գլխավոր քաղաքները, գետերը, յերկաթուղագծերը։ Կլիմայական և բնական պայմանների բնութագիրը։

62. ՌՈՒՄԻՆԻԱ

Քաղգրագիտություն.— Համաշխարհային պատերազմի հետևանքով Ռումինիան իր տերիտորիան և ազգաբնակությունը ավելացրել է յերկու անգամ (298.000 քառ. կիլ. և 17.5 միլ. ազգաբնակություն, վորոնցից ռումին 70%, մնացածները մաջառներ և ռուսիններ)։ Կալվածատիրական Ռումինիան, վոր մինչև պատերազմը խոշոր կալվածատիրական յերկիր եր, պատերազմից հետո դառնում է խառը բնույթ ունեցող յերկիր։ Առանձնապես կարևոր են արդյունաբերության հետևյալ ճյուղերը՝ անտառային, սննդային (ջրաղացներ, շաքար, սպիրտ), մետաղագործություն և նավթ։ Արդյունաբերությունը ոտար կապիտալիստների ձեռքին է։ Ռումինիան կախում ունի Ֆրանսիայից և Անգլիայից։

Բանվոր դասակարգի դրությունը Ռումինիայում միշտ յեղել է վերին աստիճանի ծանր։ Յերկրում հենց այժմ էլ սպիտակ տեռորն է թագավորում։ Յերիտասարդ կոմկուսակցությունը թաղուն է աշխատում, բայց հեղափոխական շարժումը չի մեռել։ Բանվորները շարունակում են պայքարել։ Աշխատավոր գյուղացիության մասսաները՝ շնորհիվ հողազրկության և հսկայական տուրքերի, հուզումնալից դրության մեջ են, վորոնք տեղ տեղ ապստամբության բնույթ են ընդունում, բայց անխնա կերպով ճնշվում են։ Մանավանդ ծանր է Բեսարաբիայի դրությունը, վորի բնակչությունը ձգտում է միանալ ՍԽՀՄ-ին և այդ պատճառով յենթարկվում է ժանդարմերիայի և պատժիչ արշավախմբերի հալածանքներին։

Ռումինիան պահում է 250,000-անոց մի մշտական բանակ։ (Մեր փոխ-հարաբերությունները Ռումինիայի հետ ըստ վերջին լրագրական տվյալների)։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք լուսաբանում են

Ռումինիայի կյանքի և կենցաղի պայմանները։ Կարդալ տեղեկություններ, վորոնք նկարագրում են գյուղացիության դրությունը Ռումինիայում մանավանդ Ռումինիայի կողմից խլված Բեսարաբիայում։

Մաթեմատիկա.— *Վարժություն միանիշ թվերի վրա բազմապատկելու և բաժանելու մեջ։ Բացատրել, թե ինչ կարգով պետք է թիվը բազմապատկել բազմանիշ թվի վրա։ Քննել ուղղանկյուն դիագրամներ տնտեսական աշխարհագրության տվյալների շուրջը և ռումինական բանակի մասին։*

Աշխարհագրություն.— *Գտնել քարտեզի վրա Ռումինիան և նրա սահմանները։ Քննել Բեսարաբիան, վոր խլել են ռումինական կապիտալիստները։ Ռումինիայի դիրքը Սև ծովի նկատմամբ։ Դնեստր գետի դիրքը։ Կլիմայական և բնական պայմանները։*

63-64. ՖԻՆԼԱՆԴԻԱ, ԵՍՏՈՆԻԱ, ԼԱՏՎԻԱ, ԼԻՏՎԱ

Քաղաքագիտություն.— *Այս չորս հանրապետությունները միասին բռնում են 565.000 քառ. կիլ. տարածություն (մոտավորապես հավասար են մեր Արխանգելսկի նահանգին) և ունեն 10.050.000 բնակչություն (Ֆինլանդիան 3,3 միլ., Եստոնիան 1.260.000, Լատվիան 2 միլ. և Լիտվան՝ 3.795.000)։ Այս յերկրների ազգաբնակության 70 մինչև $90^0/_0$-ը պարապում է յերկրագործությամբ։ Այս յերկրներում յեղած արդյունաբերության մթերքները արտադրվում էյին Վելիկոռուսիա սպառելու համար. պատերազմը քայքայեց այդ արդյունաբերությունը։ Ֆինլանդիայում զարգացած է անտառային և թղթի արդյունաբերությունը։ Այս յերկրների գյուղատնտեսական ազգաբնակությունը ունի բազմաթիվ պրոլետարներ (բատրակներ) և կիսապրոլետարներ (վարձակալներ)։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այս բոլոր յերկրներում զանազան ժամանակներ խորհրդային իշխանություն է հաստատվում, բայց այդ յերկար չի տևում։ Այս յերկրների բուրժուազիան գերմանացի վարձկանների միջոցով դաժան կերպով ճնշում է բանվորական հեղափոխությունը։ Այժմ այդ յերկրներում թագավորում է սպիտակ տեռորը։ Կոմունիստական կուսակցությունները գործում են գաղտնի կերպով։ Բանվորական շարժումը հալածվում է։ Բանվորական ապստամբությունը Եստոնիայում 1924 թվի վերջերին արյան մեջ խեղդվեց։ Բայց կոմկուսակցության կողմից ղեկավարվող հեղափոխական շարժումը այս յերկրներում զարգանում է։*

Այս բոլոր յերկրներում բանակի ընդհանուր թիվը խաղաղ ժամանակ 104.000 է։ (Ֆինլանդիա — 33.000, Եստոնիա—16.000, Լատվիա—19,000 և Լիտվա—36.000)։ Խոշոր կապիտալիստական յերկրները ձգտում են այս յերկրներից ստեղծել ռազմական դաշնակցություն ՍԽՀՄ-ի դեմ։ (Մեր փոխհարաբերությունները Մերձբալթյան յերկրների հետ ըստ վերջին լրագրական տեղեկությունների)։

Մայրենի լեզու.— *Կարդալ լրագրական տեղեկություններ, վորոնք նկարագրում են դրությունը այս յերկրներում և մեր փոխ-հարաբերությունները նրանց հետ։ Գրի առնել կարեւորագույն տեղեկությունները հիշյալ յերկրների դրության և այնտեղ տեղի ունեցող դեպքերի մասին։ Գրի առնելիս վերլուծել պատահած բառերը։*

Մաթեմատիկա. — Վարժություն միանիշ և բազմանիշ թվերի վրա բազմապատկելու մեջ տնտեսական աշխարհագրության տվյալների և տեխնոլոգիայի ու բանակի համեմատության հիման վրա։

Աշխարհագրություն. — Գտնել քարտեզի վրա հիշյալ երկրները և նրանց դիրքը ծովի նկատմամբ։ Գլխավոր քաղաքներն ու կարևորագույն նավահանգիստները։ Կլիմայական և բնական պայմանները։

65. ԲԱԼԿԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Քաղաքագիտություն. — Հունաստանը, Բուլղարիան և Հարավ-Սլավիան (նախկին Սերբիան) զգալի կերպով փոխեցին իրենց սահմանները իմպերիալիստական պատերազմից հետո, բայց այդ հանգամանքը բալկաններին հանգստություն չբերեց։

Բալկանյան պետությունների մեջ բազմաթիվ են ազգային փոքրամասնությունները։ Նրանք ճնշված են բուրժուազիայի կառավարող խմբակների ձեռքով և անխնա պայքար են մղում նրանց դեմ իրենց անկախության համար։

Աշխատավորների դրությունը Բալկանյան երկրներում ծանր է, դասակարգային պայքարը սուր ձևեր է ստանում։ Կալվածատերերի և բուրժուազիայի ճնշումը չափազանց մեծ է, գյուղացիության դրությունը ծանր, և այդ ստիպում է նրանց ապստամբել կառավարող դասակարգերի դեմ։ Կոմունիստական շարժումը բալկանյան աշխատավորների շրջանում ուժեղ է՝ չնայած բուրժուազիայի դաժան սպիտակ տեռորին։

Բալկանյան պետությունները իրար հետ կռվում են Բալկանների վերաբաշխման համար։ Պատերազմներն այնտեղ շատ հավանական են և Բալկանյան պետությունները պատրաստվում են, մեծ բանակներ են պահում և զանազան դաշնակցություններ են կնքում այդ պատերազմի համար։

Բալկանյան պետությունների այս պայքարում մեծապես շահագրգռված են գլխավոր իմպերիալիստական պետությունները, վորոնց շահերն իրար են բախվում։ Բալկանյան պետությունները գերազանցապես երկրագործական են։ Արդյունաբերությունն այնտեղ թույլ է զարգացած և գտնվում է օտարերկրյա կապիտալիստների ձեռքում։ Բալկանները Եվրոպայի վառոդի պահեստ են։

Իմպերիալիստների կողմից ներշնչված Բալկանյան պետությունները թշնամական քաղաքականություն են վարում ՍԽՀՄ-ի հանդեպ, թեև նրանց տնտեսական շահերը ստիպում են նրանց մեզ հետ համաձայնություն կնքել։ Հունաստանն արդեն այդ արել է և ճանաչել է ՍԽՀՄ-ը։ (Բալկանյան դեպքերը ըստ վերջին լրագրական տեղեկությունների)։

Մայրենի լեզու. — Կարդալ հոդվածները և լրագրական տեղեկությունները, վորոնք նկարագրում են Բալկանների դրությունը։ Այդ տեղեկություններից ամենակարևորները արտագրել։ Կազմել Բալկանյան պետությունների ցուցակը՝ ցույց տալով կարևորագույն տվյալները (տերիտորիան, ազգաբնակությունը և բանակի թիվը և այլն)։

Մաթեմատիկա. — Դուրս հանել հիմնական տվյալները հիշյալ երկրների մասին։ Թվերի բազմապատկման վարժություն։ Ծանոթություն բազմանիշ

թվի վրա բաժանում կատարելու հետ (օրինակ՝ վճռել ազգաբնակչության խտությունը մի քառակուսի կիլոմետրի վրա)։ Համեմատել Բալկանյան պետությունները իրար և ՍՍՀՄ-ի հետ ազգաբնակչության թվով և բռնած տարածությամբ։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա Բալկանյան պետությունները և նրանց գլխավոր քաղաքները։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

66. ՉԻՆԱՍՏԱՆ

Քաղգրագիտություն.— Չինաստանը իր բռնած տարածությամբ և ազգաբնակչության թվով աշխարհիս ամենաընդարձակ պետություններից մեկն է (11.138.900 քառ. կիլոմ. և մոտ 450 միլիոն ազգաբնակչություն)։ Բնակչության 60%-ը պարապում է յերկրագործությամբ։ Գերակշիռ տեղ բռնում են մանր հողատիրությունը և կապալավարձը։ Գլխավոր մշակությունններն են՝ ցորեն, բրինձ, շաքար, թեյ. հում արբեշում։ Արտադրության միջոցները չափազանց հետամնաց են։

Արդյունաբերության (գլխավորապես Չինաստանի հյուսիսում և հարավում) զգալի մի մասը օտարերկրյա կապիտալիստների ձեռքին է (ածուխ, նավթ, պղինձ, յերկաթ, անագ) և արագությամբ զարգանում է։ Յերկրի փորածո հարստությունները մեծ են։

Օտարերկրյա կապիտալի ներմուծման հետ միասին, XIX դարի կեսից, Չինաստանը բռնում է կապիտալիստական զարգացման ուղին։ Ամերիկյան, անգլիական, յապոնական և ֆրանսիական կապիտալիստները արագ կերպով խլում են այս հարուստ յերկրի լավագույն կտորները, սկսում են սատարել կալվածատերերի, գեներալների և բուրժուազիայի առանձին խմբերի մեջ տեղի ունեցող քաղաքացիական կռիվներին և դառնում են յերկրում դրության տերը։ Չինաստանը դառնում է խոշորագույն կապիտալիստական յերկրների պայքարի ասպարեզ՝ պատճառ և հում նյութի այս հսկայական շուկային տիրապետելու համար։ Առանձնապես սուր կերպով բախվում են Ամերիկայի շահերը, վոր իր հսկայական կապիտալների գործադրության ասպարեզ է փնտրում և Յապոնիայի շահերը, վորը ամուր բուն է դրել Չինաստանում և շահագործում է նրա հարստությունները։ Իսկ Չինաստանում դեռ նոր են սկսվում համախմբվել ազգային ուժերը բռնակալների դեմ պայքարելու համար։ Այդ ուժերը համախմբվում են ժողովրդական հեղափոխական «Գոմինդան» կուսակցության շուրջը։

Ճիշտ տեղեկություններ բանվորների թվի մասին չկան (մոտ 6 միլ.)։ Յերկրում կան բազմաթիվ արհեստավորներ և չքավոր գյուղացիներ։ Դասակարգային գիտակցությունը չափազանց թույլ է։ Աշխատանքի պայմանները ծանր են։ Կոմկուսակցությունը դեռ նոր է կազմակերպվել և դեռ շատ փոքրաքանակ է, բայց արդեն մի քանի գործադուլ է կազմակերպել Չինաստանի հարավում։

ՍՍՀՄ-ը միակ պետությունն է, վոր չի ձգտում ստրկացնել Չինաստանը։ Չինաստանի լայն ժողովրդական մասսաները մեզ վերաբերում են

բարեկամաբար և ՍԽՀՄ-ին համարում են իրենց դաշնակիցը։ 1924 թվին ՍԽՀՄ-ի և Չինաստանի միջև խաղաղության դաշն է կնքված։ Օտարերկրյա կապիտալիստները չափազանց վայրացած են, վոր մեր հեղինակությունը և ազդեցությունը Չինաստանում այդքան աճել է և ամեն միջոցներով աշխատում են խանգարել մեր և Չինաստանի մերձեցմանը (վերջին լրագրական տվյալները)։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վոտանավորներ և պատմվածքներ Չինաստանի կենցաղային առանձնահատկությունները, միջազգային կապիտալի բռնակալության դեմ մղած հեղափոխական պայքարը նկարագրող։ Կարդալ լրագրական տեղեկություններ այն մասին, թե ինչպես է գործում օտարերկրյա կապիտալը Չինաստանում և նրա դեմ մղած պայքարի մասին, ինչպես և ՍԽՀՄ-ի և Չինաստանի փոխ-հարաբերությունների մասին։ Արտագրել կարևորագույն տեղեկությունները։ Կազմել համառոտ տեղեկագիր չինական անցքերի մասին մի շաբաթվա, մի ամսվա ընթացքում։ Աշխատությունների վճարանական ուղղումը և պատահած սխալների պարզաբանումը։

Մաթեմատիկա.— Շրջանաձև դիագրամ և բազմանիշ թվերի գրություն ազգաբնակության մասին և քաղաքներում ու գյուղերում ապրողների քանակի մասին յեղած տվյալների հիման վրա։ Վարժություն յերկանիշ և բազմանիշ թվերի վրա բաժանելու մասին, Չինաստանի ազգաբնակության թիվը և նրա տարածությունը ուրիշ յերկրների (Անգլիա, Ֆրանսիա, Միացյալ Նահանգներ, Յապոնիա) հետ համեմատելով ազգաբնակության խտությունը վորոշելով։ (450:11=)։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա Չինաստանը և այն յերկրները, վորոնց հետ նա սահմանակից է։ Չինաստանի գլխավոր նահանգները և քաղաքները։ ՍԽՀՄ-ին վերադարձված արևելյան-չինական յերկաթուղագիծը։ Կլիմայական և բնական պայմանները։ Չինաստանի ափերը վողողող ովկիանոսներն ու ափերը։

67. ՏԱՃԿԱՍՏԱՆ

Քաղաքագիտություն.— Տաճկաստանը համաշխարհային պատերազմից դուրս յեկավ ջախջախված (Տաճկաստանը կորցրեց մոտ 1.350.000 քառ. կիլ. տարածություն 13 միլ. ազգաբնակությամբ։ Այժմյան Տաճկաստանն ունի 8.500.000 բնակչություն և բռնում է 400,000 քառ. կիլոմետր)։

Տաճկաստանը յերկրագործական յերկիր է։ Հողը տեղ-տեղ շատ արգասաբեր է, տալիս է ցորենի հրաշալի բերք նույն իսկ առանց պարարտացման և վատ մշակության դեպքում։ Մշակվում է գլխավորապես ցորեն, գարի, ծխախոտ և բամբակ։ Փոքր Ասիան (Տաճկաստանի մի մասը) իր հանքային հարստություններով առաջնակարգ յերկրների շարքումն է, բայց դեռ ամենևին չի հետազոտված։

Մոտ 40 տարի Տաճկաստանը գտնվել է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ճնշման և հսկողության ներքո, վորոնք շահագործում եյին Տաճկաստանի բազմամիլիոն ժողովուրդը և յերկրի հարստությունները՝ տաճկական սուլթանի միջոցով։ Ռազմական պարտության պատճառով ազգա-

յին շարժումը ուժեղացավ և ընդունեց հեղափոխական ձև։ Իշխանությունը ընկավ տաճկական ազգային բուրժուազիայի ձեռքը։ Ազգային բանակը հաղթեց անգլիական գործակալներին (հույներին) և սուլթանը փախավ։ Ապստամբված ժողովուրդը արտասահմանյան ավազակներին ստիպեց իրեն հաշվի առնել։ Թեև իմպերիալիստների ճնշումը դեռ մեծ է, բայց ժողովրդական մասսաները արդեն շարժման մեջ են գցվել։ Ստեղծվել և աշխատում է կոմկուսակցությունը։

ՍԽՀՄ-ի և Տաճկաստանի միջև ստեղծվել են բարեկամական հարաբերություններ։

Մայրենի լեզու.— *Տաճկաստանի մասին հատվածների և պատմվածքների ընթերցում։ Լրագրական այն հոդվածների ընթերցում, որոնք լուսաբանում են կարևորագույն դեպքերը։ Գրի առնել Տաճկաստանի մասին յեղած հիմնական տեղեկությունները։*

Մաթեմատիկա.— *Բաժանման գործողության վարժություններ տնտեսական աշխարհագրության տվյալների հիման վրա, համեմատել Տաճկաստանի ազգաբնակության թիվը, տարածությունը, տնտեսական դրությունը ուրիշ յերկրների հետ։*

Աշխարհագրություն.— *Քննել Տաճկաստանի աշխարհագրական դիրքը և նրա սահմանները։ Գտնել քարտեզի վրա Տաճկաստանի այժմյան կենտրոն Անգորան, ինչպես և Կոստանդնուպոլիսը, Դարդանելի նեղուցը և Մարմարա ծովը։*

68. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Անդրկովկասին սահմանակից յերկրներից մեկն էլ Պարսկաստանն է։ Պարսկաստանը գտնվում է Կասպից ծովից դեպի հարավ։ Ազգաբնակության խտությունը չնչին է, մանավանդ յերկրի ներսում, ուր յերկրի մի մասը անապատ է։

Պարսկաստանը գլխավորապես յերկրագործական յերկիր է։ Արհեստական ոռոգման շնորհիվ Պարսկաստանում բուսնում են թանկարժեք յերկրագործական մշակույթներ, որոնցից գլխավորներն են՝ բամբակ, բրինձ, կաուչուկ։ Բնակիչները պարապում են նաև այգեգործությամբ, շերամապահությամբ և անասնապահությամբ։

Պարսկաստանը ունի բավականաչափ հանքային հարստություններ՝ արճճի, յերկաթի և պղնձի հանքեր, քարածուխ, մարգանեց, որոնք չեն մշակվում։ Հսկայական նշանակություն ունեն նավթահանքերը։

Հանքային հարստությունները շատ են գրավում օտարերկրյա կապիտալիստներին։ Առաջ Պարսկաստանը ռուսական և անգլիական կապիտալիստների կիսագաղութն էր, որոնք անխնա շահագործում էին Պարսկաստանը։

Ամբողջ Պարսկաստանը բաղկացած էր առանձին մանր ցեղերից, որոնց տեր ու տիրականը խաներն էին։ Բոլոր տեղերի մեջ մեծ մասամբ թագավորում էր կամայականությունը, որովհետև խաները չէին կամենում կենտրոնական իշխանությանը հպատակվել և բոլորովին ինքնուրույն կերպով կառավարում էին իրենց հպատակ ցեղերը։ Կենտրոնական իշխա-

նության հպատակվելն արտահայտվում եր բացառապես տուրքեր վճարելով, վոր հավաքում եյին խաները։ Ծայրամասերը տնտեսապես էլ հակված չեյին դեպի կենտրոն, վորը արդյունաբերական կենտրոն չեր հանդիսանում և յերկրում թույլ զարգացած առևտրի պատճառով։ Այդպիսով ծայրամասային ցեղերի համար կենտրոնական իշխանությունը խորթ եր, և նրանց համար բարձրագույն իշխանություն հանդիսանում եյին խաները։

Պարսկաստանի այդ բաժան—բաժանությունը նպաստում եր ոտարերկրյա կապիտալիստների շահագործմանը, և յերբ 1917 թվին ռուսական կապիտալիստների շահագործմանը վերջ տրվեց Պարսկաստանում, անգլիական կապիտալիստները աշխատում եյին ուժեղացնել շահագործումը և կայացնում են անգլո-պարսկական համաձայնությունը 1919 թվին։ Պարսկաստանի և ՍԽՀՄ-ի միջև կնքված առևտրական պայմանագիրը, ՍԽՀՄ-ի բարեկամական քաղաքականությունը և նվաճողական քաղաքականության բացակայությունը ոգնեցին պարսկական կառավարությանն՝ պատռել անգլո-պարսկական պայմանագիրը, վորը վոչնչացվեց 1922 թվին։ Այս ժամանակաշրջանից սկսվում ե Պարսկաստանի ծայրամասերի հավաքումը և ներկայումս համարյա բոլոր ծայրամասային խոշոր ցեղերը միացած են կենտրոնական կառավարության իշխանության ներքո։ Պարսկաստանի տնտեսությունը հետզհետե կանոնավորվում ե։ Պարսկաստանի և ՍԽՀՄ-ի առևտրական հարաբերությունները նույնպես զարգանում են։

Աշխարհագրություն.— Գտնել Պարսկաստանը քարտեզի վրա։ Ցույց տալ սահմանները ԱՍՖԽ Հանրապետության հետ.

Մաթեմատիկա.— Պարսկաստանի տնտեսական աշխարհագրության տվյալների հիման վրա բազմապատկման և բաժանման գործողություններ, վարժություններ կատարել.

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ պարսիկների կյանքի ու կենցաղի մասին։ Գրի առնել ազգաբնակության քանակի և յերկրի տարածության մասին յեղած տեղեկությունները։ Կազմել և գրի առնել Պարսկաստանի բնական հարստությունների ցուցակը։

69. ԿԱՐՄԻՐ ՅԵՐԴՈՒՄ

Քաղգրագիտություն.— Մայիսի 1-ին, աշխատավորների համաշխարհային տոնի որը՝ յերիտասարդ զինվորները ամեն տարի Կարմիր Յերդում են ընդունում։ Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք ե բազմիցս կարդա Կարմիր Յերդումը, լավ խորհելով նրա յուրաքանչյուր խոսքի մասին։ Անգրագետը պետք ե գրագիտություն սովորի, վոր կարողանա կարդալ և ըմբռնել Կարմիր Յերդումը։

Մայրենի լեզու.—Կարմիր յերդման ընթերցումն ու արտագրումը։

70. ՄԱՅԻՍԻ 1-Ը

Քաղգրագիտություն.—Մայիսի 1-ը,— Ինտերնացիոնալի որը,—աշխատավորության համաշխարհային տոնն ե, աշխատավորների միջազգային համերաշխության որը։ Այդ տոնը սահմանված ե հեղափոխական կուսակ-

յությունների համագումարում 1889 թվին։ Այդ օրը կապիտալիստական երկրների աշխատավորները հաշվում են իրենց ուժերը կապիտալիստները դեմ մղվելիք մարտերի համար։ ԽՍՀՄ-ում մայիսի 1-ը աշխատանքի ազատագրման օր է։

Մայրենի լեզու.— Կարդալ հոդվածներ մայիսի մեկի տոնակատարության մասին ուրիշ յերկրներում։ Կարմիր բանակայինների նկարագրությունը իրենց մայիսի 1-ի տոնակատարությունը ցույց տված մանկության։ Գրանցում կարևոր զրույցների և ձոքերի։

Մաթեմատիկա.— Կազմել կամ քննել ուղղանկյուն դիագրամներ Մայիսի 1-ի մասնակցողների թվի մասին զանազան տարիներում։

1-Ն ԱՄԱՌԱՅԻՆ ՇՐՋԱՆ (60 ժամ—30 զրույց)

1—2. ՃԱՄԲԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ

Քաղգրագիտություն.— *Ճամբարակային կարգերը և պարագաները։ Ճամբարակի նշանակությունը՝ զենքը մարտական պարագայի զանազան պայմաններում գործածել իմացող մարտիկի պատրաստության համար։ Ճամբարակային պարապմունքների ծրագիրը, ելուստ դեպի դաշտ, զորքի զանազան տեսակների միասին ուսուցում, տեղական հավաքներ, կորաշարժ։ Օրվա ժամացուցակը ճամբարակում։ Քաղլուսաշխատանքը ճամբարակում։ Լենինյան վրաններ, պաստառներ և այլն։*

1—2. ՃԱՄԲԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ

ՎԵՐՋ

Թարմ օդի ազդեցությունը օրգանիզմի վրա։ Առողջության պահպանությունը ճամբարակում ամառը։ Մաքրության և կարգի պահպանությունը խոհանոցում, զորանոցներում, փոսերում և այլն։ Մարմնամարզական վարժությունների նշանակությունը օրգանիզմի համար։ Ֆիզկուլտուրան ճամբարակում (ամառային սպորտի տեսակները)։ Ֆիզկուլտուրական վարժությունների դերը կարմիր-բանակայինի մարտունակությունը բարձրացնելու ասպարեզում։ Սպորտի օրեր և նրանց համար նախապատրաստվելը։

Մայրենի լեզու.— (*1* **ժամ** *2* **զրույցի հաշիվ**)*։ Կարդալ լրագրերից և գրքերականներից, զորամասի կենցաղը ճամբարակում նկարագրող հատվածներ և հոդվածներ։ Կարճառոտ նկարագրություն ճամբարակային կարգերի և կենցաղային պայմանների պատի լրագրի համար գրված թղթակցության ձևով։*

Մաթեմատիկա.— *Կազմել ճամբարակի պլանը (հատակագիծը)։ Ամբողջ թվերը բազմապատկելու և բաժանելու վարժություն, ճամբարակի ընդհանուր մակերեսը որոշելով, կամ չափելով, թե քանի անգամ է մեծ երկարությունը լայնությունից։*

ՀԱՏՎԱԾ VI

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՍ ՈՒԶՈՒՄ — ՊԱՏՐԱՍՏՎԻՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

(Տ ԶՐՈՒՅՑ)

3. ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԸ

Քաղաքագիտություն. — *Իմպերիալիստական պետությունները ձգտում են անվերջ լայնացնել իրենց յերկրամասերը և հափշտակել նոր շուկաներ։ Այս հողի վրա, 1914 թվի համաշխարհային պատերազմում հաղթող յերկրների միջև անխուսափելի յեն միջադեպերը։ Կապիտալիզմի ժամանակավոր ստաբիլիզացիան (կայունացումը) չի փոխում այս դրությունը։ Գերմանիայի վերականգնման ծրագիրը (Դաուեսի ծրագիրը) հանդիսանում է չափազանց ուռճացած ամերիկական իմպերիալիզմի փորձ՝ Գերմանիան իր գաղութը վերածելու համար, հակառակ Ֆրանսիայի ցանկության, վորը ձգտում է նույն բանին։ Անխուսափելի յեն միջադեպեր Անգլիայի և Ֆրանսիայի, Ամերիկայի և Յապոնիայի մեջ։*

Աշխատավորների հարստահարման և նրանց յեկույթների ճնշման գործում կապիտալիստների միասնականությունը խախտվում է, յերբ մի քանի կապիտալիստական խմբերի (պետությունների) շահերը իրար են բախվում։ Այստեղ վեճերը վորոշվում են կռվով, վորի մեջ հաղթում են ավելի ուժեղները։ Սա դրդում է կապիտալիստական յերկրներին չափազանց մեծացնել իրենց զինված ուժերը։

Մայրենի լեզու. — *Գլխավոր կապիտալիստական յերկրների հակասությունների աճումը նկարագրող տեղեկությունների ընթերցանություն լրագրերից։ Գրի առնել զրույցի հիմնական մտքերը։*

Մաթեմատիկա. — *Հաշվել բոլոր կարևոր պետությունների գաղութների մեծությունը։*

Աշխարհագրություն. — *Գտնել քարտեզի վրա այն գաղութներն ու յերկրները, վորտեղ իմպերիալիստական յերկրների շահերը, բախվում են իրար։*

4. ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Քաղաքագիտություն.— *Կապիտալիստական յերկրների սպառազինման ծախսերը չափազանց աճում են։*

	1913 թվին.	1921 թվին.
Միացյալ Նահանգներ	318.000.000 դոլ.	1.845.000.000 դոլ.
Անգլիա . . .	142.000.000 »	823.000.000 »
Ֆրանսիա . . .	155.000.000 »	825.800.000 »
Յապոնիա . . .	48.000.000 »	115.000.000 »

Մեծ պետություններից հետ չեն մնում նաև նրանց ծառաները, փոքր պետությունները՝ Լեհաստանը, Չեխո-Սլովակիան, Ռումինիան և ուրիշները։ Ներկայումս (1925 թվին) զենքի տակ գտնված զինվորների թիվը ավելի շատ է քան՝ մինչև 1914 թվի պատերազմը։ Չափազանց ուժեղանում է սպառազինման տեխնիկան։ Աճում են օդային նավատորմիղը, պատերազմի քիմիական միջոցները, ծովհատակյա նավերը, հսկայական քանդող ուժ ունեցող հրաձիգ թնդանոթները։ Գիտական խոշոր ուժերին բուրժուազիան լծել է բնաջնջման քիմիական և ուրիշ միջոցներ ստեղծելու գործին։ Աշխարհը կանգնած է նոր սպանդանոցի առաջ, վորտեղ և կարող են ՍԽՀ Միությանը քաշել։ Կապիտալիստական յերկրների սպառազինումը խոշոր չափերով ուղղված է մեր դեմ։ ՍԽՀ Միության ամրացումը, կապիտալիստական յերկրների կոմունիստական կուսակցությունների աճումը, գաղութների ազգային հեղափոխական շարժման զարգացումը, այս բոլորը ուժեղացնում են իմպերիալիստների ատելությունը դեպի մեզ և՝ նրանց ցանկությունը մեզ վոչնչացնելու համար։ Մենք չենք ձգտում գրավել ուրիշների յերկրները, բայց մենք պետք է պատրաստ լինենք ՍԽՀ Միության պաշտպանման համար։ Կարմիր բանակը հենարան է հանդիսանում բոլոր յերկրների կապիտալիստների դեմ գնելու համար և պետք է տեխնիքապես կատարելագործվի։

Մայրենի լեզու.— *Սպառազինման ուժեղացման մասին թերթերի հաղորդագրությունների, նույնպես և քրեստոմատիայից ավիացիայի և գազերի բնաջնջող ուժը ընդգծող կտորների և հոդվածների ընթերցանություն։ «Ինչպես է լինելու ապագա պատերազմը» թեմայի շուրջը կարմիր-բանակայինների ինքնուրույն աշխատանք։ Աշխատանքների կոլլեկտիվ ուղղում՝ բովանդակության, վոճի և բառերի ուղիղ գրելու տեսակետից։*

Մաթեմատիկա.— *Հաշվելով՝ թե քանի անգամ է սպառազինումը ավելացել 1914 թվի համեմատությամբ, բաժանման վարժություններ կատարել։*

Աշխարհագրություն.— *Թված կապիտալիստական բոլոր յերկրները գտնել քարտեզի վրա։*

5. ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՀԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՎՈԳԻՆ

Քաղաքագիտություն.— *Խորհրդային իշխանությունը, աշխատավորների միահամուռ աջակցությամբ արել և անում է այն բոլորը, ինչ վոր*

հնարավոր է ռազմական տեխնիկայի հետագա կատարելագործման, ոդային նավատորմիղի զարգացման և պաշտպանության քիմիական միջոցներ ստեղծելու համար: Սակայն ռազմական տեխնիկան ինքն ըստ ինքյան դեռ չի վճռում հարցը: Մարդն է ղեկավարում մեքենային ինչպես գործարանում, նույնպես և պատերազմում: Սակայն բոլոր յերկրների աշխատավոր զանգվածներին արյունաքամ անող և սուր կերպով խորող վերջին իմպերիալիստական պատերազմի փորձից հետո, բուրժուազիան վոչ մի տեղ համոզված չի կարող լինել, բանվորներից և գյուղացիներից կազմված իր զինվորների հավատարմության վրա: Կարմիր բանակի խոշոր առավելությունը կայանում է նրանում, վոր նրա զինվորները պաշտպանում են իրենց սեփական պետությունը, իրենց սեփական գործարանները և ֆաբրիկաները, իրենց սեփական հողը: Սրանով է ապահովվում Կարմիր բանակի ռազմական վոգու գերազանցությունը ապագայի անխուսափելի կռիվներում:

Մայրենի լեզու.— *Ռազմական տեխնիկան և ռազմական վոգին, այսինքն մարտիկի գիտակցությունը ընդգծող կտորների ընթերցանությունը: «Ինչումն է կայանում Կարմիր բանակի ուժը» թեմայի հիմնական մտքերը ինքնուրույն գրի յեն առնում կարմիր-բանակայինները:*

6. Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ

Քաղաքագիտություն.— *Տվյալ զորամասի տեխնիկական ուժերը: Դիվիզիայի (բրիգադայի) մասնագիտական տեխնիկական զորամասերը: Բացի դիվիզիայի կազմի մեջ մտնող տեխնիկական զորամասերից գոյություն ունեն նաև մասնագիտական յերկաթուղային* (железнодорожный), *տանկային* (танковый) *ականային* (минный), *ավիացիոն, գազերի, սակրավոր և ուրիշ մասեր ու խմբակներ: Գոյություն ունեն դպրոցներ, վորոնք պատրաստում են մասնագետներ այս բոլոր ճյուղերից: Մշտական բանակի համար աշխատող մեր արդյունաբերությունը (զինագործարանները) ուժեղանում են: Վաղորոք ձեռք են առնվում միջոցներ, վորպեսզի պատերազմի դեպքում մեր արդյունաբերությունը (քաղաքացիական) բավարարե նաև ռազմական պահանջներին: Խորհրդային իշխանությունը, հենվելով բանվորների և գյուղացիների դաշինքի վրա, ամրացնում է յերկրի պաշտպանողականությունը:*

Մայրենի լեզու.— *Համաձայնեցրած ռազմական գործողություններ վարելու, զանազան տեխնիկական զորամասերի նշանակությունը ցուցադրող գեղարվեստական կտորների և հոդվածների ընթերցանություն: Թվել զանազան տեսակի տեխնիկական զորամասերը և նրանց անունները տետրակներում գրի առնել: 1925 թվի մայիսին ՍԽՀ Միության Խորհրդների III-րդ Համագումարում ընկ. Ֆրունզեյի զեկուցման առթիվ ընդունած վորոշումների համապատասխան կետերի ընթերցանություն:*

Մաթեմատիկա.— *Զորամասի զանազան տեխնիկական մասերի կարմիր-բանակայինների և նման ուրիշ թվական տվյալների հիման վրա բազմապատկման և բաժանման վարժություններ կատարել: Հաշվել նույնպես զենքերի զանազան տեսակների համեմատական ուժի և կարողության չափը:*

Աշխարհագրություն.— *Զարգացած ռազմ-արդյունաբերություն ունեցող քաղաքները (Տուլա, Սորմովո, Իժևսկ և ուրիշները) գտնել քարտեզի վրա։*

7. ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ

Քաղաքագիտություն.— *Խորհրդային իշխանությունը ձեռք է առնում բոլոր միջոցները բանվորների և գյուղացիների համար ռազմական ծանրությունը թեթևացնելու համար։ Հնարավոր սահմաններում մշտական Կարմիր բանակը կրճատված է։ Սակայն, ինչ էլ ուզում է լինի, պետք է բարձրացնել յերկրի ռազմունակությունը, վորովհետև մեզ շրջապատող կապիտալիստական յերկրները կարող են մեզ վրա հարձակվել։*

Այդ պատճառով խորհրդային իշխանությունը անցավ ռազմական ուժերի կառուցման նոր ձևին՝ յերկրային զորամասերի կազմակերպմանը։

Այդպիսի զորամասերը կազմվում են զորակոչվողների բնակավայրում։ Զորակոչվողները 5 տարվա ընթացքում 8 ամիս հավաքվում են վարժությունների համար։ Այդպիսով կրճատվում է ծառայության ժամանակամիջոցը և ռազմական ծախսերը, աշխատավորները յերկար ժամանակով չեն կտրվում տնտեսությունից և ուժեղանում է յերկրի ռազմունակությունը։ Մեր տնտեսության ուժեղացման համեմատ կավելանա յերկրային դիվիզիաների թիվը։

8. ՆԱԽԱԿՈՉՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Քաղաքագիտություն.— *Յերկրային զորամասերի փոփոխական կազմի վարժության կարճ ժամանակամիջոցը ռազմական վորոշ պատրաստություն է պահանջում կանչվողներից, այլապես անհնարին է ժամանակակից բանակի ռազմիկ պատրաստելը։*

Այդ պատճառով մտցրված է յերիտասարդության նախակոչյան ռազմական պատրաստությունը։ Նախակոչյան պատրաստությունը կրճատում է նույնպես և Կարմիր բանակում ծառայելու ժամանակամիջոցը։ 16-ից մինչև 18 տարեկան հասակի յերիտասարդությունը անցնում է նախնական պատրաստություն, վորը տանում են քաղաքացիական կազմակերպությունները ռազմական վարչության հսկողության տակ։ Դրանցից հետո սկսում է նախակոչյան պատրաստությունը հավաքույթներում։ Հավաքույթների ընթացքում նախակոչիկները պահում են իրենց աշխատանքի տեղերը և աշխատավարձը։ Խորհրդային իշխանության այս բոլոր գործնական միջոցները նպաստում են աշխատավորների մեջ տարվող ռազմ-գիտելիքների պրոպագանդային, վորը տանում է թե ինքը բանակը (յերկրային զորամասեր) և թե ակումբներին, խրճիթ-ընթերցարաններին կից ռազմական անկյունները և այն է ուժեղացնում է յերկրի ռազմունակությունը։

Մայրենի լեզու.—(7 յեվ 8 զրույցների համար)։ *Յերկրային զորամասերի և նախակոչյան պատրաստության մասին հրատարակված գրք-*

ետներից, վորոշումներից և այլն կտորների ընթերցանություն։ Նույնպես և յերկրային հավաքույթները նկարագրող ու միաժամանակ յերկրային զորամասերի ու նախակոչյան պատրաստության ազգարնակչությանը մոտ լինելու ընդգծող փաստանավորների և պատմվածքների ընթերցանություն։ «Ինչու յեն մոցրված յերկրային զորամասերը և ինչով նրանք օգտակար են ազգարնակչությանը» թեմայի շուրջը կարմիր բանակայիններին ինքնուրույն աշխատանք։ Պատի թերթում տեղավորելու համար լավ հոդվածի ընտրություն։

Մաթեմատիկա.— Հասարակ կոտորակների և խառն թվերի գումարման վարժություններ կատարել, մոտավոր հաշվով ցույց տալով, թե ինչքան է ծախսվում 8 ամսվա ընթացքում յերկրային զորամասում ծառայող բանակայինի և ինչքան՝ 2 տարի կադրային զորամասում ծառայող կարմիր բանակայինի վրա։

9. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕԳՆՈՒՄ Է ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Քաղաքագիտություն.— Պատերազմի ժամանակակից ձևերը, ներկայիս տեխնիկայի և առանձնապես ավիացիայի ու ռազմա-քիմիական միջոցները պատերազմների մեջ են քշում ուղղակի կամ անուղղակի ձևով յերկրի ամբողջ ազգարնակչությանը։ Գալիք պատերազմներում Կարմիր բանակը հաղթող դուրս կգա այն պայմանում, յերբ մեր Միության ամբողջ ազգարնակությունը պատրաստ և գործունյա վերաբերմունք ցույց կտա պետական պաշտպանության կարիքներին ու խնդիրներին վոչ միայն պատերազմի, այլ և խաղաղ ժամանակ։

Խորհրդային Միության աշխատավորները հասկանում են Կարմիր բանակի հետ ամուր կապ պահպանելու այդ հրատապ անհրաժեշտությունը և հոգ են տանում նրա մասին։ Կուսակցական, արհեստակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունները, Կարմիր բանակի մասերի վրա շեֆություն են վերցնում։ ԼԿՅ Միությունը իր ամբողջությամբ հանդիսանում է Կարմիր Նավատորմղի շեֆը։

Մայրենի լեզու.— Շեֆերի ընդունելությունը զորամասի կողմից, շեֆին դիմավորելու և նման ուրիշ մոմենտներ նկարագրող հոդվածների ընթերցանություն։ Կարմիր բանակայինները պատմում են, թե ինչպես մասնակցել են շեֆության ընդունելու ժամանակ։ «Ինչպիսի օժանդակություն և ցույց տրվում Կարմիր բանակին» թեմայի շուրջը ինքնուրույն աշխատանք։

Մաթեմատիկա.— Թե զորամասը և թե ամբողջ Կարմիր բանակը, շեֆերի ցույց տված օգնության թվական ավյալների հիման վրա (ըստ այս և անցյալ տարվա նյութերի) բազմապատկման և բաժանման մեկ-յերկու օրինակներ վճռել։

10. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈԳՆՈՒՄ Ե ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

(Շարունակություն)

Հասարակագիտություն. — *1914-18 թվերի պատերազմներին էլ կապիտալիստական բանակները ոգտվում էին ավիացիայից և քիմիական միջոցներից: Համաշխարհային պատերազմը վերջանալուց հետո ավիա և քիմիական գործը կապիտալիստական յերկրներում և բանակներում տարիների ընթացքում չափազանց ուժեղացել է: Կապիտալիստական բոլոր յերկրները, առանց բացառության պատրաստվելով ապագա պատերազմների համար մեծացնում են իրենց ոդային տորմիղը, ուժեղացնում են կռվի քիմիական միջոցները, հնարում են նոր թունավոր գազեր: Կապիտալիստական բանակներին դիմադրելու համար մենք պետք է ուժեղացնենք մեր ոդային նավատորմիղը, կարողանանք կռվել հակառակորդների գազերի դեմ և ունենանք կռվի քիմիական միջոցներ: Սրա հետ միասին ավիացիան և քիմիան պետք են մեր յերկրին նաև խաղաղ ժամանակի համար: Լավ հիմքերի վրա դրված քիմիական արդյունաբերությունը, կոգնի մեզ արհեստական պարարտացման միջոցով, բարձրացնելու մեր հողերի բերրիությունը, վորը շատ հետ է կուլտուրական յերկրներից և պայքար մղելու բերքի վնասատուների դեմ: Յերկրին պաշտպանման քիմիական միջոցներ մատակարարելու հիմնական բազան ծառայելու յե այս արդյունաբերությունը: Մեր յերկրի հսկայական տարածությունների և ճանապարհների թույլ ցանցի պայմաններում, լավ դրված ավիացիան պետք է խոշոր դեր խաղա իբրև կապի միջոց, հեռավոր անկյուններին թերթեր և գրականություն մատակարարելու, փոստի, փոխադրությունների և այլ նպատակների համար: Ոդանավերը կարող են ծառայություն մատուցանել մեր անտառները հրդեհներից պաշտպանելու և վնասատուների դեմ կռվելու գործում:*

Խորհրդային իշխանությունը չի կարող միանգամից բավականաչափ միջոցներ հատկացնել ոդագնացային և քիմիական գործի համար: Անհրաժեշտ է այս գործում վողջ աշխատավորության ոգնությունը: Այս նպատակով ստեղծված է Ավիո-քիմ ընկերությունը (մինչև 1925 թվի մայիսին գոյություն ունեցող Ո. Ն. Բ. Ը և Դոբրոխիմը միացան): Յուրաքանչյուր աշխատավոր պետք է լինի Ավիո-քիմ ընկերության անդամ:

Մայրենի լեզու. — *Ավիացիայի նշանակությունը պատերազմում ընդգծող, գազերի կործանարար գործունեությունը անցյալ իմպերիալիստական պատերազմում նկարագրող կտորների ընթերցանություն: Զրույցի կարևոր մտքերը գրի առնել: Ավիացիայի նշանակությունը տնտեսական կյանքում մասնավորապես գյուղատնտեսության մեջ պարզաբանող կտորների ընթերցանությունը: «Ինչպիսի ոգնություն է ցույց տալիս ավիացիան գյուղատնտեսությանը» թեմայի կարևոր մտքերը գրի առնել: Ամենադժվար բառերի քննությունը:*

Մաթեմատիկա. — *Ավիոքիմի անդամավճարները հաշվելու միջոցով բազմապատկման վարժություններ կատարել: Զանազան կապիտալիստական յերկրներում պատրաստվող գազերի և ոդանավերի թվերը համեմատելով, բաժանման վարժություններ կատարել:*

ՀԱՏՎԱԾ VII
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(9 ԶՐՈՒՅՑ)

11. ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ԵՆ.

Քաղաքագիտություն.— *Ս.Խ.Հ. Միությունը աշխարհիս միակ Խորհրդային յերկիրն է։ Բոլոր յերկրների բանվորները և աշխատավորները մեր լավագույն բարեկամներն են։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ նրանք մեզ օգնեցին հաղթելու թշնամիներին։ Օտարերկրյա բանվորները շատ կապիտալիստական կառավարությունների ստիպեցին ճանաչել մեր Ս.Խ.Հ. Միությունը։ Իրենց ազատագրման համար իմպերիալիզմի լծի դեմ կռվող Արևելյան ժողովուրդները նույնպես մեր բարեկամներն են։ Միջազգային կազմակերպությունների, այն է՝ Կոմինտերնի, Կ.Ի.Մ.Ի., Պրոֆինտերնի, և Գյուղ-Ինտերնի միջոցով մենք միացած ենք ամբողջ աշխարհի աշխատավորների հետ։*

Մայրենի լեզու.— *Դեպի Ս.Խ.Հ.Մ. ունեցած Արևմտյան-Յեվրոպայի բանվորների և Արևելքի ժողովուրդների համակրանքը, օժանդակությունը և համերաշխությունը ընդգծող թերթերի հոդվածների և այլ կտորների ընթերցանություն, վորոնց մեջ հայտնաբերված է Արևմտյան-Յեվրոպայի բանվորների դերը քաղաքացիական պատերազմների տարիներում՝ Խորհրդային իշխանությունը պաշտպանելու գործում։ «Ինչպես մյուս յերկրների պրոլետարիատը օժանդակում եր և օժանդակում է մեզ» թեմայի հիմնական մտքերը գրի առնել։*

Մաթեմատիկա. *—Բազմապատկման և բաժանման վարժություններ, զանազան յերկրների բանվորների թվի համեմատության հիման վրա։*

12-13 ԿՈՄԻՆՏԵՐՆ.

Քաղաքագիտություն.— *Կոմինտերնը՝ „Կոմունիստական Ինտերնացիոնալը՝ Կոմունիստական կուսակցությունների միջազգային միությունն" է։ Կոմինտերնի 1-ին Կոնգրեսը տեղի ունեցավ Մոսկվայում 1919 թվի մարտին ընկ. Լենինի ղեկավարությամբ։ Կոմինտերնի խնդիրն է ղեկավարել*

ամբողջ աշխարհի բանվորների՝ կապիտալիզմի դեմ մղած պայքարը մինչև վերջնական հաղթանակը։

Կոմինտերնը պայքար է մղում II Ինտերնացիոնալի դավաճան ղեկավարների դեմ և աշխատում է դուրս բերել բանվորներին նրանց ազդեցության տակից։ Կոմինտերնի սեկցիաներ գոյություն ունեն աշխարհիս համարյա բոլոր յերկրներում։ Ռ.Կ. (Բ) կուսակցությունը իբրև ամենահին և կայուն կուսակցություն, վորն ունի հաղթանակած հեղափոխության փորձ, ղեկավարող տեղ է բռնում Կոմինտերնում, նրան են հավասարվում միացյալ կուսակցությունները։ Կոմինտերնի Գործկոմի նախագահ ընկ. Զինովևի կենսագրությունը։

Մայրենի լեզու.— Կոմինտերնին նվիրված ու նրա վողջ աշխարհի բանվոր դասակարգի պայքարի ղեկավարությունը հայտաբերող և II Ինտերնացիոնալի դավաճանությունը դիմագծող հատվածների ու պատմվածքների ընթերցանություն։ Կոմինտերնի զանազան սեկցիաների գործունեության մասին թերթերի տեղեկությունների ընթերցանություն ։Զրույցի գլխավոր մտքերը գրի առնել։

Մաթեմատիկա.— Զանազան յերկրների կոմ-կուսակցությունների թըվական տվյալների հիման վրա Կոմինտերնի ուժերը հաշվել։ Բազմապատկման և բաժանման վարժություններ՝ կոմկուսակցությունների թվական տվյալների համեմատության հիման վրա։

Աշխարհագրություն.— Կոմինտերնի ամենաուժեղ սեկցիաներ ունեցող յերկրները գտնել քարտեզի վրա։

14. ՅԵ. Կ. Ի. (ԿԻՄ)

Քաղգրագիտություն.— Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալը համախմբում է քաղաքի և գյուղի աշխատավոր յերիտասարդության կոմմիությունները ամբողջ աշխարհում։ Կ. Ի. Մ.-ը իրեն խնդիր է դնում տապալել կապիտալիստական իրավակարգը, նախապատրաստելով բանվորական յերիտասարդությունը և մասնակից անելով նրան Կոմինտերնի ղեկավարությամբ տարվող բանվոր դասակարգի պայքարին. Կոմյերիտմիությունները պատրաստում են կոմկուսակցությունների փոխարինողները, նրանք դաստիարակում են իրենց անդամներին Լենինիզմի վոգով։

Ունենալով հարուստ հեղափոխական անցյալ, Կ.Ի.Մ-ը 1919 թվի նոյեմբերին հարեց Կոմինտերնին։ Կ.Ի.Մ-ի ուժը և ազդեցությունը զարգանում է։

Մայրենի լեզու.— Կապիտալիստական յերկրների յերիտասարդության դրությունը և շահագործողների դեմ կոմսոմոլի մղած պայքարը նկարագրող հատվածների ընթերցանություն։ Թերթերի միջազգային բաժնից տեղեկությունների ընթերցանություն զանազան յերկրներում յերիտասարդության պայքարի մասին։ Կազմել Կ.Ի.Մ-ի սեկցիաների անունները և նրանց անդամների թվերի աղյուսակները։

Մաթեմատիկա.— Կ.Ի.Մ-ի անդամների վերջին տարիների քանակի թվական տվյալների հիման վրա հաշվի առնել Կ.Ի.Մ-ի ուժերի զարգացումը։ Բազմապատկման և բաժանման վարժություններ զանազան յերկրների կոմյերիտականների քանակները իրար հետ համեմատելու միջոցով։

Աշխարհագրություն.—*Գտնել Կ.Ի.Մ-ի սեկցիաներ ունեցող յերկրները քարտեզի վրա։*

15. ՊՐՈՖԻՆՏԵՐՆ

Քաղաքագիտություն.—*Պրոֆինտերնը, հեղափոխական բանվորական միությունների միջազգային միությունը, ստեղծված ե Մոսկվայում 1911 թ.։ Այսպիսի միության անհրաժեշտությունը շատ ուժեղ կերպով եր զգացվում։*

Արեվմտյան Յեվրոպայի յերկրների բանվոր դասակարգի վաճառված ղեկավարները, ձգտելով կանգնեցնել հեղափոխական տրամադրությունների զարգացումը բանվորների մեջ պատերազմից հետո, և բանվորական զանգվածների գլխացությունը մթագնելու համար, 1919 թվին ստեղծեցին Արհեստակցական միությունների Ամստերդամի Ինտերնացիոնալը (դեղին)։ Այս Ինտերնացիոնալը վաճառված իր ղեկավարների միջոցով աչագին ծառայություններ եր անում և անում, բուրժուազիային. Նա շեղվում ե դասակարգային պայքարից և բանվորներին հետ ե քաշում իրենց պայքարի ուղիից։ Իբրև հակակշիռ Ամստերդամի Ինտերնացիոնալին, նրա դեմ պայքարելու համար, ստեղծված ե Պրոֆինտերնը։ Պրոֆինտերնը հանդիսանում ե պրոլետարիատի դասակարգային կոզմակերպությունը, ճանաչում ե Կոմինտերնի քաղաքական ղեկավարությունը և կանգնած ե դասակարգային պայքարի և բուրժուազիայի դիկտատուրային— պրոլետարիատի դիկտատուրան հակադրելու անհրաժեշտության տեսակետի վրա։

Պրոֆինտերնի I-ին կոնգրեսում ներկայացված եյին 42 յերկրներ։ Պրոֆինտերնի ուժը և ազդեցությունը աճում ե։

Մայրենի լեզու.— *Պրոֆինտերնում, շահագործողների և II-րդ Ինտերնացիոնալի լագերի դավաճանների դեմ պայքարելու համար համախմբված հեղափոխական արհեստակցական կազմակերպությունների նշանակությունը ընդգծող հատվածների ընթերցանությունը։ Ուրիշ յերկրներում կապիտալիստների դեմ տարվող պայքարը լուսաբանող թերթերի տեղեկությունների ընթերցանությունը։ Կազմել Պրոֆինտերնի սեկցիաների անվանացուցակից, նրանց քանակից աղյուսակներ։*

Մաթեմատիկա. – *Հաշվել վերջին տարիներում Պրոֆինտերնի ուժերի աճման չափը։ Պրոֆինտերնի և Ամստերդամի Ինտերնացիոնալի անդամների քանակի համեմատության հիման վրա բազմապատկման և բաժանման վարժություններ։ Պրոֆինտերնի մեջ մտնող զանազան սեկցիաների քանակի համեմատությունը։*

Աշխարհագրություն—. *(Տես նախկին գրույցը)։*

16. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Քաղաքագիտություն.— *Չքավոր գյուղացիությունը բոլոր կապիտալիստական յերկրներում՝ գտնվում ե նույնպես ծանր դրության մեջ, ինչպես և բանվորները։*

Միայն հեղափոխական բանվոր դասակարգի հետ միացյալ պայքարը կարող ե օգնել աշխատավոր գյուղացիությանը։ Այդ յերևում ե Ռուսաս-

տանի օրինակից։ Այդ պատճառով բոլոր յերկրների առաջավոր գյուղացիները համախմբվեցին 1923 թվին Մոսկվայում և ստեղծեցին Միջազգային Գյուղացիական Խորհուրդ։ Խորհուրդը ղեկավարում է կապիտալիստական յերկրների աշխատավոր գյուղացիության հեղափոխական շարժումը։ Գյուղինտերնին հարում են շատ յերկրների գյուղացիական կազմակերպությունները։

Մայրենի լեզու.— Ուրիշ յերկրների գյուղացիության դրությունը լուսաբանող հատվածների, հոդվածների և ուրիշ նյութերի ընթերցանություն։ Կազմել Գյուղինտերնի սեկցիաների ցուցակը։ «Ինչու գյուղացիությունը պետք է դուրս գա բանվոր դասակարգի հետ միասին» թեմայի շուրջը, զրույցի հիմնական մտքերը գրի առնել։

Աշխարհագրություն.—Գտնել քարտեզի վրա Գյուղինտերնի սեկցիաներ ունեցող յերկրները։

17—18. ԱԶԳԱՅԻՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ Ս.Խ.Հ.Մ.

Քաղգրագիտություն.— Գաղութային յերկրների դաժան շահագործումը, նրանց սովորությունների, հավատների վոտնակոխությունները կապիտալիստների կողմից, զարթեցնում են այդ ժողովուրդների բնական ատելությունը տարբերկրացիների դեմ, վորը հաճախ ընդունում է ապստամբությունների և հեղափոխությունների բնույթ։ Պատերազմի ընթացքում, յերբ պատերազմող յերկրների արդյունաբերությունը բացառապես զբաղված էր ռազմամթերքների պատրաստությամբ, գաղութներում զարգացավ սեփական արդյունաբերությունը ուժեղ և սեփական բուրժուազիա ու բանվոր դասակարգ։

Իմպերիալիստական պատերազմի մեջ ձգված գաղութային ժողովուրդների զանգվածները սովորեցին զենք գործածել։ Այս բոլոր պատճառները ուժեղացնում են բոլոր գաղութային յերկրներում ազգային հեղափոխական շարժումները իմպերիալիստների լծի դեմ։ Յեգիպտոսում սպանում եյին Անգլիական գեներալ-փոխարքաներին, մարոկացիները բավականաչափ վնասներ եյին պատճառում իսպանական և մինչև իսկ ֆրանսիական զորքերին։

Խլրտումներ Հնդկաստանում, գործադուլներ Հարավային Աֆրիկայում, Չինաստանի, Պարսկաստանի, Ավղանիստանի, և այլ յերկրներում ազգային ուժեղ շարժումներ, այս բոլորը ցույց են տալիս, վոր ճնշված Արևելքի բազմամիլիոն զանգվածները դուրս են գալիս իմպերիալիստների դեմ։
Նրանց և Ս.Խ.Հ. Միության թշնամին մեկ է՝ համաշխարհային կապիտալը։ Նրա դեմ պայքարելիս, գաղութային ժողովուրդները հանձինս Ս.Խ.Հ. Միության տեսնում են իրենց դաշնակցին։

Մայրենի լեզու.— Գաղութային յերկրներում շահագործողների դեմ մղվող պայքարը նկարագրող թերթերի տեղեկությունների և հատվածների ընթերցանություն։ Կազմել այս պայքարի գլխավոր տեսությունը ըստ թերթերի տեղեկությունների, պարապմունքների ամբողջ ընթացքում։ Այս տեսությունն ոգտագործել պատի կամ կենդանի լրագրում։

Մաթեմատիկա.— *Մետրոպոլիաների և գաղութների ազգաբնակչությունների քանակի համեմատություն։*

Աշխարհագրություն.— *Գտնել թված բոլոր գաղութները քարտեզի վրա։*

19. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՋՈԿԱՏՆ Է

Քաղգրագիտություն.— *Կապիտալիստական աշխարհի ճնշված բանվորները, գյուղացիները, և գաղութային ստրուկները հուսով և հիացմունքով են նայում Ս.Խ.Հ. Միությանը և նրա Կարմիր բանակին։ Ս.Խ.Հ. Միության աշխատավորների օրինակը, վորոնք տապալեցին բուրժուազիային և սանձեցին իմպերալիստների դեմ հուժկու Կարմիր բանակ, ընդգծում է վողջ ճնշված մարդկության պայքարի միակ ճանապարհը։ Ս.Խ.Հ. Միությունը, համաշխարհային հեղափոխության ամենամեծ ամրությունն է, Կարմիր բանակը նրա պաշտպանն է։ Ցեթե Խորհրդային իշխանությունը տապալվի, բուրժուազիայի գործը մի՞քանի տասնյակ տարիներով առաջ կգնա։ Սակայն այդ չի լինի, վորովհետև Խորհրդային Միության բանվորները և գյուղացիները զինված են։ Կարմիր բանակը շահագործվողների զրահն է և ապստամբվածների սուրն է։*

Մայրենի լեզու.— *Կարմիր բանակի միջազգային դերը հայտաբերող կտորների ընթերցանություն։ «Ինչու Կարմիր բանակը վողջ աշխարհի շահագործվողների զրահն է» զրույցի հիմնական մտքերը գրի առնել հարց պատասխանի ձևով։*

ՑԵՐԿՐՈՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ—*192 ժամ*

ՁՄԵՌԱՅԻՆ II ՇՐՋԱՆ--*132 ժամ—66 դրույց*

ՀԱՏՎԱԾ VIII.

Ռ. Կ. Կ. (Բ) ՅԵՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(8 ԶՐՈՒՑՑ)

1. ԱՌԱՆՑ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԱՆՀՆԱՐԻՆ Ե ՀԱՂԹԵԼ ԹԱԳԱՎՈՐԻ, ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Քաղզրագիտություն. — *Հեղափոխական շարժումը Ռուսաստանում ունի հարուստ անցյալ: Գյուղացիությունը, վորը դարերի ընթացքում ճնշված եր, ճորտության կողմնակից կալվածատերերի կողմից, առաջին անգամը չեր ապստամբություն բարձրացնում նրանց դեմ: 1670 թվականին գյուղացիությունը ապստամբվեց Ստեփան Ռազինի գլխավորությամբ: 1773-5 թվականներին գյուղացիությունը կռվում եր Յեմելյան Պուգաչևի ղեկավարությամբ: Գյուղացիության «ազատագրման» մոմենտին, 1861 թվին, գյուղացիների ապստամբության թիվը հասավ տարեկան մի քանի տասնյակների: Գյուղացիների բոլոր հեղափոխական յելույթները անհաջողության մատնվեցին: Գյուղացիության ամենախոշոր շարժումները, վորոնք տեղի ունեցան Ստեփան Ռազինի և Յեմելյան Պուգաչևի գլխավորությամբ ջարդվեցին: Գյուղացիների հուզմունքները Ալեքսանդր II-ի որոք խստիվ կերպով ճնշվեցին: Այդ պարտությունների պատճառը այն եր, վոր գյուղացիք ցիրուցան վիճակի մեջ եյին, չզգացվում եր ուժեղ և զգալի դաշնակցի բացակայությունը ընդդեմ թագավորների և կալվածատերերի: Հարկավոր եր այնպիսի դաշնակից, վորը կարողանար կազմակերպել գյուղացիներին և տանել կռիվը մինչև վերջը: Այդպիսի յեզրակացության յեկավ Վ. Ի. Լենինը, յերբ ուսումնասիրում եր հեղափոխական շարժումը անցյալներում: Սակայն Վ. Ի. Լենինի գործունեյության սկզբին, Ռուսաստանում գոյություն ուներ ու արագ կերպով զարգանում եր բանվոր դասա-*

կարգը։ Բանվոր դասակարգը նույնպես պայքար եր մղում հարստահարողների դեմ։ Բանվորը, վորը գտնվում եր գործարանում, հազարավոր այլ բանվորների հետ միասին գործարանի և մեքենաների ազդեցության տակ սովորել եր կարգապահության։ Միանական աշխատանքը բանվորի մեջ ստեղծել եր միասին գործելու սովորություն։ Բանվոր դասակարգը կարող եր դուրս գալ կռվի շարքերով։ 1887 թվին Ռուսաստանում բանվորների թիվը հասնում եր 1.260.000 հոգու, իսկ 1897 թվին 2.000.000 հոգուց ավելի եր։ Բանվորների հեղափոխական պայքարը հետզհետե մեծանում եր։ 1890 թվականին ամբողջ Ռուսաստանում սկսվեց գործադուլների ալիքը։ Վ. Ի. Լենինը, աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, ասաց, վոր հարստահարողների դեմ աճող պայքար մղելու համար պահանջվում ե միացնել աշխատավորների ուժերը՝ միասին պայքարելու համար։

1 յեվ 2 զրույցներին զուգընթաց, մայրենի լեզու. — Կարդալ գեղարվեստական հատվածներ, վորոնք նկարագրում են գյուղացիների պատմությունը և բանվորների առաջին գործադուլային պայքարը։ Գրի առնել զրույցի ամենակարևոր մտքերը և բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարի թվերը։ Չակերտների գործածության նշանակությունը (գյուղացիների «ազատագրումը») խոսելիս, կարդալիս և գրելիս։

Մաթեմատիկա. — Բազմապատկման և բաժանման վարժություն։ Հիշյալ վարժությունն անցնելիս ոգտվել՝ գյուղացիության հուզումների աճման թվից յուրաքանչյուր տարում, բանվորների աճման թվից, գյուղացիների կամ կալվածատերերի մոտ յեղած հողի քանակից և այլն։

Աշխարհագրություն. — Գտնել քարտեզի վրա այն տեղերը, վորտեղ Ստեփան Ռազինի և Յեմելյան Պուգաչևի ժամանակներում և այլ տարիներում տարածվել են գյուղացիության հուզումները։ Գտնել այն տեղերը, վորտեղ մեր արդյունաբերությունը ծաղկել ե։

2. ԼԵՆԻՆԸ — ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՂՆ Ե

Քաղգրագիտություն. — Բանվորների և գյուղացիների միանական պայքարը, ընդդեմ կապիտալիստների և կալվածատերերի, հնարավոր ե միմիայն ուժեղ և կանոնավոր ղեկավարության դեպքում։ Բանվոր դասակարգը իր ամբողջությամբ չեր կարող ի կատար ածել այդ ղեկավարությունը, վորովհետև բանվորների մեջ ել կան անգրագետ և անգիտակից մարդիկ։ Ուստի անհրաժեշտ ե բանվոր դասակարգի ամենաառաջնակարգ և գիտակից մասը միացնել և կազմել քաղաքական կուսակցություն, այն ե՝ բանվոր դասակարգի կուսակցություն։ Այդ կուսակցության յուրաքանչյուր անդամ պիտք ե հավատարիմ լինի աշխատավորների շահերին և յերբեք չնահանջի նրանից։ Այդպիսի յեզրակացության եր յեկել Վլադիմիր Իլյիչ Լենինը դեռ իր հեղափոխական գործունեության սկզբին, հաշվի առնելով պայքարի փորձը անցյալներում։ Վլադիմիր Իլյիչը և նրա զինակիցները, հին բոլշևիկները, խմբակը ամեն մի ջանք գործ դրին ստեղծելու ուժեղ, կուռ և միակ կուսակցությունը։ Բանվոր դասակարգի կուսակցությունը ստեղծվեց 1898 թվին։ 1903 թվին ընկ. Լենինը տեսավ, վոր կուսակցության մի մասը դավաճանում ե բանվոր դասակարգի գործին

և փոխանակ բանվոր դասակարգին և գյուղացիությանը միանալու թեքվում ե բուրժուազիայի կողմը։ Կուսակցության այդ մասը 1903 թվին ստացավ մենշևիկներ կոչումը։ Վլադիմիր Իլյիչ Լենինը պայքար մղելով մենշևիկների դեմ, վորոնց մեջն եր այդ ժամանակ և ընկ. Տրոցկին, իր զինակիցների հետ միասին կազմակերպեց բոլշևիկական խմբակ։ Բոլշևիկները կռվում եյին մենշևիկների դավաճանության դեմ. նրանք պաշտպանում եյին բանվորների և գյուղացիների դաշինքը՝ պատրաստելով բանվորների և գյուղացիների միասնական պայքարը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Ռ. Կ. Կ. (Բ) Կ. Կ.-ի գլխավոր քարտուղար ընկ. Ստալինի կենսագրությունը։

Մայրենի լեզու.— Կարդալ Լենինի գրվածքներից քաղվածքներ կուսակցության մասին, ինչպես նաև հատվածներ, վորոնք նկարագրում են բոլշևիկների գաղտնի աշխատանքը։ Կարդալ լրագրներից հոդվածներ, վորոնք ընդգծում են կոմունիստական կուսակցության դերը։ Գրի առնել զրույցի գլխավոր մտքերը։ Բացատրել բաժանման գծի (տիրեյի) կամ Ռ.Կ.Կ.(Բ) բառի փակագծում գտնվելու նշանակությունը։

Մաթեմատիկա.— Կազմել ուղղանկյուն դիագրամմա, վորը ցույց տա կոմունիստական կուսակցության թվական աճումը։ Հաշվել քանի անգամ ե մեծացել կուսակցությունը զանազան շրջաններում և այլն։

3. ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (1905 Թ.)

Քաղգրագիտություն.— Բանվորների գործադուլային շարժումը և գյուղացիության ապստամբությունը, վորը տարածվել եր ամբողջ յերկրում 1902-4 թվականներին, ծագեց շնորհիվ կապիտալիստների և կալվածատերերի անտանելի հարստահարությունների։ Ցարական կառավարությունը, վորը նոր հողերի և ոգուտների յետևից եր ընկել, հույս ունենալով, վոր գյուղացիների ուշադրությունը կարող ե հեռու պահել ներքին գործերից, 1904 թվին պատերազմի բռնվեց Ճապոնիայի հետ։ Պատերազմից առաջացած թանկությունը և այդ տարիների անբերրիությունը ավելի ևս վատացրին բանվորների և գյուղացիների դրությունը, վորի հետևանքը այն յեղավ, վոր նրանց դժգոհությունը ավելի մեծացավ տիրող կարգերի դեմ։ Կառավարությունը ինքն եր աշխատում մեոցնել ժողովրդի հավատը դեպի թագավորը։ Լենինգրադի բանվորների մասսայական խաղաղ ցույցերը 1905 թվի հունվարի 9-ին գնդակահարության արժանացան։ Բանվոր դասակարգը մասսայական գործադուլների միջոցով պատասխանեց ցարական կառավարության այդպիսի մի գազանաբարո քայլին։ Շարժումը տեղափոխվեց գյուղը և նավատորմիղը։ Նավատորմիղում բռնկվեց ապստամբություն։ Հեղափոխությունը մոտենում եր։ Բոլշևիկները գործնականորեն պատրաստվում եյին հեղափոխության համար։ Վորպեսզի հեղափոխությունը հաղթի, բոլշևիկները 1905 թվի մայիս ամսին, իրենց համագումարում անհրաժեշտ գտան բանվոր դասակարգի և գյուղացիության զինված ապստամբությունն, վորի հետևանքով կստեղծվի բանվորագյուղացիական կառավարություն։ Բոլշևիկները այդ համագումարում, անհրաժեշտ գտան բռնագրավման յենթարկել կալվածատերերի, թագավորական և յեկեղեցա-

կան հողերը հոգուտ գյուղացիության։ Մենշևիկները իրենց կոնֆերանսում անհրաժեշտ համարեցին բուրժուազիայի և բանվոր դասակարգի դաշնագրությունը։ Տեղի ունեցող դեպքերը ամբողջովին արդարացրին բոլշևիկների բռնած գիծը։ Կառավարությունը փորձեր արեց զիջումներով խաբել ժողովրդին, սակայն բանվորները բոլշևիկների ազդեցության տակ եյին և չեյին հավատում կառավարությանը։ Բռնկվեց աշխարհում չեղած ընդհանուր գործադուլը, բայց բանվորները հարկավոր ոգնություն գյուղացիներից չստացան։ Գյուղացիների հուզումները սկսվեց միայն 1906 թվի սկզբին։ Այդ հնարավորություն տվեց կառավարությանը արագ կերպով վերջացնել պատերազմը, հավաքել իր ուժերը և ջարդել նախ՝ քաղաքներում գտնվող բանվորներին և ապա՝ գյուղացիությանը։ Ցարական բանակում մեծ մասամբ գյուղացիներ եյին, բայց վճռական րոպեյին կառավարության կողմն անցան։ Վոչ Մոսկվայի բանվորների հերոսական ելույթներն ոգնեցին և վոչ ել Մերձբալթիկյան շրջանի, Կովկասի և Սիբիրի ապստամբությունները։ Ապստամբությունը ճնշվեց։ Բոլշևիկները հաշվի առան այդ պարտության դասերը։

4 յեվ 5 գրուպների զուգընթաց, մայրենի լեզու.—Կարդալ հատվածներ, բանաստեղծություններ և պատմվածքներ 1905 թվի դեպքերի շուրջը։ Գրի առնել ամենակարևոր դեպքերի թվերը համառոտ բնութագրով։ Գրավորի կոլեկտիվ մշակումը վոճի տեսակետից։ Ընտրել ամենալավ թղթակցությունը պատի լրագրի կամ որաթերթի համար։

Մաթեմատիկա.— Թվաբանական չորս գործողությունների վարժություն։ Այդ վարժությունը անցնելիս՝ ոգտվել հողերի բաժանման թվական տվյալներից, նախ քան 1905 թվի հեղափոխությունը։ Բանվորների և գյուղացիների նյութական դրությունը։

Աշխարհագրություն.— Քարտեզի վրա գտնել 1905 թվի պրոլետարիատի ապստամբության կենտրոնական քաղաքները, նաև այն շրջանները, վորտեղ տարածվել եյին գյուղացիների ուժեղ հուզումները։

4. 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Քաղաքագիտություն.— 1905 թվի հեղափոխության ճնշումը, հեղափոխությանը մասնակցողներին անընդհատ գնդակահարությունները և պատիժները չկարողացան հավատացնել ցարական կառավարությանը իր սեփական ամրության մեջ։ Չնայելով, վոր բանվորների գործադուլային շարժումը և գյուղացիության հուզումը, արյունարբու կոտորածից հետո, մեծ չափով պակասել եյին, բայց ցարական կառավարությունը չի մոռանում 1905 թվի դասը և լավ ե յուրացրել այդ։ Ցարիզմը քար ու քանդ արեց նախ և առաջ բանվոր դասակարգի կուսակցությունը։ Ստոլիպինյան կառավարությունը իր համար հենարան փնտռելիս՝ աշխատում եր ստեղծել կուլակներից «ուժեղ գյուղացիություն»։ Դրա համար ել թույլ եր տալիս նրանց գրավելու ամենաընտիր հողերը, նույնիսկ փողով ոգնում եր կուլակներին։ Մենշևիկները և իրենց նմանները բոլորովին կորցրին իրենց հավատը դեպի հեղափոխությունը։ Միայն Վլադիմիր Իլյիչ Լենինը և նրա կողմից ղեկավարվող բոլշևիկյան կուսակցությունը շարունակեցին

ամրացնելու բանվոր դասակարգի գործը։ Լենինը և բոլշևիկները ասում եյին, վոր ցարական կառավարությունը չի կարող իրեն համար հենարան ստեղծել։ Հարուստներին առանձնացնելով, ավելի յեն քայքայում միջակ և աղքատ գյուղացուն։ Բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ առաջվա նման կանգնած բանվոր դասակարգի գլխին պայքարում եյին գյուղացիության շահերի համար։ Կալվածատերերի բարենորոգումների և հարուստներին հողեր տալու փոխարեն՝ բոլշևիկները պատրաստվում եյին հեղափոխության միջոցով խլելու բոլոր կալվածատիրական հողերը և տալու գյուղացիությանը։ Բանվոր դասակարգը կամաց կամաց ուշքի յեր գալիս իր կրած պարտությունից։ 1910 թվին նորից նկատվում եր հեղափոխության պայքարի վերելքը։ 1912 թվին տեղի ունեցան Լենայի դեպքերը, վորի հետևանքով գործադուլների ալիքն անցավ ամբողջ Ռուսաստանով։ 1914 թվին Պիտերում (ներկա Լենինգրադում) զինված ընդհարում տեղի ունեցավ բանվորների և վոստիկանության մեջ. այդ ժամանակ սկսվեց իմպերիալիստական պատերազմը։

Մայրենի լեզու.— *Կարդալ հատվածներ Լենայի դեպքերի առթիվ։ Զրույցի հիմնական մտքերի ձևակերպում։ Նախ քան գրատախտակի վրա կամ տետրում գրելը՝ բացատրել ամենադժվար բառերը և նախազգուշացնել սխալներից։*

Մաթեմատիկա.— *Միանշան թվերի և միավորը զրոյով բազմապատկման և բաժանման վարժությունը։ Այս վարժությունը անցնելիս օգտվել այն կուլակների տների թվից, վորոնք դուրս եյին յեկել լավ հողերում բնակություն հաստատելու և այն փողերից, վոր ստացել եյին նրանք կալվածատերերից։ Բացատրել նույն թվական տվյալների հիման վրա հասարակ կոտորակի գումարումն և հանումը։*

Աշխարհագրություն.— *Քարտեզի վրա գտնել Լենայի դեպքերի տեղերը և այն տեղերը վորտեղից գյուղացիք Ռուսաստանից տեղափոխվեցին Սիբիր։*

5. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Քաղգրագիտություն.—*Իմպերիալիստական պատերազմի տարիներում բոլշևիկների կուսակցությունը, գլխավորությամբ Վլադիմիր Իլյիչ Լենինի, միակ կուսակցությունն եր, վորն իր ձայնը բարձրացրեց ցարի, կապիտալիստների և կալվածատերերի դեմ։ Այն ժամանակ, յերբ մենշևիկները, եսերները և մյուս դավաճան կուսակցությունները կողմնակից եյին պատերազմին, բոլշևիկները բացատրում եյին բանվորներին և գյուղացիներին, վոր պատերազմը տարվում ե թալանի համար։ Ամեն մի յերկրի կապիտալիստ և կալվածատեր նպատակ ե դրել ճնշելու ժողովրդին, վորպեսզի վորքան հնարավոր ե հարստություն դիզեն իրենց համար։ Այդ պատերազմը ցույց տվեց, թե վոր յերկրի կապիտալիստները ավելի շատ կճնշեն ժողովրդին՝ անգլիականը, ֆրանսիականը և ռուսականը, թե՝ գերմանականն ու ավստրիականը։*

Լենինի բոլշևիկյան կուսակցությունը կոչ եր անում բանվորներին

և գյուղացիներին իրենց ձեռքի զենքերը ուղղել իրենց իսկական թշնամիների դեմ, այն է՝ հարստահարողների։ Կուսակցության լոզունգն էր՝ իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի։ Որքան երկար էր տևում կոտորածը, որքան ավելի ուժեղ կերպով էր քայքայվում գյուղացու տնտեսությունը գյուղում, այնքան պարզ կերպով բանվորը և գյուղացին տեսնում էին կառավարության այդ խաբեբայությունը և համոզվում էին հեղափոխական պայքարի անհրաժեշտության մեջ կալվածատերերի և կապիտալիստների դեմ։

Մայրենի լեզու.— Կարդալ գեղարվեստական հատվածներ, պատմվածքներ և հիշողություններ, որոնք նկարագրում են իմպերիալիստական պատերազմների սարսափները և այն նպատակները, որոնց համար տարվում էր այդ պատերազմը։ Գրի առնել իմպերիալիստական պատերազմի սկզբի և վերջի թվերը։ Քաղվածքներ Լենինի գրվածքներից ուղղված իմպերիալիստական պատերազմի դեմ։

Պատերազմին մասնակցողներից լսած պատմվածքներից կարմիր բանակայիններին կազմել տալ շարադրություններ, որտեղ նկարագրված լինի գյուղի դրությունը իմպերիալիստական պատերազմի ժամանակ։

Մաթեմատիկա.— Հաշվել այն թվական տվյալները, որոնք ցույց են տալիս իմպերիալիստական պատերազմի քայքայող ազդեցությունը։ Երկրորդ անգամ բացատրել հասարակ կոտորակների գումարման և հանման վարժությունը նույն տվյալների հիման վրա (օրինակ, հաշվել իմպերիալիստական պատերազմում զոհերի թիվը, եթե սպանվածները եղել են $4^1/_2$ միլ., վիրավորվածները՝ $2^3/_4$, անհայտ կորել են $2^1/^2$ միլ.)։ Գումարման օրինակ, հաշվել որքան է ընկել հացահատիկի արդյունաբերությունը, եթե 1914 թվին արտադրվում էր Ռուսաստանում $157^7/_{10}$ միլ. ցենտներ (ծանրության չափ է) իսկ 1917 թվին— $102^2/_5$ միլ. ցենտներ և այլն։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա այն երկրները, որոնք մասնակցում էին միպերիալիստական պատերազմին։

6. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Քաղգրագիտություն.— 1917 թվի փետրվար ամսին ապստամբ բանվորները և գյուղացիք գահընկեց արին ցարին։ Սակայն գյուղացիների և բանվորների հաղթանակով օգտվեցին ոչ թե իրենք, այլ կալվածատերերը և կապիտալիստները։ Վերջիններս կազմեցին Ժամանակավոր Կառավարություն և շնորհիվ մենշևիկների և էսէռների, իշխանությունը գտնվում էր իրենց ձեռքում։ Փետրվարյան հեղափոխությունը բանվորին և գյուղացուն չտվեց այն, ինչի համար նրանք կռվում էին։ Բանվոր դասակարգն իր նպատակներին հասնելու համար, ձգտում էր տապալելու կապիտալիստներին և գործարանատերերին։ Գյուղացիք կռվում էին հողի համար, որը մինչև այդ ժամանակ կալվածատերերի ձեռքումն էր։ Թե բանվորները և թե գյուղացիք պահանջում էին վերջ տալ իմպերիալիստական պատերազմին և խաղաղություն կնքել։ Ժամանակավոր Կառավարությունը ոչ հող

ավեց և վոչ էլ խաղաղություն կնքեց։ Կապիտալիստները և կալվածատերերը դավաճան մենշևիկների և էսերների օգնությամբ համառում էյին բանվորներին և գյուղացիներին ազատության առթիվ խաբեբայական խոսքերով և այդպիսով ամեն կերպ աշխատում էյին հետաձգել գյուղացիներին հող տալը և շարունակել պատերազմը։ Կապիտալիստները տեսան, վոր բանվորները դեմ են Ժամանակավոր Կառավարությանը, հայտարարեցին մասսայական արձակուրդ գործարաններից — այսինքն դիտավորյալ կերպով գործարանները փակեցին և փողոց շպրտեցին մի քանի տասնյակ հազար բանվորներ։ Բոլշևիկների կուսակցությունը Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ սկսեց կռվել Ժամանակավոր Կառավարության դեմ։ Կուսակցությունը բանվորների և գյուղացիների աչքերը բաց արեց և ցույց տվեց մենշևիկների և էսերների կողմից կատարվող խայտառակ դավաճանությունը։

Բանվոր դասակարգը կազմակերպվեց զինված կռվի համար։ Նա կոչ արեց գյուղացիներին — զինվորներին կռվել հողի համար և ստեղծել Բանվորա-գյուղացիական իշխանություն — Խորհուրդների իշխանություն։ Միմիայն զինված ձեռքով հաստատված բանվորա-գյուղացիական իշխանությունը — ասում էյին բոլշևիկները — կվոչնչացնի կապիտալիստների և կալվածատերերի հարստահարությունը, վերջ կտա իմպերիալիստական պատերազմին և հողը կտա գյուղացիներին։

Մայրենի լեզու. — *Կարդալ հատվածներ փետրվարյան հեղափոխության մասին։ Զետեղել գրույցի հիմնական մտքերը։*

Աշխարհագրություն. — *Քարտեզի վրա գտնել Դարդանելի նեղուցը և Պոլիսը, վորոնք ռուսական կապիտալիստների թալանչիական ձգտումների — կենտրոններ էյին։*

7. ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Քաղաքագիտություն. — *1917 թվի հոկտեմբեր ամսին, բանվոր դասակարգը գյուղացիության հետ միասին, բոլշևիկների ղեկավարությամբ, տապալեց Ժամանակավոր Կառավարությանը, այսինքն կալվածատերերի և կապիտալիստների իշխանությանը և հաստատեց Խորհուրդների իշխանություն։ Բանվորների և գյուղացիների հոկտեմբերյան հաղթանակը աջողվեց ունեցավ շնորհիվ այն մեծ աշխատանքի, վորը տանում էյին բոլշևիկները Լենինի գլխավորությամբ. Նրանք կազմակերպեցին ռազմա-հեղափոխական կոմիտեներ, համախբում և զինում էյին բանվորներին և գյուղացիներին։ Բանվորա-գյուղացիական իշխանության առաջին քայլերն էյին՝ վերջ տալ պատերազմին, արտաքսել կալվածատերերին և կապիտալիստներին, հողը տալ (կալվածատիրական, պետական և յեկեղեցական) գյուղացիներին, և վերջնականապես հսկողություն հիմնել ֆաբրիկաների և գործարանների վրա բանվորներից։*

Մայրենի լեզու. — *Կարդալ հատվածներ, վորոնք նկարագրում են հոկտեմբերյան օրերը ամենակարևոր կենտրոններում, ինչպիսին են Լենինգրադը, Մոսկվան և ուրիշները։ Գրի առնել գրատախտակի և տետրերի մեջ, զրույցի ամենակարևոր կետերը։ Մանրամասն քննություն, նախքան,*

բառի ձայնավոր մասնիկի գրելը։ Կարմիր բանակայինները ինքնուրույն կերպով (բանավոր և գրավոր) նկարագրում են Հոկտեմբերյան որերի մասին գյուղում, իրենց հիշողություններից։

Մաթեմատիկա.—Հասարակ կոտորակների գումարման և հանման վարժություն. այս վարժությունը անցնելիս ոգտվել կալվածատերերի և գյուղացիների հողերի թվական տվյալներից և ազգայնացրած ձեռնարկությունների արժեքի և ուրիշ թվական տվյալներից, վորոնք անմիջապես կապված են նյութի հետ։ (Օրինակ, հաշվել ինչքան հող կար կալվածատերերի և կառավարության ձեռքում, յեթե առաջինների մոտ 1/3, իսկ յերկրորդի 1/4, 1/3+1/4=! վորքան նրանց հողը մեծ եր գյուղացիների հողի հետ համեմատած, վորոնք ունեյին 7/12—4/12)։

Աշխարհագրություն.— Քարտեզի վրա գտնել այն կենտրոնները, վորտեղ տեղի ունեցան Հոկտեմբերյան կռիվները։

8. Ռ. Կ. Կ. (Բ) ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքագիտություն.— Յերեք տարվա ընթացքում բանվորներն ու գյուղացիները, ղեկավարությամբ Ռ. Կ. Կ. (բ)-ի պաշտպանվում եյին խորհրդային յերկրի վրա հարձակվող կապիտալիստներից և կալվածատերերից։ Այդ ժամանակ կուսակցության և խորհրդային իշխանության ամբողջ ուշադրությունը ուղղված եր ճակատների վրա. վոչ մի հնարավորություն չկար, ինչպես հարկն եր, մտածելու տնտեսության վերականգման մասին։ Հենց վոր բոլոր ճակատներում կռիվը վերջացավ, Ռ. Կ. Կ. (բ)-ը իր ամբողջ ջանքերը ուղղեց գյուղացիների տնտեսությունը բարելավելու և մեր արդյունաբերությունը զարգացնելու և բարձրացնելու վրա։ Քաղաքացիական կռիվների տարիներում բոլշևիկյան կուսակցությունը քարոզում եր բանվորների և գյուղացիների զինված դաշինք, բայց կռիվը վերջանալուն պես, նա տնտեսական կապ ե հաստատում բանվորների և գյուղացիների մեջ։ Վ. Ի. Լենինը ասում եր ավելի հեշտ ե կազմակերպել զինվորական դիմադրություն կալվածատերերի և կապիտալիստների դեմ, քան թե տնտեսական կապ հաստատել բանվորների և գյուղացիների մեջ։ Տնտեսական կապը պետք ե կազմել այնպես, վոր յուրաքանչյուր գյուղացի զգա իր դրության բարելավումը՝ համեմատելով անցյալի հետ։ Կոմունիստական կուսակցությունը բանվորների և գյուղացիների տնտեսական դաշինքը ամրացրեց հետևյալ ձևով. նա բարձրացրեց արդյունաբերությունը, ոգնում ե գյուղատնտեսությանը, հիմնում ե գյուղում կոոպերացիա, խրճիթ-ընթերցարաններ, դպրոցների միջոցով տարածում ե գյուղում լուսավորություն և կուլտուրա։

Խորհուրդներին մասնակցում եյին գյուղացիության մեծ մասսաները, նրանք մասնակցություն եյին ցույց տալիս խորհուրդների շինարարությանը գյուղում, շրջանում և այլ բարձր խորհրդային հիմնարկություններում։ Գյուղացին ընտելանում եր յերկիրը կառավարելու մեջ և ինքն իր կյանքը սկսում եր բարելավել։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորտեղ նկարագրված ե

բանվորների և գյուղացիների տնտեսական կապի նշանակությունը։ Կարդալ լրագրից հոդվածներ, որտեղ խոսվում է գյուղացիության մասնակցության մասին գյուղի շինարարության գործում։

Գրի առնել այն լոզունգները, որոնք վերաբերում էին բանվորների և գյուղացիների միջև տնտեսական կապ հաստատելուն։ Լենինի ասած լոզունգները, կապի վերաբերյալ, արտագրել։ Ձևակերպել այդ գրույցի հիմնական մոմենտները, որոնք նկարագրում են կուսակցության գիծը գյուղում։

Մաթեմատիկա.— *Մանրամասն քննել վաղորոք կազմած ուղղանկյուն դիագրամը, որը պատկերացնում է մեր արդյունաբերությունը և գյուղատնտեսության վերելքը։*

ՀԱՏՎԱԾ IX

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(13 դասից)

9. ՄԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Քաղզրագիտություն.— *Մեր յերկիրը գյուղատնտեսական յերկիր եր և դեռ շատ ժամանակ կմնա այդպիսին։ Ազգաբնակչության 80%-ը զբաղվում է գյուղական տնտեսությամբ։ Մի շարք պատճառներ, ինչպես օրինակ, 1) կապիտալիստների և կալվածատերերի հափշտակիչ շահագործումը ցարիզմի ժամանակ, 2) Հողային միջասահմանությունը* (чересполосица), *3) յեռադաշտային սիստեմը* (трехполье), *4) սակավահողությունը, 5) գյուղացիների ցածր կուլտուրականությունը, 6) իմպերիալիստական պատերազմը, 7) քաղաքացիական պատերազմը, 8) պատերազմի ժամանակ գործարանային արդյունաբերության և գյուղական տնտեսության միմիանցից կտրվելը, 9) Խորհրդային Ռուսաստանի տնտեսական բլոկադան (պաշարումը) կապիտալիստական պետությունների կողմից.—այս բոլորը մեր գյուղատնտեսությունը քայքայեց և դարձրեց հետամնաց համեմատած մյուս յերկրների հետ, վորտեղ ամենավատ հողից ստացվում է ավելի շատ բերք, քան մեզանում։ Այդ իսկ պատճառներից զրկված մեր տավարը (անասունները) կրճատվեց և վորակով վատացավ։ Կրճատվեց մեր ինվենտարը (գյուղատնտեսական գործիքները), քչացավ ցանելու հողը, բերքը, համեմատաբար մինչ պատերազմյան ժամանակներին պակասեց. գյուղացիների վրա ազդեց նաև մեծ չափով 1921 թվի սովը և 1924 թ. անբերրիությունը։ Գյուղական տնտեսության բարելավման և ոգնության գործում վոչ մի իշխանություն չեր գնալ այնքան հեռուն, վորքան Խորհրդային իշխանությունը, տալով գյուղացիությանը 40 միլիոն դեսյատին հող (վարելահող և արոտատեղի) և 350 միլիոն ռուբլու կալվածատիրական ինվենտար, իշխանությունը դրանով չբավականացավ, գյուղացիներին ազատեց հողային պարտքերից և հարկերից։ Խորհրդային իշխանությունը գյուղացիների վրա ծանր բեռ չդնելու պատճառով, հրաժարվեց տալ կապիտալիստական պետություններին ցարի պարտքը, և քաղաքացիական պատերազմից հետո ամեն ջանք գործ եր դնում հնարավորություն տալու գյուղա-*

ցիներին զարգացնելու իրենց տնտեսությունը։ Այս բոլորի հետևանքով մենք նկատում ենք մեր գյուղական տնտեսության արագ զարգացումը՝ 1924 թվին վարելահողը հասնում էր 87,7%-ի մինչ պատերազմյան, արժեքավոր տեխնիկական կուլտուրան իր շրջանառության մեջ համարյա թե գրավում է մինչպատերազմյանի տեղը, տավարի քանակը մեծանում է (կովերի 99%, ձիերի 72%, խոզերի 100% համեմատած մինչ պատերազմյանի հետ. հիշյալ տվյալները 1924 թվականինն է)։

Գյուղացիությունը զգաց բնության աղետների դեմ կռվելու անհրաժեշտությունը և կարելիությունը։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, որոնք ընդգծում են մեր գյուղական տնտեսության հետամնացությունը և դրա պատճառները, համեմատելով մյուս յերկրների հետ։ Զեկուցելու համար կազմել նախագիծ մեր գյուղատնտեսության հետամնացության պատճառների մասին։ Կազմել նաև ըստ մշակած պլանի փոքրիկ կոնսպեկտ։

Մաթեմատիկա.— Ծանոթացնել ամբողջ թիվը կոտորակի վրա բազմապատկելու վարժությանը։ Այս վարժությունը կատարելիս, իբրև հիմք ոգտվել գյուղական տնտեսության դրության տվյալներից (օրինակ՝ ինչքան մարդ է զբաղվում Ռուսաստանում գյուղական տնտեսությամբ $130 \times 3/4 =$, համեմատած մյուս պետությունների հետ ինչպիսի բերք է տալիս մեր հողը)։ Գրի առնել գյուղատնտեսական մթերքների և վարելահողի պակասները պատերազմի և սովի տարիներին։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա ամենակարևոր գյուղատնտեսական շրջանները։

10. ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքագիտություն.— Առանց արդյունաբերության խոսք անգամ չի կարող լինել գյուղատնտեսության վերականգնման մասին։ Քաղաքային արդյունաբերությունը մինչև պատերազմը գյուղին տալիս էր լայն սպառում ունեցող ապրանք տարեկան 1,400,000,000 ռուբլու արժողությամբ։

Բացի դրանից քաղաքից գյուղ էր տարվում գյուղատնտեսական մեքենաներ, պարարտիչ նյութ և ուրիշ շատ գործարանային գործվածք, յուրաքանչյուր տարին 340,000.000 ռուբլու՝ այսինքն քաղաքային ամբողջ արդյունաբերության 65%-ը։ Մեր արդյունաբերությունը պատերազմից հետո բոլորովին քայքայված էր։ Արդյունաբերությունը վերականգնելու համար կարիք է զգացվում խոշոր կապիտալի, որը մենք չունենք։ Բայց այնուամենայնիվ շնորհիվ խորհրդային իշխանության ջանքերի մեր արդյունաբերությունը մինչպատերազմյանի հետ համեմատած հասավ մոտ 80%։ Արտադրությունը շատանում է և որ ամենակարևորն է՝ բոլորից շատ մատակարարվում է գյուղական շուկան։ Մանվածքային արդյունաբերությունը համեմատած նախապատերազմյանի հետ հասնում է 60-70%-ի։ Գյուղի պահանջը յերկաթի, մետաղի ապրանքների և ուրիշ արդյունաբերության վերաբերյալ ամենայն տարի բավարարվում է ավելի և ավելի մեծ չափով։

11. ՎԵՐՋ

Քաղգրագիտություն.— *Արդյունաբերության և գյուղացիության տընտեսության լայնացնելը և բարելավելը անհնարին կը լիներ առանց այն գների քաղաքականության, վորը վարում եր խորհրդային իշխանությունը Ռ.Կ.Կ.(Բ)-ի ղեկավարությամբ։ Դեռ համեմատաբար մոտ անցյալում մենք ունեյինք բավական բարձր գներ արդյունաբերության ապրանքների վրա և ցածր գներ գյուղականի տնտեսական մթերքների վրա («մկրատ»)։*

Շնորհիվ արդյունաբերության և առևտրական ապպարատների վերադիր ծախսերի պակասելուն և կայուն գներ հաստատվելուն, խորհրդային իշխանությունը մթերքների և ապրանքների գների վերաբերյալ ունեցավ հետևյալ հետևանքները.

Մի փութ տարեկանը (рожь) արժեր.

1913 թ.	*1923 թ. (հոկտեմբեր)*	*1924 թ. (նոյեմբեր)*
15 ֆ. նավթ	*9 ֆ. նավթ*	*18,8 ֆ. նավթ*
4,4 ֆ. մեխ	*2,5 ֆ. մեխ*	*5,5 ֆ. մեխ*
5,4 արշ. չիթ	*1,2 արշ. չիթ*	*2,5 արշ. չիթ*

Հիշյալ ձեռնտու գները քաղաքի և գյուղի սպառող մասսայի համար հնարավոր յեղավ շնորհիվ արդյունաբերության ազգայնացման, այսինքն՝ արդյունաբերությունը դարձավ պետական սեփականություն։

12-13 գրույցների զուգընթաց, մայրենի լեզու.— *Կարդալ լրագրային հոդվածներ և դիտողություններ մեր արդյունաբերության վերականգնման աշխատանքների մասին։ Կարդալ քաղվածքներ զեկույցներից, վորոնք լուսաբանում են մեր արդյունաբերության վերելքի աստիճանը և առաջադրած հերթական խնդիրները հետագա վերելքի մասին։ Կազմել կոնսպեկտ «Ինչպես է վերականգնում մեր արդյունաբերությունը»։*

Մաթեմատիկա.— *Գրի առնել թվական տվյալները, վորոնք բնութագրում են մեր արդյունաբերության դրությունը։ Հաշվել ծանոթ գործողությունների միջոցով ամբողջ թվերի վրա քաղաքի արդյունաբերության և գյուղական տնտեսության շատ սպառվող մթերքների փոխադարձ հարաբերությունը։*

12. ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քաղգրագիտություն.— *Նոր տնտեսական քաղաքականության ընթացքում թե՛ քաղաքի և թե՛ գյուղի մթերքները մտնում են շուկա։ Խորհրդային իշխանության և Ռ. Կ. Կ. (Բ) նպատակն է գտնել այնպիսի ճանապարհներ, վորպեսզի հեշտությամբ, արագորեն և աժան գներով մա-*

տակարարվի գյուղը հարկավոր ապրանքներով: Կապիտալիստական յերկըրներում այդ ճանապարհը մասնավոր առևտուրն ե: ՍԽՀՄ-ում ամբողջ խոշոր առևտուրը գտնվում ե պետական օրգանների ձեռքում: Առևտուրը ղեկավարելու համար գոյություն ունի Ներքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ: Ներքառժողկոմը միացնում և կանոնավորում ե մի քանի պետական կազմակերպությունների առևտուրը: Պետական առևտուրը խորհըրդային իշխանության ձեռքին ամենաուժեղ գործիքն ե (միջոցն ե) վորպեսզի յերկիրը կանոնավոր սոցիալիստական զարգացում ստանա:

Բանվորները և գյուղացիները՝ խլելով իշխանությունը, ֆաբրիկաները և գործարանները, պարտավոր են իրենց ձեռքը գցելու նաև առևտուրը, թույլ չտալ մասնավոր առևտրականներին բանվորների և գյուղացիների աշխատանքով պատրաստած մթերքների և ապրանքների հաշվին հարստանալու: Միմիայն պետական օրգանները կարող են հաստատել բանվորների և գյուղացիների միջև կանոնավոր առևտրական փոխհարաբերություններ, բավարարելով ՍԽՀՄ-ի զանազան աշխատավոր խմբակների կարիքները ու պահանջը ապրանքներով: Պետական օրգանները վոչ միայն մեծաքանակ ապրանքների առևտուր են անում և ծախում պետական արդյունաբերության ապրանքների տեսակներից (չիթ, մեխ, կաշի, մեքենաներ և այլն), այլ նաև վարում են մանրածախ առևտուր (պետական խանութները): Սակայն այնուամենայնիվ և այժմ մասնավոր կապիտալի նշանակությունը, առանձնապես փոքր առևտրի մեջ, շատ մեծ ե: Նամանավանդ մեծ ե մասնավոր առևտրի դերը գյուղում:

13. ՎԵՐՋ

Քաղգրագիտություն.— Մասնավոր առևտրականներին շուկայից վերացնելու համար անհրաժեշտ ե միացնել սպառողներին, հարկավոր ե կոոպերացիայի յենթարկել ազգաբնակչությունը: Սպառողական կոոպերացիան խոշոր դեր ե խաղում գյուղի և քաղաքի փոխհարաբերությունների մեջ: Խորհրդային իշխանությունը ամեն կերպ օգնում ե կոոպերացիային: Յեթե համեմատելու լինենք մինչպատերազմյան կոոպերացիայի հետ՝ մեր կոոպերացիան յերեք անգամ շատացել ե: Կոոպերացիան լայն ծավալ ե ստանում, նա գյուղում միացրել ե 3 միլիոնից ավելի գյուղական տնտեսություններ: Ընկ. Լենինը գրում եր կոոպերացիայի բացառիկ նշանակության մասին մեր պայմաններում (խորհրդային իշխանության ժամանակ), յերբ հողը, ֆաբրիկաները և գործարանները պատկանում են բանվորա-գյուղացիական կառավարությանը: Սակայն, կոոպերացիան այնպիսի չափերի չի հասել, վոր լրիվ կերպով կարողանա բավարարել գյուղի կարիքներին: Դրա համար հարկավոր ե, վորքան հնարավոր ե, մեծ չափով գյուղացիություն քաշել կոոպերատիվների մեջ: Այս աշխատանքը պետք ե կատարի ամեն մի գիտակից գյուղացի:

12 յեվ 13 դասերին զուգընթաց մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք ընդգծում են գյուղացիների աշխատանքների միացման նշանակությունը գյուղական տնտեսության շինարարության գործում: Կարդալ լրագրներում կոոպերացիայի շինարարության մասին գյուղում:

կազմել կոնսպեկտ, որի թեման լինի «Կոոպերացիայի դերը գյուղի և քաղաքի կապի գործում», քննադատել կազմած կոնսպեկտներից մի քանիսը։

Մաթեմատիկա.— Գրի առնել թվական տվյալներ, որոնք բնութագրում են կոոպերացիայի դրությունը։ Հաշվել ծանոթ գործողությունների միջոցով ամբողջ թվերի վրա կոոպերացիայի գրաված տեղերի քանակը ընդհանուր շրջանառության մեջ, նրա բաժինը՝ համեմատած պետական և մասնավոր առևտրի հետ։

14—15. ՀՈՂԱՅԻՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈԴԵՔՍՆԵՐԸ

Քաղաքագիտություն.— *Խորհրդային իշխանությունը հրատարակել է «Հողի վերաբերյալ օրենքների կոդեքս», որը ուղղված է բացառապես աշխատավոր գյուղացիության դրության բարելավմանը, նրա տնտեսության բարձրանալուն և նրա իրավունքների և շահերի պաշտպանությանը՝ հողերի օգտագործման գործում։ Հողը ոչ մեկի սեփականությունը չէ, միայն ամեն մեկը կարող է օգտվել այդ հողից։ Խորհրդային իշխանության կողմից հողի մասնավոր սեփականության վերացումը միանգամայն զրկում է կուլակներին նոր հողամասեր գնելու հնարավորությունից, որի հետևանքը այն կը լիներ, որ առաջ կգային նոր կալվածատերեր։ 1925 թվի մարտի 20-ի դեկրետով խորհրդային իշխանությունը վերջնականապես լիկվիդացիայի յենթարկեց կալվածատիրական հողատիրությունը։ Աղնվականներից առաջացած կալվածատերերը, որոնք դեռ մնում են միքանի տեղերում, պետք է արտաքսվեն մինչև 1926 թվի հունվարի 1-ը։ Օրենքը թույլ է տալիս հողից օգտվելու ամբողջ հասարակությանը համահավասար չափով և ոչ թե մի առանձին արտոնյալ տան, որը ցարի ժամանակ ավելի շատ հողեր ուներ, քան թե մի ամբողջ հասարակություն։ Օրենքը հնարավորություն է տալիս գյուղացիներին իրենց ընտրելու հողի մշակման և օգտագործման ձևը (համայնական, ընկերական կամ արտելի և այլն)։ Շնորհիվ այդպիսի օրենքի ոչ մի գյուղացի չի կապում ուրիշների հետ իր հողի բարելավման նախաձեռնությունը։ Հողի օգտագործման ամենալավ ձևը— դա կոլլեկտիվ օգտագործումն է (արտել, ընկերություն, կոմմունա), որովհետև մենակ մարդը հնարավորություն չի ունենալ ձեռք բերելու հարկավոր մեքենաներ, լավ սերմացու և այլն, բայց կոլլեկտիվը այդ կանի մեծ աջողությամբ (հողի հասարակական մշակման գերազանցությունները տեղական օրինակով կարելի յե ցույց տալ)։ Օրենքը բացատրում է, թե ինչպես առանձին մարդիկ կարող են հասարակությունից դուրս գալ, ինչպես բաժանել հողը և ինչպես կառավարել։ Օրենքը ցույց է տալիս նաև, թե կարելի՞ յե արդյոք հողը կապալով տալ և ինչքան ժամանակով, ով իրավունք ունի հողը կապալով վերցնելու և վերջապես թույլ է տրվում արդյոք գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանք, թե ոչ։ Հողային կոդեքսում առանձին ասված է քաղաքային հողերի վերաբերյալ, հողաշինության (մանրամասն կանգ առնել հողաշինության անհրաժեշտության և օգտակարության վրա) և հողային վեճերի լուծման կարգի մասին։*

Անտառները նույնպես բանվորագյուղացիական կառավարության սեփականությունն են կազմում և այդպիսով կազմում են պետության միա-

նական անտառային ֆոնդը։ Անտառներից օգտվելու կարգը բացատրվում է «Անտառային կոդեքսում»։

Ըստ օրենքի անտառները բաժանվում են յերկու մասի և ունեն տեղական և պետական նշանակություն։ Տեղական նշանակություն ունեցող անտառները տրվում են գյուղացիներին ընդմիշտ օգտագործելու համար։ Գյուղացիք պետք է կառավարեն և օգտվեն այդ անտառներից միմիայն այն պայմանով, վոր անտառները բոլորովին չփչանան։ Օրենքի մեջ ցույց է տրված ազգաբնակությանը տրվելիք փայտի քանակը, ինչ կարգով կարելի յե ստանալ և նրանց արտոնությունները։ Կոդեքսում ասված է անտառային տնտեսության կազմակերպության մասին, անտառներ կառավարելու օրգանների և անտառների պահպանման մասին։

Մայրենի լեզու.— Կարդալ և արտագրել հողային և անտառային կոդեքսներից կարևոր կետերը։ Կարդալ Կ. Գ. Կ. և Ժողկոմխորհի 1925 թ. մարտի 20-ի դեկրետը կալվածատիրական հողատիրության լիկվիդացիայի մասին։

16. ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Քաղգրագիտություն.— Կարմիր բանակի, գյուղի և քաղաքի պետական ապարատի, դպրոցների, հիվանդանոցների և մի շարք այլ հիմնարկությունների պահպանման, գյուղի աղքատ և միջակ խավերին նյութական օգնություն ցույց տալու համար (կոոպերացիայի և վարկի միջոցով) Խորհրդային իշխանությանը հարկավոր են միջոցներ։ Այդ միջոցների մի մասը ստացվում է հարկերից։ Խորհրդային իշխանությունը ձգտում է ամեն կերպ աշխատավոր ազգաբնակության հարկերը թեթևացնել։ Հարկերը մեծ մասամբ ստացվում են քաղաքներում վոչ աշխատավոր ելեմենտներից, իսկ գյուղում կուլակներից։ Կարմիր բանակայինի և չքավոր տնտեսությունները հարկեր վճարելիս օգտվում են վորոշ արտոնություններով։

Գյուղատնտեսական միասնական հարկի առավելությունները։

Գյուղատնտեսական հարկի մեծ մասը վերադարձվում է նորից գյուղ իբրև գյուղատնտեսական օգնություն, գյուղատնտեսական վարկ, դպրոցի պահպանման, հիվանդանոցի, ճանապարհների բարելավման և այլ կարիքների համար։ 1925 թ. գյուղատնտեսական հարկից 240 միլիոն ռուբլուց ՍԽՀՄ-ի III համագումարը վորոշեց տալ 100 միլիոն ռուբլի շրջանների կարիքների համար, 100 միլիոն ռուբլի գյուղացիական բանկին փողային վարկը վերականգնելու համար։

Մայրենի լեզու.— Կարդալ հոդվածներ, վորոնք ցույց են տալիս, թե ուր են գնում հարկերը։ Կարդալ լրագրում հարկային կամպանիայի հաղորդագրությունների մասին։ Կազմել հուշատետր, վորտեղ գրել, ուր է գնում գյուղատնտեսական հարկը։ Պարզաբանել գրելու ժամանակ ամենադժվար բառերը։

Մաթեմատիկա.— Բազմապատկել ամբողջ թվերը կոտորակի վրա. այս վարժությունները անելիս օգտվել հարկերի թվական տվյալներից այժմ և ցարի ժամանակ։ Օրինակ, հաշվել, վորքան փող է տված տեղական կարիքների համար, յեթե 240 միլիոնից տվել եյին $^5/_{12}$-ը, վորքան է տված գյուղատնտեսական բանկին, վորքան է գնացել ուրիշ կարիքների համար, յեթե այդ մասը հավասար է $^1/_6$-ին։

17. ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ
(ՎԵՐՋ)

Քաղաքագիտություն.— *Գյուղատնտեսական հարկերը ստացվում են փողով, վորը մեծ հարմարություն և ստեղծում գյուղացիների համար։ Հարկերի փողով հավաքելը հնարավորություն յեղավ միայն կառավարության կողմից փողային ռեֆորմա մտցնելուց հետո, այսինքն ամեն օր իր գնի մեջ ընկնող Խորհրդային դրամանիշների փոխարեն հաստատվեց իր գնի մեջ հաստատուն փող և կայուն ռուբլի։ Յերկու տարվա ընթացքում (1923-1924) փողի քանակը յերկրում մեծացավ 6 անգամ (731 միլիոն չերվ. ռուբլի) և ռուբլու արժեքի ուժը չի ընկնում։ Շնորհիվ կայուն փողերի մենք ամրացրինք մեր տնտեսությունը, գյուղի և քաղաքի միջև մեծացրինք ապրանքաշրջանառությունը և ստեղծեցինք տարեց-տարի աճող ամուր և հաստատուն բյուջեն (պետական յելքերի և մուտքերի ցուցակը)։*

Պետական յելքերը

1913	*2, 750.000.000 ռուբլի*
1922/23	*1, 300.000.000 »*
1923/24	*1, 900.000.000 »*
1924/25	*2, 250.000.000 »*
1925/26	*(յենթադրվում ե) 3, 400.000.000 ռուբ.*

Հիշյալ գումարների մեծ մասը ծախսվում ե գյուղական տնտեսության օգտին (23 թվին—50 միլիոն, 24 թ.—60 միլիոն, 25 թ.—109 միլ.)։ Փողային ռեֆորման աջակցում ե մեր տնտեսության աճմանը և ամրացնում ե գյուղի և քաղաքի կապը։

Մայրենի լեզու.—*Կարդալ հոդվածներ և հատվածներ, վորոնք լուսաբանում են ֆինանսային ռեֆորմի նշանակության մասին։ Քննել և գրի առնել մեր յերկրի բյուջեները։*

Մաթեմատիկա.— *Գրել բազմանշան թվեր. Թվաբանական չորս գործողությունների վարժություն կատարել, հաշվելով քանի անգամ կամ քանիսով մեր բյուջեն մեծացել ե։*

Կոտորակների բազմապատկման վարժություններ կատարել, հաշվելով թե յերկու տարի սրանից առաջ ինչքան փող կար յերկրում, յեթե այն ժամանակ փողերի գումարը կազմում եր միմիայն 1925 թվի գումարի $^1/_6$ մասը (73 միլ. ռուբլին $\times$ $^1/_6$)։

18. ՈՐԵՆՔՆԵՐԻ ԿՈԴԵՔՍԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Քաղաքագիտություն.— *Արդյունաբերական հիմունքը, առանց վորի չի կարող վերականգնել գյուղական տնտեսությունը, դա բանվոր դասակարգն ե։ Խորհրդային իշխանությունը ամեն ջանք գործ ե դնում բարելավելու պետական և մասնավոր արդյունաբերությունը։ Այն օրենքները, վորոնք պաշտպանում են բանվորների և ծառայողների աշխատանքը գե-*

տեղված են «Աշխատանքի մասին օրենքների կոդեքսում», 8 ժամյա բանվորական օրը Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումն է և Խորհրդային իշխանության մեջ վոչ վոք իրավունք չունի խախտելու այդ։ Արդյունաբերության և աշխատանքի արտադրության աճումով, աճում է նաև բանվորի աշխատավարձը։ Աշխատանքի մասին օրենքների կոդեքսը նախատեսնում է բանվորի աշխատանքի պաշտպանության բոլոր դեպքերը (վոչ բանվորական օրերը և հանգիստը, ամենայն տարվա արձակուրդները, հիվանդության պատճառով արձակուրդներ, արձակուրդ կնոջ հղիացած և ծննդաբերության ժամանակ, բանվորական օրվա կրճատումը յերիտասարդների համար, բանվորական օրվա կրճատում մի քանի տեսակ արդյունաբերությունների մեջ, վորը վնասակար ազդեցություն է թողնում առողջության վրա, մասնագիտական հագուստ տալը, մաքրության, լույսի և այլ առողջապահական պայմանների վրա հոգս է տարվում, վոր գործարանների շենքերը մաքուր լինեն)։

Մինչև 1924 թիվը աշխատավարձը աճեց ավելի արագ, քան աշխատանքի արտադրականությունը։ Բանվոր դասակարգի հերթական խնդիրներից մեկն էլ այն էր, ինչ գնով ուզում է լինել, բարձրացնել աշխատանքի արտադրականությունը, վորպեսզի դրանով հնարավոր լինի իջեցնել քաղաքի ապրանքների գները և ամրացնել գյուղի և քաղաքի կապը։ (Տվյալ շրջանում աշխատանքի արտադրականության բարձրացման կամպանիայի հետևանքների ակնարկը)։

Մայրենի լեզու.— Կարդալ կոդեքսից կետեր, նույնպես և գեղարվեստական գրվածքներից հատվածներ, վորոնք նկարագրում են բանվոր դասակարգի դրությունը առաջներում։ Գրի առնել հեղափոխության կարևոր նվաճումները աշխատանքի պաշտպանության ասպարեզում և ձևակերպել ընթացիկ օրվա խնդիրները— բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։

Մաթեմատիկա.— Համեմատություն բանվորական օրվա տևողությունը անցյալում և այժմ. տալ թվական տվյալները (և գրել այդ տվյալները) աշխատանքի արտադրողականության բարձրացման վերաբերյալ։

Գրի առնել մի բանվորի վաստակի նորման մինչև պատերազմը և այժմ։ Հասարակ կոտորակներով կատարել չորս գործողությունների մի մի կամ յերկու օրինակ. այդ գործողությունների համար հիմք ծառայեցնել բանվորական օրվա տևողությունը, աշխատավարձը անցյալում և այժմ։

19—20. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղգրագիտություն.— Մեր տնտեսությունը բարելավելու համար առաջին հերթին պետք է բարձրացնել ազգաբնակչության կուլտուրական մակարդակը՝ լիկվիդացիայի յենթարկելով անգրագիտությունը ազգաբնակչության միջից։ Խորհրդային իշխանությունը իր գոյության առաջին օրից համառ պայքար է մղում այդ ճակատում։ Խորհրդային իշխանությունը բանում է աշխատանքի դպրոցներ, կազմակերպում է հասակավորների համար լիկ-կայաններ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ և ուրիշ կուլտ-կրթական հիմնարկություններ։ Լրագրները, գրքերը, բրո-

Հյուրները տարվում են գյուղ, վորտեղ դեռ կան մոտ 14 միլիոն անգրագետ հասակավորներ։ «Կորչի անգրագիտություն» ընկերությունը և նրա խնդիրները։ Բոլոր աշխատավորները պետք է ոգնեն ի կատար ածելու ընկ. Լենինի պատգամները Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակում լիկվիդացիայի յենթարկել անգրագիտությունը։ Անգրագիտության լիկվիդացիա զորամասում։

Մայրենի լեզու.— Կարդալ քաղվածքներ ընկ. Լենինի գրվածքներից, վորոնք վերաբերում են աշխատավոր մասսայի կրթությանը։ Կարդալ հոդվածներ և նկատողություններ, վորոնք ցույց են տալիս տնտեսության բարօրության կախումը գրագիտությունից, նույնպես և ընդգծել այն բոլոր վնասները, վոր տալիս է մեզ անգրագիտությունը։ Հասկացողություն թեզիսների մասին։ Կոլեկտիվ կերպով կազմել թեզիսներ հետևյալ թեմայի շուրջը «Կարող է արդյոք խորհրդային իշխանությունը առանց աշխատավորների ոգնության արագ կերպով հաղթահարել հասակավորների անգրագիտությունը և սովորեցնել յերեխաներին։ Վոճի տեսակետից մշակել թեզիսները։

Մաթեմատիկա.— Օգտագործել թվական տվյալները ազգաբնակության անգրագիտության վերաբերյալ կոտորակներով թվաբանական գործողություններ կատարելու համար։

21. ՅԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Քաղաքագիտություն.— Ցարական Ռուսաստանում, ինչպես և մյուս կապիտալիստական յերկրներում, յեկեղեցին ծառայում եր իբրև մի միջոց աշխատավորներին հարստահարելու և ստրկացնելու համար։ Յեկեղեցին իրեն իրավունք եր համարում խառնվելու մասնավոր և հասարակական կյանքում (ծիսակատարություն և որենսդրություն) և ծառայում եր իբրև մի միջոց գրգռելու ազգային ատելությունը։

Խորհրդային իշխանության մեջ յեկեղեցին բաժանված է պետությունից (յեկեղեցական ծիսակատարությունները իրենցից չեն ներկայացնում որենսդրական մի ակտ. ամուսնությունը, յերեխային անուն տալը և այլն)։ Բանվորա-գյուղացիական իշխանությունը չի հետապնդում վոչ մի կրոնի, բայց դրա հետ միասին, նա չի ճանաչում վոչ մի կրոն և նրան վոչ մի աջակցություն ցույց չի տալիս։ Աշխատավորների կառավարությունը ձգտում է ազատել ժողովրդական մասսաներին այդ կրոնական նախապաշարմունքներից կրթության միջոցով։ Պետականացրած է մինչև մի միլիոն դեսյատին վանքապատկան հող, լիկվիդացիայի յե յենթարկված 722 վանքեր, վորոնց մեջ ապրում եյին 58,000 հոգևորականներ և նրանց տեղը տեղավորել են 1.500.000 աշխատավորներ։ Ազգայնացրած է 84 յեկեղեցապատկան գործարաններ, 436 կաթնատնտեսության ֆերմաներ, 602 յեկամուտ տվող տներ, 1.112 հյուրանոցներ, 311 մեղվանոց, 277 հիվանդանոց։ Այս բոլորը անցավ աշխատավորների ոգտին։ Յեկեղեցին ամենախոշոր կալվածատերն եր։

Մայրենի լեզու.— Կարդալ ամսաթերթերից և լրագրերից հոդվածներ («Բեզբոժնիկ» թերթից) վորոնք յերևան են հանում, թե ինչպես յեկեղեցու աջակցությամբ ամրացավ հարստահարողների, այն է՝— թագավորի, կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը։

ՀԱՏՎԱԾ X

ՈՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ Խ. Ս. Հ. Մ.

(5 ԶՐՈՒՅՑ)

22. ՈՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Քաղգրագիտություն.— *Կապիտալիզմը ամբողջ աշխարհը դարձրել եր տնտեսապես միմյանցից կապված մի ամբողջություն, վորից վոչ մի յերկիր չի կարող դուրս գալ առանց վնասելու թե իրեն և թե մյուս կապիտալիստական աշխարհին։*

Մեր յերկիրը գլխավոր կապիտալիստական յերկիրներին մատակարարում եր հաց և հում նյութեր։ Ոտարերկրյա կապիտալը խոշոր դեր եր խաղում Ռուսաստանի կապիտալիստական զարգացման մեջ։ Ոտարերկրյա կապիտալի մասնակցությունը մեր արդյունաբերության մեջ.

1865 թվին	80.000.000	*ռուբլի*
1900 »	400.000.000	»
1914 »	2.243.000.000	»

Հարուստ վոսկու, արծաթի, կապարի, պղնձի և ուրիշ շատ հանքեր գտնվում եյին ոտարերկրյա կապիտալիստների ձեռքում։ Լենվոսկին, պլատինի շահագործությունը Ուրալում, արծաթի և կապարի հանքերը Ալթայում, մարգանեցի հանքերը և նավթը Կովկասում, լեռնային, ածխային և ելեքտրական արդյունաբերությունները ու մետաղագործական հանքերը, այս բոլորը գտնվում եյին ոտարերկրյա կապիտալի ձեռքին։ Ռուսաստանում յեղած ոտարերկրյա կապիտալը պատկանում եր հետևյալ յերկրներին՝ Ֆրանսիային— 33%, Անգլիային— 23%, Գերմանիային և Ավստրիային— 20%, Մնացածներին—5%։ Ոտարերկրյա կապիտալը տեղավորվում եր Ռուսաստանում իբրև պետական փոխառություն։ Ռուսաստանը Ֆրանսիային պարտ եր 2 միլիարդ վոսկի ռուբլուց ավելի, իսկ Անգլիային— 5 միլիարդ ռուբլուց ավելի. տարեկան պարտքի տոկոսները կազմում եր մոտ 340 միլիոն ռուբլի։ Մի խոսքով ցարական Ռուսաստանը անգլո-ֆրանսիական կիսագաղութն եր։

Մայրենի լեզու.— *Կարդալ քաղվածքներ և հոդվածներ։*

Մաթեմատիկա.— *Կատարել հասարակ կոտորակների բազմապատկման և բաժանման վարժություն։ Այս վարժությունը կատարելիս իբրև հիմք ծա-*

ունեցել ոտարերկրյա կապիտալի մասնակցությունը (Ֆրանսիան մոտավորապես ուներ $^1/_3$, Անգլիան $^1/_4$, Գերմանիան և Ավստրիան $^1/_5$ և այլն)։

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա այն արդյունաբերության շրջանները, վորտեղ մեծ դեր եր խաղում ոտարերկրյա կապիտալը։

23—24. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքագիտություն.— Հոկտեմբերյան հեղաշրջումը կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը տապալեց և նրանց հզորության հիմքը—հողը, ֆաբրիկաները, գործարանները, բանկերը և յերկաթուղին առեց բանվորագյուղացիական իշխանության ձեռքը։ Ոտարերկրյա կապիտալիստների բոլոր ձեռնարկությունները պետականացրեց։ Անավասիկ սըրանով է բացատրվում ոտարերկրյա կապիտալիստների կատաղած հարձակումը մեզ վրա։

Խորհրդային իշխանությունը հրաժարվեց վճարել ցարական և ժամանակավոր կառավարությունների արտասահմանյան պարտքերը։ Արդյունաբերության ազգայնացման շնորհիվ, խորհրդային իշխանությունը կարողացավ զինել և մատակարարել բանվորագյուղացիական Կարմիր բանակին, վորը պաշտպանում է իր թշնամիների հարձակումը և պահում բանվորների և գյուղացիների հետևյալ նվաճումները. հողը, իշխանությունը, ֆաբրիկաները և գործարանները։ Կապիտալիստները համոզվեցին, վոր զինված ուժով մեզ հաղթելը անհնարին է։ Քաղաքացիական պատերազմին վերջ տալը և տնտեսական շինարարության անցնելը հարց հարուցեցին կուսակցության և խորհրդային իշխանության առաջ, վերականգնեցնել կապիտալիստական աշխարհի հետ տնտեսական կապերը։ Ինչպես մենք կարիք ենք զգում արտասահմանյան շուկայում ծախելու մեր հացը և հում նյութերը (փայտ, կտավատ, նավթ և այլն) և փոխարենը գնելու արտասահմանյան մեքենաներ, այնպես էլ ոտարերկրյա կապիտալիստները կարիք ունեն մեր շուկայում սպառելու իրենց ապրանքները և փոխարենը գնելու մեզանից մեր հացը և հում նյութերը. նրանք ցանկություն ունեն նաև ոգտագործելու մեր բնական հարստությունները— հանքերը։ Առանց այլ յերկըրների հետ տնտեսական կապ հաստատելու դժվար է բարձրացնել մեր տընտեսությունը, բայց մենք ոտարերկրյա կապիտալի համար գաղութ չենք դառնալ։ Մեր ամբողջ քաղաքականությունը ուղղված է այն բանին, վորպեսզի կապիտալիստական յերկրների հետ խաղաղ տնտեսական հարաբերություններ ստեղծենք, միայն ամբողջովին պահպանելով մեր քաղաքական անկախությունը և տնտեսական ինքնուրույնությունը։ Մեր աջողությունները այդ ապացուցում։

Մայրենի լեզու.— Կարդալ աշխատավորության իրավունքների դեկլարացիայից արդյունաբերության ազգայնացման մասին։ Կարդալ լրագրներում հաղորդագրություններ և գիտողություններ մեր առևտրական հարաբերությունների մասին ոտար յերկրների հետ։ Գրի առնել թեզիսների ձևով մի քանի հիմնական մտքեր ոտար յերկրների հետ տնտեսական կապ հաստատելու անհրաժեշտության մասին։

Մաթեմատիկա. — *Կատարել չորս գործողություններ ամբողջ թվերով և կոտորակներով։ Վարժություններ կատարելիս հիմք ծառայեցնել մեր արտաքին առևտրի զարգացումը վերջին տարիներում։*

Աշխարհագրություն. — *Գտնել քարտեզի վրա այն յերկրները, վորոնց հետ առևտուր ունենք։*

25. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԵՆԱՇՆՈՐՀԸ ՅԵՎ ԿՈՆՑԵՍԻԱՆԵՐԸ

Քաղաքագիտություն. — *ԽՍՀՄ-ում սոցիալիստական տնտեսության զարգացման համար խոշոր նշանակություն ունի արտաքին առևտրի մենաշնորհը։ Խորհրդային յերկրում վոչ վոք իրավունք չունի առևտուր անելու արտասահմանի հետ առանց պետական որգանի, վորը վարում է այդ առևտուրը։ Այդ առևտրի Ժողովրդական Կոմիսարիատն է։ Արտաքին առևտրի մենաշնորհի նպատակն է ազատել մեր շուկան այն արտասահմանյան ապրանքներից, վորոնք կարող են պատրաստվել մեր գործարաններում և թույլ չտալ արտահանվելու մեր յերկրից այն ապրանքները, վորոնց կարիք է զգում մեր բանվորը և գյուղացին։ Մենք արտասահմանից պետք է գնենք այն ապրանքները, վորոնց մեզ մոտ պատրաստելը դեռ հնարավոր չէ։ Այն ապրանքները, վորոնք հարկավոր չեն բանվորին ու գյուղացուն (որինակ շքեղության ապրանքները) Խորհրդային իշխանությունը նրանց վրա մեծ մաքսեր է դնում։ Գանձված դրամները մտնում են բանվորագյուղացիական գանձարանը, յերկրի տնտեսությունը և աշխատավորների կյանքի պայմանները բարելավելու համար։ Առանց մենաշնորհի ԽՍՀՄ-ն կը դառնար ոտար կապիտալի գաղութ. Մի քանի տեսակի խոշոր արդյունաբերությունների արագ զարգանալուն նպաստելու համար Խորհրդային իշխանությունը կոնցեսիաների միջոցով ներս է քաշում ոտարերկրյա կապիտալը։ Խորհրդային իշխանությունը միջոցներ չունենալու պատճառով հնարավորություն չունի մեր յերկրի բնական հարստությունները (անտառ, ձկան հարստություններ և այլն) մշակելու։ Ուստի մի քանի ձեռնարկություններ տրվում են ոտար կապիտալիստներին յերկար ժամանակով կապալով — կոնցեսիայի միջոցով մեր յերկրի համար ձեռնտու պայմաններով։*

Մայրենի լեզու. — *Կարդալ լրագրներից հոդվածներ, բրոշյուրներից առանձին կտորներ, վորոնք ընդգծում են մեր արտաքին առևտրի անհրաժեշտությունը և նշանակությունը։ Ձևակերպել զրույցի հիմնական մտքերը և գրել գրատախտակին և տետրում։ Պատասխանել հետևյալ հարցին՝ «Ինչի համար է արտաքին առևտրի մենաշնորհը»։*

26. ԽՍՀՄ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Քաղաքագիտություն. — *Չը նայած, վոր կապիտալիստական յերկրները մեզ հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների մեջ են, բայց սրանք մեր բարեկամները լինել չեն կարող։ Նրանց թշնամական վերաբերմունքը դեպի մեզ ավելի զգույշ և ծածուկ ձև է ընդունում։*

Մի կողմից տնտեսական անհրաժեշտությունը, մյուս կողմից կապիտալիստների այն հույսը, որ մենք տնտեսական ֆրոնտում կարող ենք հաղթվել, հարկադրեցին կապիտալիստներին մեզ հետ հարաբերության մեջ մտնել։ Սակայն նրանք չեն հրաժարվել մեզ վրա հարձակվելու մտքից։ Նրանք սպառազինում և միացնում են իրենց ծառաներին— Լեհաստանին, Ռումինիային, Ֆինլանդիային և ուրիշներին— մեր դեմ։ Մենք միշտ պատրաստ պետք է լինենք նրանց դիմադրելու։ Գիտակից, մարզված և կարգապահ Կարմիր բանակը, մեր կարմիր դիպլոմատիայի՝ կապիտալիստական աշխարհի հետ հարաբերություններ վարելիս, ամենալավ պաշտպանն է։ Որքան ուժեղ լինի Կարմիր բանակը, այնքան մեր Կարմիր դիպլոմատիան, իր բանակցությունների մեջ, ամուր է։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, որոնք ընդգծում են նոր ընդհարումների հնարավորությունը և վտանգը։ Կարդալ լրագրային հաղորդագրություններ, որոնք յերևան են հանում մեր փոխհարաբերությունները մյուս յերկրների հետ և ԽՍՀՄ-ի դեմ ձեռք առած միջոցները։

Մաթեմատիկա.— Համեմատել ԽՍՀՄ-ի և կապիտալիստական պետությունների բանակների թվական քանակը և ծախսերը։

ԱՄԱՌՎԱ ՇՐՋԱՆ — *(54 ժամ — 27 զրույց)*

ՀԱՏՎԱԾ XI

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԳԻՏԱԿԻՑ ՌԱԶՄԻԿ — ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՊՐՈՑՆ Է

(ԶՐՈՒՅՑ 20)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Բովանդակություն.— *ՍԽՀՄ-ի ամբողջ ժողովրդական շահերը պահանջում են արդյունաբերության հետագա զարգացման հետ միասին, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել արագ կերպով ամրացնելու և բարձրացնելու գյուղացիական տնտեսությունները՝ նպատակ ունենալով մեծացնելու նրանց յեկամուտը: Գյուղացիությունը պետք է հնարավորություն ունենա իր տնտեսության մեջ մտցնելու մեծ չափով լրացուցիչ արտադրական միջոցներ. մի խոսքով ամեն կերպ աշխատել բարձրացնելու իր տնտեսության տեխնիքական մակարդակը և ավելացնել մթերքների այն մասը, վորը սպառելու համար դուրս է բերվում շուկա: Թե կուսակցությունը և թե խորհրդային իշխանությունը համարում են վոչ նպատակահարմար գործադրել վորև է ադմինիստրատիվ միջոցներ բուրժուական վերին խավերի դեմ, վորոնք ազատ առևտրի շնորհիվ աճում են: Մեր քաղաքականության գլխավոր նպատակն է օգնել գյուղացիության աղքատ և միջակ ելեմենտներին նրանց տնտեսության բարձրացման և քաղկուլտուրական զարգացման գործում: Առաջին հերթին գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի միջոցով գյուղացիության այդ խավերի միացումը ուղիղ ճանապարհն է, նախ սրանց տնտեսության ույժի բարձրացման և յերկրորդը պայքարելու հարուստ վաշխառուների և միջնորդների շահագործման դեմ: Այդ հանգամանքը հնարավորություն կտա միացնել գյուղացիությանը սոցիալիստական տնտեսության շինարարական գործի համար:*

Կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականության այդ հիմնական գծից, գյուղում, բխում են գյուղացիական տնտեսության ամրացման այն բոլոր միջոցները, վորոնք ընդգծված են Խ. Ս. Հ. Մ-ի III *համագումարում: Այն է՝ ա) միասնական գյուղատնտեսական հարկի*

ամբողջ գումարի պակասեցնելը, բ) գավառակների (վոլոստների) բյուջեյի մեծացնելը, գ) պետական օգնություն հողաշինարարությանը, դ) նոր կանոններ կազմելով հող վերցնելու և բանվորական ուժ վարձելու մասին. ե) գյուղացիներին գյուղատնտեսական գործիքներ և ձիեր մատակարարելը, զ) քաղաքային ապրանքների գների ցածրացնելը, ը) օգնություն մանր գյուղական տնտեսությունները կոոպերացիայի յենթարկելու համար և այլն։

Մայրենի լեզու.—Կարդալ հատվածներ և հոդվածներ, վորոնք պարզաբանում են կուսակցության գիծը գյուղի վերաբերյալ։ Գրի առնել խորհրդային իշխանության ձեռք առած հիմնական միջոցները գյուղական տնտեսության բարելավման գործում։

2. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ (ВОЛОСТЬ) ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՏՈՐԻՆ ԱՊԱՐԱՏԸ

Քաղգրագիտություն.—Համարյա թե ամբողջ Խ. Ս. Հ. Մ.-ում մեծացրել են գավառակները։ Մեծացրած գավառակը ունի իր տնտեսությունը, կազմում է իր բյուջեն այսինքն իր տարեկան ելքերի և մուտքերի ցուցակը։ Խ. Ս. Հ. Մ.-ի Կենտգործկոմի 1925 թվի մարտ ամսի նստաշրջանում վորոշված եր գյուղատնտեսական հարկից 100 միլիոն ռուբլի տալ գավառակային բյուջեյին։ Գավառակը այդպիսի իրավունքներ առաջներում յերբեք չի ունեցել։ Այդ հանգամանքը մեծ նշանակություն ունի գավառակի կենտրոնի համար։ Այժմ գավառակներին տրված է ադմինիստրատիվ և դատական ֆունկցիաներ, գավառում կա միլիցիա և ժողովրդական դատարան։ Գավառակը վարում է իր դպրոցների և հիվանդանոցների տնտեսությունը։ Նրա իշխանության տակն է գտնվում տեղական նշանակություն ունեցող ամեն տեսակի ձեռնարկություններ։ Վորովհետև գավառակներին ներկայումս մեծ իրավունքներ են տրված, ուստի Գավգործկոմի վրա մեծ պատասխանատվություն է ընկնում։ Գավառակի կենտրոնը անհրաժեշտ է ամրացնել լավ աշխատավորներով։

3. ՎԵՐՋ

Քաղգրագիտություն.—Գավառակային գործկոմը ամենաբարձր իշխանությունն է գավառակում մի համագումարից մինչև մյուս համագումարը (յուրաքանչյուր տարի)։ Գավառակի գործկոմը ղեկավարում է գյուղխորհուրդների աշխատանքները, միջոցներ է մշակում ի կատար ածելու իշխանության բարձր օրգանների կարգադրությունները. նա հաստատում է գավառակում պաշտոնավարող պատասխանատու աշխատակիցներին իրենց պաշտոնում, հետևում է հարկերի ճիշտ մուծմանը և բաշխմանը, լուծում է գյուղխորհուրդների անիրավացի գործողությունների մասին յեղած բողոքները, միջոցներ է ձեռք առնում կարգ պաշտպանելու համար և նպաստում է ազգաբնակչության տնտեսական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը. (մանրամասն կանգ առնել գավառակային գործկոմների անդամների չոր

ջը, թե գյուղական տնտեսության ասպարեզում և թե շրջանային գյուղատնտեսական մասնագետների փոխհարաբերությունների մեջ)։ Բազմաթիվ հարցեր, վորոնք առաջներում լուծվում էին գավառակներում, այժմ մեծացրած գավառակներում, հանձնված է գյուղխորհուրդներին, ինչպես օրինակ զագսի վարելը (ծնունդ, մահ, և ամուսնություն) այս հանգամանքը հեշտացնում է խորհրդային ապարատի գործունեությունը և մոտեցնում է նրան ազգաբնակչությանը։ (Գավառակային գործկոմի կառուցվածքը, նրա բաժինները)։

Գյուղխորհուրդների խնդիրն է աշխատավորներին մեջ քաշել տնտեսական և կուլտուրական շինարարության գործը գյուղում բարելավելու համար։ Գյուղխորհուրդները պարտավոր են գյուղում կարգ պաշտպանել և կատարել այն բոլոր վորոշումները, վորոնք ստացվում են իրենցից բարձր կանգնած իշխանության օրգաններից։ Խորհուրդների ընտրություններին պետք է լայն մասնակցություն ցույց տան աշխատավոր գյուղացիության խավերը, ուստի 1925 թվի ընտրությունները շատ տեղերում բեկանվեցին շնորհիվ ազգաբնակչության թույլ մասնակցությանը։ Բացի ամբողջ ազգաբնակչության՝ ընտրություններին մասնակից դարձնելու, կոմունիստական կուսակցությունն իրեն նպատակ է դրել խորհրդային ստորին ապարատների մեջ մտցնել ազնիվ անկուսակցական գյուղացիներին, վորպեսզի նրանք ավելի մոտ լինեն խորհրդային շինարարության գործին։ Բայց վորովհետև մենք անկուսակցական գյուղացիությանը տեղ ենք տալիս վոչ միայն ստորին ապարատներում, այլ նաև մեր բարձր ապարատներում նույնիսկ մինչև Խ. Ս. Հ. Մ.-ի Կենտգործկոմը ներառյալ, մեզ վրա, պարտականություն է ընկնում խորհրդային ապարատը ապահովել կուլակային էլեմենտների ներս մտնելուց։

Կարմիր բանակային արձակուրդավորը պետք է գիտենա այն պարտականությունները, վորոնք ընկնում են խորհրդային ստորին ապարատների վրա. նա պետք է աջակցի ազնիվ անկուսակցական և դեպի խորհրդային իշխանությունը լավ տրամադրված գյուղացիներին մասնակից անելու գյուղի շինարարության գործում։ Նա, ինքը ակտիվ մասնակցություն պետք է ցույց տա այդ ապարատում։ Նա պետք է պայքար մղի կուլակների դեմ, վորոնք փորձեր են անում մի կերպ ընկնելու խորհրդային ստորին ապարատները — գյուղխորհուրդը։

2 յեվ 3 գրուպներին զուգընթաց մայրենի լեզու. — Կարդալ քաղվածքներ խորհրդային ստորին ապարատների կանոնադրությունից։ Կարդալ լրագրների դիտողությունները, վորոնք պարզաբանում են գյուղխորհրդի և գավառային գործկոմի աշխատանքների բացասական և դրական կողմերը։ Արտագրել կանոնադրության գլխավոր կետերը այն աշխատանքի և իրավունքների, վորոնք վերապահված են գավառային գործկոմներին։

Պաշտոնական թղթերի հետ ծանոթացնել և գրել դիմում գյուղխորհրդին և գավգործկոմին, վկայական, բողոք, ամուսնության, ծննդի, դատարանի, արձանագրության և ցուցակագրության գրելու կարգը։

Մաթեմատիկա. — Ծանոթացնել գավառային գործկոմի բյուջեն կազմելու կարգի հետ։ Կազմել գավառային գործկոմի օրինակելի բյուջե։ Թվաբանական չորս գործողությունների միջոցով վարժություն կատարել բյուջեյի գրավոր կազմելու շուրջը։

4-5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ

Գյուղական տնտեսության բարձրացման և կուլակների հարստահարությունից ազատելու ամենաճիշտ ճանապարհը կոոպերացիան է։

Գյուղատնտեսական կոոպերատիվներ ստեղծելու համար հարկավոր է անել հետևյալը. կշռադատել ընկերություն կազմելու անհրաժեշտությունը (այն դեպքում, յերբ չի կարելի միանալ տեղում գոյություն ունեցող կոոպերատիվային միությանը) և այդ ընկերության բնույթը (մթերքները սպառելու համար, վարկային, մեքենայական ընկերություններ և այլն)։

Հիմնադիրները այս մասին հայտնում են ագրոնակչությանը ի գիտություն։ Գյուղատնտեսական ընկերություն հիմնելու համար, հարկավոր են ոչ պակաս 5 հոգի, վարկային — ոչ պակաս 50 անդամ։ Հարկավոր է դիմել մոտակա կոոպերատիվների միությանը և խնդրել հրահանգիչ, որը կարողանա գործնական ցուցումներ տալ հիշյալ ընկերությունները հիմնելու համար։ Առաջին հիմնադիր ժողովին կարդացվում է ընկերության կանոնագիրը, որոշվում են նրա նպատակները և հետո ներկա յեղողները հրավիրվում են անդամագրվելու։ Այստեղ ընտրվում են լիազորներ կանոնագիրը գրանցելու համար, որը կատարվում է գյուղատնտեսական ընկերությունների համար գավառային հողային վարչության մեջ, իսկ վարկային ընկերությունների համար գավֆինբաժնում։

Կանոնագրքերը ներկայացվում են գրավոր դիմումի և ցուցակագրված անդամների ցուցակի հետ միասին։

Ընկերության առաջին ժողովը տեղի յե ունենում հաստատված կանոնագիրքը ստանալուց հետո։ Այդ ժողովը որոշում է փայերի վճարելու կարգը, չքավորների վճարների հետաձգման կանոնները և առաջիկա անելիքները։

Առաջին ժողովում ընտրվում է ընկերության վարչությունը (ոչ պակաս 3 հոգուց)։

Նոր ընկերությունն անհրաժեշտ է մտնել տեղական կոոպերատիվների միության մեջ, որոնք կարող են օգնել փողով կամ ապրանքներով, նույնիսկ և գործնական ցուցումներով։ Համարյա թե նույն ձևով էլ պետք է կազմակերպել սպառողական ընկերությունն։ Քննության առնել սպառողական և գյուղատնտեսական ընկերությունների տիպիկ կանոնագրքերը։

Մայրենի լեզու. — Կարդալ օրինակելի կանոնագրքեր զանազան կոոպերատիվային միությունների (սպառողական, կոոպ. ընկերության, մեքենայական արտադրության և այլն), գրի առնել նրանց կազմակերպելու կարգը։ Կազմել դիմումներ՝ ընկերության ցուցակագրելու, անդամ ընդունելու և փոխատվություն տալու համար։

Մաթեմատիկա. — Կարմիր բանակայիններին ամբողջ թվերով կամ կոտորակներով չորս գործողություններին ծանոթացնելու համար կատարել 1-2 վարժություններ։

6. ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀՈՂԻ ԲԵՐՔԸ

Քաղաքագիտություն. — Այն յերկրներում, որտեղ հողագործական կուլտուրան բարձր է յուրաքանչյուր տեղանք հարմարեցվում է իր գյուղա-

կան տնտեսությանը կլիմայի, հողի պայմաններին, նույնիսկ շուկայի պահանջներին։ Այդ յերկրներում վարում են բազմացան տնտեսություն, վորի ժամանակ ամբողջ գյուղատնտեսական հրապարակը վեր է ածվում վարելահողի և հողը ուժասպառ չի լինում. մտցված է բարձր մեքենայական տեխնիկա։ Ամբողջ տնտեսությունը կատարվում է համաձայն գիտության (հողագիտության) ցուցումների։ Մեծ ուշադրություն է դարձվում սերմագործության, թռչնաբուծության և այգեգործության վրա, իբրև յեկամուտի լավ աղբյուրներ։ Հացահատիկների բերքի հետևյալն է՝ Հոլանդիայում 170 փութ դեսյատինից, Բելգիայում 159 փութ, Անգլիայում 147 փութ, Գերմանիայում 132 փութ, Ռուսաստանում 45 փութ․ Ռուսաստանում մի դեսյատինից խոտ է ստացվում 70-80 փ. արտասահմանում 200-300 փութ. յեղջյուրավոր մորթած անասունների քաշը՝ Ամերիկայում 25-38 փութ է, Ֆրանսիայում 20-30 փութ, Գերմանիայում 34-29 փ. Ռուսաստանում 7-18 փ., կովի կաթի քանակը տարեկան Ամերիկայում 300-500 վեդրո, Ռուսաստանում 50-60 վեդրո։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք համեմատում են, թե ինչպես է տարվում տնտեսությունը մեզ մոտ և արտասահմանում։ Կազմել կոնսպեկտ հետևյալ թեմի մասին՝ «Ինչու մեզ մոտ բերքը ցածր է»։

Մաթեմատիկա.— Վերածել ռուսական չափերը մետրիկականի և ընդհակառակը. այս վարժությունը բացատրելիս օգտվել բերքի թվական տվյալներից։ Բացատրել, թե ինչպես է կոտորակը կոտորակի վրա բազմապատկվում (օրինակ, Ռուսաստանում դեսյատինը տալիս է 3/4 տոնն կամ 45 փութ, ինչքան կտա կես դեսյատինը և այլն)։

Բնագիտություն.— Բույսի կազմվածքը (արմատ, ցողուն և տերևներ) վերջիններիս դերը բույսի սննդման գործում։ Ինչպես է հողից հյութ ստացվում։ Հողից ստացած հյութը ինչով կարելի յե լրացնել։ Բնական և արհեստական պարարտումը։ Բերքի կախումը հողի պարարտացնենելուց և մշակման ձևերից։

7. ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՆԵԼ ՀՈՂԻ ԲԵՐՔԸ

(շարունակություն)

Քաղաքագիտություն.— Խորհրդային իշխանությունը գյուղացիների համար ապահովում է այնպիսի հասարակական կազմակերպություն, վորի մեջ գյուղացիները զարգացնում են ինքնագործունեություն։ Հողագիտությունը կսովորեցնի, թե ինչպես բուսցնել այնտեղ յերեք հասկ, վորտեղ բուսնում է մի հատ։ Առանձին յեռանդուն տնտեսները և գյուղերը բարձրացնում են իրենց դաշտերի բերքը։ (Օրինակելի տնտեսություններ կան Վոլոկոլամսկի գավառում, Մոսկվայի նահանգ, կամ տվյալ շրջանում)։

Բարելավված տնտեսությունների և գիտության փորձերը ասում են, վոր առանց կապիտալի ծախսման, միայն հողը լավ մշակելուց կարելի յե բերքը բարձրացնել։ Խամ հողի շատ շուտ հերկելը բարձրացնում է նրա բերքը.

Ըստ մայիսյան վաղ հերկածի-84 փ. ծղոտը 222 փ.
Ըստ հունիսյան » » 76 փ. » 188 փ.

Նույնը կատարվում գարնանացանի հետ։ Աշնանացան հացահատիկը հավաքելուց հետո մեկ ու կես վերշոկ խորությամբ հերկելը, իսկ հետո ավելի խոր աշնանացել տալը բարձրացնում է բերքը ամենապակասը 1 ½ անգամ։ Հետո, յեթե սերմերը հասարակ մաքրող մեքենաների միջով անցկացնել՝ բերքը 10-20 %-ով կբարձրանա։

Հասարակ ցանքսի ժամանակ սերմահատիկը ավելանում է յուրաքանչյուր դեսյատինից վոչ պակաս 3 փթից։ Յեթե հողի լավ մշակման հետ միասին մտցնել բազմացանություն խոտացանությամբ, իսկ հետո առանձին հողեր տալ կարտոֆիլի, գազարի, կորեկի, յեգիպտացորենի լավ մշակելու համար, այն դեպքում առանց մեծ պարարտացում կատարելու բերքը 2-3 անգամ կբարձրանա։

Խոտացանություն, արմատապտուղների և տաք անասնանոցների (գոմեր) վրա յե հիմնված մեր գյուղական տնտեսության ապագան։

Օգտագործել բարձր մեքենայական տեխնիկայի բոլոր առավելությունները մենք առայժմ անկարող ենք։ Տրակտորների թիվը մեզանում տարեց տարի ավելանում է, սակայն ձիուց տրակտորին անցնելը մեզ համար դեռ դժվար է։ Մեր ժամանակակից գյուղում, իր առանձին հողաբաժիններով միջասահմաններով, ձեռնտու չե շատ տեղերում տրակտորներ մտցնելը։ Յերբ գյուղացիք կհասկանան հողի հասարակական մշակման օգուտները, այդ դեպքում տրակտորը արագ կերպով դուրս կշպրտի արորը և ձին։

Տրակտորը կվարի ավելի խորը և արագ, խոնավությունը կմնա հողի մեջ, միջասահմանները վեր կածի բերքի տեղերի, կբարձրացնի բերքը և կազատի կանանց և աշխատող յերեխաներին աշխատանքից ուժասպառ լինելուց. մեքենան հնարավորություն կտա նույնպես և մեծացնելու անասնապահությունը։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք նկարագրում են մեր յերկրի զանազան տեղերը, վորտեղ գյուղացիք իրենց տնտեսությունը լավ հողի վրա յեն դրել։ Գրի առնել ճիշտ տնտեսություն վարելու հիմնական կանոնները (վաղորոք հերկելը, աշնանացել տալը, խոր հերկելը, բազմացանություն և այլն)։

Կարդալ հատվածներ, վորոնք յերևան են հանում մեքենայի դերը և մասամբ տրակտորների։ Կազմել դիմումներ մեքենայական ընկերություններ կազմակերպելու համար։

Մաթեմատիկա.— Հաշվել այն գյուղացու օգուտը, վորն իր տնտեսությունը վարում է հողագիտության բոլոր ցուցումներով (համեմատել մի դեսյատին լավ և վատ մշակված հողի բերքը։ Վարժեցնել կոտորակների միմիանց վրա բաժանման և բազմապատկման կանոնները։ Համեմատել մարդու, ձիու և տրակտորի ուժերը (տալ հասկացողություն «ձիու ուժ» կոչված տերմինի մասին)։

Գրի առնել և կազմել աղյուսակ տրակտորի և գութանի աշխատանքի վերաբերյալ։ Հիշյալ հաշիվները անելիս վարժեցնել հասարակ կոտորակների և թվերի բաժանման և բազմապատկման գործողությունների մեջ։

Բնագիտություն.— Ինչպես է բույսը սննդվելիս հողից առնում մի բան և տալիս մի ուրիշը։ Բակլայի բույսերը և նրանց բորակածին թզնիկը։ Պաղարմատի նշանակությունը բազմացանի ժամանակ։ Կուլտուրայի փոփոխելը և սննդատու նյութերի պահպանումը. յերաշտի դեմ պայքարելը. ինչպես հողը յերկար ժամանակ խոնավ պահել։

9. ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

Քաղաքագիտություն.— *Աղքատ և միջակ գյուղացիությունը կազմում է գյուղի ճնշող մեծամասնությունը։*

Խորհրդային իշխանությունը հենվում է գյուղի աղքատ և միջակ խավերի վրա, նրանց ամեն տեսակի աջակցություն է անում, ոգնում է աղքատների և միջակների կազմակերպություններին ընդդեմ կուլակների։

Գյուղական հասարակական փոխադարձ ոգնության կոմիտեն ամենահզոր զենքն է աղքատ և միջակ խավերի ձեռքում կուլակների դեմ պայքարելու համար։ 1924 թվի Գ. Հ. Փ. Ո. Կ.-ի հաստատված կանոնագիրը հնարավորություն է տալիս այդ կազմակերպություններին ոգնելու աղքատների տնտեսությանը, կազմակերպությունների միջոցով բարելավելու միացած գյուղացիների դրությունը և ոգնելու գյուղացիական տնտեսությունների կոոպերատիվային միացումներին։ Գ. Հ. Փ. Ո. Կ.-երը նախ և առաջ կազմակերպություններ են, վորոնք հիմնված են գյուղացիական ինքնագործունեության վրա։ Քննել Գ. Հ. Փ. Ո. Կ.-ի կանոնները։

Մայրենի լեզու.— *Կարդալ քաղվածքներ Գ. Հ. Փ. Ո. Կ.-ի կանոնագրքից նույնպես և լրագրային հաղորդագրություններից, վորոնք լուսաբանում են գյուղի փոխադարձ ոգնության կոմիտեների գործունեությունը։ Կազմել անհատական գրավոր աշխատանք նամակի ձևով լրագրի համար հետևյալ թեմայի շուրջը «Ինչպես Գ. Հ. Փ. Կ.-ն պետք է ոգնի աղքատին և միջակին»։*

Մաթեմատիկա.— *Գրի առնել Գ. Հ. Փ. Ո. Կ.-ի թվական աճման տվյալները և նրանց կազմակերպությունների տնտեսական ձեռնարկությունների մեջ շրջանառության միջոցների աճման քանակը։*

10-11. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքագիտություն.— *Մեր գյուղական տնտեսությունը ծանր կերպով տուժում է բնական աղետներից։ Մինչև պատերազմը միջին թվով Ռուսաստանի գյուղերում տարեկան 75.000 հրդեհներ եր լինում, վորի շնորհիվ վոչնչանում եր 100 միլիոն ռուբլուց ավելի ժողովրդական գույք։*

Հրդեհային գումակների քայքայումը և ուրիշ շատ նման բաներ պատերազմի տարիների ընթացքում մեր գյուղը ավելի վտանգավոր հրդեհի առաջ դրեցին։ Կարկտահարությամբ վոչնչանում եյին «միջին թվով», ամեն տարի կենտրոնական Ռուսաստանում, մինչև 200,000 դեսյատին ցանքսեր, իսկ Ուկրայնայում և Կովկասում մինչև 360,000 դեսյատին։ Խոշոր վնաս է հասցնում գյուղական տնտեսությանը նաև կենդանիների ցավը (ազարը)։ Գյուղական տնտեսությունը վնասներից ապահովելու և այդ աղետների դեմ պայքարելու համար պետք է ամբողջ ունեցվածքը (կարողությունը) ապահովագրել։

Ամբողջ ապահովագրման գործը հանձնված է պետական կազմակերպություններին — պետապահովությանը, վորը համամիության բոլոր շրջաններում ունի իր բաժանմունքները և ներկայացուցիչները (ագենտները)։ Պետական ապահովագրությունը պահպանում է տնտեսության կայունու-

թյունը, պայքարում է կուլակներին ստրուկ դառնալու և բնական աղետների դեմ (հրդեհ, հեղեղ, յերաշտ և այլն)։

Խ. Ս. Հ. Մ.-ի պետական ապահովագրությունը հիմնականորեն տարբերվում է կապիտալիստական յերկրների ապահովագրման ձևերից նրանով, որ մեզ մոտ հարստանալու նկատառումներ չկան։

Ապահովագրման վճարից մնացորդը գնում է (ծախսվում է) հակահրդեհային ոգնության, դաշտերի վնասատուների դեմ պայքարելու, անասունների հիվանդությունների և այլ գյուղատնտեսական միջոցների համար։ Խորհրդային իշխանությունը պարտադիր ապահովագրություն է մտցրել՝ հրդեհի, ցանքսերի, յեղջյուրավոր անասունների, ձիերի և կամավոր (до-страховка)։ Պարտադիր ապահովագրումը անհրաժեշտ է հետևյալ նկատառումով.

1) Գյուղացիության մեծ մասը դեռ ընտելացած չէ կամավոր ապահովագրման.

2) Ապահովագրման գործի ընդմիջումները պատերազմի տարիներում.

3) Մեր գյուղերի ցիրուցան դրությունը, ճանապարհների վատությունը և տեղափոխության միջոցների պակասությունը դժվարացնում է անհատների կամավոր ապահովագրությունը.

4) Ապահովագրման գործը վարելու և վնասվածներին ոգնելու համար անհրաժեշտ է դիզել բավականին միջոցներ. պարտադիր ապահովագրման դեպքում ապահովման նորման մեծ չէ, շինությունների գնի 10 մինչև 40 %.

Պետությունը հաշվի յէ առնում գյուղացիական տնտեսության կարողությունը. նա չի կարող աշխատավորներից վերցնել բարձր ապահովագրական վճարներ։

Կամավոր ապահովագրությունը կարող է բարձրացնել պաշտպանության նորման համարյա մինչև լրիվ արժեքին։ Կոլլեկտիվ կամավոր ապահովագրման դեպքում 10 % զեղչ է արվում։ Կամավոր ապահովագրման ոգուտները, ապահովագրման վճարների նորմանները (պարտադիր և կամավոր) տվյալ շրջանում։

Կարմիր բանակային-արձակուրդավորը ուսուցչի, գյուղատնտեսի, Ռ. Կ. Կ. (Բ) և Կոմսոմոլի բջիջի հետ միասին պետք է ոգնի պետությանը և գյուղացիությանը ապահովագրման գործում, նամանավանդ կամավոր ապահովագրման դեպքում։ Ինչպես է կատարվում կամավոր ապահովագրումը։ Շրջգործկոմների, Գյուղխորհուրդների և կոոպերացիայի մասնակցությունը պետապահովագրման գործում։

Մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք նկարագրում են հրրդեհներից առաջացած աղետները, նույնպես և հոդվածներ, վորոնք ընդգծում են գյուղացիական տնտեսության ապահովագրման նշանակությունը հրդեհի կամ այլ բնական աղետների դեպքում։ Գրի առնել զրույցի գլխավոր մտքերը. պետական ապահովագրման դերի և կարողությունը ապահովագրելու կարգի մասին։ Կազմել դիմումներ ապահովագրող ագենտին կարողությունը պարտադիր նորմայից բարձր ապահովագրելու համար։

Մաթեմատիկա.— Տարեկան ապահովագրման արժեքի որինակելի հաշվել՝ կարողության տարբեր գնահատականների դեպքում։

Բացատրել տոկոսների ճիշտ հաշվելու կարգը, վորի ժամանակ ոգտվել ապահովագրման արժեքի թվական տվյալներից։

12. Ռ. Կ. Կ (Բ) ԲՋԻՋԸ

Քաղգրագիտություն.— *Ռ. Կ. Կ. (Բ) բջիջը գյուղում ունի իր հիմնական խնդիրը. այն է՝ ամրացնել կուսակցության կապը գյուղացիական մասսաների հետ, բատրակների, աղքատների և միջակների ամենալայն ելեմենտներին համախմբել իր շուրջը: Գյուղական Ռ. Կ. Կ. (Բ) բջիջները ակտիվ մասնակցություն են ցույց տալիս գյուղական և հասարակական կազմակերպություններում: Նա աշխատում է ազգաբնակության գյուղատնտեսությունը և կուլտուրական մակարդակը բարձրացնել: Նա մասնակցում է շրջանային բյուջեի, գյուղատնտեսական օգնության, հողաշինարարության, հողի բարելավման, անասնաբուծության, տեղական դատարանի, դպրոցի, խրճիթ-ընթերցարանի, լրագրների տարածելու, կարդալու և այլ հարցերին:*

Կարմիր բանակային—արձակուրդավորը պետք է ուժեղ կերպով կապվի իր գյուղի Ռ. Կ. Կ. (Բ) բջիջի հետ:

Մայրենի լեզու.— *Կարդալ նյութեր, վորոնք լուսաբանում են Ռ. Կ.-Կ. (Բ) բջիջի խնդիրները և գործունեությունը գյուղում:*

Գրի առնել բջիջի կարեվոր խնդիրները գյուղի աշխատանքում:

Գրել դիտողություններ հետևյալ թեմայի շուրջը «Արձակուրդավոր, ամրացրու կապը Ռ. Կ. Կ. (Բ) բջիջի և գյուղացիության հետ»:

Մաթեմատիկա.— *Գրի առնել Ռ. Կ. Կ. (Բ) աճման տվյալները և անդամների քանակը ըստ սոցիալական դրության:*

13. Ռ. Լ. ՅԵ. Կ. Մ ԲՋԻՋԸ

Քաղգրագիտություն.— *Կոմյերիտմիության կազմակերպությունների խնդիրն է գյուղում միացնել և դաստիարակել գյուղական յերիտասարդության լայն մասսան, այն է՝ բատրակների, աղքատների և միջակների ամենագիտակից մասին, վորոնց համար Ռ. Լ. Յե. Կ. Մ. դռները բաց են: Կոմյերիտմիությունը մասնակցում է բոլոր հասարակական հիմնարկություններում, կազմակերպում է խմբակներ և դպրոցներ գյուղական յերիտասարդների համար. գյուղական աշխատանքին մասնակից է անում գյուղի աղջիկներին, պատանիներին, կազմակերպում է պիոներական ջոկատներ: Ռ. Լ.-Կ. Յե. Մ.-ը աշխատում է Ռ. Կ. Կ. (Բ)-բջիջի ղեկավարությամբ: Կարմիր բանակային արձակուրդավորը պետք է ուժեղ կերպով կապվի Ռ. Լ. Յե.-Կ. Մ.-ի բջիջի հետ գյուղում:*

Մայրենի լեզու.— *Կարդալ հոդվածներ. վորոնք նկարագրում են: Ռ. Լ. Յե. Կ. Մ.-բջիջի խնդիրները և գործունեությունը գյուղում:*

Գրի առնել գյուղական Ռ. Լ. Յե. Կ. Մ.- բջիջի աշխատանքի կարեվոր խնդիրները:

Մաթեմատիկա.— *Գրի առնել Ռ. Լ. Յե. Կ. Մ.-ի անդամների և աճման թիվը գյուղերում և քաղաքներում:*

14. ՏՈՒՆ ԱՐՁԱԿՎՈՂ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ

Քաղգրագիտություն.— Կարմիր բանակում բանվորները և գյուղացիները ստանում են ռազմական և քաղաքական պատրաստականություն, սովորում են գրագիտություն և հասարակական աշխատանքի փորձեր են ձեռք բերում։ Կարմիր բանակը գիտակից ռազմիկ — քաղաքացիների համար դպրոց է։ Այդպիսի քաղաքացիների կարիքը մեծ է մեր գյուղերում։ Գյուղին հարկավոր են գրագետ և խորհրդային իշխանությանը հավատարիմ մարդիկ, վորոնք միշտ պատրաստ լինեն անձը նվիրելու խորհրդային հասարակարգ կազմակերպելու գործին։ Նրանք պետք է օրինակելի լինեն, գյուղական տնտեսության մեջ, հողի նոր ձևի մշակման գործում։ Կարմիր բանակային— արձակուրդավորը պետք է խորհրդային իշխանության կառուցողը և պաշտպանը լինի գյուղում։ Նա խրճիթ-ընթերցարաններին կից ռազմական անկյուններում ազգաբնակչության մեջ պետք է ռազմական պրոպագանդա մղի։

Կարմիր բանակային— արձակուրդավորը հասարակական կազմակերպությունների մեջ իր մասնակցությամբ պետք է օգնի դպրոցին և խրճիթ ընթերցարաններին։ Նա իր օրինակելի տնտեսությամբ պետք է համոզի գյուղացիությանը, վոր Կարմիր բանակը ներկայացնում է իրենից ամենալավ դպրոցը ոգտավետ, գիտակից ռազմիկ— քաղաքացիների համար։

Մայրենի լեզու.— Կարդալ հոդվածներ և թղթակցություններ, վորոնք լուսաբանում են կարմիր բանակայինի պարտականությունները գյուղ վերադառնալիս։ Տրված նյութերի բանավոր պատմածքների և կապի բյուրոյին ուղղած նամակների միջոցով ծանոթանալ զորացրման յենթարկված կարմիր բանակայինների գործունեության հետ։ Կազմել թղթակցություններ պատի լրագրի համար զորացրման յենթարկված կարմիր բանակայինների պարտականությունների մասին գյուղում։

15. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մեր տնտեսության բարելավումն ամբողջովին կախված է ազգաբնակչության կուլտուրական մակարդակի բարձրացումից և նրա անգրագիտության վերացումից։ Չը նայած պետությունը մեծ ծախսեր է անում ժողովրդական կրթության համար, բայց այնուամենայնիվ գյուղացիության օգնությունը գյուղի դպրոցին անհրաժեշտ է։ Կարմիր բանակային արձակուրդավորը պետք է օրինակ լինի մյուս գյուղացիների համար դպրոցական գործին օգնելու մեջ։ Դրա հետ միասին հարկավոր է մասնակցություն ցույց տալ դպրոցների ծնողական ժողովներում, վորոնք կծանոթացնեն գյուղացիներին նոր խորհրդային աշխատանքի դպրոցների խնդիրներին։ Հարկավոր է նաև օգնել ուսուցչությանը նրա դժվարին գործում։ Մեծահասակ ազգաբնակչության մեջ անգրագիտության վերացման գործում մեծ դեր են խաղալու «Կորչի Անգրագիտությունն Ընկերության» բջիջը։

Կարմիր բանակային— արձակուրդավորը պետք է այդ ընկերության

ակտիվ մասնակցողներից լինի, իսկ վորտեղ չկան այդպիսի ընկերություններ հարկավոր է կազմակերպել։ Անհրաժեշտ է կատարել ընկ. Լենինի պատգամները։

«Հոկտեմբերյան հեղափոխության 10—ամյակին՝ վերջ տալ յերկրի 14 միլիոնավոր մեծահասակ ազգաբնակչության մեջ անգրագիտությանը»։ Չափազանց կարևոր է մասնակից անել գեղջկուհիներին դպրոցական ժողովներին և անգրագիտության վերացման գործին։

16. ՎԵՐՋ

Քաղգրագիտություն.— Գյուղի կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում, առանց վորի անհնարին է անտեսական բարելավումը, խրճիթ-ընթերցարանը պետք է խոշոր դեր խաղա։ Շրջանային խրճիթ-ընթերցարանը պետք է քաղլուսաշխատանքի հենակետը լինի տվյալ շրջանում և միացնի իր շուրջը գյուղի բոլոր կուլտուրական ուժերը— այն է՝ ուսուցիչներին, գյուղատնտեսներին, բժշկին և արձակուրդավոր կարմիր բանակայիններին։ Գավառական խրճիթ-ընթերցարանը գավառակում պետք է ղեկավարի բոլոր գրադարանների, լիկկայանների, խմբակների և ուրիշ կուլտ—լուս. հիմնարկությունների գործունեությունը։ Խրճիթ-ընթերցարանի ռազմական անկյունը ռազմական պրոպագանդա մղելու համար է գյուղում։ Ռազմական անկյան կից կազմվում է Ավիոքիմի բջիջ, վորին կից հարկավոր է յերկրային մասերի փոփոխական և Նախակոչիկներից կազմել միջուկ։ Կարմիր բանակային արձակուրդավորը խրճիթ-ընթերցարանի ռազմական անկյան ակտիվ անդամներից պետք է լինի։ Ռ. Կ. Կ. (բ) և Ռ. Լ. Յ. Ե. Կ. Մ-ի բջիջները, կոոպերացիան և այլ կազմակերպությունները իրենց կուլտուրական աշխատանքները կապում են խրճիթ-ընթերցարանի աշխատանքի հետ։ Ամենակարևոր աշխատանքը խրճիթ-ընթերցարանում պետք է լինի տեղեկատու (справочная) (բառիս լայն մտքով) աշխատանքը։Այդ նպատակի համար պետք է կազմակերպել տեղեկատու սեղան։ Աշխատանքը պետք է հենված լինի գրադարանի խրճիթ-ընթերցարանի, հասակավորների դպրոցների հաստատված միջուկի վրա։

Խրճիթ-ընթերցարանի գործունեությունը ուժեղացնելու համար նրան կից կազմվում է տեղական գյուղացիությունից և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից խորհուրդ։

15-16 զրույցների զուգընթաց մայրենի լեզու.— Կարդալ հատվածներ, վորոնք նկարագրում են կրթության նշանակությունը։ Կազմել դիմումներ դպրոցը մտնելու համար։ Գրի առնել զրույցի հիմնական մոմենտները։

Կարդալ լրագրներում նյութեր, վորոնք ազդում են խրճիթ-ընթերցարանների աշխատանքի վրա գյուղում։ Կազմել օրինակելի լոզունգներ խրճիթ-ընթերցարանի համար։

Մաթեմատիկա.— Գրի առնել Ս. Խ. Հ. Մ-ում կրթության ծախսերի տվյալները, սովորողների թիվը և դպրոցների թիվը։ Կազմել օրինակելի նախահաշիվ խրճիթ-ընթերցարան և գրագիտության դպրոց կազմակերպելու համար։ Նախահաշիվը կազմել թվաբանական չորս գործողություններով հասարակ և տասնորդական կոտորակների միջոցով։

17—18. ՌԱԶՄԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քաղաքագիտություն.— *Կարմիր բանակի ուժը աշխատավոր ազգաբնակչության հետ սերտ կապի մեջն է։ Մեզ դեռ յերկար ժամանակ հարկավոր կգա ուժեղ Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանության համար։ Կարմիր բանակային—արձակուրդավորը պետք է կապ հաստատի Կարմիր բանակի և գյուղի աշխատավորների միջև, նա պետք է ռազմական գործի պրոպագանդա մղի ազգաբնակչության մեջ յերկրի պաշտպանության ընդունակությունը բարձրացնելու նպատակով։ Կարմիր բանակային արձակուրդավորը մասնակցում է խրճիթ-ընթերցարանին կից, ռազմական անկյան աշխատանքներին, բացատրում է Կարմիր բանակի անհրաժեշտության և նշանակության, նրա նիստ ու կացի և ուսուցման մասին։ Ամենագլխավորը, վորը կարմիր բանակային—արձակուրդավորը պետք է անի ռազմական պրոպագանդայի համար գյուղում—այդ այն է, վոր նա իր անմիջական մասնակցությամբ Խորհրդային իշխանության շինարարական գործում և տնտեսության բարելավման մեջ ցույց տա գյուղացիներին, վոր Կարմիր բանակը գիտակից ռազմիկ քաղաքացիների համար դպրոց է։*

Մայրենի լեզու.— *Կարդալ քաղվածքներ անկյուններին վերաբերող վորոշումներից, ծանոթանալ լրագրային հաղորդագրություններին, վորոնք լուսաբանում են ազգաբնակչության մեջ տարվող ռազմական պրոպագանդայի աշխատանքի ընթացքի մասին։ Կոլեկտիվ կերպով կազմել և գրել ղեկավարության համար փոքրիկ հուշատետր «Ինչպես կազմակերպել ռազմական անկյուն»։*

19. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ —ԱՐՁԱԿՈՒՐԴԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

Քաղաքագիտություն յեվ մայրենի լեզու.— *Մանրամասն բացատրել «Արտոնությունների մասին օրենքների կոդեկսը», վորը հրատարակված է Խ. Ս. Հ. Մ.-ի Ռ. Հ. Խ.-ի № 1520 17/XII 24 թվի հրամանում։ Կարդալ և գրել հիմնական արտոնությունները և առավելությունները։*

20. ԿԱՊԸ ԶՈՐԱՄԱՍԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԵՏ

Քաղաքագիտություն.— *Գյուղում կարմիր բանակային արձակուրդավորին չափազանց կարևոր է և հետաքրքիր ունենալ տեղեկություններ նորեկ կարմիր բանակայինների գործնական աշխատանքի, դաստիարակության և նախապատրաստման մասին։ Դրա հետ միասին կարմիր բանակային արձակուրդավորին իր առօրյա աշխատանքի ընթացքում հարկավոր են խորհուրդ և ընկերական օգնություն. այս բոլորը նա միշտ կգտնի իր զորամասի կազմակերպություններում։ Զորամասերում կազմվում են կապի*

հանձնաժողովներ, որոնք կապ են պահում կարմիր բանակային արձակուրդավորի հետ։ Տվյալ զորամասի հանձնաժողովի աշխատանքը։

Զորամասի հետ կապ ունենալը նշանակում է կապվել ամբողջ Կարմիր բանակի հետ։ Այն կարմիր բանակայինները, որոնք, իրենց իսկական ծառայությունը Կարմիր բանակում վերջացնելուց հետո գնում են տուն, նրանք չպետք է մոռանան, որ ազատ ժամին կարող են նորից կանչվել երկրի պաշտպանության համար։ Ուստի արձակուրդավորի կապը Կարմիր բանակի հետ պետք է լինի ամուր և մշտական։

Մայրենի լեզու.— Գրի առնել զորամասի հասցեն։

Ագիտպրաժնի պետի տեղակալ՝ **Բ. ԶՈՐԻՆ**

Դպրոցական ծրագրային մասի պետի պաշտոնակատար **ՇՈՒԲԻՆ**

«Հաստատվում է»
8 հուլիսի 1925 թ.
Առժողկոմի տեղակալ
յեվ ԲԳՎԻՆ ՌՄ Վար-
չության պետ՝
Զ. Սալավյով

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1-ԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Ա. ՁՄԵՌ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 15—ՄԱՅԻՍԻ 1-Ը) 22 ՇԱԲԱԹ

1-ԻՆ ԿՈՄՊԼԵՔՍԸ. ԶՈՐԱՆՈՑ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

(6 ԹԵՄԱ—10 ԺԱՄ)

1. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆ ԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1 ԺԱՄ)

Պարզել, թե ուղխորհրդայում գտնվող կարմիր բանակայինները առողջության մասին ինչքան գաղափար ունեն և ինչ գիտեն առողջապահությունից: Համեմատել հայրենի գյուղի սանիտարական դրությունը զորանոցի կենցաղի հետ: Բժշկություն և հիվանդության նախազգուշությունը: Սանիտարական կրթության նշանակությունը հիվանդություններից նախազգուշանալու համար: Սանուսուցման նպատակը և բովանդակությունը:

2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարմնի առողջապահություն. կաշվի խնամումը—լվացվելը, թաց շորով շփվելը, բաղնիք, ձեռքերի լվանալը (քրտնոտություն, ճաքճքություն), յեղունգների մաքրությունը: Մազերի խնամք (խուզելը), բերանի խոռոչի խնամք (ատամների մաքրելը, վողողելը, ատամների բժշկելը), խնամք աչքերի (տրախոմա), ականջների և քթի: Մարմնական քննությունների նշանակությունը, քուն, վոջլոտություն, հագուստի մաքրություն (շորերը, սպիտակեղեն, վոտքի փաթաթան, վոտնաման):

3. ԶՈՐԱՆՈՑԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Զորանոցում կարմիր բանակայինին շրջապատող պարագայի մանրամասն առողջապահական վերլուծությունը: Ինչպես մաքրություն պահպանել, հավաքել, օդը մաքրել: Օդի ծավալը, լուսավորություն, տաքություն: Ննջարան, ճաշարան, խոհանոց, պահեստ (մթերքների և զորքերի), զորանոցի բակը և այլն:

4. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՍՆՈՒՆԴԸ

Կարմիր բանակայինի փայի վերլուծումը: Համառոտ ծանոթություն մարսողական օրգանի կազմվածքի հետ: Ինչպես պատրաստել և պահպանել կերակուրը: Կանոններ, վորոնք պետք է պահպանվեն ուտելու ժամանակ: Հիվանդություններ, վորոնք կապված են սննդի հետ (ընդացավ, ստամոքսա-աղիքային հիվանդություններ), յերիզորդ:

5. ՔԱՂԱՔԸ ՀԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքի և գյուղի շենքերը: Օդը քաղաքում և գյուղում: Ջրի մատակարարումը: Ինչպես կարելի յե անմաքրություններից հեռու մնալ: Փողոցի ազդեցությունը, գարեջրանոց, անառակություն և նրա նշանակությունը վեներական հիվանդություններ տարածելու մեջ:

6. ԶՈՐԱՆՈՑԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ (1 ԺԱՄ)

Զորանոցային կյանքի ազդեցությունը առողջության վրա: Առողջապահական կանոնների պահպանման նշանակությունը հանրակացարանում: Ինչ առողջապահական կանոններ են նախատեսված ներքին ծառայության կանոնադրքում:

2-ՐԴ ԿՈՄՊԼԵՔՍԸ՝ ԱՌՈՂՋ ՅԵՎ ՀԻՎԱՆԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ

(7 ԹԵՄԱ, 12 ԺԱՄ)

1. ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Ընդհանուր հասկացողություն առողջ օրգանիզմի մասին: Բոլոր ներքին սիստեմի և օրգանների համաձայնեցրած աշխատանքը: Առողջության նշանները—նորմալ հասակը, նորմալ սնունդ, աշխատանքի ընդունակություն, լավ տրամադրություն, ախորժակ, քուն: Հիվանդությունը, վորպես նորմալ գործունեության խախտում: Ինչպես են արտահայտվում հիվանդության նշանները: Ինչով է ղեկավարվում բժիշկը հիվանդությունը վորոշելիս: Արհեստական և կեղծ հիվանդություններ:

2. ԻՆՉԻՑ ԵՆ ՊԱՏԱՀՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սնոտիապաշտությունները և նախապաշարմունքները հիվանդությունների ծագման հարցում։ Ինչպես է ազդում շրջապատող միջավայրը մարդու առողջության վրա։ Աշխատանքի և կենցաղի աննպաստ պայմանները։ Վարակիչ հիվանդությունների պատճառները։ Հասկացողություն միկրոբների մասին։ Մարդկանց օգտակար և վնասակար միկրոբները։ Միկրոօրգանիզմների գործունեության վերլուծություն առօրյա կյանքում։ Խմորման և թարախակալման գործողությունները։ Միկրոբների դերը բնության և գյուղական տնտեսության մեջ։ Միկրոսկոպ։ Հիվանդություններ առաջացնող միկրոբները։

3. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես են վարակիչ հիվանդությունները փոխադրվում մի մարդուց մյուսին (շփվելուց, առարկաների միջոցով)։ Միջատները վարակիչ հիվանդությունների փոխադրիչներ են։ Թվել հիվանդություններ, վորոնք անցնում են անասուններից մարդուն (խլացավ, սիբիրական խոց, դաբաղ, կատաղություն)։ Ընդհանուր հասկացողություն այն ճանապարհների մասին, վորոնցով վարակիչ հիվանդությունները անցնում են մարդու օրգանիզմի մեջ (կաշվի միջոցով, շնչառության օրգանների, մարսողական և այլն)։

Ինչպես է օրգանիզմը կռվում հիվանդության դեմ։

4. ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի էպիդեմիան, սանիտարական վերամշակում, առանձնացում, ախտահանություն, պատվաստում, խինիզացիան։ Էպիդեմիաների դեմ պայքարելուց աշխատանքի և կենցաղի առողջացնելուն անցնելը։ Բանակի սանիտարական ապարատը։ Կարմիր բանակայինների ինքնագործունեության նշանակությունը։

5. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԿԱԶԴՈՒՐՎԵԼՈՒ ՄԻՋՈՑ Ե

Ֆիզկուլտուրան Խորհրդային Միության և բուրժուական յերկրներում։ Ինչ բան է ֆիզկուլտուրան։ Ֆիզիքական սիստեմատիկ վարժությունների ազդեցությունը օրգանիզմի վրա։ Առողջության վտանգ է սպառնում ֆիզկուլտուրայի աշխատանքները անկանոն տանելու պատճառով։

Վերլուծություն սպորտի, մարմնամարզության և խաղերի առանձին տեսակների։ Բժշկական հսկողության նշանակությունը։ Ֆիզկուլտուրայի նշանակությունը ԽՍՀՄ պաշտպանողականության բարձրացնելու գործում։

6. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես է բնությունը ներգործում մարդու առողջության և զարգացման վրա։ Ջուրը բնության մեջ, նրա առողջապահական և սանիտարական նշանակությունը։ Օդը և նրա նշանակությունը օրգանիզմի համար։ Շնչա-

ություն: Արեգակի ազդեցությունը առողջության վրա: Ինչպես օգտվել արեգակից: Ջուրը, օդը և արեգակը ինչպես առողջության միջոցներ: Տափաստանները, ծովը, լեռները և առողջությունը: Ինչպես մարդիկ բժշկվում են բնության ուժերով: Կուրորտային գործը ԽՍՀՄ-ում:

7. ԱՌՈՂՋ ՅԵՎ ՀԻՎԱՆԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ (1 ԺԱՄ)

Համեմատություն առողջ և հիվանդ կարմիր բանակայինի: Ինչու համար է հարկավոր կարմիր բանակայինին առողջություն: Բանակի առողջության նշանակությունը նրա մարտունակության համար: Ինչպես պետք է կարմիր բանակայինը ամրացնի իր առողջությունը:

Բ. ԱՄԱՌ (ՄԱՅԻՍԻ 15-ԻՑ – ՈԳՈՍՏՈՍԻ 1-Ը) 10 ՇԱԲԱԹ. 3-ՐԴ ԿՈՄՊԼԵՔՍԸ: ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

(5 ԹԵՄԱ — 10 ԺԱՄ)

1. ԼԱԳԵՐԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Զորամասերի լագեր տեղափոխվելու նշանակությունը: Միջոցներ լագերի տեղը բարելավելու համար: Վրանները, նրանց տեղավորումն ու պահպանումը. կեղտոտությունից պաշտպանել հողը, խոհանոցը, աղբի փոսերը և արտաքնոցները: Ջրի մատակարարումը լագերում: Ինչ միջոցներ են ձեռք առնվում կռվելու համար լագերում հիվանդությունների տարածվելու դեմ: Մալարիա:

2. ԻՆՉՊԵՍ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Համառոտ ծանոթություն կմախքի և արյան շրջանառության որգանների հետ:

Անհատական փաթեթների հետ վարվելու գործնական ուսուցում, ինչպես արյունահոսությունը դադարեցնել: Հակացողության վերքերի տեսակների մասին: Հիվանդության պարալիչով: Վիրակապություն ջարդվածքների դեպքում: Կապերը ինչպես դնել և նրանց պատրաստելը:

3. ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Թունավոր նյութերի ամենագլխավոր խմբակները, նրանց ներգործությունը կենդանի որգանիզմի վրա: Գազային պաշտպանություն: Հակագազեր: Առաջին ոգնությունը գազով թունավորվածներին:

4. ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Նախապատրաստություն յերթի համար։ Ճանապարհի հաշիվը յերթի ընթացքում։ Դադարք, գիշերոթներ, ցերեկոթներ։ Միջոցներ յերթի ժամանակ ուժերի պահպանման համար։ Կարմիր բանակայինի բեռի կանոնավոր բաշխումը և հանդերձանքի հարմարեցնելը։ Վոտնամանների և վոտքերի խնամքը։ Հագուստը յերթում։ Սննդի և ջրի մատակարարումը յերթում։ Տեղերի ընտրությունը կանգնելու համար։ Սանիտարական հետազոտություն։ Տներում և բացօթյայում տեղավորումը։ Կանգնելու տեղում մաքրության պահպանելու միջոցները։ Հատուկ միջոցներ շոգի և ցրտի ժամանակ յերթում։ Ուշագնացություն, արևահարություն և ջերմահարություն, կայծակահարություն, ցրտահարություն, խեղդվածություն։

5. ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ է պահանջում առողջությունից ժամանակակից պատերազմը։ Ինչպես են ազդում մարդու ներվային սիստեմի վրա արտաքին միջավայրի արտակարգ փոփոխությունները, հոգնածությունը և այլն։ Զորամասերի հոգեբանական դրությունը հաղթության համար։ Ուսուցման պարագայից մարտականին անցնելու համար զորամասերի սանիտարական նախապատրաստումը։ Ճակատային և դիրքային կյանքի առողջապահությունը։ Հանգստանալու կարգը մարտական պարագայում։

ՈԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ը

(ԺԱՄԵՐ ՉԵ՛Ն ՏՐՎՈՒՄ)

1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅՆ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ, ՎՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ ՅԵՎ ԴԸԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐՈՒՄ (3 ՊԱՐԱՊ.)

Ինչպես օգնել անհատական փաթեթից (վարժություններ կատարել), ինչպես կանգնեցնել արյունահոսությունը, կապեր դնելը. արհեստական շնչառություն։ Առաջին օգնությունը դժբախտ դեպքերում։ Հիվանդների և վիրավորվածների տեղափոխելը։ Գետնից բարձրացնելը (հիվանդին կամ վիրավորվածին) և սայլից վերցնելը։ Վիրավորվածներին ձեռքերի վրա տեղափոխելը։ Պատգարակներ և նրանց սարքելը, հասարակ պատգարակներ։ Տեղափոխություն սայլերի և ավտոմոբիլների վրա։ Վարժություն վիրավորվածներ տեղափոխելու մեջ։

2. ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ (1 ԶՐՈՒՅՑ)

Ծանոթանալ զորամասի տեղավորման և զորաշարժումների շրջանների սանիտարական դրության հետ։ Ինչ է սպառնում զորամասերին ազգաբնակչության մեջ վարակիչ հիվանդությունների տարածումը։ Սանհետախուզության կազմակերպումը։

3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ (3 ԺԱՄ)

Սեզոնի վարակիչ հիվանդություններ. ստամոքսա-աղիքային հիվանդություններ (ամառվա փորլուծություն, դեզինտերիա, փորահարինք, խոլերա), մալարիա, պարատիֆ տիֆեր։ Տալ լուսաբանություն տեղական հիվանդությունների մասին։

2-ՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Ա. ՁՄԵՌ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 1-Ը) 22 ՇԱԲԱԹ

4-ՐԴ ԿՈՄՊԼԵՔՍԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

(4 ԹԵՄԱ — 8 ԺԱՄ)

1. ԻՆՉՊԵՍ Է ԱՇԽԱՏՈՒՄ ՄԱՐԴԸ (3 ԺԱՄ)

Համեմատություն կենդանի և անշունչ մեքենայի։ Կմախքի նշանակությունը մարդու շարժումների համար։ Հոգնածություն և հանգիստ։ Հոգնածության պատճառը և նշանները։ Ինչ միջոցներով է կռվում օրգանիզմը հոգնածության դեմ և ինչպես է նոր ուժեր հավաքում աշխատանքի համար։

2. ԻՆՉՊԻՍԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՄԱՐՏԻԿԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՔ ՄՇԱԿՎՈՒՄ

Ինչպես են մշակվում մարդու մեջ սովորությունները։ Ռազմական գործի համար օգտակար հատկություններ և սովորություններ (ճշտություն, արագություն, ճարպկություն և այլն։) Առանձին հատկությունները հրաձիգի, ձիավորի, սակրավորի, թռչողի, հրետավորի, կապ պահողի։ Ինչու բանակում կարմիր բանակայիններին չափում են և դիտում նրա զարգացմանը։

3. ԻՆՉՊԵՍ Է ԱԶԴՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Օրգանիզմի աշխատանքը շարքային ուսուցման ժամանակ. քայլերը, վազքը, հրացանով վարժությունները, նետելը, ձիով յերթը և այլն։ Օրգանիզմի հարմարվելը լարված աշխատանքի համար։ Պարապմունքների կանոնավոր դասավորելու նշանակությունը։ Կանոնավոր ռեժիմը զորամասում և նրա նշանակությունը մարտիկի առողջության պահպանման համար։

4. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Ինչպես են ազդում օրգանիզմի վրա տարբեր պրոֆեսիաները։ Հիվանդություն և մահացություն նույն պրոֆեսիայի և աշխատանքի սանիտարական դրությունը. գյուղացու և բանվորի աշխատանքը։ Աշխատանքի սանիտարական պահպանությունը Ս.Ս.Հ. Մ-ում. տարբեր տեսակի զորամասերի ծառայության ազդեցությունը առողջության վրա։

5-ՐԴ ԿՈՄՊԼԵՔՍԸ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

(6 ԹԵՄԱ. 14 ԺԱՄ)

1. ՄԱՐԴԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՂԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (3 ԺԱՄ)

Միաբջիջ և բազմաբջիջ օրգանները։ Բազմացումը բնության մեջ։ Ինչպես են մարդիկ առաջացել երկրագնդի վրա։

2-3. ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ (5 ԺԱՄ)

Սեռական նշանները. հասկացողություն ներքին սեկրեցիայի մասին։ Սեռական կյանքի առողջապահությունը։ Ամուսնություն. Անառակություն. Վեներական հիվանդություններ. Սիֆիլիս, բարաակ, կակուղ շանկր. վեներական հիվանդությունների դեմ կռվելու միջոցներ։ Սեռական հարցը Կարմիր բանակում։

4. ԻՆՉՈՎ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԻՐԵՆՑ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ (2 ԺԱՄ)

Ալկոհոլիզմ. ինչն էր հրում ժողովրդական մասսաներին դեպի հարբեցողությունը։ Ալկոհոլային նախապաշարմունքներ։ Ալկոհոլի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա. Ալկոհոլի վնասը մարտիկի համար. ծխելը։

5. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ (3 ԺԱՄ)

Հիվանդությունը և մահացությունը հասարակության տարբեր դասակարգերի մեջ։ Աշխատանքի և կենցաղի պայմանները կապիտալիստական աշխարհում։ Հասկացողություն սոցիալական հիվանդությունների մասին. Թոքախտը, իբրև օրինակ սոցիալական հիվանդության։ Ինչպես է թոքախտը առաջ գալիս, թոքախտի դեմ կռվելու միջոցներ։ Շահագործող դասակարգերի ոչնչացումը և [illegible]։ Կոմունիստական հասարակարգը իբրև պայման աշխատավորների կազդուրման համար։

6. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ (1 ԺԱՄ)

Աշխատավորների ակտիվ մասնակցությունը առողջապահության գործում իբրև հիմնական սկզբունք Խորհրդային բժշկության։ Հիվանդությունների նախազգուշացումը և կենցաղի ու աշխատանքի առողջացումը։ Աշխատավորների մասնակցության ձևերը Հ. Ս. Խ. Մ-ի առողջապահական գործում։

Բ. ԱՄԱՌ (ՄԱՅԻՍԻ 15—ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ը)
22 ՇԱԲԱԹ

6-ՐԴ ԿՈՄՊԼԵՔՍԸ· ԳՅՈՒՂԸ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

(15 ԹԵՄԱ—10 ԺԱՄ)

1. ԻՆՉ Ե ՍՈՎՈՐԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆ ԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անցածի արագ կրկնողությունը և ամփոփումը։ Առանձին ուշադրություն անձնական և հասարակական առողջության վրա։

2. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Նախապաշարումները և սնոտիապաշտությունները առողջության ասպարեզում. կախարդության ծագումը. կրոնը և կախարդությունը։ Տարբերությունը բժշկի և կախարդի մեջ։ Կախարդության տված վնասը։ Ժամանակակից բժշկության նվաճումները։

3. ՄԵՐ ԳՅՈՒՂՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Գյուղի բարեկարգությունը։ Բնակարանային շինարարությունը գյուղում։ Ժամանակակից խրճիթի թերությունները և նրանց վերացնելու միջոցները։ Գյուղական դպրոցը և նրա պակասությունները։ Գյուղի ջրի մատակարարումը։ Ջրհորների կանոնավոր կառուցումը և նրանց պաշտպանությունը։ Ինչպես հավաքել կեղտոտությունը և թափել։ Գյուղի ընդհանուր սանիտարական դրությունը։

4. ԳՅՈՒՂԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ· ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՑԻՑ ԱԶԱՏՎԵԼ

Յերեխաների մահացությունը գյուղում և նրա դեմ պայքարելը։ Բժշկական խորհրդատվությունները (консультация), *մսուր, վարակիչ հիվանդությունները։ Պայքար մաքրության համար։*

Նախազգուշացման և առողջապահական միջոցները։

5. ԱՐՋԱԿՈՒՐԴԱՎՈՐԻ ԽՆԴԻՐԸ ԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ազգաբնակչության ինքնագործունեության ձևերը։ Գավառակային սանիտարական խորհուրդները։ Գյուղական սանիտարական հանձնաժողով-ները։ Նրանց խնդիրները և աշխատանքը։ Պայքար նոր կենցաղի համար։ Պայքար սիֆիլիսի և ալկոհոլիզմի դեմ։ Աշխատանք խրճիթ ընթերցարանում։ Սանիտար-լուս աշխատանքը գյուղում։ **Թեմայից դուրս—գործնական վար-ժություններ առաջին օգնություն ցույց տալու վերաբերյալ:**

«Հաստատում եմ»
Բաղբաժնի պետի տեղա-
կալ Վ. Ծովյան
«10» նոյեմբերի 1925 թ.

ԾՐԱԳԻՐ

ԱՆԳՐԱԳԵՏ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

1.-ԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Նախնական զրույց գրագիտության նշանակության մասին։ Ծանոթանալ սովորող կարմիր բանակայինների հետ։ Գրել տետրակների վրա սովորող կ. բ.-ների անունը և ազգանունը։

Մայրենի լեզու.— *Խոսքը բաղկացած է նախադասություններից, նախադասությունները՝ բառերից։ Հիշել «Բանակը, ուժ է, մեր, ուժն է»։ Արտանկարել հիշված բառերը գրատախտակից։*

Զրույց քաղ. լոզունգի. — *Կարմիր բանակը աշխատավորների զինված ուժն է. նա կռվում է խորհրդային հանրապետությունների թշնամիների դեմ։ Կարմիր բանակի պաշտպանությամբ բանվորներն ու գյուղացիները զբաղվում են խաղաղ աշխատանքով։ Կարմիր բանակայինը կանչված է բանակ, վորպեսզի սովորի ռազմական գործը բանվորների և գյուղացիների խաղաղ աշխատանքը պաշտպանելու համար։*

Մշակել յերկաթյա ծրագրի I հատվածի զրույցը։

2-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *Առաջին պարապմունքին անցած նախադասությունների և բառերի արագ և վարժ ընթերցում։ Խոսքը բաժանել նախադասությունների. նախադասությունները՝ բառերի։ Հիշել «Այգա, չունի, կարմիր, ունի» բառերը։ Առաջին և յերկրորդ պարապմունքների ծանոթ բառերից կազմել նոր նախադասություն (որինակ՝ ուժ ունի կարմիր բանակը)։ Արտանկարել «այգա, չունի,» բառերը։*

Զրույց քաղ. լոզունգի. — *Կարմիր բանակը կազմված է բանվորներից և աշխատավոր գյուղացիներից։ Բուրժուաները, տանվտրականները և կու-*

լակները մուտք չունեն բանակ. նրանք զինվորական ծառայությունը տանում են այլ կարգով: Մշակել յերկամյա ծրագրի I հատ. 2-րդ զրույցը:

Մաթեմատիկա.— *Ծանոթացնել I. II և 1, 2 թվապատկերների հետ և արտագրել գրատախտակից:*

3-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *Կարդալ «դասակը դասի է». բաժանել բառերը՝ «դասակը դասի է» բառերը բաժանել վանկերի. դա-սա-կը, դա-սի-է: Ծանոթ բառերից կազմել նոր նախադասություն: Գրատախտակից արտանկարել նույն լոզունգը:*

Զրույց ըստ լոզունգի.— *Անգրագետ և անգիտակից մարտիկը չի կարող լավ յուրացնել ռազմական գործը. նա հաստատ չի կարող իմանալ, թե ում է ծառայում և ում պաշտպանում: Կ. բանակը սովորեցնում է կ. զինվորին ոչ միայն ռազմական գործն, այլև նրան դաստիարակում է քաղաքականապես, այսինքն բացատրում է խորհրդային իշխանության և կապիտալիստական յերկրների քաղաքականությունը և սովորեցնում է նրան գրագիտություն:*

Մաթեմատիկա.— *Տալ III և 3 թվապատկերները և արտագրել:*

4-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2-ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *«Դասակ ու դասակ կազմում են բանակ» լոզունգը կարդալ, լոզունգը բաժանել բառերի և վանկերի: Անցած ծանոթ բառերից կազմել նոր նախադասություններ ու կարդալ ամբողջ դասը: Արտանկարել գրատախտակից վերոգրյալ լոզունգը:*

Զրույց ըստ լոզունգի.— *Բացատրել բանակի կառուցվածքը ջոկից մինչև բանակ՝ ստուգողական հարցերով, կրկնել նախընթաց թեման և մշակել I հատ. 14-րդ զրույցը տալ IV, V և 4, 5-ի թվապատկերները և արտագրել:*

5-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *«Ուզում ես հաղթել, յեղիր կարգապահ» լոզունգը կարդալ. լոզունգը բաժանել բառերի և վանկերի: Բառերի տեղափոխությամբ կազմել նույն լոզունգը, վանկերի բաժանել տեկստի մյուս բառերը: Արտանկարել վերոգրյալ լոզունգը:*

Զրույց ըստ լոզունգի.— *Առանց կարգապահության չկա բանակ. կարգապահության կարեվորությունը ինչպես բոլոր ասպարեզներում՝ այնպես էլ բանակում. առանց նրան բանակը չի կարող հաղթել: Պետը մեր մեծ և փորձված ընկերն է. պետք է կատարել նրա հրամանը. պետն էլ կատարում է մեր իշխանության կամքը:*

Մշակել յերկամյա ծրագրի I հատ. 5-րդ զրույցը:

Մաթեմատիկա.—*Խորացնել* IV, V, *4 և տալ 5 թվապատկերը արտագրելով գրատախտակից։*

6-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*«Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար» լոզունգը կարդալ. լոզունգը բաժանել բառերի և վանկերի։ Կատարել բառերի տեղափոխություն, ստանալով նույն լոզունգը։ Վանկերից կազմել, թե գրավոր և թե բանավոր, իմաստալից նոր բառեր, օգտվելով միաժամանակ անցած դասերի վանկերից։ Արտանկարել լոզունգը.*

Զրույց ըստ լոզունգի.— *Կարմիր բանակում պետք է լինի ընկերասիրություն թե խաղաղ և թե պատերազմի ժամանակ. պետք է լինի նույնպես աշխատանքի համագործակցություն։ Զինվորական գործը լի յե վտանգներով, վոր կարելի յե հաղթահարել ընկերակցությամբ, քաջությամբ և արիությամբ։ Ընկերասեր, արի ու քաջ կարմիր բանակայինը միաժամանակ և շիտակ պետք է լինի։ Ստախոսը օգնում է թշնամուն։*

Մշակել յերկամյա ծրագրի I *հատված 6-րդ գլուխը։*

Մաթեմատիկա.—*Տալ* VI *և 6 թվապատկերները և արտագրել տալ գրատախտակից։*

7-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*«Բանվորի ու գյուղացու ունեցվածքը մերն է» լոզունգը կարդալ։ «Առաջ աղան եր տերը, հիմա մենք» լոզունգը բաժանել բառերի և բառերը՝ վանկերի։ Լոզունգից հատկապես կանգ առնել «աղա» բառի վրա և դուրս բերել «ա,ղ» հնչյունները։ Գրել տետրակներում «աղ. ա-ղա, աղա, աղ, աղա» բառերը և ձեռագիրը։*

Զրույց ըստ լոզունգի.—*Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կ. բանակային խնայողաբար և զգուշաբար վերաբերվի հագուստին, զորանոցին և հատկապես զենքին։ Հագուստը, զենքը, ձին, կահույքը, ժողովրդական գույք են։ Ի՞նչպես պետք է պահել հագուստն ու զենքը։ Ի՞նչ հետեվանքի յե հասցնում մեզ զենքին անփույթ վերաբերվելը հատկապես պատերազմի ժամանակ։ Անփույթ վերաբերվողները պատժվում են օրենքով։*

Մշակել յերկամյա ծրագրի I *հատվածի 7-րդ գլուխը։*

Մաթեմատիկա.—*Տալ* VII, VIII *և 7, 8 թվապատկերները և արտագրել։*

8-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Կ. բանակայինը պետք է մաքրասեր լինի» լոզունգը. բաժանել բառերի և վանկերի։ Կարդալ նաև գրքի վրա ձեռագիր մասը։ Հանել «Ի, Ս» հնչյունները։ Արտանկարել գրատախտակից ձեռագրի մասը։ Արտագրել գրատախտակից «լինի, լի-նի, լինես, լի-նես» բառերը։*

Զրույց ըստ լոզունգի.— Բանակի ռազմունակությունը կախված է ոչ միայն տեխնիկայից, այլև ֆիզիկական ուժից։ Հետևակի ուժը ոտքերի մեջն է։ Առողջ բանակը հաղթության գրավականն է։ Մաքուր ես, առողջ ես, առողջ ես՝ ուժեղ ես։

Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 8-րդ զրույցը։

Մաթեմատիկա.—Տալ X, IX և 9 թվապատկերները և արտագրել։

9-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Կարմիր բանակի գաղտնիքը լավ պահի» լոզունգը և ամբողջ հոդվածը։ Բաժանել բառերի և վանկերի, հանել «ու, ն» հնչյունները։ Գրատախտակից արտագրել «ունես, ու-նես, ունի. ու-նի» բառերը։ Կարդալ ձեռագիր մասը։

Զրույց ըստ լոզունգի.—Զինվորական գործի մեծ մասը հիմնված է գաղտնապահության վրա, խաղաղ և առավելապես պատերազմի ժամանակ։ Մեր թշնամիները հարուստ և ուժեղ են, նրանք միջոց չեն խնայում իմանալու մեր գաղտնիքները և թույլ կողմերը վարձու լրտեսների միջոցով։ Գիտակցաբար թե անգիտակցաբար գաղտնիք հայտնողը բանակի պարտության պատճառն է դառնում։

Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 9-րդ զրույցը։

Մաթեմատիկա.—Տալ 10-ի և 0-ի թվապատկերները։ Բացատրել 0-ի դերը թվի աջ կողմից. արտագրել գրատախտակից։

10-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Հանցանքը պատժվում է, լավ գործը խրախուսվում» լոզունգն ու ամբողջ հոդվածը։ Ծանրանալ վանկած և ձեռագիր տողերի վրա։ Հանել «ը, ե, ր» հնչյունները. արտագրել գրատախտակից «ընկեր. ըն-կեր, սեր, եր, ե, ուներ, ու-ներ, սի-րում» բառերը։ Ցուցադրած հնչյուններից կազմել նոր բառեր։

Զրույց ըստ լոզունգի.— Պետի հրամանները, յուր պարտականությունները չկատարողը, ժողովրդական գույքին անբարեխիղճ վերաբերվողը, պատժվում է օրենքով։ Պատիժների նպատակը. խրախուսանք և պարգևատրում պարտաճանաչ ու քաջարի բանակայիններին։

Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 10-րդ զրույցը։

Մաթեմատիկա.— Կարդալ I-ից մինչև X-ը և 1-10 թվապատկերները, գրել տալ ամեն մեկին գրատախտակի վրա։

11-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Կարմիր բանակայինը քաղաքացի և մարտիկ է» լոզունգը և ամբողջ հոդվածը։ Վանկել և հանել «կ, մ, տ» հնչյուն-

ները։ Արտագրել գրատախտակից «կարմիր, մարտիկ» բառերը և ամբողջ ձեռագիրը։

Զրույց ըստ լոզունգի.—*Կ. բանակայինը նույն քաղաքացին է և օգտվում է բանվորի և գյուղացու բոլոր իրավունքներով՝ ընտրում է և ընտրվում է. ցարի զինվորը զուրկ էր այդ իրավունքներից։ Կ. բանակայինը մասնակցում է իր զորամասի, բանակի և խորհրդային իշխանության շինարարության գործերին. հին զինվորը մեկուսացած ու զրկված էր այդ բոլորից (չեզոքությունը և այլ կապեր)։*

Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 11-րդ զրույցը։

Մաթեմատիկա.—*Տալ 10, 20, 30, 40, 50-ի թվապատկերը և արտագրել գրատախտակից։ Թվերը կապել բանակայինների անմիջական կենցաղին վերաբերող նյութերի հետ կլորացրած հաշիվներով։*

12-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Պետը կարմիր բանակայինի մեծ ընկերն է» լոզունգը և ամբողջ հոդվածը։ Վանկել ու հանել «յե, վ» հնչյունները, արտագրելով գրատախտակից «յեղիր, յե-ղիր, սովորող, սո-վո-րող» բառերը և համապատասխան լոզունգները։*

Զրույց ըստ լոզունգի.—*Պետը և քաղաշխատողները բանակայինի մեծ և փորձված ընկերներն են։ Նրանց խնդիրն է կարմիր զինվորին սովորեցնել ռազմական և քաղաքական գիտելիքները։ Թե հրամքաղկազմը և թե բանակայինները նույն աշխատավորության ծոցից են դուրս յեկած։ Ցարական բանակն այդպես չէր։*

Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 12-րդ զրույցը։

Մաթեմատիկա.—*Տալ 60, 70, 80, 90 թվապատկերները. հիշյալ թվերը կապել դասակներում, վաշտերում, մարտկոցներում, գնդերում յեղած կ. բանակայինների հրամքաղկազմի, պարենի, ձիերի գարու և այլն կլորացրած թվերով հաշիվների հետ։*

13-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (4 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Կարմիր բանակայինի տանը օգնում են» լոզունգը և ամբողջ հոդվածը։ Վանկել ու հանել «ո, գ, բ» հնչյունները։ Արտագրել գրատախտակից լոզունգը և «բոլորը օգնելու յեն բանակայինին» բառերը։ Յերկրորդ օրը գրատախտակից արտագրում են ձեռագիրը (նամակը), վոր մշակված է նախապատրաստական զրույցով։*

Զրույց ըստ լոզունգի.—*Խորհրդային իշխանության ձեռք առած միջոցները կ. բանակայինի ընտանիքներին օգնելու համար։*

Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 13-րդ զրույցը։

Մաթեմատիկա.—*Տալ 11, 12, 13-30 թվապատկերները (վերցնել տարբեր. զորակոչի տվյալներից)։ Ծանոթություն տասնավորի և միավորի մասին։*

14-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Գյուղի նախագահն ազնիվ կարմիր բանակայի տանը» լոզունգը և ամբողջ հոդվածը։ Վանկել ու հանել «գ, լ» հնչյունները։ Գրատախտակից արտագրել լոզունգը, ձեռագիրը և հնչյունները հանելու համար վանկած բառերը։*

Զրույց ըստ լոզունգի.—*Կրկնել և խորացնել յերկամյա ծրագրի I հատվածի 13-րդ զրույցը (անցնել Կ. բանակայինի արտոնությունների մասին)։*

Մաթեմատիկա.—*Կրկնել ու խորացնել անցածը։*

15-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Մեր նոր դասակապետը» լոզունգն ու ամբողջ հոդվածը։ Վանկել ու հանել «հ, չ, գ» հնչյունները։ Արտագրել գրատախտակից «Մեր դասակապետը» լոզունգը, վանկած բառերը և ձեռագիրը։*

Զրույց ըստ լոզունգի.—*Կրկնել յերկամյա ծրագրի I հատվածի 12-րդ զրույցը և ծանոթություն տալ Հայկ. Ռազմաքաղաքական դպրոցի մասին։*

Աշխարհագրություն.—*Ցույց տալ ԽՍՀՄ քարտեզը, ընդհանուր ծանոթություն քարտեզի մասին։ Գտնել Հայաստանը, վորտեղից դասակները գնացել են Մոսկվա։*

16-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Կարմիր բանակը աշխատավորի հարազատ զավակն է» լոզունգն ու ամբողջ հոդվածը։ Վանկել ու հանել «զ, ք, ծ» հնչյունները, արտագրել գրատախտակից «կարմիր բանակը աշխատավորի զավակն է» լոզունգը, վանկած բառերը և ձեռագրերը։*

Զրույց ըստ լոզունգի. *Մշակել յերկամյա ծրագրի I հատվածի 2-րդ զրույցը (խորացնել). համեմատել հին և նոր բանակները։ Հրամքաքկազմը և Կ. բանակայինները—բոլորն էլ աշխատավորության զավակներն են։*

Մաթեմատիկա.—*Շրջանաձև դիագրամա. հրամքաղկազմի սոցիալական դրությունը հին և նոր բանակում (թվական տվյալներ չունենալու դեպքում օգտվել իր զորամասի տվյալներից՝ զանց առնելով հինը)։*

17-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Բանվորն ու գյուղացին բերին Հոկտեմբեր» լոզունգն ու ամբողջ հոդվածը։ Վանկել ու հանել «թ, խ, չ» հնչյունները. արտագրել գրատախտակից լոզունգը, վանկած բառերը։*

Զրույց ըստ լոզունգի.—*Մշակել յերկամյա ծրագրի II հատվածի 1-ին գլուխը (17-րդ զրույցը լրիվ կերպով)։*

Աշխարհագրություն.—*ԽՍՀՄ քարտեզի վրա ցույց տալ Հոկտեմբերի կենտրոն Պետրոգրադը (Լենինգրադ) և Մոսկվան։*

Մաթեմատիկա.—Յեռանիշ թվեր 0-ներով, 100—900։ Վարժություններ յերկանիշ թվերի։ Թվերը կլորացրած ձևերով վերցնել քաղաքներում տեղի ունեցած քաղաքացիական կռիվ մղող կողմերի քանակի տվյալներից (մոտավոր ճշտությամբ)։

18-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Հասանի, Շալիկոյի և Պետրոսի ջանքերով Անդրկովկասը դարձավ խորհրդային» լոզունգը և ամբողջ հոդվածը։ Վանկելով հանել «ջ, պ, ժ» հնչյունները. արտագրել գրատախտակից լոզունգն ու վանկած բառերը։

Զրույց ըստ լոզունգի.—Անդրկովկասը Հոկտեմբերից հետո։ Դաշնակցականների, մենշևիկների և մուսավաթների դեմ կազմակերպված ապստամբությունները։ Մշակել յերկամյա ծրագրի II հատվածի 17-րդ զրույցը (2-րդ գլուխ)։

Աշխարհագրություն.—Քարտեզի վրա ցույց տալ և գտնել Սև ու Կասպից ծովերի միջև ընկած Անդրկովկասը և 3 մայրաքաղաքները։

Մաթեմատիկա.—Վարժություններ յեռանիշ թվերով մինչև 1000-ը ներառյալ, թվերը վերցնել Անդրկովկասյան Հանրապետությունների մայրաքաղաքների հեռավորության տվյալներից։

19-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Կարմիր բանակը ճեղքեց մուսավաթական ճակատը» հոդվածը։ Հանել «ճ, ռ» հնչյունները։ Արտագրել գրատախտակից լոզունգը և ձեռագիրը։

Զրույց ըստ լոզունգի.—Բաքուն 1918 թվին. էս-էռների և մենշևիկների խաղացած դերը։ Բաքուն վորպես նավթի աղբյուր։ Անգլիացիները Բաքվում և 26 կոմունարների սպանությունը։ Կ. բանակի դերը Ադրբեջանի խորհրդայնացման գործում (11-րդ բանակը)։ Մշակել յերկամյա ծրագրի II հատվածի 18-րդ զրույցը։

Աշխարհագրություն—Գտնել Ադրբեջանը և հիշեցնել Բաքուն ու Կասպից ծովը։

Մաթեմատիկա.—Անցնել քառանիշ թվերը. Տվյալները վերցնել Ադրբեջանի քաղաքացիական կռիվներից. հիմնվել նաև 1918 թվի և «26»-ի վրա։

20-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (4 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Փառք ձեզ մայիսյան հերոսներ» հոդվածը. հանել «փ. ձ» հնչյունները. այստեղ կ. բանակայինները պատմում են իրենց հիշողությունները մայիսյան ապստամբության մասին։ Արտագրել գրատախտակից լոզունգն ու ձեռագրերը։

Զրույց ըստ լոզունգի.—*Հայաստանի դրությունը դաշնակցության օրերին ,ազգամիջյան, հարատեվ կռվներ, սով, գաղթականություն, հիվանդություններ: Լենինականի մայիսյան պատմությունը: Մշակել յերկամյա ծրագրի II հատվածի 19-րդ զրույցը:*

Աշխարհագրություն.—*Ցույց տալ քարտեզի վրա Հայաստանը. Յերևանը, Բայազեդը, Սևանա լիճը, Լենինականը և Կարսը: Աշխարհի կողմերը, կողմնացույցը:*

Մաթեմատիկա.—*Վարժություններ քառանիշ և բազմանիշ թվերով, թվերը վերցնել Հայաստանի ազգաբնակչության, ազգային փոքրամասնությունների, տարածության տվյալներից: Կազմել շրջանաձև դիագրամմա Հայաստանի բնակչության ըստ ազգությունների:*

21-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Մենշևիկյան Վրաստանը հակախորհրդային վերջին ֆրոնտն եր Անդրկովկասում» հոդվածը: Հանել «ֆ, և» հնչյունները: Արտագրել գրատախտակից հարմար նախադասություններ:*

Զրույց ըստ լոզունգի.—*Մշակել յերկամյա ծրագրի II հատվածի 20-րդ զրույցը*

Աշխարհագրություն.—*Գծել Վրաստանը, Թիֆլիսը, հիշել Սև ծովը: Կողմերը քարտեզի վրա: Յերկրորդական կողմերը:*

Մաթեմատիկա.—*Դիագրամմա (շրջանաձև) Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգաբնակչության և յեթե հնարավոր և տարածության:*

22-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ և բացատրել «Նամակ կարմիր զինվորին» հոդվածը: Կոլլեկտիվ կերպով կազմել նամակը և այն արտագրել գրատախտակից. խորացնել թույլ յուրացրած հնչյունները:*

Զրույց ըստ լոզունգի.—*Խորացնել յերկամյա ծրագրի I հատվածի 4-րդ զրույցը:*

Մաթեմատիկա.—*Ամսաթիվ, տարեթիվ (որինակ 12/XI 1925 թ.):*

23-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ, «Հոկտեմբերը գեղջուկին» վոտանավորը, համապատասխան հատվածներ թերթերից և ամսաթերթերից, վորոնք լուսաբանում են Հոկտեմբերյան Հեղափոխությունը: Արտագրել գրատախտակից Հոկտեմբերի գլխավոր նվաճումները: Խորացնել թույլ յուրացրած հնչյունները:*

Զրույց ըստ կարդացածի.—*Փետրվարյան հեղափոխությունը և ժամանակավոր կառավարությունը: Բանվորների, գյուղացիների և բանակի դրությունը: Բոլշևիկների և ընկ. Լենինի դերը այդ շրջանում: Հոկտեմբերը և բանվորա-գյուղացիական կապի նշանակությունը:*

Մշակել II հատվ. 1 զրույցը (16)։

Մաթեմատիկա.—Վարժություն քառանիշ թվերի-վերցրած նյութից՝ 7/XI 1917 թ.

Աշխարհագրություն.—Գտնել Լենինգրադը, Մոսկվան և այլ բանվորական գլխավոր կենտրոնները քարտեզի վրա։

24-25-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (4 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— Կարդալ համապատասխան հատվածներ պարզաբանող բանվորների և գյուղացիների միությունը և պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը։

Արտագրել գրատախտակից նյութի գլխավոր մտքերը։

Զրույց ըստ կարդացածի.—Բանվորա-գյուղացիական միությունը իբրև հաղթանակի գլխավոր անհրաժեշտություն։ Պրոլետարիատ-ղեկավար այդ միության։ Մշակել 2-րդ հատ. 6-7 զրույցն. (22-23).

Մաթեմատիկա.—Շրջանաձև դիագրամմա գյուղացիության հողի քանակը մինչև Հոկտեմբեր և հետո։ Վարժություն բազմանիշ թվերի՝ գյուղացիության և բանվորության քանակի տվյալներից։

Աշխարհագրություն.—Գյուղատնտեսական և արդյունաբերական շրջանները գտնել քարտեզի վրա։

26-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ, «Ո՞վ է կառավարում Խորհրդային Միությունը»։ Տալ ծանոթություն կրճատած խոսքերի. «Կենտգործկոմ», «Ժողկոմխորհ» և այլն, բխած նյութից (Ս. Խ. Հ. Մ., Հ. Ս. Խ. Հ...)։

Արտագրել գրատախտակից նույն խոսքերը։ Մեծատառերի յուրացման խորացում։ Կարդալ Ս. Խ. Հ. Մ. սահմանադրության գլխավոր կետերից և արտագրել։

Զրույց ըստ կարդացածի.—Ս. Խ. Հ. Մ-նը կառավարում են բանվորները և գյուղացիները։ Ս. Խ. Հ. Մ. բարձրագույն իշխանությունն է Համամիության Խորհրդների Համագումարը։ Ս. Խ. Հ. Մ. մեջ մտնող բոլոր ազգերը օգտվում են հավասար իրավունքներով։

Մշակել 2-ամյա ծրագրի 2 հատ. 24-րդ զրույցը։

Մաթեմատիկա.—Ծանոթություն Խորհրդ. իշխանության սխեմայի հետ։

27-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ համապատասխան կետեր «Զինվորական պարտադիր ծառայության օրենք»-ից և հատվածներ՝ լուսավորող նախազինակոչյան և տերիտորյալ զորամասերում տարվող աշխատանքների նշանակությունը։ Դժվար բառերի բացատրություն։ Արտագրել նույթի գլխավոր միտքը։

Զրույց ըստ կարդացածի. *Մշակել 2-ամյա ծրագրի 1 հատ. 3-րդ զրույց։*

Մաթեմատիկա. — *Բազմանիշ թվերի վարժություն, թվերը վերցրած նյութից։ (Կ. բ-նի 2 տարվա ծախսը և այլն)։*

28-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու. — *Կարդալ հատվածներ շեֆության մասին։ Գրել գործամասի շեֆ հիմնարկության և գործամասի յենթաշեֆ գյուղերի անունները։*

Զրույց ըստ կարդացածի. — *Կ. բանակը սերտ կապ ունի աշխատավոր մասսայի հետ։ Ցարական բանակի առանձնացումն աշխատավորությունից։ Կ. բանակայինը պիտի լինի օրինակելի քաղաքացի։*

Մշակել 2-ամյա ծրագրի 1 հատ. 15-րդ զրույցը։

Մաթեմատիկա. — *Վարժություն բազմանիշ թվերի։*

29-41-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (24 ԺԱՄ)

Մայրենի լեզու. — *Կարդալ ընթերցարանից «Միութենական խորհուրդների համագումարը», «Ռուսաստանի Ս. Ֆ. Խ. Հ.», «Անդրկովկասի Ֆեդերացիան», «Խորհրդային իշխանությունը Հայաստանում», «Ընկեր Սարգիս Սրապիոնյան-Լուկաշին», «Մենք հաշվի կնստենք, յերբ Կարմիրբզրոշը կծածանվի», «Ադրբեջան», «Վրաստանի Ս. Խ. Հ.» «Ուկրայնայի, Բելոռուսիայի, Ուզբեկստանի և Թյուրքմենիստանի Ս. Խ. Հանրապետություններ», Ս. Խ. Հ. Մ. Անդր. Ս. Ֆ. Խ. Հ. և Հ. Ս. Խ. Հ. կենտգործկոմների և ժողկոմխորհների նախագահների կենսագրություններից։ Ծանոթացնել նրանց նկարների հետ։ Ծանոթություն դերանունների գրելու կանոնի հետ (մեծատառերի հետ). գրել ամեն մի հանրապետության բնական հարստությունների, արդյունաբերության, կլիմայի, և այլի մասին ու անհրաժեշտ կետեր նյութերից։*

Զրույց ըստ կարդացածի. — *Մշակել II հատվածի 25-րդ զրույցից մինչև III հատվածը։*

Մաթեմատիկա. — *Վարժություն բազմանիշ թվերով, հենվելով Ս. Խ. Հ. Մ. մեջ մտնող հանրապետությունների տարածության, ազգաբնակչության, ազգային կազմի և այլն տվյալների վրա։ Ծանոթություն սյունաձև դիագրամայի և վարժություն շրջանաձև դիագրամա կազմելու մեջ նույն թվական տվյալներից. ծանոթություն տոկոսների և կոտորակի (հասարակ և տասնորդական) հետ։*

Աշխարհագրություն. — *Գտնել քարտեզի վրա թված հանրապետությունները։*

Ս. Խ. Հ. Մ. սահմանները և սահմանակից պետությունները։ Նյութից բխող տնտեսական աշխարհագրություն — Բաքու, Դոնբաս, Ուրալ, Զիատուրի և այլն։ Ծանոթություն ծովի, կղզու, թերակղզու հետ։

41-51 ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (20 ԺԱՄ)

Մայրենի լեզու. Կարդալ նյութեր, որ լուսաբանում են քաղաքացիական կռիվը, Կ. Գվարդիայի քաջագործությունները, Կ. բանակ կազմակերպելու անհրաժեշտությունը և նրա կռիվը Խորհրդային իշխանության թշնամիների դեմ: (Ընթերցարանից «Ալան» վոտանավորը): Կազմել քաղաքացիական կռվի գլխավոր դեպքերի (էպիզոդների) որացույց և արտագրել գրատախտակից: Կարմիր նավատորմի դերը քաղաքացիական կռվում: Կ. բանակը խաղաղ ժամանակ: Ծանոթություն վերջակետի և ստորակետի հետ:

Զրույց ըստ կարդացածի.—Մշակել քաղբովանդակությունը 36-46 զրույցների: 1) Քաղաքացիական կռվի պատճառները: 2) Ռուս գեներալները իբրև արտասահմանյան բուրժուազիայի ծառաներ: 3) Կարմիր բանակի հերոսական պայքարը: 4) Կ. նավատորմից, 5) կապել այդ կռվի հետ և Կով. Կ. բանակի, Հայաստ. Կ. բանակի և զորամասի պատմությունը և 6) Կ. բ. խաղաղ ժամանակ.

Մշակել 2-ամյա ծրագրի III հատված քաղառանցքը (Կ. բանակի պատմությունը):

Մաթեմատիկա.—Վարժություն բազմանիշ թվերի, սյունաձև և շրջանաձև դիագրամների: Ծանոթություն գումարման և հանման կանոնների հետ: Թվերը վերցնել Կ. բանակի և թշնամի բանակի բանակների տվյալներից: Վարժություն տոկոսների և կոտորակների հետ Կ. բանակի սոցիալական կազմի տվյալներից և բանակում գտնվող կոմունիստների քանակի տվյալներից:

Աշխարհագրություն.—Գտնել քաղաքացիական կռիվների գլխավոր վայրերը: Ծանոթություն կողմերի (հարավ, հյուսիս և այլն), վորտեղից գալիս եյին գեներալները Խորհրդային իշխանության վրա: Կողմնացույցի ծանոթություն:

52- 56-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (10 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—Կարդալ «Լենինի կյանքը», «Լենինյան Կ. ՅԵ. Մ», «Կոմսոմոլի դատիկը» և համապատասխան հատվածներ, վորոնք լուսաբանում են ընկ. Լենինի, Կոմկուսի և Լ. Կ. ՅԵ. Մ. դերը Կ. բանակում քաղաքացիական կռվի ժամանակ և ներկայումս: Կարդալ նաև «Լենինը չկա»: Գրել Լենինի կենսագրությունից գլխավոր կետերը, Կոմկուսի խաղացած դերը բանակում և Լենինի պատվերներից:

Զրույց ըստ կարդացածի.—Մշակել 2-ամյա ծրագրի IV-րդ հատվածի հետևյալ կետերի քաղբովանդակությունը . 1) Լենինի կյանքը և պատվերները, 2) Կոմկուսի դերը Կ. բանակում քաղաքացիական կռվի ժամանակ, 3) Կոմբջիջի և ԼԿՅԵՄ բջիջի դերը և նշանակությունը Կ. բանակի ամրացման գործում: Ծանոթություն միջակետի, հարցական, բացականչության նշանների և տողադարձի հետ:

Մաթեմատիկա.—Վարժություն բազմանիշ թվերի և սյունաձև ու շրջանաձև դիագրամների: Թվերը վերցնել Կոմկուսի աճման և սոցիալական կազմի թվական տվյալներից: Գումարման և հանման կանոնների խորացում և վարժություն:

Աշխարհագրություն.— Գտնել քարտեզի վրա ընկ. Լենինի ծնված տեղը, ապրած վայրերը և երկրները. Ամրացնել Թույլ յուրացրած կետերը, կապելով նյութի հետ։

57-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *Կարդալ «Հանգստանալիս» հոդվածը։ Գրել կապիտալիստական գլխավոր պետությունների անունները և բանվորների պայքարից կապիտալիստների դեմ։*

Զրույց բաց կարդացածի.— *ԽՍՀՄ միակ պետությունն է աշխարհում, որտեղ իշխանությունը գտնվում է բանվորների և գյուղացիների ձեռքում։*

Մեր իշխանության և Կ. բանակի ամրությունը ստիպեց կապիտալիստական երկրներին ճանաչել մեզ։

Մշակել V-րդ հատվածի I գլուխը։

Մաթեմատիկա.— *Գումարման և հանման վարժություն նյութի թվական տվյալներից։*

Աշխարհագրություն.— *Գտնել կապիտալիստական գլխավոր երկրները։ Գլոբուսի ծանոթություն։*

58-73-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (32 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *Կարդալ «Բազդեկի» գրույցներից «Քո հարևանին միշտ ճանաչիր», «Լեհական գործարանում», «Պարսկաստանում» և համապատասխան հատվածներ թերթերից և բրոշյուրներից, որոնք պարզաբանում են կապիտալիստական, թե մեծ և թե փոքր երկրների գոյությունը և նրանց ու մեր հարաբերությունը։ Արևելյան պետությունները իբրև գաղութներ և կիսագաղութներ ու նրանց մեջ առաջ եկած հեղափոխական շարժումները։ Մեր վերաբերմունքը դեպի այդ շարժումները։ Մեր հարաբերությունը արևելյան հարևանների հետ։ Գրել նյութի գլխավոր մտքերից։ Ծանոթություն, շեշտ նշանների հետ և տողադարձի խորացում։*

Զրույց բաց կարդացածի.— *Մշակել V-րդ հատվածի քաղաքական բովանդակությունը։*

Մաթեմատիկա.— *Վարժություն բազմանիշ թվերի. գումարման և հանման բանավոր և գրավոր վարժություն նյութի թվական տվյալներից։ Թույլ յուրացրած կետերի խորացում։*

Աշխարհագրություն.— *Գտնել նյութին վերաբերող երկրները։ Գլոբուս։ Գաղափար գիշերվա, ցերեկվա և տարվա եղանակների մասին։*

Կողմերը գտնելու միջոցներ՝ կոմպաս, հյուսիսային աստղ և այլն։

II

73-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.— *Կարդալ «Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք», «Ինտերնացիոնալ». գրել մայիսի մեկի նշանակությունը և ինտերնացիոնալի (ըստ հնարավորության): Խորացում թույլ յուրացրած կետերի:*

Զրույց ըստ կարդացածի.— *Մայիսի 1-ն իբրև միջազգային պրոլետարիատի տոն:*

Մշակել V-րդ հատվածի 70-րդ զրույցը:

Մաթեմատիկա.— *Կազմել դիագրամմա (սյունաձև) մայիսի 1-ի տոնին մասնակցողների աճման վերաբերյալ զանազան տարիներում:*

74-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (2 ԺԱՄ)

Մայրենի լեզու.—*Կարդալ «Կարմիր յերդում» և գրել:*

Զրույց ըստ կարդացածի.—*Կարմիր յերդումի նշանակությունը:*

75-98-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (28 ԺԱՄ)

Կրկնողական դասեր: Պատրաստություն:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԱՆԳՐԱԳԵՏ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

1. Անգրագետների ծրագիրն անցնելու համար տրվում է ամսական 20 պարապմունք յերկուական ժամից, վորը կազմում է ձմեռային շրջանի հինգ և կես ամիսների համար 110 ժամ, վորից 11 ժամը հատկացվելով սանգրագիտության համար ընդամենը մնում է 99 ժամ:

2. Անգրագետների ծրագրի խնդիրն է՝ տալ վոչ միայն տարրական այլև քաղգրագիտական դաստիարակություն. հետևաբար այդ յերկու միացած աշխատանքը կատարում է մի մարդ:

II. ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Անգրագետների քաղգրագիտության ծավալը տրվում է նույնը, ինչ վոր մյուս խմբերին, այսինքն առաջին ձմեռային շրջանի 2-ամյա քաղպարապմունքների ծրագրի քաղառանցքը: Սա բղխում է, անգրագետներին համապատասխանեցնելու մյուս խմբակներին և քաղգրագիտության դաստիարակության ընդհանուր գիծ տանելու անհրաժեշտությունից:

Պահելով 1-ին ձմեռային շրջանի, քաղառանցքը պետք է ասել, վոր նրա անցնելու հետևողականությունը յենթարկվում է վորոշ փոփոխության, յերբ անցնում ենք անգրագետների դասագրքի առաջին մասը (բառարանը): Բառարանը պետք է անցնել հետևողականությամբ, այսինքն՝ յերես-առ-յերես: Դրա համար հարկավոր է բառարանի թեմաները (դասերը) անցնելուց վերցնել (2-ամյա ծրագրից) այն թեման (գլուխը), վորը համարվում է և համապատասխան է դասագրքի նյութին: Օրինակ 3-րդ դաս. «Դասակ ու դասակ կազմում են բանակ» անցնելիս՝ պետք է մշակել յերկամյա ծրագրի 14-րդ գլուխը, «Կարմիր բանակի կառուցվածքը»:

Այսպես անցնելով, բառարան մասի ժամանակաշրջանում 1-ին հատվածից մնում է 2 գլուխ «Զինվորական ծառայության անցնելու կարգը» և «Կ. բանակի կապը աշխատավորության հետ», վորոնք հարկավոր է անցնել ընթերցարան մասում: Հետագայում (ընթերցարան մասը անցնելիս)

նյութը վերցվում ե ոչ թե դասագրքից, այլ 2-ամյա ծրագրից, իսկ կարդալու համար նյութը վերցվում ե ընթերցարանից, որը համապատասխան ե և պարզաբանում ե ծրագրի զրույցի բովանդակությունը:

Ի հարկե, ընթերցարան մասում չկան, ծրագրի նյութերի համար հարմար և բավականաչափ նյութեր:

Խմբակավարն ինքը պետք ե աշխատի այդ նյութերը պատրաստել թերթերից և բրոշյուրներից:

III. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Կանգ առնելով քաղպարապմունքների մեթոդիկայի վրա, պետք ե նախազգուշացնել հետևյալ սխալներից. քաղպարապմունքների կոմպլեքսային սիստեմի մեջ, որպեսզի լրիվին բացատրի քաղնյութի բովանդակությունը, դասատուն մեծ տեղ ե տալիս զրույցին, այսինքն՝ պարապում ե գրագիտություն սովորեցնելով, և որ ամենավատն ե, ինքն ե՝ շատ խոսում:

Դրա համար, առաջիկա շրջանում, զրույցը չպետք ե 10-15 րոպեյից ավելի լինի: Հետագայում կարելի յե ավելացնել զրույցի ժամանակը, բայց այն հաշվով, որ չտուժեն գրագիտությունը, մաթեմատիկան և աշխարհագրությունը: Ի հարկե, չպետք ե անել և հակառակը, որ գրագիտությանը մեծ ուշադրություն դարձնել, իսկ քաղառանցքը թողնել անուշադիր:

Մայրենի լեզու

1. Անցնում են բոլոր հնչյունները, առանձնապես ծանոթանալով յերկբարբառ հետևյալ հնչյունների հետ—յա, յու, յե, ույ:

2. Նախադասությունները բաժանել բառերի, բառերը՝ վանկերի. վանկերից կազմել բառեր, բառերից նախադասություններ:

3. Կարդալ այբբենական տեքստի զուգընթաց լոզունգներ, հայտարարություններ, գրքերի վերնագրեր, ոգտվելով յուրացրած դասերից:

4. Արտագրություն տպագրից և ձեռագրից: Գրել իրանց անուն ազգանունը, սովորողների ցուցակը, նամակ, զեկույց, ցուցակ գրքերի և ինվենտարի, հասցեներ և լցնել անկետաներ:

5. Կարճ նկարագրություն ընթացիկ կյանքի, գրավոր:

6. Ծանոթություն կրճատված բառերի. որինակ՝ քաղգեկ, զինկոմ, լուսողկոմ, քաղբաժին, կենտգործկոմ, ժողկոմխորհ և այլն:

7. Տալ ծանոթություն կետերի (ստորակետ, միջակետ, վերջակետ և բութ), նշանների (տողադարձ, չակերտ, փակագիծ, հարցական, բացականչություն, շեշտադրություն) մասին սկսել ընթերցարան մասն անցնելու ժամանակ:

8. Տալ մեծատառերի գաղափար: Բացատրել՝ յերբ ե գրվում մեծատառը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Մայրենի լեզվի

1. Նախատեսնված ժամանակամիջոցում, այբբենական գրագիտությունը վերացնելու նպատակով քաղգրագիտության հատկացվում է 10-15 րոպե. հետագայում ընթերցարանն անցնելիս՝ կարելի յե ժամանակն ավելացնել միայն այնքան, որ գրագիտական մասը չտուժի, սակայն այս ժամանակամիջոցում կարմիր բանակայինը պիտի յուրացնի քաղգրագիտության հիմնական առանցքը։

2. Լոզունգները բղխեցնել որվա քաղգրագիտության նյութից՝ կարմիր բանակայինների ակտիվ մասնակցությամբ։

3. Ծրագրում մատնանշած գրույցները դասատուն պարտավոր է նախորոք մշակել։

4. Հոդվածը ամբողջությամբ նախ դասատուն է կարդում, ապա՝ սովորողները։ Խմբական ընթերցանության մեծ տեղ տալ։

5. Արտանկարման և արտագրման աշխատանքը պետք է կատարել գրատախտակից. դասատուն պետք է աշխատի գրել դասագրքի շրիֆտի նման։

6. Բառերի, վանկերի, հնչյունների առանձնացման պրոցեսը կատարել սավարաթղթի (կարտոնի) կամ թղթի վրա՝ նախապես խոշոր տառերով գրած լոզունգները կտրատելու միջոցով։

7. Վանկերի բաժանման աշխատանքը կատարել հիմնվելով ձայնի յերկարացման վրա (օրինակ դա՛սա՛կը՛ դա՛սի՛ յե՛)։

8. Բաղաձայն հնչյուններն առանձնացնելիս՝ հիմնվել ձայնավորների վրա։

9. Կտրատված հնչյուններից, վանկերից և բառերից կարմիր բանակայինները կազմում են նույն և նոր վանկեր, բառեր և լոզունգներ։ Այս աշխատանքի ժամանակ դասատուն մնում է միայն ղեկավարողի դերում (կարտոնի վրա գրված ու կտրված մասերն օգտագործելով)։

10. Ընթերցարան մասն անցնելիս աստիճանաբար յուրացնել տալ ձեռագիր և տպագիր մեծատառերը։

11 Ընթերցարան մասում օգտագործել որվա նյութին համապատասխան գեղարվեստական ամբողջական հոդվածներ՝ վերցրած թերթերից, ամսագրերից և գրքերից։

ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼԸ

Մաթեմատիկա

1. Ծանոթություն հռոմեական և արաբական թվերի հետ 1-12 և դրանց համեմատությունը (օրինակ I 1, II 2, III 3 և այլն)։

2. Ցերկանիշ թվեր 10-90 (0-ի նշանակությունը թվի աջ կողմից)։

3. Ցերկանիշ թվեր 11-99 (առանց 0-ների) և միավորի ու տասնավորի գաղափար։ Կլոր թվեր—օրինակ՝ 200, 4000, 5.000 000 արտահայտված 2 հարյուր, 4 հազար, 5 միլիոն։

4. Յեռանիշ և բազմանիշ թվեր, թե գրերով և թե թվերով։

5. Վարժություններ վերոգրյալ թվերով թե գրավոր և թե բանավոր։ Բանավոր վարժություններ գումարման և հանման, գործողությունների նախնական շրջանում, իսկ վերջերում նաև գրավոր։

6. Գաղափար շրջանաձև և սյունաձև դիագրամմաների։

7. Ծանոթություն տոկոսների և կոտորակների (օրինակ 50%=1/2, 0,5, 25%=1/4, 0,25)։ 1/8, 1/5, 1/2, 3/4, 0,25, 0,5, 0,75։

8. Ծանոթություն մետրական չափերի։ Համեմատություն ռուսական գլխավոր գործնական չափերի հետ։

9. Ազատ կարդալ և գրել ամեն մեծության բազմանիշ թվեր։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Մաթեմատիկա

1. Պարապմունքների ընթացքում ավանդվելիք թվերը պետք է լինեն անվանական (օրինակ 5 ձին, 7 հրացան, 22 տարի)։

2. Այդ թվերը պետք է կապված լինեն որևէ անցնելիք նյութի հետ։

3. Արաբական թվանշանները 1-9 անցնելիս հիմնվել հռոմեյական թվերի վրա. անցնել հռոմեյականը հետո համադրել արաբականը (օրինակ I 1, V 5, IX 9 և այլն)։

4. Միավորի, տասնավորի գաղափարը տալու ժամանակ օգտագործել դրամական սիստեմը (օրինակ միավոր՝ 1 ռուբլիանոցներ, տասնավոր՝ 10 ռուբլիանոցներ և այլն)։

5. Շրջանաձև դիագրամմաները անցնելիս տալ %-ների գաղափարը։

6. Դասերի ժամանակ հնարավոր դեպքում կազմել դիագրամմաներ։

7. Տասնորդական և հասարակ կոտորակներն անցնել համեմատությամբ։

8. Համրիչները (յեղած դեպքում) օգտագործել լայն չափով։

9. Բանավոր վարժություններին լայն տեղ տալ։

10. Գումարման և հանման գործողությունները հենց սկզբից պետք է անցնել տակետակ առանց կողք-կողքի։ Հարկավոր է ուսումնասիրել և օգտագործել բոլոր այն արագ հաշվելու ձևերը, որ գործադրում են կարմիր բանակայինները։

ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼԸ

Աշխարհագրություն

1. Տալ հասկացողություն հատակագծի (պլան) և չափանիշի (մասշտաբ) մասին։ Կազմել հատակագիծ սենյակի (վորտեղ սովորում է տվյալ խմբակը) դասարանի, դպրոցի, գյուղի և քաղաքի։

2. Քարտեզի գաղափարը, վորպես մեծ վայրի հատակագծի և նրա նշանակությունը զինվորական գործում։

3. Կողմեր, կողմնացույց և նրա նշանակությունը ռազմական գործում։

4. Խ. Ս. Հ. Մ.-թյան քարտեզը. նրա մեջ մտնող 6 հանրապետությունները։

5. Անդրկովկասյան Ֆեդերացիան և նրա բաղկացուցիչ հանրապետությունները։

6. Առանձին հանրապետությունների (Անդրկովկաս) ավտոնոմ շրջանները։

7. Խ. Ս. Հ. Մ.-թյան մայրաքաղաքները և գլխ. յերկաթուղային գծերը։

8. Սև և Կասպից ծովերը և նրանց նշանակությունը։

9. Հայաստանի քաղաքացիական կռիվների վայրերն ու բոլոր գավառները։

10. Աշխարհագրական քարտեզի պայմանական նշանները (որինակ սար, դաշտ, ծով, գետ, ճանապարհներ, յերկաթուղի և այլն)։

11. Լիճ, ծով, կղզի, թերակղզի, մայր ցամաքներ, ովկիանոս, նեղուցներ և նավահանգիստներ։

12. Յերկրագունդ, ձևը. բևեռները, շարժումը, գիշեր, ցերեկ, տարվա յեղանակները, միջորեական գիծ, հասարակած։

13. Խ. Ս. Հ. Մ.-թյան տնտեսական շրջանները (ռայոնները), հողագործական, արդյունաբերական, բնական հարստություններ (նավթ, քարածուխ), բամբակագործական շրջան։

14. Գլխավոր իմպերիալիստական պետություններ՝ Անգլիա, Ֆրանսիա, Ամերիկա, Յապոնիա։ Մեր հարևան պետությունները՝ արևմուտքից, արևելքից և հարավից։ Մեր հարաբերությունները նրանց հետ։

15. Քաղաքացիական կռիվների վայրերը։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Աշխարհագրություն

1. Աշխարհագրությունը դասավանդելիս պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքով, վոչ թե կարմիր բանակայինները իմանալու յեն վորևե տեղ կամ քաղաք, այլ թե ինչպես պետք է գտնել քարտեզի վրա այդ տեղը և քաղաքը։ Սակայն սա չի նշանակում, թե նրանք աշխարհագրական ծանոթություններ չպետք է ունենան։

2. Պետք է ունենալ ձեռքի տակ մի քանի տեսակ քարտեզներ, վորոնց փոխ-փոխ գործածելը դասավանդման ժամանակ կարմիր բանակայիններին ծանոթացնելու յե, զանազան քարտեզների հետ։

3. Աշխարհագրական վայրերը սովորեցնել վոչ թե ըստ գույների այլ ըստ ձևերի ու դիրքի։

4. Աշխարհագրական վայրերը ցույց տալիս պետք է ցույց տալ իրենց ամբողջ սահմաններով, այլ վոչ թե մատով մի կետի վրա միայն։

5. Աշխարհագրական վայրերը գտնում են կարմիր բանակայիններն իրենք, վորի ժամանակ դասատուն ղեկավարի դեր է ստանձնում։

6. Մեծ տեղ տալ գործնական աշխատանքներին (հատակագծեր կազմելու ժամանակ)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նյութն անցնելիս միշտ նկատի ունենալ կարմիր բանակայինների անձնական փորձերն ու կյանքի դեպքերը։

2. Ի նկատի ունենալ կարմիր բանակայինների զանազան տիպեր լինելը (տեխողական, լսողական և այլն). դասատուները պետք է աշխատեն ամեն կերպ զարգացնել համաչափ կերպով նրանց բոլոր զգայարանները։

3. Ամբակավարներից պահանջվում է որվա նյութի համար այնպես պատրաստված լինել, վոր դրա շուրջը ծագող բոլոր հարցերին պատասխանել կարողանա։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՅԵՂԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

(Հանձնարարվող գրականության լրիվ ցուցակը ռուսաց լեզվով տես „Сборник приказов и циркуляров политического Управления С. С. С. Республик. № 21. „Двухлетняя программа политзанятий с красноармейцами" *յեր. 117—134).*

ՀԱՏՎԱԾ I.

Ֆրունզե.—*ԽՍՀՄ Խորհրդների Համամիութենական 3-րդ համագումարում արած զեկուցումը։ «Հեղ. Պահակ» 25 թ. № 5 և 6 Քաղբաժնի հրատարակություն։*

Տրոցկի.—*«Կարմիր Հուշատետր». Քաղբաժնի հրատարակութ., 1924 թ.*

Կագիշեվ—*«Ինչ պետք է իմանա յերիտասարդ կարմիր բանակայինը» հրատ. Պ. Ռ. Հ. 1926 թ.*

Պոլև— *«Ինչ արտոնություններ և առավելություններ է տալիս ԲԳ Կարմիր բանակի ծառայությունը» հրատ Պ.Ռ.Հ. 1926 թ.*

— *«Խ.Ս.Հ.Մ. Ռազմածովային ժողկոմ և Ռ.Հ.Խ. Նախագահ Մ. Վ. Ֆրունզե»։*

— *«Խ.Ս.Հ.Մ. Ռ.Հ.Խ. Նախագահությունը» (կենսագրություններ) հրատ. ՊՌՀ 1926 թ.*

ՀԱՏՎԱԾ II.

—*Ընկեր Ֆրունզեյի զեկուցումը ԽՍՀՄ Խորհրդների 3-րդ համագումարում, «Հեղափոխության Պահակ» № 5 և 6 հրատ. Քաղբաժնի 1925 թիվ։*

Զինովև.—*«Պրոլետարիատն ու գյուղացիությունը» Պետհրատ 1925 թ.*

Կալինին յեվ Կրուպսկայա *«Աշխատանքը գյուղում»։ Զեկուցում Ռ.Կ.Կ.* XIII *համագումարում, «Մարտակոչ» Թիֆլիս 1924 թ.*

— *Ռուսաստ. Կոմկուսակցության* XIII *համագումարը։ Բանաձևեր։ Գյուղում տարվող աշխատանքների մասին. հրատ. «Մարտակոչ»-ի, Թիֆլիս 1924 թ. յերես 54։*

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ստուչկա. — *«Ինչ է խորհրդային իշխանությունը». Մոսկվա, 1919 թ.*

— *«ԽՍՀՄ և ՀԽՍՀ կենտգործկոմների ու ժողկոմխորհների նախագահներ»։*

Կագիշեվ. — *«Ինչ պետք է իմանա յերիտասարդ կարմիր բանակայինը» ՊՌՀ, 1926 թ.*

ՀԱՏՎԱԾ III.

— *«Կարմիր բանակը խաղաղ դրությամբ» ընկ. Ֆրունզեյի զեկուցումը ԽՍՀՄ խորհուրդների 3-ր համագումարում. «Հեղափոխության Պահակ» № 5 և 6. հրատ ՀԴ Քաղբաժնի 1925 թ.*

Սաճրազբեկյան. — *«Մի զրույց Կարմիր բանակի մասին». Պետհրատ. 1925 թ.*

ՀԱՏՎԱԾ IV.

Ռ. Կ. Կ. ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Բրոնճին. — *«Լենինը և Կարմիր բանակը». հրատ. Պ.Ռ.Հ., 1926 թ.*

Կրուպսկայա. — *«Վլադիմիր Իլյիչի մասին»։*

ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՄԵԾ ԱՎԱՆԴՆԵՐԸ Ռ.Կ.Կ. (Բ.) ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

Ստալին. — *«Լենինի և լենինիզմի մասին», Պետհրատ, 1924 թ.*

ՀԱՏՎԱԾ V.

ԱՖՐԻԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Կիտայ-Գորոդսկիյ. — *«Գաղութային ստրկությունից դեպի ազգային անկախություն». Պետհրատ, 1924 թ.*

ԿԱՐՄԻՐ ՅԵՐԴՈՒՄ ՈՒ ՄԱՅԻՍԻ 1-Ը

Ճրիչե. — *«Մայիսի 1-ը». Պետհրատ 1925 թ.*

ՀԱՏՎԱԾ VI.

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՍ ՈՒԶՈՒՄ, ՊԱՏՐԱՍՏ ՅԵՂԻՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Ընկեր Ֆրունզեյի զեկուցումը ԽՍՀՄ 3- համագումարում «Հեղափոխության Պահակ» №. 5 և 6 հրատ. ՀՀ Դիվքաղբաժնի 1925 թ.

Ստալին.—«ՌԿԿ (բ.) 14-րդ կոնֆերենցիայի ամփոփումների մասին». Պետհրատ 1925 թ.

Զինովյեվ—«Վ. Ի. Լենին» հրատ. Պետհրատի 1925 թ.

— **Ռազմական տեխնիկան յեվ ռազմական վոգին, յերկրային կազմակերպությունները յեվ նախակոչյան պատրաստությունը—ընկ.** Ֆրունզեյի զեկուցումը ԽՍՀՄ խորհուրդների 3-րդ համագումարում.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Սարգսյան.—«Ողջային նավատորմը». Յերևան 1925 թ.

ՀԱՏՎԱԾ VII.

ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆ

Լենին.—«Ճառեր և հոդվածներ յերիտասարդության մասին». Յերևան. 1925 թ.

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ, ՇԱՐԺՈՒՄԸ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ստալին.—«ՌԿԿ (բ.) 14-րդ կոնֆերենցիայի ամփոփումներից». Պետհրատ, 1925 թ.

Կիտայ-Գորոդսկի.—«Գաղութային ստրկությունից դեպի ազգային անկախություն». Պետհրատ, 1924 թ.

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՎՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՋՈԿԱՏ

Ֆրունզեյի Զեկուցումը ԽՍՀՄ Խորհրդների 3-րդ համագումարում։

ՈՒՍՈՒՑՄԱՆ 2-ՐԴ ՏԱՐԻ

ՀԱՏՎԱԾ VIII.

Ռ.Կ.Կ. (Բ.) ՅԵՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զինովյեվ.—«ՌԿԿ (բ.) պատմությունը». Պետհրատ 1925 թ.

Ստալին.—«Լենինի և լենինիզմի մասին». Պետհրատ 1925 թ.

Պոպով յեվ Յակովլեվ.—«Լենինի կյանքն ու լենինիզմը». Պետհրատ 1924 թ.

Ռ.Կ.Կ. (Բ.) ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Լենին.—*«Բնատուրքի մասին». Պետհրատ 1924 թ.*

ՀԱՏՎԱԾ IX.

ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ԿԱՊԻ ՈՒՂԻՆԵՐԸ

Ընկ. Անդրեևի զեկուցումը ՌԿԿ (բ.) XIII-րդ համագումարում. հրատ. «Մարտակոչ» 1924 թ., Թիֆլիս։

Ստալին.— *«ՌԿԿ (բ.) 14-րդ կոնֆերենցիայի ամփոփումները»։*

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Կամենև.—*«Խորհրդային իշխանությունը և գյուղացիությունը». «Կոմունիստի գրադարան» № 5, Յերևան 1925 թ.*

Լուկին.—*«Յեկեղեցի և պետություն». Մոսկվա. 1919 թ.*

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՍՐՁԱԿՈՒՐԴԱՎՈՐԸ

— *«Արձակուրդավորի հուշատետրը» հրատարակութ. ՊՌՀ Յերևան, 1925 թ.*

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Լենին.—*«Սոցիալիստական հեղափոխությունն ու լուսավորությունը». Պետհրատ։*

ԿԱՊԸ ԶՈՐԱՄԱՍԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԵՏ

— *«Արձակուրդավորի հուշատետր». հրատարակութ. ՊՌՀ, Յերևան 1925 թ.*

ՀԱՅԿ. ՀՐԱՁ. ԴԻՎ. ՔԱՂ-ԲԱԺՆԻ ԱԳԻՏՊՐՈՊՄԱՍ

ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ներկա գրքում սպրդել են կոպիտ սխալներ, անհրաժեշտ է կարդալուց առաջ ուղղել այդ սխալները

Եջ	ՏՊՎԱԾ Է	ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
134	13-րդ պարապմունք	13-14-րդ պարապմունք
135	14 » »	15 » »
135	15 » »	16 » »
»	16 » »	17 » »
»	17 » »	18 » »
136	18 » »	19 » »
»	19 » »	20 » »
»	20 » »	21-22 » »
137	21 » »	23 » »
137	22 » »	24 » »
»	23 » »	25 » »
138	24-25-րդ »	26-27 » »
»	26-րդ »	28 » »
»	28 » »	29 » »
139	28 » »	30 » »
»	29-41 (24 ժամ)	31-46 (32 ժամ)
140	41-51 (20 ժամ)	47-61 (30 ժամ)
»	52-56 (10 ժամ)	62-67 (12 ժամ)
141	57-րդ պարապմունք	68-րդ պարապմունք
»	58-73 (32 ժամ)	69-89 (42 ժամ)
142	73 (2 ժամ)	90-91 (4 ժամ)
»	74-րդ պարապմունք	92-րդ պարապմունք
»	75-98 (28 ժամ)	93-99 (14 ժամ)
»	Պատրաստություն	Պատրաստություն շրջանա-վարտման համար
24	15. Ինչպես է կառուցված...	14-15. Ինչպես է կառուցված...
112	7. Ինչպես բարձրանել...	7- 8. Ինչպես բարձրացնել...

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0068148

ЦЕНА
3122